



ՆԿԻՐՎՈՒՄ Է ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆՆՈՎ ՆՆՋԱՆ ԵՎ ՍՐԲԵՐԻ ԴԱՍԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ **600** - ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է  
**2003թ**  
ՀՈԿԵՏԱՐԵՐԻ 1-ԻՅ

ԳՐԱՆՈՒՐ ԵՎ ԳՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՍ ԱՇԽԱՐՀ»  
ԱՐԽԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՆԱԿԱՆՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՑԵ՝ ք. ԿՄՈՒՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32  
ՀԵՂՈՒՄՈՒՄ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02

# ՍՅՈՒՆՅԱՍ ԹԵՐԻՔ

# Այունյաց երկիր

Գրից 100 դրամ:

ՀԱՐԱՐ  
25 ՆՆՊԵՏԱՐԵՐԻ 2010թ. • № 16 (213)

www.syuniacyerkir.am

## ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ՝ «ԵՐԿՐՈՐԴ ԼՐԱՍԱԼՈՐԻՅ ԽԱՅԿԱԳԵՄԱՆ ԱԳԳԻ»



Գրիգոր Տաթևացի, Երևան, ձեռ. 1203, 13բ. Մեկնություն, 1449թ., Կաֆա

Խմբագրական

### Ամենայն հայոց վարդապետը

Դժվարին եւ պատասխանատու գործ է Գրիգոր Տաթևացուն թերթային բացառիկ համար նվիրելը, թեև նման համարներ հրատարակելը «Սյունյաց երկրին» ախորժելի է ի սկզբանե: Իսկ Գրիգոր Տաթևացի աղոթող վարդապետին, աստվածաբանին, վարժապետին, փիլիսոփային, մանրանկարչին, բժշկին, Տաթևացի հովվին, Տաթևացի սուրբին, պետական գործչին ու դիվանագետին պարտավոր էինք երբեք անդրադառնալ եւ անդրադառնալ բազմակողմանի ու հիմնավորապես պատճառները, հարկավ, բազում են: Դրանցից առաջինը Գրիգոր Տաթևացու առնչությունն է Սյունիքին եւ մասնավորապես Տաթև կոչվող տիեզերահռչակ երեսույթին:

Ընթերցողը հնարավորություն կունենա ծանոթանալ քաջբերունդիչ արմատներով Տաթևացու ծննդավայրի հարցին առնչվող երկու վարկածի: Բայց անկախ դրանցից կա ամենընդլի մի իրողություն՝ Գրիգոր Տաթևացին պատանեկության օրերից ապրել, ուսում է առել եւ հիմնականում գործել Տաթևի վանքում: Նաև նրա շնորհիվ է Տաթևը հայ իրականության մեջ ձեռք բերել «Երկրորդ Աթենք» անվանումը: Ինքն է իր երկրային կյանքի օրերում համաձայնել Գրիգոր անվանումին ավելացված Տաթևացի հորջորջումին՝ դրանով իսկ պատասխանելով մեզ հետաքրքրող հարցին: Տաթևի վանքում էլ 1409թ. դեկտեմբերի 27-ին կնքել է իր մահկանացուն, ամփոփվել սրբազան այդ հողում, այդտեղ էլ՝ Պողոս-Պետրոս եկեղեցում, դարձել նրանց եւ բոլոր սրբերի դասակից: Այնպես որ Գրիգոր Տաթևացին եղել եւ մնում է բոլոր ժամանակների ամենաանցանավոր սյունեցին, որի ամսահ կերպարի առջև թերթային սույն համարով խոնարհվում ենք երիցս:

Գրիգոր Տաթևացուն այսկերպ անդրադառնալու պատճառներից մեկն էլ, ավելի ճիշտ առիթը Սյունիքի մարգապետ Սուրեն Խաչատրյանի եւ Գրիգորի իշխանությունների ձեռնարկումն է՝ նրա հիշատակը երիցս հավերժացնելու համար: Առհասարակ Գրիգորն միշտ էլ կենսունակ է եղել Գրիգոր Տաթևացու պաշտամունքը: Պատահական չէ, որ 1990-ականներին՝ անկախության առաջին տարիներին, երբ հարկ եղավ անդրադառնալ քաղաքի փողոցների ու հրապարակների անվանումներին, քաղաքային իշխանությունը խորհրդային պետության հիմնադրի անունը կրող կենտրոնական հրապարակն ու հրապարակին հարող փողոցը կոչեց սուրբ Գրիգոր Տաթևացու անվամբ: Այդ հրապարակում էլ այսուհետ կհանդիսանա Սուրբ Գրիգոր Տաթևացու վեհաշուք հուշարձանը: Մարգապետի սույն մտադրացումն իրականություն դարձավ երիտասարդ քանդակագործ Նարեկ Օրդյանի եւ շնորհաշատ ճարտարապետ Սեւադա Ջաքարյանի մտքի ու ջանքի շնորհիվ: Հուշարձանի կառուցումը եւս մեկ անգամ վկայում է, որ այսօր էլ Տաթևացու ոգին առաջնորդն է մեր, որ Սյունյաց աշխարհն իր սրտում պահում է Տաթևացու ոգին:

Անկախության շրջանում Գրիգոր Տաթևացու հիշատակի հավերժացման ուղղությամբ եւս մի քայլ է կատարվել: 1990-ականներին նրա գերեզմանին դրվեց նոր տապանաքար: Այդ գործը կատարեցին Սյունյաց թեմի առաջնորդ Աբրահամ սրբազան Սկրտչյանը եւ Գրիգորի քաղաքապետարանը: Ի դեպ, դամբարանը նախավերջին անգամ հիմնավորապես կարգի էր բերվել 1787 թվականին Բռնակոթ գյուղի մի քանի անձանց կողմից, որ նախածեռնել էր Տաթևի եպիսկոպոս, ծագումով անգեղակոթցի Հովակիմը: Վերջին անգամ բարեկարգվել էր 1931թ. երկրաշարժից հետո:

Շարունակությունը՝ էջ 41

Թերթի սույն համարի տպագրությանն աջակցել են Գորիսի ղեկավար համալսարանի ռեկտոր Յուրի Սաֆարյան, «Ներիկ եւ ողիներ» ՍՊԸ սնօրեն Հենրիկ Նարայանյան, «Առանցք» ՍՊԸ սնօրեն Գագիկ Առուշանյան, որոնց շնորհակալություն ենք հայտնում:



# ՎԱՐՔԱԲԱՆԱԿԱՆ ԳՐՎԱԾՔՆԵՐ

**Գ**րիգոր Տաթևացին տասնչորսերորդ դարի ամենանշանավոր գործիչն ու մատենագիրն է, որի անունը Տաթևի դպրոցի մի անբաժանելի մասն է: Նրա շնորհիվ Տաթևի դպրոցի ուսումն ու ժողովրդականությունը մեծացել են: Ավանդապահ, գործունյա ու բազմազետ ուսուցիչ էր, որ «ի գիշերի խոկմամբ զիմաստս գրոց հաւաքէր, եւ տուրնջեան աշակերտացն պատմէր», – գրում է Առաքել Այունեցին. «ընթերցման է պարապող, աշակերտաց է մարզող... ծածուկ բանից բացատրող»: Որոտնեցու ամենատաղանդավոր աշակերտներից մեկն էր Գրիգոր Տաթևացին:

## ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻ

# Կյանքն ու գործունեությունը

Տպագրվում է կրճատումներով

Ծնվել է 1346թ. Վայոց ձորում: Հայրը՝ Սարգիսը, Արճեշից էր, իսկ մայրը՝ Գրիգորի էր, որոնք, ասպատակություններից փախչելով, եկել, հաստատվել էին Վայոց ձորում, որտեղ ծնվեց Խուրլուշահը: Յոթնամյա ուսում ստանալուց հետո տասնհինգ տարեկան էր, երբ Տփղիսում հանդիպեց Որոտնեցուն, որին աշակերտեց քսանութ երկար տարիներ: Ամեն տեղ հավատարիմ մնաց իր ուսուցչին՝ միշտ նրա գովերգն անելով:



Սուրբ Գրիգոր Տաթևացի (գեղանկարը՝ Ռոբերտ Կամոյանի, 70x60, կրավ, յուղաներկ, 2010թ.)

Հովհաննես Որոտնեցին իր աշակերտի՝ Գրիգոր Տաթևացու հետ անօրեն կեղեքիչներից փախչելով՝ գալիս է Դարանաղի Սեպուհ լեռան Սուրբ Գրիգոր Լուսավորչի հանգստարանը, որ մի խոր ձորի մեջ էր, որտեղ շինված էր նաեւ ձեռակերտ փայտյա փոքրիկ մատուռ, եւ այնտեղ ապահով զգալով՝ մնում են որոշ ժամանակ: Գրիգոր Դարանաղցին գրում է. «Եւ զԳրիգոր Տաթևացին՝ զԼուսավորչին Աստուածաշունչ Գրոց եւ զլուծիչն արտաքնոց, որ մինչեւ յայնմ ժամանակին ղեռ աւագ սարկաւագ եղեր եւ անդ ի դամբարանի Սրբոյն Գրիգորի ձեռնադրելով քահանայ եւ առնելով զաւագան իշխանական վարդապետութեան ի միում աւուր»: Իր կյանքի մեծ մասն անց է կացրել Տաթևում, այնտեղ սովորել ու պաշտոնավարել, այդտեղից էլ ստացել Տաթևացի հորջորջումը: Նրա մասին ամբողջական կենսագրություն չկար: Միայն Լեւոն Խաչիկյանի պրպտումների շնորհիվ երեւանի Մատենադարանի թիվ 6607 ձեռագրի 5ա եւ 6ա էջերից հայտնաբերվեց Գրիգոր Տաթևացու համառոտ կենսագրությունը (Ձեռագիրը, փոխադրված գրական հայերենի, տպագրված է թերթի սույն համարում էջ 3):

Կրումնում՝ իր ուսուցիչը: Հովհան Որոտնեցին իր վախճանից առաջ՝ 1388 թվականին, «կոչեաց զԳրիգոր Տաթևացին (Գրիգոր) եւ զընկերակիցսն նորա, օրհնեաց զնոսա... եւ ի Գրիգոր ամենեցուն զլուսն եւ ուսուցիչ»:

Նրա հոգեւոր եղբայրներն էլ ցանկացել են, որ ինքը լինի Որոտնեցու հաջորդը:

Տաթևացին Ապրակունյաց վանքում մեծ հռչակ հանեց եւ դարձավ «վարդապետն ամենայն հայոց, երկրորդ լուսավորիչն եւ աստուածաբանն», «զեր ի վերոյ գրլով ամենայն իմաստասիրաց եւ վարդապետաց հնոց եւ նորոց»:

Սակայն Տաթևացին երկար չմնաց Ապրակունիսում, սովոր եւ նյութակամի պակասը նրան եւ ստիպեցին, որ իր աշակերտներով հանդերձ 1390 թվականին հեռանա Աստապատից Տաթև, որտեղ շարունակեց իր ուսուցչական գործունեությունը մինչեւ 1408 թվականը:

Գրիգոր Տաթևացին հնուտ էր լատիներենի եւ լատին աստվածաբանների «սխոլաստիկ ոճի» մեջ: Սուրբ Գրքի եւ աստվածաբանական գիտությունների հետ մեկտեղ հնուտ էր նաեւ հունական արտաքին փիլիսոփայական դպրոցների եւ աշխարհիկ գիտությունների եւ աշխարհիկ գիտությունների, Որոտնեցու դարաշրջանի նշանավոր գիտնականներից մեկն էր: Իր

աշակերտները նրան հետեյալ մակիրներով են կոչել «...մեծ եւ անուանի քաջ հեծտորն, ռաբունապետաց ռաբունապետն, եւ վարդապետաց վարդապետն... որ եղեւ երկրորդ լուսավորիչ ազգոս Հայոց, եւ իբրեւ զարեգակն ի միջօրի պայծառացեալ լուսավորեաց զեկեղեցիս Հայաստանայց»:

1390-ի վերջում, երբ Տաթևացին, Ապրակունյաց վանքը թողնելով, Տաթևում հաստատվեց, հայրենի գավառներից բազմաթիվ աշակերտներ հավաքվեցին այնտեղ: Տաթևացուն աշակերտեցին նաեւ Որոտնեցու վերջին աշակերտները՝ Մխիթար Տաթևացին, Հովհաննես Հերմոնեցին, Գալուստ Վաղանդեցին, Սիմեոն Այունեցին, Հակոբ Բոստացին, Գրիգոր Այրարատեցին, Գրիգոր Ջուղայեցին, Եղիս Ռծովեցին, Հովհաննես Վաղանդեցին, Յովհաննես Շամախեցին, Յովհաննես Կապանցին՝ մակամվայալ Կարմիր, Մատթեոս Ուխտեցին, Մկրտիչ Փայտակարանցին եւ Ստեփանոս Թավրիզեցին:

Տաթևացու դպրոցը նրա օրոք ծաղկման գագաթնակետին հասավ, եւ մի շրջան գիտության ծարավ եւ հոգեւոր կյանքի զոհացում եւ հաճույք պատճառով վայրը եղավ Տաթևի վանքը՝ Հովհան Որոտնեցու եւ Գրիգոր Տաթևացու վարդապետարանը: Տարբեր տեղերից խումբ-խումբ ուսումնասիրավ աշակերտ-

ներն աճապարում էին Տաթև, լուսավորվում հոգով եւ մտքով, մեծ վարդապետի քաջոցալուր վարդապետության լույսով, «զի առաքելանման բոխիւր զշնորհս՝ Հոգոյն Աստուծոյ, եւ նա թեքեալ շարժել զլեզու նորա առ ի վարդապետել զբանն ճշմարտութեան»: Ժամանակակիցներից մեկը հետեյալ պատկերով է նկարագրում նրանց ընթացքը. «Հայոց տներից սկիզբ առած վտակները (աշակերտները), վերածվում էին հորդ գետերի ու հոսում դեպի Տաթև»:

Այստեղ է, որ մեծ մանկավարժը պատկառելի հեղինակությամբ կերտեց իր նախանձելի համբավը: Ունեցավ մոտ 80 աշակերտ՝ վարդապետ, քահանա, կրոնավոր, սարկավագ՝ եկած Այունիքի տարբեր անկյուններից, ինչպես նաեւ եկեղյաց, Արարատյան, Ջուղայի, Աստապատի, Շամախի, Կապանի, Գանձասարի, Փայտակարանի, Թավրիզի եւ Արճեշի կողմերից, որոնց մեծ եռանդով ուսանում էր մոտ 20 տարի՝ 1390-1409 թվականներին: Այս աշխատանքն անում էր այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ «ոչ գոյր անդորրութիւն եւ ոչ հանգիստ խաղաղութեան»: Հաճախ Տաթևացին, աշակերտների զուխն անցած, գաղթել է ապահով վայրեր. «Բռնաւորն Յուսուփ, տերն Թաւրիզու, էառ զՈրոտն ի Սմբատայ իշխանն, վասն բարեխօսութեան նոցա եկն. եւ նա ոչ լուսւ աղաչանաց

վարդապետի»: Կարա-Կոյունլու Յուսուֆն է, որ Լեւոնեմուրի մահից հետո վերականգնել էր իր տերությունը: Տաթևացին, ստիպված հալածական դարձած, փախչում է Արճեշ:

Այժմ քննարկենք Տաթևի դպրոցի մեջ ավանդված կրթական ծրագրերն ու ուսուցման մեթոդները:

Տաթևի դպրեվանքը եղավ այն մեծ հաստատությունը, որ «լուսավորեաց զազգս մեր ճշմարիտ եւ ուղղափառ դաւանութեամբ եւ հաւատով»: Դարեր շարունակ պահեց, պահպանեց եւ զարգացրեց հայ մշակույթը: Հայ մշակույթի եւ արվեստի կրթության կազմակերպման գործի մեջ շատ մեծ դեր ունեցավ Որոտնեցու եւ Տաթևացու անզուգական դպրոցը:

Գրիգոր Տաթևացու օրոք առավել եւս պայծառացավ Տաթևի դպրոցը: Տաթևացին հմտացել էր իրն եկեղեցական եւ հայ գրականության մեջ, ուսումնասիրել էր հույն փիլիսոփաների գործերը, ինչը որ Արեւմուտքում եւս անում էին, ծանոթ էր ունիթորների շրջանում ընդունված գրականությանը: Գիտեր նաեւ լատիներեն: Տաթևի դպրոցում ավանդվում էին հայ գրականությունը, ինչն ու նոր կտակարանների մեկնությունը, սուրբ հայրերի գրվածքները, «զԳիրս արտաքին իմաստասիրացն», «լուծմունք արտաքին գրոց», որ Պլատոնի, Արիստոտելի, Փիլոնի եւ Պորփյուրի գրվածքներն ու դրանց բացատրություններն են: Այս ամենից զատ դասավանդում էր նաեւ երաժշտություն, ճառասացություն եւ գրչության արվեստներ:

Երեւանի Մատենադարանի ձեռագրերից թիվ 7823-ից քաղված հետեյալ հատվածից տեղեկանում ենք, որ Տաթևի համալսարանն ուներ երեք ուսումնարան:

Սիւս թե ինչ է գրում այդ մասին Ա.Սովակիսյանը. «Երեք ուսումնարանները Տաթևի համալսարանի երեք ֆակուլտետներն են: Ինչպես մենք տեղեկանում ենք վերոհիշյալ հիշատակարաններից, այդ ուսումնարաններում դասավանդվող առարկաները Այունյաց դպրոցին ծանոթ, այդ դպրոցի սիրված ու փայլալույս գիտություններն են եղել: Ինչպես տեսանք, առաջին ուսումնարանում ուսուցանում էին նախկին երգիչների երաժշտությունը, ուրեմն՝ եւ տեսություն, եւ երգեցողություն, այս արվեստն այնքան էր մշակված Տաթևի բարձր դպրոցում, որ երկրի բոլոր կողմերից գյուղերից ու քաղաքներից, գալիս էին այնտեղ երաժշտական կրթություն ստանալու: Անշուշտ, այստեղ մեծ տեղ էր տրվում եկեղեցական երաժշտությանը:

Երկրորդ ուսումնարանում ուսուցանում էին «զանազան նկարչութիւնս», դիմանկարչություն, տեսապատկերի (պեյզաժ) նկարահանություն, մանրանկարչություն, ծաղկանկարչություն, գրքերի գեղարվեստական ձեւավորումը, ծաղկագարդումը, նաեւ գրչության արվեստը՝ գեղագրությունը, որ այս դպրոցի ամենասիրելի առարկաներից մեկն էր:

Երրորդ ուսումնարանում ուսումնասիրում էին գլխավորապես հունամիտար, հասարակական գիտությունները, ինչ որ այդ ժամանակ կոչվում էր արտաքին գիտություն, որի մեջ մտնում էին փիլիսոփայությունը, ճարտասանությունը, քերականությունը, պոետիկան, տրամաբանությունը, դաստիարակությունը կամ մանկավարժությունը: Այստեղ էին ուսուցանվում նաեւ մերթիւն գիտություններ՝ մայրենի լեզուն, գրականությունը, պատմությունը, տնտեսությունը եւ այլն: Ինչպես տեսանք, այս ուսումնարանում ուսուցանվում էր Տաթևի դպրոցի արվեստները» էջ 4



# ՎԱՐՔԱԲԱՆԱԿԱՆ ԳՐՎԱԾՔՆԵՐ

## Գրիգոր Տաթևացին ըստ ժամանակակիցների

Այսօր՝ դեկտեմբերի 27-ին, երիցս երանելի քաջ վարդապետ Գրիգորի ննջումն է, որ աշակերտն էր Հովհան Որոտնեցու:

Աստծո այս սքանչելի այրը Հայկազյան ազգից էր, երկու աշխարհներից՝ հայրական կողմից՝ Քաջբերունի տոհմից և մայրական կողմից՝ Արարատյան գավառի Փարաի գյուղավանից: Ծնված էր Վրաց աշխարհում՝ Թմոք ամրոցում, մեծացած հարազատ եղբոր մոտ: Դավիթ քազավորի տանը(1): Եվ արտաքնապես գեղեցիկ մանուկ էր, ուշիմ և լի էր Հոգու պարզեցումներով: Եվ երբ հայոց մեծ փիլիսոփա Հովհաննես Որոտնեցին կամեցավ երուսաղեմ գնալ՝ սուրբ տեղերին երկրպագելու համար, տեսավ մանուկ Գրիգորին, որ առաջադեմ էր ամեն տեսակ ուսման մեջ, վերցրեց իր հետ, և դարձրեց հոգեւոր որդի և սնեց բարու մեջ, սովորեցրեց աստվածային Գրքերի և արտաքին փիլիսոփաների խորհուրդները: Երուսաղեմ տանելով՝ նրան ձեռնադրեց քահանա և ետ բերելով դեպի Սուրբ Լուսավորչի գերեզմանը՝ ձեռնադրեց վարդապետ՝ որպես Աստծո տանը համ տվող աղ և լուսավորող լույս: Քերելով Այուրյաց աշխարհը՝ հրաման տվեց իր մահվանից հետո նստել Հայոց ազգը պատիվ ստացավ այլադավաններից՝ վեհասքանչ Գրիգորի անորձալի և իմաստա-

### ՄԱՏԹԵՈՍ ԶՈՒՂԱՅԵՑԻ



**Մատթեոս Զուղայեցի (Երևան, ձեռ. 6607, 22թ., Քարոզ գիրք, 1715թ., Կարին, Մուկունուկ վանք: Ծաղկող՝ Թեոդոս)**

բուխ խոսքերի շնորհով: Նաեւ ստեղծեց բազմիմաստ գրքեր՝ ընդդեմ բոլոր ազգերի՝ որպես ճշմարտադավան ցույց տալով հայերին: Գրեց նաեւ խրատական, իմաստալից ու հանճարեղ խոսքեր, իմաստնացրեց Հայ ազգը առավել, քան այլ ազգերն էին, բարենորոգեց Եկեղեցու կարգերն ու վարդապետությունը: Համապազ գեղաված էր աստվածային խորհուրդների ընթերցմամբ և մեկնությանը, անձանձիր էր աղոթքների մեջ, ջանադիր՝ ծնրադրության

մեջ, աղքատներ էր և օտարներ, առատաձեռն՝ աղքատներին ողորմելու մեջ, խարազանագետ էր մարմնով և խոնարհ էր հոգով, ծննդկան՝ մտքով: Բարձրահասակ էր ու պայծառադեմ, պանծալի գեղեցկությամբ, խարտյաշ մազերով, առատ մորուքով, մշտապես պահեցող, խիստ արտասվահեղ, տոները հարգող և սուրբերին ու նրանց խոսքերը սիրող:

Երանելին վախճանվեց Տաթևի վանքում դեկտեմբերի 27-ին, թաղվեց մեծ առաքյալներ Պետրոսի և Պողոսի տոնի օրը, և եղավ նրանց դասակից և պատվակից 1409 թվին, ի փառս մեր Քրիստոս Աստծո, որ օրհնյալ է հավիտյանս, ամեն. որի հիշատակը թող օրհնյալ լինի, ամեն:

**Մատթեոսյան, ձեռագիր N 6607, թ.թ. 5ա-6ա**

1. Դժվար մեկնաբանելի խոսք է: Կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ. հարազատ եղբայր ասելով նկատի ունի Հովհան Որոտնեցուն, որը թեեւ նրա ուսուցիչն էր, սակայն Քրիստոսով եղբայր էր, որը նրան կրթել է սաղմոսների ոգով, որոնց հեղինակը Դավիթ մարգարեն էր, մանավանդ որ սկզբում նախքան քահանա դառնալը հոգեւորականները սովորաբար դպիր կամ սաղմոսերգու են լինում: Սակայն սա ընդամենը մեկնաբանություններից մեկն է:
2. Լեկսեմոնի մասին է խոսքը: **Գրաբարից աշխարհաբարի վերածեց ևս. Գրիգորյանը**

## Ադամգիրք

ՀԱՏՎԱԾ

### ԱՌԱՔԵԼ ԱՅՈՒՆԵՑԻ



**Առաքել Սյունեցի (Երևան, ձեռ. 1225, 4թ. Մաշտոց ձեռնադրության, 1693թ., Արիանապոլիս: Ծաղկող՝ Մինաս Էպրեմեցի)**

Հայոց թվականի ութ հարյուր հիսուն և երկուսին, մերերով նոր տարին, Այս խորհրդավոր խոսքերը գրվեցին Յուրախություն մարդկանց սրբերի:

Աղաչում եմ ձեզ, սուրբ ընթերցողներ, Աստծուն ուղղղված ձեր աղոթքներում Մշակեք մեծ վարդապետին, իմ դասաւսցին, Բարիքների պարճատ Գրիգոր անունով (իդ) փոխում և այրումով մերձավորներով:

Պայծառամիտ ու հանճարեղ, Պահեցող, աղօթող և արարավախեղ, Մաքուր հոգով, անմեղ բնությունով, Մեծ հեղափոխի՝ համեղաբան:

Խոսքեր իրիկնեց հանճարագույն՝ Քննելու բոլոր գոյերի մասերը, Քրասն ու վեց գիրք, ինչպես ժողովուրդ, Դրված եկեղեցու սկունքներ

Իմ մեծ բարեկամներ, հույժ իմաստասեր Գրիգոր մեծ ձգտագրացի համար աղերսեղեք Տիրոջը:

Իմ հանճարեղ մեծ վարդապետին՝ Գրիգորիտիսին հոգով անմեղ, (որ) Շատ մարեր հայրենեց համեղ, Յիշեցեք ձեր աղոթքներում արարավախեղ:

Ողղե՛ք (մեր) խոսքերը ցանկալիին՝ Ի դեմս մեծ վարդապետին, Քանզի նա ողղեց կարգը խոսքերի, Լսր յուրաքանչյուր պարզամիտ:

Առաջնորդն իմ հոգեւոր Եվ հեզու մարմնատր ազգակիցը, Նա հրամայեց ինձ գրելու Այս ուրանավորն ըստ խորհրդի:

Ասաց ինձ, որ գրեմ ըստ կարգի Նախնիների հիշատակի համար՝ Արամի և Եվայի մասին՝ Ընդդեմ օձի և բանասիրտի:

Հույժ պանծալի բարեկամներ Իմաստասերի ծով և շնորհի ծառայ, Այդ նոյն շնորհից ինչ որ մաս առա Այս ուրանավորը գրեցի:

Նունեկների այգի և ժողովների դաշտ, Լուսաբախանց, պայծառ մարտի,

Անջինջ և սևանց իմաստություն, Այլ իրեկտորներից անկի գերազանց:

Ահա րեսա մեղիի ճանճը, Որ շրջագայում է ժողովների մեջ՝ Մարմուն է կիթեկուն առնի՝ Նրբարեսակ, հիսնալի:

Առաջնորդ՝ պայծառ և հրաշքաբան, Լուսաբախան իմաստի ծով, Քո գեղերի վրակներն ընթանում են, Ոռոգում են մարդկանց ոգիները:

Եվ նա գրեց բազում ճառեր, Որոնք ունեն անհուն իմաստություն, Քրասն և չորս գիրք, ինչպես ժողովներ Դրված եկեղեցու սկունքներ:

Անուշ ժողովների խնկալի փոսի, Բուրեղով բոլոր ազգերի թմբի մեջ Հոգու մասերի գնալեցուցից Գրիգորիս, ցանկությունների այր:

Քննակից հոսում է սևանց շնորհք, Մաքուր մանուկների մարմն ակտոմեկի, Քաղցրաճաշակ պապակ մարդկանց, Գրիգորիսու պեղ հայկազունների:

Նարամ աղբյուրների սկերի մեջ՝ Աստվածաշնչի ժողով-խոսքերի, Հոգու ձեռքերի մասերերով բաղում ես, Փունջ-փունջ բաշխում մանկանց հոգիներին: Չմոտալի լեռան վրա բնակվելով, Լույսի նման պայծառացած, Միրյան իմ հավել է ինչպես հուրից Քո նկարմամբ սիրո բաղձանքից:

Վերցնելով անկյութական իմաստությունը, Չեսագրում ես մարդկանց մարմուն, Եվ դու գրեում անզուգական Կգրվես անջինջ հարույն անուսայր:

Փառքով նարամ պարտեզում, Անուշատուր բուրապանում, Լսելի դարձրու ինձ թո ձայնը, Որ հստեղարվե՛ն շունչս ու հոգիս:

Բաղձանքի իդճը թո սիրով, Տուր ինձ համբույրն բերանի, Չի ծարավ է սիրոս հոգու Ընչպես թո գինու արիները:

Քո իմաստության հույժ փառագարտ հյուսթը այլ աննիմաստ հեղափոխների (համար) Դու հանճարի ծառ և արմար, Սուրբ իրեղեններին հանգ ու համեմար:

Գունարվածների գաղերին գովալուր Մեկնից բոլոր կրակարանների, Դու բուրաբան լույսով ժողոված, Եկեղեցիների թագ ու պապ:

Հասարակի ծնվածները, որոնք օգրվել են թո շնորհներից, Ժողովվելով, վանքերի երգն են օրհնություն պալիս թեզ, թեզ ազգակիցներին և նախնիներին:

Եվ ես հեղին բոլորից, Շնորհներից գուրկ և սևաուր, Տեղ Առաքել՝ նվաստ ոգի, Չեմ հանդեմում գովել վեհիդ ցանկալի:

Յնձարով հոգով ծախսաբարի, Պայծառանալով սուրբ հավաքում, Չազգախառն լինելով սուրբ կրամով, Մրիթ ստագաստր՝ ժողոված լույսով:

Որ հարյուր թուսականին Ես հիսուններդ սկզբած տարին Որանավորներս ավարտեցի Իմ վարդապետի կամքով:

**Աշխարհափրութամբ Ա.Մաղդանի, Ադամգիրք, Եր., 1989**

### ԹՈՎԱՍ ՄԵԾՈՓԵՑԻ



**Թովմա Մեծոփեցի և Պողոս Առաքյալ (Երևան, ձեռ. 1380, 23թ., Մեկնություն, 1435թ., Մեծոփավանք)**

մուկներ: 838 (1389) թվականից սկսած՝ այնտեղից դուրս չեկավ մինչև մեր 857 (1408) թվականը: Բայց ինչ-որ պատճառով եկավ Քաջբերունյաց երկիրը, ուր մենք՝ տասներկու եղբայր՝ Մեծ Սարգսի աշակերտներս, գնալով նրա մոտ՝ մնացինք երկու տարի: Անդորրուքում չկար և ոչ խաղաղություն՝ անօրենների չարության պատճառով: Եվ նա խոստացավ մեզ բոլորիս տանել երուսաղեմ և առանձնանալ աշխարհիկ գրա-

դումներից, դաս տալ նրանց: Եվ դարձավ Աղթամարի անհնազանդ աթոռի բանադրանքի պատճառով համոզեց հնազանդ լինել:

Նորից Թավրիզի տեր Յուսուֆ բռնակալը Ամբաստ իշխանից առավ Որոտնը. նրանց համար բարեխոս եկավ [Տաթևացի], իսկ նա չանցազ վարդապետի աղաչանքներից: Եվ ամբողջ տարի [Գրիգորիոսը] բնակվեց Մեծոփա սուրբ ուխտում, և նրա մոտ հավաքվեցին տասն վարդապետ և ութսուն աբեղա և ճշմարիտ վարդապետությամբ ու դասով մխիթարեց նրանց և հաջորդ տարին ելավ գնաց: Եվ նույն տարին մահվան օրհան եկավ նրան տարավ երկնային քաղաքը: Եվ նա առատ ու ճուր էր մտքով՝ բոլոր ազգերի մեջ նրա նմանը չկար՝ ոչ հների, ոչ նորերի, երկրորդ Աստվածաբան էր, Հովհան Ոսկեբերան, այնքան, որ ուսուցանելիս, երբ աչքերս փակում էինք, տեսնում էինք նրա մոտ նստած մի այր ծերունի: Եվ երբեմն հաց ու երբեմն խնձոր էր բաժանում: Եվ երանի էր տեսնողներին ու լսողներին, որովհետև կերպարանքը գարհուրելի էր, և բազում անգամ լսում էինք մարդկանցից, թե Քրիստոս այս ձեռով աշխարհ եկած կլինի: Եվ նա Արձեշի երկիրն ազատեց գիշերվա տեսիլի բերումով Աղթամարի բանադրանքից: Այսպես այս մասին՝ ելնելով եկեղեցու վարդապետների կարիքներից: **Պարմագրական երկեր, Եր., 2003, էջ 15, 16**

**Գրաբարից աշխարհաբարի վերածեց Ա.Մաղդանը**



# ՎԱՐՔԱԲԱՆԱԿԱՆ ԳՐՎԱԾՔՆԵՐ

Սկիզբը՝ էջ 2

սուցանվում էին Հին եւ Նոր Կտակարանները, կրոնական գրքերը, ապա անտիկ աշխարհի մի շարք փիլիսոփաների աշխատությունները, հատկապես Արիստոտելի, Փիլոնի, Պորփյուրի եւ այլն, սրանց աշխատությունների մեկնություններն ու թարգմանությունները: Այս ուսումնարանում ուսումնասիրվում էին բնական մի շարք գիտություններ, հատկապես մարդակազմություն, տարրաբանություն (քիմիա), աշխարհագրություն, աստղաբաշխություն, ապա տոմարագիտություն եւ թվաբանություն»:

Տաբեւի դպրոցի դասընթացներին զուգահեռ ամենամահրաժեշտ առարկաներից մեկն էլ գրչության արվեստի ուսուցումն էր: Հիշատակարաններից բաղկած բազմաթիվ տեղեկությունները վկայում են, որ Գրիգոր Տաբեւացին գրչության արվեստի հմուտ գիտնականներից մեկն էր: Գեղեցկագիր մեկն էր, մանավանդ հոգ էր տանում գեղեցիկ եւ ուղիղ գրելու, ամսխալ եւ ճիշտ գծագրելու, գրերը համաչափ պահելու, ճարտարորեն տղաբուլու, կրճատելու եւ տողադարձելու համար: Բազմաթիվ գրիչներ հիացնումընթով է պարծանքով են արտահայտվել նրա մասին, եւ իրենք իրենց «անարժան» եւ «թերուս» էին համարում Տաբեւացու համոզեալ: Նրանցից մեկն այսպես է գրել. «Գեղեցկայարմար դուրստով ունէր յինքնեան զամենայն արուեստ գրչութեան, քանզի զարդարեալ էր սա ի մեծ վարժապետն Գրիգորե...»:

Գրիգոր Տաբեւացին իր ուսուցչի՝ Հովհան Ռոտունցու մտան առանձնահատուկ հոգածություն էր տածում միջին դարերի հայ բարձրագույն դպրոցների մեջ ամենաշատ սիրված այս ճյուղի հանդեպ: Ինքն իր կրթական գործունեության ընթացքում պատրաստել էր հարյուրավոր գրիչներ, գրագիրներ եւ գրչության արվեստի անմոռելի վարպետներ:

Գրչության արվեստի կողքին զարգացավ նաեւ մանրանկարչությունը: ԺԴ դարերի առաջին կեսի նշանավոր մանրանկարիչներն էին Թորոս Ռուլինը եւ Ասրգիս Պիծակը:

Բազմազույն, բանկարծեք ներկերով նրանք նկարում էին ծաղկածեւ, թռչնածեւ, ձկնածեւ գլխատառեր: Աջանչելի նկարներով զարդարում էին ամբողջական էջերն ու լուսանցքները: Մանրանկարների նյութը գլխավորապես բուսական եւ կենդանական աշխարհն ու երկրաչափական զարդերն էին, ինչպես նաեւ սուրբի պատկերները եւ կրոնական տեսարանները:

Տաբեւացու հետ դպրոցի վերելքին նպաստեցին Հովհաննեսը, Գրիգորը, Առաքելը, Ասրգիսը, Բարսեղը, Կերիոնը, Ծերունը, Կիրակոսը, Հովսեփը, Հակոբը, Վարդանը, Գեորգը, Մատթեոսը եւ հեղինակավոր դեմքեր, որոնք Տաբեւի բարձրակարգ դպրոցի նախկին սաներն էին եւ հետագայում դարձան մեծ վարդապետի պաշտոնակիցները:

Սրանք գիտակից եւ ուսյալ վարդապետների մի փաղանգ պատաստեցին, ովքեր Ավետարանի լույսն ու նախնայց ոգին զնացին տարածելու հայ ժողովրդի մեջ:

Տաբեւացին գրչով ու քարոզություններով ոչ միայն մեծ ծառայություններ է մատուցել Հայաստանյայց եկեղեցուն, նրա դավանությանն ու ավանդությունները պաշտպանելուն, այլեւ բարեկարգություններ է ներմուծել: Վարդապետական մասնավոր իշխանության եւ ծայրագույն վարդապետության կանոնի համար Հայաստանյայց

## ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻ

# Կյանքն ու գործունեությունը

Տպագրվում է կրճատումներով

Եկեղեցին պարտական է Գրիգոր Տաբեւացուն: Ահա թե ինչ գիտակցություն է ունեցել Հայ եկեղեցու բեմի մասին: Այունյաց դպրոցում արդեն շատ դժվար էր բեմ գրավել, երկար աշխատանք է փորձեր էին պետք քարոզելու իրավունք ձեռք բերելու համար: Տաբեւացին Այունյաց դպրոցի այս ավանդությունները կարգի վերածեց եւ ավանդեց մեր եկեղեցուն: Իր այս ներդրումը բավական է Գրիգոր Տաբեւացուն մեծ վարդապետների մեջ կարելու մի տեղ հատկացնելու համար:

Սովորություն է վարդապետական վկայությունների մեջ հիշել իրարից զավգածն ստացողների շարքը: Վերջին դարերի վկայություններում միշտ նախ Գրիգոր Տաբեւացու անունն էին գրում, եւ նոր միայն նրա աշակերտները զանազան ճյուղեր էին կազմում: «Նախ՝ Գրիգոր Տաբեւացի, նորին աշակերտ Դանիէլ, նորին՝ Յովհաննես Հանչեցցին, նորին՝ Չորանը Գրիգոր Արճիշեցին, նորին՝ Ներսէս, որ Մատաղ ասի, նորին՝ Ներսէս Բաղիշեցին, նորին՝ Ներսէս Անկեցին, նորին՝ Բրգուտ Յովհաննես Ոստանցին, նորին՝ Բարսեղ Գաւառցին...սորին աշակերտ Մոկացի Ներսէս ի գեղջէն Ասկնջաւայ, գորոյ մականուն Բեղլու ասեմ, զի մեծ էր բերնը: Սորին աշակերտ Մելիքսէթ Երեւանցի, ի գեղջէն՝ որում անուն էր Վժան»:

Նրանց հաջորդող բոլոր վարդապետները Գրիգոր Տաբեւացու բարոյական ու հարազատ սերունդն էին համարվում:

Տաբեւացին, բազմազբաղ լինելով, առիթ ունեցավ նաեւ վարչական գործերով էլ զբաղվելու: Աղթամարի կաթողիկոսական վեճերի ժամանակ՝ 15-րդ դարի սկզբներին, Տաբեւացին իր՝ իննսուհի հասնող աշակերտներով Մեծոփում էր գտնվում, նրան դիմում են, որ պատահարների դեմն առնի եւ վերջ տա երկպառակություններին: Տաբեւացին Մեծոփա վանքի առաջնորդ Հովհաննես վարդապետի հետ ժողով գումարեց եւ Աղթամարի կաթողիկոսության դերը վերջացած համարեց, ինչը թեմականների սրտից էր բխում: Հակոբ կաթողիկոսին տեղյակ պահվեց այս կարգադրության մասին, որն իր հավանությունը տվեց եւ մի կոնդակով վավերացրեց, բայց այս բոլոր ջանքերն ի դերեւ ելան:

Գրիգոր Տաբեւացին գրեթե իր ողջ կյանքն ուսանելով եւ ուսուցանելով անցկացրեց: Քարոզելու եւ վարդապետելու իշխանությունը Ռոտունցուց ժառանգելով՝ նրա մահվանից հետո՝ 1386-ին, Տաբեւի վանքին առաջնորդ կարգվեց: Նախքան պաշտոն ստանձնելը, երկու տարի (1388-1390) Արարկունիսի վարժարանում պաշտոնավարեց, ապա անցավ Տաբեւ (1390-1408), որտեղ երկար տարիներ մնաց առաջնորդության պաշտոնում, ունեցավ բազմաթիվ աշակերտներ, որոնց մեջ առանձնանում է տասնհինգից ավելի անվանի վարդապետ: Նրանց մեջ նշանավոր է

Ախիբար Տաբեւացին, ով հիշատակարանների մեջ մեծ ռաբունապետ կոչումով է հաճախ հիշվում: Տասներկու այլ աշակերտներ էլ Մեծոփից եկան, որոնց մեջ էր Թովման՝ Լենկթեմուրի արշավանքների անվանի պատմիչը, ինչպես նաեւ վաթսուներկու քահանա:

1406-ին, երբ վասպուրականցիները Տաբեւ եկան եւ լսեցին Տաբեւացուն, հիացան նրա առատախոս եւ պերճախոս դասախոսություններով: Մեծոփեցին գրում է. «ապշեցոյց զամենեսին առաւել քան զիմաստունս հելլենացոց»:

1407-ին հիշատակված է որպես տեղապահ «Աթոռոյս Սիւնեաց»:

1408-ին հսկում էր «յաթոռ վարդապետական եւ աթոռակալութեան Սիւնեաց վիճակիս»:

Բռնակալ Յուսուֆի օրոք, «ի հալածման է անօրինաց», վերցնելով իր մոտ ութսուն աշակերտներին, մի պահ մտածում է Երուսաղեմ գնալ, մեկուսանալով այս աշխարհից եւ այնտեղ «դաս ասել», բայց չկարողանալով իրագործել իր ծրագիրը՝ տեղափոխվում է Արճեշ՝ Մեծոփա վանքը: 1409-ին Հովհաննես Մեծոփեցին շտապում է Տաբեւացուն դիմավորելու, «եւ զնացեալ դեմ ընդ առաջ հոգեւոր ծնողին իւրոն եւ բերեալ յամապատն իւր հանգոյց գնա»:

Այդ տարում Սուրբ կույս Տիրուհու տաճարի շինությունն ավարտվեց, նա նավակատիքի հանդիսությանն իր մասնակցությունը բերեց: Իր «Քարոզագրքի» մեջ Հայաստանի նվաճողներին մտանցնում է փշապատ մի ցանկապատի, որ պատասպարում եւ պաշտպանում է այգին, այսինքն՝ Քրիստոնեական եկեղեցին:

Մի տարի Մեծոփա վանքում իր աշակերտներին ուսուցանում է «գիանբերութիւն քաջ նահատակին Յովհայ, եւ զգիրս գրչութեան Արիստակիսի եւ մեծին Գեորգայ եւ զսուրբ Աւետարանն Յովհաննու»:

Հռչակավոր վարդապետի դասախոսություններն այնքան ազդեցիկ էին, որ Գրիգոր Խլաթեցին, չնայած վաթսուամյա տարիքին, Արճեփի վանքից հասնում էր Մեծոփ՝ ունկնդրելու գիտական վարդապետի դասախոսությունները:

Մեծոփեցին շատ հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում, թե իր աշակերտը (Տաբեւի). «առ մեծ վարդապետն Յակոբ Սաղմոսավանից՝ հոգեւոր հարազատ իւր: Եւ մեք ամենեքին վարդապետք եւ աշակերտք գնացաք առ նա», նույնիսկ վանահայրը՝ Հովհաննեսին չի հաջողվում վերադարձնել: Խոսքը Մեծոփեցուն տանք.

«Եւ եհաս մինչ ի յայն տեղի, որ ասէ՝ Յառաջագոյն քան զսոսն Ջատկին: Եւ եկեալ սիրելի աշակերտք նորա՝ գողացան զնա ի գիշերի: Եւ մեք էլեալ զնացաք զկնի նորա՝ հանդերձ վարդապետաւք եւ եպիսկոպոսաւք եւ գրոց աշակերտաւք, եւ հասաք նմա յերկիրն Այրարատեան, լալով, ողբով, արտասուօք,

աղիողորմ կսկծանօք, եւ ոչ կարացաք դարձուցանել զնա: Եւ անդ ետ մեզ հրաման վարդապետութեան»:

Գրիգոր Տաբեւացու «Քարոզագրքի» քարոզներից մեկի գրիչը՝ Սկրտիչը, հետեյալ անթվական հիշատակությունն է թողել «Ի մեհեկի ժե զմեծ ռաբունապետն, ի սուրբ ուխտես Մեծոփու կու տանելին ի Տաբեւ, եւ մեծ տրտմութիւնք եհաս մեծի եւ փոքու, այլ ողորմութիւնն Աստուծոյ եհաս յօգնութիւն, Յոհաննէս վարդապետն եքեր զբերդաւազն եւ քրիստոնէայ տանուտեարքն ամենայն եւ արգելեց, եւ եղեւ ուրախութիւն մեծ վարդապետս եւ աշակերտացս ամենեցուն: Յիշման արժանի առէք զուտանունս Սկրտիչ»: Հայտնի չէ, թե Տաբեւացին որքան է մնացել Սաղմոսավանքում: Իր աշակերտներն ու քեռորդին՝ Առաքել Սյունեցին, եկել ու նրան տարել են Տաբեւ, որտեղ երկար չապրեց: Տաբեւ վերադառնալուց 36 օր հետո հիվանդանում է եւ վախճանվում 1409 թվականի դեկտեմբերի 27-ին՝ անմխիբար վիշտ պատճառելով հայ ազգին. ըստ ոմանց՝ հայտնաձեռնեց Մեծոփեցիների՝ նա վախճանվել է Հայոց ՊԾԹ թվին, այսինքն՝ 1410 թվականին: Հակասություն չկա, տարին հունվարի 1-ին սկսելու դեպքում համընկնում է 1409 թվականի հետ, իսկ ըստ հայկական տոմարի, երբ տարին սկսվում է օգոստոսի 11-ին, մահվան տարեթիվը զուգահեռվում է 1410-ին:

Մատթեոս վարդապետը Գրիգոր Տաբեւացու մահվան եւ Վրաստանի կոտորածի եւ գերեզմարության առիթով կարդացել է մի դամբանական, որ հետեյալ խորագիրն ունի. «Նորին Մատթեոսի վարդապետի հերքողեան ողբերգաբար, ոգեալ ի թաղումն երջանիկ ռաբունապետին Գրիգորի: Ընդ մին յիշատակեալ զողբս լալեաց կոտորածին, որ ի վրացստունն Ի Փայտակարան քաղաքի, քանզի պատկեր աւուրց ի մի դիպեցաւ»:

Ստորեւ քաղվածաբար մեջբերում ենք մի հատված այդ դամբանականից. «Եւ արդ, ուստի ներքողեցից զքեզ ճառս ողբերգականս, – ավարում է նա՝ դիմելով իր հանգուցյալ ուսուցչին, – քանզի թէ ընթանամ ի հրապարակա եկեղեցւոյն՝ ոչ գտանեմ զքեզ. եւ ի ժողովս բարի արանց, ուր հանապազ նստիիր՝ նոյնպէս եւ անդ ոչ երեկիս. իսկ թէ ի գահոյս թագաւորական շտապեցայց, ուր հանապազ կանխիիր՝ եւ անդ եւս խնդրեմ զքեզ. իսկ թէ ի բնակութիւն ձեր ընթացայց՝ առ ընտանիս եւ սիրելիսն՝ եւ նոքա թերես ողբան զքեզ. իսկ թէ զմայր քո հարցանեմ՝ ի յորբալոյն ոչ կարե պատասխանեմ ինձ. եւ թէ ի գրկեցութեանն քննեցից զքեզ՝ եւ նոքա յօգուց հանեմ, իսկ թէ յուսումնակցան քո ժպրիմն՝ եւ նոքա ի սուգ են անհնարին վասն քոյիս տեսութեան զրկելոյն... իսկ թէ զդասս գրոց աշակերտացն հարցանեմ՝ նոքա իբր զմոլի եղեալ են անտէրունց շրջելի ի մացառուտ վայրս փշոց,

որք անելի ինչ ոչ գտանեմ, բայց միայն զխոցուածս հոգոց: Վասն որոյ ի միտ ածեալ ոչ ուրեք երեւիք աստ՝ յայսմ աշխարհիս, բայց միայն առ տենչալին ձեր Քրիստոս»:

Գովասանք անող Մեսրոպ վարդապետը այսպես է չափաբանում.

«Չբանն ոգեշահ իբրեւ արձան մեզ թողեր,

Կրկին տասամբ եւ քառ թըռվ կազմեցեր,

Ոսկի պակս գլխոյ տոհմին մեր եղեր»:

Ուրեմն Հովհան Ռոտունցի վարդապետի մահվանից հետո գրել է 24 գիրք: Գիտական վարդապետը, որքան հսկա էր իր խորագիտակությամբ եւ արդյունավետ իր գրական գործունեությամբ, այնքան համեստ է իր նկարագրով: Ռոտունավանքում կան Գլածորում գտնվող մի ձեռագրում նա հետեյալն է գրում.

«Արդ, ես թըբրամածն Գրիգոր, վերջինս ի ծնունդս Եկեղեցւոյ, եւ տրուպս բանին ի սպասաւորաց, սիրով միայն զանուն ստացայ, ջանին ի գործն ոչ մխեցայ, յերես անկեալ արդաշեն զպատահաւորս յայսմ զծից յիշել բարի յիշմամբ զմեզ առաջի Քրիստոսի. զի որպէս եւ որչափ յիշէր, բազմապատիժ եւ ձեզ յիշեսցի. ամեն»:

Մեկ ուրիշն էլ նրա մասին գրում է. «Առ ոսոս երջանիկ եւ երիցս երանեալ բազմեղբայտ հօրս մեր եւ երկրորդ արփիւհաւորչի Հայկազեան սեռի Գրիգոր քաջ հռետորի եւ աստուածաբան վարդապետի, զոր այս խառն եւ խաւար ժամանակիս իբրեւ զարեակուն ի միջօրիկ պայծառացեալ լուսաւորէ գեկեղեցի, ոչ ունելով հանգիստ մնաց եւ ոչ մարմնոյ. քանզի հանէ զգիշերն ի բուն յարօքս Աստուծոյ ի յարտասուտ բազմախոս. եւ լնու զկարօտութիւն բազմութեան երբարցս, որ առ ոսոս տրոպ են ժողովեալ, այլ եւ զբոլորս ազգիս, միշտ զմալով ի մեջ պայագեաց՝ մեծամեծաց եւ փոքունց, զի ոչ զոյ իշխան եւ առաջնորդ բաց ի սմանէ»:

Տաճարի երկու դռներից մեկի առջեւ թաղել են Գրիգոր Տաբեւացուն եւ ավելի ուշ այդ գերեզմանի վրա տաճարածեւ, սպիտակ քարերով շինել դամբարան: Հատակը ծածկված է խոշոր սալաքարերով, իսկ ներսի մասի բոլոր դռները նկարազարդելու համար ծեփված են կրաշաղախով:

Առաքել Սյունեցին սրահի կամարների վրա արձանագրել է. «Կամանն Աստուծոյ եւ Առաքել Սիւնեաց եպիսկ, զանգեցի զխաչս ի փրկութիւն ի հոգոյ) մեծ հռետորին եւ ռաբունապետին Գրիգորի, թվ. ՊԾԹ» (1410): Իսկ 1787-ին Տաբեւի առաջնորդներից Տեր Հովակիմը, «Ի Ծղուկ գավառէ, յԱնգեղակոթ գեղջէ» մեծ վարդապետի գերեզմանի վրա, նրան վայել, մաքուր տաշած քարով մի դամբարան է շինել տալիս:

Վերջին երկրաշարժը սրահի հետ վիատակների է վերածել նաեւ մեծ վարդապետի դամբարանի վրա կառուցված սիրուն մատուռը:

Ու մինչեւ այսօր ուխտավորներ են գնում, այցելում եռամեծ վարդապետի մատուռ շիրմին, մոտ են վառում ու խունկ ծխում նրա սրբազան նշխարքը պարունակող ու մատուցող պարփակող նվիրական շիրմին: Ուխտավորները երկյուղածորեն ծնրադրում եւ համբուրում են սուրբ քարը: Եվ երբ նրանք թողնում, հեռանում են դամբարանից, եռամեծ վարդապետի հոգին պլպլացող մոմի նշույթից ներքեւ եւ անուշահոտ խունկի վերածխության մեջ հորձվում է անասելի բերկրանքով:

**ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ ՎԱՐՊԻՍՅԱՆ**  
«Էջմիածին», 1959թ.  
**Աշխարհաբարի փոխադրեց Վահրամ Օրբելյանը**

# Նրա փառքի լուսապսակը երբեք չի խամրի

Ամեն անգամ, երբ հաջաբ ենք ձգում դեպի



Սյունյաց աշխարհի պատմական անցյալը, դարերի երկնակամարում փայլատակող բազում-բազմաթիվ աստղերի մեջ ակնհայտորեն երևում է առավել խոշոր մի լուսատու՝ յոթնալուսյ մի մեծություն: Դա Գրիգոր Տաթևացին է, որ ահա վեց դար շարունակ լուսավորում է մեր ընթացքը եւ, անստրակույս, դեռ լույս ու ջերմություն է սփռել մեր անցյալի ճանապարհին: Իհարկե, Գրիգոր Տաթևացին համազգային, ինչ-որ առումով համամարդկային երևույթ է, որքան էլ նրա կյանքն ու գործունեությունը կապված են Սյունիքի, մասնավորապես Տաթևի հետ, որքան էլ այդ երևույթը քննենք տեղական ինչ-ինչ չափափոխելով: Ու եթե փորձենք մի պահ մտովի ուրվագծել բոլոր ժամանակների հայոց մեծերի բույլը, ապա կտեսնենք, որ նրանում հավիտենական իր տեղն ունի Սուրբ Գրիգոր Տաթևացին: Ասվածը, անշուշտ, չափազանցություն է: Դրանում կարելի է հանգզվել ամեն անգամ, երբ հաղորդվում ենք փիլիսոփայական մտքին, աստվածաբանությանը, մանկավարժությանը, մեկնողական գրականությանը, բժշկագիտությանը, մանրամասնաբանությանը, մի շարք այլ գիտությունների:

Քի արժանի: Դարերի հեռավոր անգամ տեսանելի է, թե պետականություն չունեցող հայ ժողովրդի համար ինչ էր նշանակում Մայր աթոռը Սուրբ Էջմիածին վերադարձնելը:

Պատմության կամոք հայոց մեջ Սյունիքի վարդապետարանին էր վերապահված «գիտությունների արքյուրի» դերը: Տաթևացուց մոտ մեկ դար առաջ էր մեր հանճարեղ պատմիչ Ստեփանոս արձանագրել Սյունյաց վարդապետարանի մասին. «Հայաստանի բոլոր գիտությունների գլխավոր տեղն էր, որտեղ գտնվող դարոցները ծաղկած էին: Չէ՞ որ ինչպես քաղաքական դարոցներն էին հռոմեականների մեջ փարթածացած եւ գիտությունների մայր հռչակված իսպանացիների աշխարհում... այնպես էլ այսօր՝ Թորոնթոյան տանը՝ մեր հայոց աշխարհում»: Գրիգոր Տաթևացու օրերում սյունիքյան դպրոցը հասավ մի նոր՝ աննախադեպ բարձունքի:

Սյունիքում մշտապես ու հպարտությամբ են հիշում, որ Գրիգոր Տաթևացին հիմնականում գործել է այստեղ եւ մասնավորապես Տաթևում: Մշտապես հիշում ենք, որ նա ամփոփված է տաթևյան սրբազան հողում, եւ նրա շիրմին բոլոր առիթներով աղոթքի ենք գնում: Դա հավելյալ պարտավորություն է մեզ նրանում հավիտենական վառ պահելու, նրա գիտական ժառանգությունն աճող սերնդին հետևողականորեն հասցնելու հարցերում: Այնպես որ Գրիգոր Տաթևացու հուշարձանը երբեք պետք է հանդերձ Գորիսի կենտրոնում: Եվ մեծագույն պատիվ է ժամանակակիցներիս համար, որ հենց մեզ վիճակվեց այդ խնդրի լուծումը:

Վստահ եմ, որ Գրիգոր Տաթևացու անունը կրող հրապարակը, որտեղ վեհորեն կհանճի նրա հուշարձանը, կդառնա գործեցիների սիրելի վայրը: Վստահ եմ նաեւ, որ Գրիգոր Տաթևացու քարե մերկայությանն առնչվելիս ամեն անգամ յուրաքանչյուրիս մեջ նորովի կարթնանան մեր պետության, Հայ առաքելական եկեղեցու հանդեպ մեր որդիական սիրո ամենաջերմ զգացումները:

Ուրեմն՝ թող հավերժ Սուրբ Գրիգոր Տաթևացու ոգեղեն ներկայությունը հայոց աշխարհում, թող հավիտենական լույսի աշխարհից մշտապես հորդի նրա աղոթքն ու օրհնությունը հայ ժողովրդի, հայոց պետության հզորացման համար:

**Սուրեն Խաչատրյան**  
**Սյունիքի մարզպետ**

# ԱՐՐԱՅԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԿՐՏՉՅԱՆ. «Այն ամենի մեջ, ինչ ասել է Տաթևացին, չգիտեմ՝ կա՞ որեւէ բան, որ արդիական չէ»

Հարցազրույց Սյունյաց թեմի առաջնորդի հետ

– Սրբազան, Ձեր անձնական ներդրումը Գրիգոր Տաթևացու գիտական ժառանգության ուսումնասիրության գործում: Որքանով տեղյակ ենք, որքան այն հոգեւորականներից եք, որ զբաղվել եք նրա գիտական ժառանգությամբ:

– Գրիգոր Տաթևացու ժառանգությանն անդրադարձել եմ սիրողական մակարդակով, քանզի նրա ժառանգությունն այնքան վիթխարի է, որ ասել՝ ինչ-որ լուրջ բան եմ արել, սխալ ու հավակնոտ կլինի: Միայն նրա հիմնարար աշխատությունները կազմում են 18 հատոր, հիմնականում ձեռագիր վիճակում, չհաշված այն ամենը, ինչ որ առանձին կտորներով պահպանվել է: Պատկերացրե՛ք՝ ինչ վիթխարի ժառանգության հետ գործ ունենք: Բայց կային հարցեր, որոնք այսօրվա համար հրատապ էին: Խոսքս 1980-ականների վերջի եւ 1990-ականների սկզբի մասին է, երբ ազգային կարգոնք եղավ, ազգային շարժման սկզբնավորմանն ուղիներ հարդորելու հրամայականի առջեւ էինք կանգնել: Եվ ահա այդ ժամանակ մի խումբ երիտասարդ վարդապետներով փորձեցինք Տաթևացու ժառանգության մեջ փորձիշատե խորանայով վեր հանել արժեքներ եւ տալ մեր ժողովրդին: Եվ իրոք, Տաթևացին դարերի խորքից եկավ աստարելու մեր պաշտպարական շարժանը: Ուսումնասիրության արդյունքում ծնվեց մի գրքույկ՝ «Հայ եկեղեցին՝ քննարկելու դեմ պայքարի հարցում», որ պատրաստեցի գիմնականության համար: Տաթևացին շատ ինքնատիպ մտքեր է արտահայտել «Գիրք հարցմանը»-ում ոչ միայն թշնամուն դիմադրելու, այլ նաեւ հաղթելու եւ պարտված թշնամու երկրից ավար բերելու ու այն բաժանելու վերաբերյալ: Այդ գրքույկը տպագրվեց 15 հազար օրինակով եւ հանձնվեց այն ժամանակ կոմպո ֆիդայական ջոկատներին, առաքվեց հանրակրթական դպրոցներ եւ իրապես շատ ոգեւորիչ ազդեցություն ունեցավ:

– Ասում են՝ Տաթևացին հայ եկեղեցու վերջին սուրբն է: Ի՞նչ ասել է սուրբ: Մեծը նրանից հետո՞ էլ սուրբ ունեցանք, մկատի ունենք Մովսես Խոտանացուն:

– Միշտ պետք է մկատի ունենանք, որ Տաթևացին հայ եկեղեցու վերջին սուրբն է՝ որպես տոնացուցային սուրբ: Տաթևացուց հետո Պատարագամատուցյուն սրբացվել է նաեւ Մովսես Տաթևացին (խոտանացին), բայց նա սրբերի շարքը չի անցել: Գրիգոր Տաթևացիով սահմանափակվել է պաշտոնական սրբերի շարքը: Այս առումով կցանկանայի մի ընդգծում անել, որ բոլոր տեսակի շահարկումներից զերծ մնանք: Եթե եկեղեցին, ազգն ընդունում են տվյալ անձնավորությունը որպես Ստոն սուրբ, այլևս այդ անձնավորության արածը, ասածը, գրածը չի կարող քննարկման ենթակա լինել: Դա բացարձակ



ճշմարտություն է: Դա նույնն է, եթե ասեն՝ ես կարծում եմ, որ Աստված սխալ է ասել: Ասելս այն է, որ Տաթևացու հայտնած մտքերը բացարձակ ճշմարտություն են: Երբ Տաթևացին ասում է, թե Աստված է սուրբ ստեղծել, ինչպես ամեն ինչ, եւ այդ սուրբ ստեղծել է, որ մենք չարի, սատանայի ուժերից պաշտպանենք Աստծու տունը, այսինքն՝ եկեղեցին, այդ խնդիրն այլևս չի կարող քննարկման առարկա դառնալ, դա բացարձակ ճշմարտություն է: Նշանակում է՝ Աստված Գրիգոր Տաթևացու բերանով է ասել ճշմարտությունները ժողովրդին: Հասարակության բոլոր խավերը պիտի գիտակցեն դա: Չի կարելի քննարկել ընդունված պաշտոնական սրբերի տեսակետները: Մաշտոցի ասածները չի կարելի քննարկել, որովհետեւ նա սուրբ է: Նույն ձեռով չի կարելի քննարկել մյուս պաշտոնական ընդունված սրբերի՝ Նարեկացու, Որոտնեցու, Նչեցու տեսակետները, եւ մեր սրբերն իրապես մեծություններ են:

– Իսկ տոնացուցային քահանայի սուրբ ունենք:

– Այժմ այդ հարցը պարզելու համար կազմվել է հանձնաժողով, որի մեջ ընդգրկված են նաեւ եւ: Հելայանյան գրած կա անելու, որովհետեւ կան եկեղեցիներ, վանքեր, որոնք իրենց կարգի մեջ սրբացված անձինք ունեն, որոնք հետագայում չեն ընդհանրացվել: Պետք է ընդհանրացվի այդ բոլորը: Խնդրո առարկային առնչվող հարցերի լայն շրջանակ կա ճշտելու:

– Գրիգոր Տաթևացի փիլիսոփայի, աստվածաբանի, մեկնողի, մանկավարժի, մանրակարգչի եւ ծաղկողի մասին մեծ մյուսեր ունենք: Ձեզ հետ կուզեցի՞ք ավելի շատ քննարկել նրա դերը՝ իրեն եկեղեցական գործիչ: Եվ այդ առումով կուզեցի՞ք խոսել հետեւյալ հարցի մասին: Նրա մահվանից 32 տարի անց՝ 1441 թվականին, Ամենայն հայոց կաթողիկոսության աթոռը վերադարձվեց իր բուն եւ օրինական նստավայր՝ Սուրբ Էջմիածին: Համազգային նշանակության այս իրադարձությունը նախապատրաստողը Տաթևացին էր: Հայտնի եւ նրա՝ Աղբանարի եւ Սիսի կաթողիկոսներին ուղղված նամակները...

– Գաղափարի սկզբնավորողը Ստեփանոս Օրբելյանը եղավ, ով առաջին ան-

գամ բարձրացրեց Մայր աթոռը Սիսի Էջմիածին տեղափոխելու հարցը: Տաթևացին, իհարկե, այդ գործում կարեւոր դերակատարողներից մեկն էր: Տաթևացու հետ նաեւ Օրբելյան իշխանական տոհմը (մինչեւ Ռուստամը) գորավիզ եղավ եկեղեցու ներքին կանոնների հաստատմանը: Նույն Ռուստամը Էջմիածինը աթոռանիստ հաստատելու համար իր ունեցած կալվածքներից մվիրատվություններ արեց, նաեւ շրջակայքից գյուղեր զնեց եւ մվիրեց Էջմիածին: Դա Սյունիքի հոգեւոր ու աշխարհիկ գործիչների հայրենասիրության, հեռախոսության, մվիրունի արդյունք էր:

– Սրբազան, մի քիչ էլ խոսեք Ձեր թեկնածուական թեզի մասին:

– Ես թեմային առնչվող որոշ հարցերի անդրադարձա դեռեւս ձեռնարանում ուսանելու տարիներին: «Էջեր Սյունյաց քաղաքի պատմությունից» աշխատությունը հրատարակելով՝ փորձեցի Սյունյաց աշխարհի հոգեւոր պատմությանն անդրադառնալ: Հետո այն դարձավ թեկնածուական թեզի նյութ, որը պաշտպանեցի Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտում: Աս իմ նախորդ՝ պատմական թեմային մերձ աշխատությունների հանրագումարն է, որտեղ փորձեցի վեր հանել Սյունյաց մերոպոլիտական Աթոռի պատմությունն Օրբելյանների իշխանության օրոք: Մոտ 300 տարվա ժամանակաշրջան է դա ընդգրկում, որի մի փոքր մասն առնչվում է Հովհան Որոտնեցուն եւ Գրիգոր Տաթևացուն:

– Ի դեպ, կուզեցի՞ք խոսել Տաթևացու ծննդավայրի մասին, երկու կարծիք կա նրա ծնվելու վայրի մասին: Ըստ «Հայկական սովետական հանրագիտարանի»՝ ծնվել է Վայոց ձորում, ակադեմիկոս Սեն Արեւշատյանը պնդում է, թե Գուգարաց աշխարհի Թմկաբերդ քաղաք-ամրոցում: Ի՞նչ վկայություններ կան դրան առնչվող:

– 17-րդ դարի մի հիշատակարանում մանրամասնորեն մկարագրվում է, թե Գրիգոր բարեպաշտ ծնողների գավակ էր. հոր անունը Ամիր Սարգիս էր՝ Քաջբերունի գավառի Արճեշ քաղաքից, իսկ մայրը Փարպի գյուղից էր: Անօրենների հայածանքների պատճառով բնակություն են հաստատել Սյունիքի գավառում՝ Վայոց ձորում, որովհետեւ այստեղ համեմատաբար ապահով էր՝ շնորհիվ Օրբելյանների վարած հեռախոս քաղաքականության: Հիշատակարանում այնուհետեւ ասվում է, որ ծննդաբերության ժամանակ դժվարություն ունենալով՝ Տաթևացու մայրն աղոթում է՝ Տաթևացին ունենալով Գրիգոր Լուսավորչին, տեսիլք է ունենում եւ դրանից հետո ծննդա-

բերելով՝ գավակին անվանակոչում է Գրիգոր: Նրա ուսման մասին ասվում է, որ գնալով Տփլիսի քաղաք՝ հանդիպում է մեծ վարդապետ Հովհան Որոտնեցուն, որը, մանուկին իր հովանու տակ առնելով, վարդապետական կրթության է տալիս: Եվ Գրիգորին տանելով Երուսաղեմ՝ քահանա է ձեռնադրում, իսկ վերադարձի ճանապարհին՝ Դարձանայոց գավառում, վարդապետական աստիճան շնորհում:

Մի հստակ ճշմարտություն կա, ըստ որի՝ Գրիգոր Տաթևացին աշակերտեց Հովհան Որոտնեցուն: Դա փաստ է, բոլոր տեղերում արձանագրված է: Պարզապես խնդիրն այն է, որ Որոտնեցին իր աշակերտներին կրթում եւ դաստիարակում էր քրիստոնեական, ազգային, հայրենասիրության ոգով, «Սյունիքի ոգով» եւ շարունակում էր այն ավանդույթները, որոնք Սյունիքում էին ձեռնարկվել: Այդ իմաստով ինձ համար, ճիշտն ասած, էական չէ, թե որտեղից այդ մանուկը հայտնվեց Որոտնեցու մոտ: Այլ էական այն է, որ այդ մանուկը որտեղ կարծավ Գրիգոր Տաթևացի, որովհետեւ մեծերի այս շարքը՝ Դավիթ Բաբուրի, եսայի Նչեցի, Հովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի, շատ հստակ շարք է, մեծերի մի համաստեղություն, որ ծնվեց, աճեց եւ դարձավ այդպիսին այս տարածքում: Եվ Գլածոր-Տաթևյան այդ ժառանգությունն է, որ վերջվեցող հայ ժողովրդին կարողացավ պահել որպես հայ ժողովուրդ: Դա ուղղակի պետք է համարակվել եւ ասել:

– Սրբազան, ասում են՝ Տաթևացին սյունիքյան եկեղեցական դպրոցի որոշ ավանդույթներ կանոնակարգեց, վարդապետության կանոնը նա մտրեց. ի՞նչ է դա նշանակում:

– Այդ իմաստով Տաթևացին կարգավորեց Շարակնոցը, ծիսական արարողակարգը, Հայոց կանոնագիրքը: Բայց աստվածաբանական, կրոնական առումներով Տաթևացու մեծությունը նրա թողած ժառանգությունն է, ըստ իս, նախեւառաջ՝ մեկնողական գրականությունը, որը հայ գրականության ամենածավալուն եւ ամենաչլուսմանսիրված բաժինն է: Մեկնողական գրականությունը ժամանակի քրիստոնեական փիլիսոփայությունն է: Վերջինիս էությունն այն է, թե ինչպես պիտի ընկալել Աստվածաշնչի գրքերը, տարբեր փիլիսոփաների, եկեղեցական հայրերի գործերը, դրանց այս կամ այն դրույթները: Երբեմն մեկնությունը ծավալով շատ ավելի է լինում, քան բուն գործը: Օրինակ՝ Մատթեոսի Ավետարանն իրականում փոքրիկ մի գործ է, մինչդեռ Տաթևացին 600 էջաբով մեկնություն է գրել: Ես այդ մեկնությունը պատրաստեցի հրատարակության, բայց, դժբախտաբար, կիսատ մնաց: Տաթևացին կարողացել է յուրաքանչյուր բառ մեկնել, բացատրել, ինչը ներառում է հայ եկեղեցու եւ աստվածաբանա-

Շարունակությունը՝ էջ 7



# ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ

## ՍԵՆ ԱՐԵՎՃԱՏՅԱՆ.

### «Միջնադարյան փիլիսոփաները չհասան այն մակարդակին, որ ուներ Տաթևացին»

Վահրամ Օրբելյանի հարցազրույցը Մատենադարանի նախկին տնօրեն, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս Սեն Արեւշատյանի հետ

– Պարոն Արեւշատյան, նախ՝ մեր զրույցն սկսենք Տաթևացու ծննդավայրից, որի վերաբերյալ տարբեր կարծիքներ կան: Հանրագիտարանում նշված է Վայոց ձոր, մեկ այլ տեղ՝ Գուգարաց աշխարհ: Խնդրում ենք այդ հարցում պարզություն մտցնել (կուզեի՞նք իմանալ Ձեր եզրահանգումները):

– Իմ կարծիքով, որքան ձեռագրական տվյալները հնարավորություն են տալիս, Տաթևացու հայրը Քաջբերունի գավառի Արճեշ քաղաքից էր, մայրը՝ Փարպի գյուղից: Հայրը քաղաքական դեպքերի՝ մոնղոլ-թաթարների արշավանքների պատճառով տեղափոխվել էր Թմկաբերդ, որը Գուգարաց աշխարհում էր, եւ այդ տվյալների հիման վրա կարծում եմ, որ Տաթևացին ծնվել է Թմկաբերդում, հետո ընտանիքով տեղափոխվել են Վայոց ձոր, Սյունիք: Սա է իրողությունը:

– Տաթևացու անունը Խուբուլուշահից դարձավ Գրիգոր, ապա՝ Գրիգոր Տաթևացի, ինչպե՞ս էր:

– Նրա ավագանի անունը, այսինքն՝ մինչեւ ձեռնադրվելը Խուբուլուշահ էր: Ի դեպ, մինչեւ ձեռնադրված էր, երբ որեւէ մեկը հոգեւորական դասի շարքերն է անցնում, նոր անվամբ է մկրտվում, անունը փոխվում է: Հովհան Ռոտունեցին Երուսաղեմ գնալու առիթով որպես ուղեկից ընտրում է իր ամենատաղանդավոր աշակերտ Խուբուլուշահին, որին դարձրել էր հոգեւորիկ: Ճանապարհին ձեռնադրում է արեղա Սեպակի լեռան վրա գտնվող Գրիգոր Լուսավորչի դամբարանի մոտ, նրա անունով էլ կոչում Գրիգոր:


– Տաթևացին դասվեց սրբերի շարքը, ե՞րբ, որտե՞ղ, ի՞նչը հատկապես հաշվի առան, մենք քանի՞ տարե ենք ունեցել, եւ ո՞վ է վերջինը, վերականգնվա՞ծ է արդյոք սրբերի կարգը:

– Գրիգոր Տաթևացին հայոց եկեղեցու տոնացույցով վերջին տարեքն է, մահացել է 1409 թվականի դեկտեմբերի 27-ին: Գրականության մեջ նշվում է 1410-1411թթ., բայց հիշատակարանների հիման վրա պարզել ենք, որ 1409-ին է վախճանվել: Իր մեծ ծառայությունների համար 15-րդ դարում դասվել է սրբերի շարքը: Եվ դրանից հետո սրբերի ցուցակը փակվել է, մինչեւ հիմա այդ շարքը չի շարունակվում, թեեւ եղել են առաջարկություններ, նույնիսկ Սեծ եղեռնի ժամանակ գրհաված երեսելի մարդկանց դասել սրբերի շարքը, բայց այդ առաջարկությունները շարունակություն չեն ունեցել: Եվ փաստն այն է, որ 15-րդ դարից ցայսօր՝ 21-րդ դարը, սրբերի ցուցակը չի շարունակվել:

– Գրիգոր Տաթևացու արձանը ե՞րբ եւ ու՞մ նախաձեռնությամբ է դրվել Մատենադարանի մուտքի մոտ: Կա՞ն այլ քանդակներ, հուշարձաններ՝ Գրիգոր Տաթևացու նվիրված:

– Մատենադարանի մուտքի մոտ արձանը դրվել է 1960-ական թվականներին, շենքը շահագործման հանձնվեց 1957 թվականին: Երկու տարի շարունակ ներքին հարդարման աշխատանքներ էին կատարվում: Շենքի ճարտարապետ Մարկ Գրիգորյանի կողմից նախատեսված էին արձաններ, եւ ընտրություն կատարվեց դեղուկ նաեւ Գրիգոր Տաթևացու արձանը: Ներքեի հարթակում դրվեց Մաշտոցի՝ իր աշակերտ Կորյունի հետ արձանը, մուտքի մոտ եւս վեց արձան՝ այդ թվում Տաթևացու:

– Պարոն Արեւշատյան, կուզեի՞նք արդիական հայացք ձգել Գրիգոր Տաթևացու՝ մեր գիտության մեջ ունեցած տեղի: Այո՞, արդիական: Ի՞նչ տեղ է նա զբաղեցնում մեր գիտու-



ՍԵՆ ԱՐՇԵՍ

ծնվել է 1928-ին Երեւանում մտավորականի ընտանիքում: Ավարտել է Երեւանի Չերեխնսկու անվան դպրոցը: 1945-ին ընդունվել է Լենինգրադի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, բայց մի տարի ուսանելուց հետո վերադարձել է Երեւան եւ ընդունվել պետական լսարանի պատմության ֆակուլտետը, որն ավարտել է 1951թվականին: Բուհի գիտխորհրդի երաշխավորությամբ ընդունվել է հանրապետության Գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրան՝ փիլիսոփայության պատմության գծով: Ասպիրանտուրայում սովորելիս մասնագիտացել է գրաբարի եւ հայ միջնադարյան փիլիսոփայության մեջ: 1956-ին թեկնածուական թեզ է պաշտպանել՝ «Философские взгляды Григора Tatevaci» թեմայով: 15 տարի հետո՝ 1971-ին, պաշտպանել է դոկտորական թեզ՝ «Փիլիսոփայական գիտության ձեռնարկումը հին Հայաստանում» թեմայով: Հին ձեռագրերի ինստիտուտում՝ Մատենադարանում, աշխատում է 1959 թվականից՝ հիմնադրման տարեթվից, նախ՝ որպես ձեռագրերի ուսումնասիրման բաժնի վարիչ, ապա՝ գիտական թարգմանությունների բաժնի վարիչ, իսկ 1982-ին նշանակվել է Մատենադարանի տնօրեն եւ պաշտոնավարել մինչեւ 2007 թվականի մայիսը: Այդ ժամանակվանից առայսօր Մատենադարանում կառավարման խորհրդի նախագահն է, միաժամանակ՝ տնօրենի գլխավոր խորհրդատու: Արտասահմանյան մի քանի ակադեմիաների ակադեմիկոս է, Երեւանի պատվավոր քաղաքացի:



Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (Մատենադարան)

թյան, մեր պատմության մեջ:

– Սկսած Մաշտոցից մինչեւ միջնադարի վերջը Տաթևացին ուրույն տեղ է գրավում՝ որպես բազմակողմանի զարգացած եւ մեծ գիտնական: Նրա վաստակն անգնահատելի է, իր բազմաթիվ գործերով նա հարստացրել է հայ գիտական միտքը, աստվածաբանությունը, հայ մեկնողական գրականությունը, թողել բազմաթիվ աշակերտներ, որոնք շարունակեցին իր գործը: Կնշելի Առաքել Սյունեցու, Մատթեոս Ջուղայեցու, Թովմա Մեծոփեցու անունները: Նրանք մատենագիրներ եւ միա-

ժամանակ փիլիսոփաներ են, իսկ Առաքել Սյունեցին նաեւ բանաստեղծ է: Պիտի նաեւ ասեմ, որ նրա աշակերտները, ուսում ստանալով Տաթևի համալսարանում, ցրվել են Հայաստանով մեկ: մեկը դարձել է ուսուցչապետ, մյուսը վանքն է պահել, վանահայր եղել: Այո՞, նրանց մասին ձեր հորելյանական համարում արժե գրել:

– Սովորաբար մենք այսպիսի բան ենք օգտագործում, օրինակ՝ չարենցագիտություն, արքայազնագիտություն եւ այլն: Տաթևացու դեպքում չգիտենք ինչպես ձեռագրել այդ տեղում: Մի-ուրեք ասե՞ք գիտությունն Տաթևացու մասին: Այ, կուզեի՞նք իմանալ՝ ինչ շրջափուլեր է անցել Տաթևացու մասին գիտությունը եւ ի՞նչ հանգրվան է հասել:

– Միջնադարի առավել խոշոր դեմքերի մասին ստեղծվել է հատուկ գրականություն, ինչպես Խորենացու մասին, որ մի առանձին ճյուղ է, նշենք Նարեկացու նվիրված ուսումնասիրությունները, որոնք հիմք դրեցին նարեկագի-

տությանը: Ինչ վերաբերում է մյուս գործիչներին, որոնք ոչ պակաս ծառայություններ ունեն, ինչպես Մխիթար Գոշը, Հովհաննես Սարկավազը, Կիրակոս Գանձակեցին, Հովհան Ռոտունեցին, Գրիգոր Տաթևացին, նրանց մասին էլ կան մի շարք ուսումնասիրություններ, բայց որ ասենք տաթևացիագիտություն, այդպիսի բան չկա: Հրապարակի վրա են իմ աշխատությունները՝ Տաթևացու նվիրված, պետհամալսարանի պրոֆեսոր Մայրան Զաքարյանի գործերը, կան գրքուկներ, հոդվածներ եւ այլն: Տաթևացուն իրենց ուսումնասիրություններում անդրադարձել են խորհրդահայ գիտնականները՝ Հենրի Գաբրիելյանը, Վազգեն Չալոյանը, բայց առանձին ճյուղ՝ գրիգորագիտություն կամ տաթևացիագիտություն, չի ստեղծվել, որովհետեւ հրապարակի վրա եղած աշխատությունները համարվել են բավարար այդ գործի ժառանգությունն ընկալելու համար:

– Ի՞նչ խնդիրներ կան այսօր Տաթևացու մասին գիտության առջեւ: Մի քիչ ավելի կոնկրետացնենք հարցը. ի՞նչ ունենք մենք Մատենադարանում Գրիգոր Տաթևացուց:

– Այս առումով պիտի ասեմ, որ Գրիգոր Տաթևացու բախտը բերել է: Ի տարբերություն միջնադարյան մյուս գործիչների՝ նրա ժառանգությունը վաղ է սկսել հրատարակվել եւ ընթերցողների սեփականությունը դարձել: Նրա հիմնական գործը՝ «Գիրք հարցմանցը», դեռեւս 1729 թվականին հրատարակվել է Պոլսում, եւ այդ գործը 1993 թվականին լուսապատճենման եղանակով վերահրատարակվել է Երուսաղեմում՝ իմ գրած առաջաբանով: 1740 թվականին հրատարակվել է մեծադիր «Քարոզգրքի» «Չմերան» հատորը, 1741 թվականին՝ «Ամարան» հատորը, դարձյալ Պոլսում՝ 1746 թվականին հրատարակվել է «Ոսկեփո-

րիկ» գիրքը, ինչպես նաեւ 1790-ականներին՝ «Պարապանց» գիրքը: Տաթևացու ժառանգությունը, 18-րդ դարից տպագրված լինելով, տարածվել է եւ Հայաստանում, եւ հայկական գաղթօջախներում, այնպիսի մշակութային խոշոր կենտրոններում, ինչպիսիք են Կոստանդնուպոլիսը, Վենետիկը, Թիֆլիսը, Մադրասը: Բայց մինչեւ 1950-ական թվականները նրա ժառանգությունը չէր ուսումնասիրվել, թեեւ, ինչպես տեսնում ենք, գործերը տպվում էին: Դեռեւս ասպիրանտ լինելով՝ որպես իմ թեկնածուական թեզի թեմա ընտրեցի Գրիգոր Տաթևացու փիլիսոփայությունը, նրա փիլիսոփայական հայացքները: Հողվածներ տպագրեցի ոչ միայն մեր գիտական մամուլում, այլեւ համամիութենական «Вопросы философии» ամսագրում, «Философская энциклопедия» հանրագիտարանում, արտասահմանյան մամուլում: Այնպես որ ծավալուն աշխատանք կատարվեց նրա ժառանգությունը եւ ուսումնասիրելու, եւ ընթերցողների լայն շրջանակներին ծանոթացնելու համար: Իսկ որոշ գործեր, որոնք աստվածաբանական բնույթ ունեն, դեռեւս մնում են ձեռագիր վիճակում, չհրատարակված: Դրանք տարբեր թեմաներով քարոզներ են, Ավետարանի մեկնություններ էլ կան: Դրանք եւս կիրատարակվեն, Մատենադարանի նոր սերնդի աշխատակիցներն այդ ուղղությամբ աշխատանքներ են տանում: Իմ նախկին ասպիրանտ Անուշ Մինասյանի շնորհիվ Հովհան Ռոտունեցու քարոզները հրատարակվեցին, ինձ թվում է՝ նույնը տեղի կունենա Գրիգոր Տաթևացու ճառերի, մեկնությունների եւ մյուս աստվածաբանական գործերի դեպքում: Ասվածին ուզում եմ ավելացնել, որ Տաթևացու թողած ժառանգությունը հիմնականում հրատարակվել է, արդեն նշեցի Պոլսի հրատարակությունից մինչեւ մեր օրերի վերահրատարակությունները:

– Գրիգոր Տաթևացու մասին գիտության առջնորդ մի հարց եւս. կարծե՞ք թե որոշ աշխատանք է կատարվել նրա գիտական ժառանգությունն արդի հայերենի՝ աշխարհաբարի վերածելու ուղղությամբ:

– Ավելի վաղ՝ 1995-ին, Ամենայն հայոց Գարեգին Ա կաթողիկոսի քաջալերությամբ եւ աջակցությամբ, Մատենադարանի աշխատակից Հակոբ Ջյուսեյանի թարգմանությամբ եւ ծանոթագրություններով ընթերցողի սեղանին է դրվել Տաթևացու «Ոսկեփորիկ» գիրքը: Խաչիկ Գրիգորյանի աշխատասիրությամբ աշխարհաբար հրատարակվել է «Սողոմոնի առակների մեկնություն» գիրքը: Այն հանգամանքների բերումով ավելի վաղ՝ 1999-ին, «Նաիրի» հրատարակչությունում իմ թարգմանությամբ լույս էր տեսել ռուսերեն: Նույն խաչիկ Գրիգորյանը Տաթևացու փոքրածավալ գործերն աշխարհաբար թարգմանությամբ է հրատարակել: Գիտեմ, որ փորձ է արվել «Հարցմանց» գիրքը հրատարակել աշխարհաբար թարգմանությամբ, որը դեռեւս մնում է անտիպ. երեւի խմբագրման խնդիրներ կան: Դա եւս լույս կտեսնի: Փիլիսոփայության ինստիտուտում աշխատանքներ են տարվում. Ռոտունեցուց հետո, ինչպես արդեն նշեցի, Անուշ Մինասյանը կանցնի Տաթևացու ժառանգությանը. նախ՝ գրաբարյան տեքստերի հրատարակությանը, ապա՝ դրանք թարգմանությանը: Այնպես որ ուշադրությունը Տաթևացու ժառանգության նկատմամբ չի թուլանում: Եվ դա վերջնական պտուղը կտա մոտ ժամանակներում:

– Առայժմ մեզանում այն տպավորություն կա, որ Գրիգոր Տաթևացու գիտական ժառանգությունը միայն գիտնականների մեջ շրջանակին է հետաքրքրել: Կուզե՞լի՞նք իմանալ, թե գիտնականների մեջ շրջանակից բացի ուրիշ ու՞մ կողմից է ինչպե՞ս է հասցվում այդ ժառանգությունը հայ մարդուն, ուսանողությանը, աճող սերնդին առհասարակ:

– Պիտի ասեմ, որ ժամանակին տպվել են հանրամատչելի հոդվածներ, ինչպես նաեւ տարբեր հանրագիտարաններում Տաթևացին բավականին պատշաճորեն ներկայացվել է: Հատկապես այս վերջինը լավագույն ձև է՝ հանրությանը ներկայացնելու Տաթևացու կյանքն ու գործը: Այնպես որ, ոչ չի տիրապետում գրաբարին, չի կարող օգտվել հնատիպ գրքերից, այդ հանրամատչելի հոդվածներով եւ հանրագիտարաններով կարող է հաղորդակցվել Տաթևացու եւ կենսագրությանը, եւ ժառանգությանը:

– Այլ լեզուներով, եթե չենք սխալվում, բազմաթիվ են Գրիգոր Տաթևացու մասին ուսումնասիրությունները: Հիշում ենք, օրինակ, Ձեր հեղինակած մի գործ՝

«Философские взгляды Григора Татеваци» (1957թ):

– Ես Տաթևացու մասին եւ ի հայերեն եմ գրել, եւ ռուսերեն: Չեր ի հիշատակածն իմ թեկնածուական թեզն է, որը տպագրվել է առանձին գրքով: Եվ «Բանբեր Մատենադարանի», եւ «Պատմաբանասիրական հանդես», «Вопросы философии» (ռուսերեն) ամսագրերում հանդես եմ եկել հոդվածներով: Տաթևացու մասին ժամանակին ծանուցվել է համամիութենական մամուլով, ռուս ընթերցողը եւս հաղորդակից է եղել նրա ստեղծագործությանը: Տաթևացին տեղ է գտել նաեւ ռուսալեզու հանրագիտարանների մեջ: Այնպես որ, ռուսալեզու ընթերցողին եւս ծանոթ է Տաթևացու ժառանգությունը, մանավանդ գիտական շրջանակներին: Բայց Տաթևացու ստեղծագործությունը կարիք է գզում նոր հրատարակությունների, նոր մեկնաբանությունների, քանի որ ընթերցողների նոր սերունդ է աճել, մանավանդ որ նրա մահվան 600-ամյա տարելիցը հնարավորություն է տալիս նորից բարձրաձայնելու Տաթևացու մասին:

– Մի հարց՝ զուտ դավանաբանության ոլորտից: Մի քանի անգամ կարծիք ենք լսել, թե իբր հակաուժիթորական շարժման ընթացքում Որոտնեցին եւ անգամ Տաթևացին չհետևեցին Եսայի Նչեցուն, որն այնքան էլ դեմ չէր կաթոլիկ եկեղեցու հետ Ռայ առաքելական եկեղեցու միավորմանը: Արդյոք ճիշտ է այդ կարծիքը:

– Ճիշտ չէ, որովհետեւ Եսայի Նչեցին արդեն սկսել էր պայքարը ունիթորների՝ Հայաստանում կաթոլիկությունը տարածողների դեմ: Գործը, որ նա սկսել էր, շարունակեցին Հովհան Որոտնեցին եւ Գրիգոր Տաթևացին: Ենչտ է, Եսայի Նչեցին բուն ու հայխուռն պայքար չի մղել ունիթորների դեմ, բայց դիմադրում էր՝ նրանց դեմ գրելով եւ իր աշակերտներին Հայ առաքելական եկեղեցու դավանաբանության գծով տանելով: Երբ աստուծոցավ կաթոլիկական քարոզչությունը, եւ Հայաստան տեղափոխվեցին կաթոլիկ ակտիվ քարոզիչներ, ունիթորական շարժումն ավելի հզորացավ. նկատի ունեն Բարդուղիմեոս Բուրնիացին եւ Պետրոս Արագանացուն, որոնք 14-րդ դարի 20-40-ական թվականներին բուն պայքար էին ծավալել, հայ թարգմանիչների օգնությամբ կաթոլիկ եկեղեցու գաղափարախոսների՝ Թովմա Աբվինացու, Ալբերտ Մեծի գործերը թափանցվեցին: Դա Նչեցու օրոք էր. նա մահացավ 1338 թվականին: Այդ թարգմանական գործերը եւ Գլաձորի, եւ Տաթևի դպրոցների ներկայացուցիչները լավ ուսումնասիրում եւ կարդում էին, որպեսզի կարողանային պայքար ծավալել ունիթորների գաղափարախոսությունների դեմ: Այդ ամենը եւ Որոտնեցու, եւ Տաթևացու ջանքերով կատարվեց: Ի դեպ, Եսայի Նչեցու մի քանի աշակերտներ անցան կաթոլիկների կողմը. քիչ թվով, բայց եղան այդպիսի վարդապետներ, ինչպես Հովհաննես Քննեցին, Հակոբ Քննեցին: Քննա գյուղը՝ Նախիջեանի մարզում, դարձել էր ունիթորների գործունեության կենտրոնը: Որոշ հայկական գյուղեր անցել են ունիթորների կողմը: Այդպիսի բաներ եղել են, բայց ընդհանուր առմամբ ունիթորական շարժումը հաջողություն չունեցավ, որովհետեւ այն հզոր ուժը, որ ներկայացրում էին Որոտնեցին եւ Տաթևացին, կասեցրին այդ շարժումը, պատճեն էղան, եւ հայոց եկեղեցին կարողացավ իր եւ դավանաբանական հիմքերը պահպանել, եւ հավատաձեռն, եւ կառուցվածքը, եւ շուտով ունիթորական շարժումը վերացավ ասպարեզից:

– Հիմա Դուք վաստակած հանգստի եք անցել, հետաքրքիր է շարունակում եք գրավել Տաթևացու ժառանգության ուսումնասիրությանը: Առհասարակ Չեր մերդրումը այդ ոլորտում:

– Շարունակում եմ աշխատել, Դուք ասում եք՝ վաստակած հանգստի եմ անցել, բայց դա բնավ էլ այդպես չէ, օրինակ՝ այս վերջին 2-2.5 տարվա ընթացքում չորս գիրք եմ հրատարակել: Մեկը հայ փիլիսոփայության պատմության հատորն է, մյուսը՝ Գրիգոր Լուսավորչի վարդապետությունը, որ կազմում է Ազաթանգեղոսի գրքի կեսը, հրատարակել եմ աշխարհաբար նոր թարգմանությամբ, հրատարակության եմ պատրաստել Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը»՝ ռուսերեն թարգմանությամբ, հրատարակել եմ Հովհաննես Երզնկացու «Ի տաճկաց իմաստասիրաց գրոց բարեալ բանք» գիրքը: Սա գրաբար բնագիրն է՝ առաջաբանով, ծանոթագրություններով: Այժմ ավարտել եմ տպագրության եւ պատրաստել հինգերորդ գիրքը՝ «Հաճախաստուում» ծանոթ ռուսերեն թարգմանությամբ, մի դասակարգ գործ, որ Գրիգոր Լուսավորչին եւ վերագրում: Բայց, իմ կարծիքով, դրանց հեղինակը Մեսրոպ Մաշտոցն է: Առհասարակ շատ ծանր, դժվար տեքստ է, որն առաջին անգամ է ռուսերեն թարգմանվում եւ այս տարի լույս կտեսնի: Այնպես որ ես չեմ հանգստանում: Ինչ վերաբերում է Գրիգոր Տաթևացու ժառանգության եւ փիլիսոփայական հայացքներին անդրադառնալուն, ապա վերը հիշատակած աշխատություններից բացի, ինչպես ասում եմ, վերջերս իմ վերջին տուրքը մատուցեցի Տաթևացուն: Մոսկվայում հրատարակվում

է «Православная энциклопедия» («Ուղղափառ հանրագիտարան») բազմահատոր ժողովածուն, որը բովանդակում է ռուսաց ուղղափառ եկեղեցու պատմությունը: Դրանում ընդգրկված է նաեւ մյուս քրիստոնյա ժողովուրդների ժառանգությունը: Հանրագիտարանի մեջ գետեղված են իմ հոդվածներն ինչպես Գրիգոր Տաթևացու, այնպես էլ Գրիգոր Լուսավորչի, Գրիգոր Մագիստրոսի մասին:

– Սուրբ Գրիգոր Տաթևացու անվան սկզբում եւս մի մակդիր եմ ավելացնում՝ եռամեծար, ի՞նչ է դա նշանակում:

– Սկսած հինգերորդ դարից՝ միջնադարյան Հայաստանում երեւելի գիտնականներին տալիս էին այդ պատվավոր կոչումը՝ եռամեծ կամ եռամեծար: Դա հելլենիստական շրջանին բնորոշ երեւույթ էր: Հայ իրականության մեջ 5-րդ դարի վերջում, 6-րդ դարի սկզբներին թարգմանվեց Հերմես եռամեծի «Սահմանքը», եւ այդ պատվավոր տիտղոսը տարածվեց Հայաստանում: Առաջին հերթին դա տրվեց Դավիթ Անիաթին: Տաթևացուն վերջին եռամեծարն էր, որովհետեւ նրանից հետո միջնադարյան հեղինակները չեն հասել այն մակարդակին, որ ուներ Տաթևացին:

– Արդ, ո՞րն է նրա փիլիսոփայության մեխը:

– Տաթևացին միջնադարի պայմաններում կարողացավ զարգացնել գիտական գաղափարներ: Օգտագործելով աստվածաբանական տարբեր բնաբաններ՝ սկսեց տալ դրանց փիլիսոփայական մեկնաբանություններ: Միջնադարում առաջավոր ուղղություններից մեկն էլ, եթե ոչ ամենատառաջավորը, այսպես կոչված ճոճիմալիստական ուղղությունն էր: Նոսիմալիզմն առաջնություն տալիս էր անհատ իրերին, ոչ թե վերացական գաղափարներին: Անհատ իրերից էին ստեղծվում տեսակի հասկացությունը կամ գաղափարը եւ սեռի հասկացությունը: Գրիգոր Տաթևացին իր ուսուցչի՝ Հովհան Որոտնեցու պես պատկանում էր այդ ուղղությանը: Նրա մերդրումը մեր փիլիսոփայության մեջ նաեւ դա է՝ բացի նրանից, որ իմացաբանությունը մեծ տեղ է գրավում նրա փիլիսոփայական աշխատություններում եւ մեկնություններում: Տաթևացին առաջնություն տալիս էր զգայարաններին: Ըստ նրա՝ զգայարաններից ստացված տեղեկություններն ամենատույզն են, որոնք ամփոփվում են բանականության մեջ, եւ դրանով արդեն ճանաչում ամբողջաբանում է:

– Ամեն տարանջարի մարդ հաճախ ունենում է հակառակորդներ, ունե՞ր արդյոք Տաթևացին այդպիսիք:

– Տաթևացու հակառակորդները վերը հիշատակված ունիթորներն էին: Նա, իրոք, ունեցել է հակառակորդներ. դրանք եվրոպացի կաթոլիկ քարոզիչներն էին, ինչպես նաեւ որոշ չափով նրանց հայ հետևորդները:

– Պարոն Արեւշատյան, մի հարց եւս կուզեիք շոշափել մեր զրույցի ընթացքում. ի՞նչ ասել է մեկնողական գրականություն, ո՞րն է նրա առաքելությունը:

– Մեկնողական գրականությունը զբաղվում էր երեւելի հեղինակների գործերի մեկնաբանությամբ, օրինակ՝ Արիստոտելի գործերի, որոնք լայնորեն տարածված էին միջնադարում եւ տրամաբանության, իմացաբանության հիմք էին հանդիսանում: Սկսած Դավիթ Անիաթից՝ որոշ փիլիսոփաներ վերջնական էին Արիստոտելի գործերը, դիցուք՝ «Կատեգորիաները (ստորագրություններ)» եւ մեկնաբանում, որովհետեւ դժվար ընկալելի էին դրանք: Պորփյուրի «Ներածություն» կոչված աշխատության վերաբերյալ եւս կան մեկնություններ: Մեկնությամբ զբաղվել է Հովհան Որոտնեցին, նաեւ՝ Գրիգոր Տաթևացին: Դասավանդման նպատակով աշակերտներին ընթերցելի լինելու համար մեկնաբանում էին այդ աշխատություններում արծարծված գաղափարները: Արիստոտելը «Կատեգորիաներ (ստորագրություններ)» աշխատության մեջ խոսում է տասը կատեգորիաների մասին. ի՞նչ է գոյացությունը, ի՞նչ է ժամանակը, ի՞նչ է տեղը, ի՞նչ է գործողությունը, հարաբերությունը եւ այլն: Մեկնիչները մեկնաբանում էին դրանք, եւ ստեղծվում էր փիլիսոփայական հատուկ ժանրի գրականություն՝ մեկնողական գրականություն, որը միջնադարում լայնորեն տարածված էր: Միջնադարի շրջանն ավարտվելուց հետո այդ ժանրն էլ վերացավ, որովհետեւ հասարակական նոր պահանջներ առաջ եկան: 18-րդ դարում հայ իրականության մեջ նոր գրականության ներկայացուցիչներն էին Մադրասի խմբակի անդամները՝ Հովսեփ Եմինը, Մովսես Բաղրամյանը, Շահամիր Շահամիրյանը: Նրանք գրում էին արդեն ինքնուրույն գործեր, որտեղ իրենց գաղափարները շարադրում էին ոչ մեկնության ձևով, ինչպես իրենց նախորդները: Ժամանակը փոխվեց, փոխվեց նաեւ գրականության բնույթը: 18-րդ դարից մեկնողական գրականությունն ասպարեզից վերացավ: Այդ ժանրի վերջին ներկայացուցիչը, կարելի է ասել, 18-րդ դարի մեծ հեղինակ Սեմեոն Երեւանցի կաթողիկոսն էր: Նա մեկնողական ժանրի գործեր է թողել: 19-րդ դարն արդեն նոր ոգի, նոր ստանդարտություն եւ նոր ժանր բերեց: ■

# ԱԲՐԱՅԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԿՐՏՉՅԱՆ.

## «Այն ամենի մեջ, ինչ ասել է Տաթևացին, չգիտեմ՝ կա՞ որեւէ բան, որ արդիական չէ»

Հարցազրույց Այունյաց թեմի առաջնորդի հետ

### Սկզբը՝ էջ 5

կան միտքը, եւ դավանաբանական մոտեցումները, եւ ընդհանրապես ազգային հսկայական նյութ է պարունակում:

Տաթևացին երբեմն անդրադառնում է մի բանի, եւ այդ բանը բացատրում է 10-ից ավելի տարբերակով, թե այդ միտքը տվյալ համատեքստում ինչպես պետք է հասկանալ որպես հայ, որպես հայ եկեղեցու զավակ, որպես հայ քրիստոնյա:

Բոլոր հարցերին տրված են պատասխաններ, որոնց հիմքը քրիստոնեական, ազգային արժեքներն ու մշակույթն են, դարերի ընթացքում ձեւավորված, գրի առնված կամ չգրված օրենքներն ու ավանդույթները. ի՞նչ է աստված, ինչպե՞ս հավատալ, ի՞նչ է ընտանիքը, ի՞նչ է ծնողը եւ այլն: Այդ հարցերի պատասխաններն, ըստ էության, ազգային արժեհամակարգային բնույթ ունեն, բանգի ազգային արժեհամակարգի մասին չեն նստում սեղանի մոտ եւ երեսակայրեն ստեղծագործում, կամ ազգային գաղափարախոսությունն ինչ-որ մարդու կողմից չի ստեղծվում: Դրանք դարերի ընթացքում տվյալ ժողովրդի կողմից կուտակած-ամբարտ արժեքներ են, որոնցով նա առաջնորդվում է որպես այդպիսին:

Հայ մարդն ունի ձեւավորված ազգային կեցվածք, մոտեցում ընտանիքի հանդեպ, ծնողի, երեխայի, եկեղեցու հանդեպ, երկրի հանդեպ: Եթե մենք 5-րդ դարում ասում էինք հայրենիք, եվրոպայում հայրենիք հասկացության ընկալմանը հասել են 16-րդ դարում: Ուրեմն հայրենիք հասկացությանը պետք է անդրադառնանք այդ կրթվածքով, ոչ թե այն հայեցակետով, թե եվրոպացին ինչ է ասում հայրենիք հասկացության մասին: Ի՞նչ է արել Տաթևացին. հավաքել է այդ ամբողջ արժեհամակարգի տարրերը, որոնք այդ ժամանակ արդեն ձեւավորվել էին, դրանք վերաբերյալ մեկնություններ եւ բացատրություններ է տվել:

– Մեր նախորդ զրույցներից մեկում մի հետաքրքրական դրվագ եք պատմել՝ կապված Գրիգոր Տաթևացու ներկայիս տապանաբարի հետ: Հետաքրքիր է վերհիշել:

– Տաթևի վանքի Պողոս-Պետրոս եկեղեցուն կից կա Տաթևացու դամբարանը: Երբ 1993թ. նշանակվեցի թեմի առաջնորդ, բնականաբար, առաջին գործն եղավ այցելել Գրիգոր Տաթևացու գերեզմանին, բայց ցավով տեսա, որ չկա գերեզմանաբար: շրջակայքն անշուք ու անմաքուր էր: Իրապես ցավալի էր, որ այդպիսի մեծության գերեզմանը մնացել էր անշուք վիճակում: Սկսեցի մտածել, թե ինչ կարելի է անել: Տակավին ուսանող էի գիտեի, որ Վազգեն կաթողիկոսն իր համար Իտալիայի մի գեղեցիկ մարմարյա շիրմաքար է բերել տվել: 1980-ական թվականներից նրա առողջական վիճակը պարբերաբար վատթարանում էր: Նա այդ քարի հետ, փաստորեն, 15 տարի գործեց», ծանծաղացավ եւ նորը բերեց, որն այժմ դրված է նրա շիրմին, իսկ հիմքը մնաց պահեստում, առժամանակ մոռացան դրա գոյության մասին: Նրան հաջորդած Գարեգին առաջին կաթողիկոսը բուժվում էր Ամերիկայում, եւ էլ Տաթևում էի, համկարծ ինչեցի Վազգեն առաջինի տապանաբարի մասին: Ամմիջպատե գնացի էջմիածին, գտա այն, համապատասխան ձեւակերպումներ արեցի, թե իբր Վեհափառը տվել է իր համաձայնությունը, եւ ներկայաց-

րի եկեղեցական խորհրդին: Հընթացս զանգեցի Գորիսի ճարտարապետ Սեւադա Ջաքարյանին եւ խնդրեցի շիրմաքարն այնպես տեղադրել, որ ոչ մեկն այլեւս չկարողանա տեղաշարժել: Երբ Վեհափառը վերադարձավ Ամերիկայից, գնացի մոտն ու ասացի, թե մեծ մեղք եմ գործել եւ պատմեցի եղելությունը: Սկզբից մի քիչ նեղարտեց. «Բա ինչո՞ւ, թեզ ո՞վ իրավունք տվեց, քարն ինձ համար էի նախատեսել»: Բայց հետո տեղի տվեց՝ ասելով, որ եթե Գրիգոր Տաթևացու համար ես տարել շիրմաքարը, ընդունելի լինի: Այս է Գրիգոր Տաթևացու նոր տապանաբարի տեղադրման պատմությունը:

– Կարելի՞ է համարել, որ եկեղեցու ուղղափառության համար պայքարը Տաթևացու ամենամեծ մերդրումներից մեկն է հայ եկեղեցու հիմքերն անխախտ պահելու գործում:

– Անպայման: Նա ուղղակի ամբողջացրեց, համախմբեց եւ վերջնական դրեց հայոց դավանանքի հիմնաքարերը: Դրանք այլեւս խախտել չես կարող: Որպես Որոտնեցու աշակերտ՝ ուղղակի արշավում էր ունիթորների դեմ: Եվ չպետք է մոռանալ Տաթևացու հեղինակության խնդիրը, հետաքրքիր է նաեւ նրա արտաքին նկարագրությունը: Չեռազերեցի մեկնում նկարագրվում է այն: Այսօր չգիտեմ՝ Տաթևացուն ինչպես կարող են երեսակայել, բայց Տաթևացին այդ գրչի նկարագրածով եղել է. «բարձրահասակ, փկնեղ, կապույտաշյա եւ յորժան մտամեր ի ժողովս իշխանաց, ամենեքեան սարսափեալ ոտքի կենսալին»: Եւ Տաթևացու նկարագիրն է, եւ ինքն էլ իր գրվածքներում այդպիսին էր: Ուղղակի նա տեղ չի թողնում, որ ասես՝ իսկ, ինչո՞ւ, եթե, կարելի՞ է եւ այլն: Բուլոր հարցերին պատասխանում եւ ծայրից ծայր բոլոր վերջակետերը դնում է: Եվ իր աշխատություններում այնքան հարցերի պատասխաններ է տալիս, որ բավական է, որ դրանք այսօր բացենք, կարդանք, եւ մեզ հուզող շատ հարցերի պատասխաններ կգտնենք:

– Եկեք այս խնդիրն ավելի ընդհանրացնենք, այսօր մեր պետության ընթացքի այս հանգրվանում ի՞նչ դեր կարող են խաղալ Տաթևացու գաղափարները: Գրիգոր Տաթևացին եւ արդիականությունը: Այս կտրվածքով դիտարկենք նրա անձն ու ստեղծագործությունը:


– Քրիստոնեական արժեքները, ազգային արժեքները պահպանելու, հայ ժողովրդին իր ավանդույթների ու ազգային արժեհամակարգի մեջ անխաթար պահելու հարցերում Տաթևացու հավատն ու նվիրումը ամբողջական եւ ու անասանա: Իսկ այդ արժեքները մերժողների, թշնամու դեմ նրա պայքարը հիմնավոր է ու հաղթական, անգիջում, երբեմն նույնիսկ՝ անողորմ: Եվ բոլոր դեպքերում՝ իր տեսակետների, իր ուսուցումների, իր գործունեության ու գործողությունների համար նա հպարտորեն, աներկբա ցույց է տալիս իր ունեցած գաղափարական անուր հենքը, իր Աստվածաշունչն է, դա քրիստոնեությունն է, դա ազգային արժեհամակարգն է, դա հայրենիքի ամբողջական ընկալումն է: Դա իրապես մեծանուն հայ սուրբի իրական կերպարն է, որ առաջնորդողը միշտ պետք է մնա մեր եկեղեցական, պետական, ազգային, բոլոր ստորումների, ձեռնարկումների, գործողությունների ժամանակ՝ որպես հայի կերպար ու ապրելակերպ:

Հրույցը՝ Վահրամ Օրբելյանի



# ԽՈՍՔ ՄԵԾԱՅ

## Գրիգոր Տաթևացու գիտական ժառանգությունը



ՍԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ

...Գրիգոր Տաթևացու համբավը մեծ է եղել ոչ միայն նրա սրբակրոնության և ուսուցչական գործունեության համար, այլև նրա բազմաթիվ գրական աշխատությունների: Դրանցից այստեղ կհիշենք միայն երեք մեծ հատորները, որոնք տպագրված են դեռ 18րդ դարում:

Նրա «Հարցմանց գիրքը» երկուսն են: մեծ և փոքր: Վերջինիս վերնագիրն է՝ «Հարցմունք Գեորգ վարդապետի և լուծմունք Գրիգորի Մոսկովցու հարազատին»: Այս Գեորգ վարդապետը Գեորգ Երզնկացին է. Հովհաննես Որոտնեցու աշակերտներից մեկը, որ նույնպես պարսպել է գրականությանը: գրելով լուծմունք ու մեկնություն: Տաթևացին մանրամասն պատասխանել է նրա 14 հարցումներին «չորագայությունն աստուծոյ Հայկազեան սեռից հարիւրից կրկնակի քառից եւ վեցեակ վեցից», որ է 836 + 551 = 1387թ.:

Մեծ «Հարցմանց գիրքը», ինչպես հեղինակը հայտնում է վերջում գրված «Յիշատակարանի» մեջ, ավարտել է «ի չորագայությունն Հայկազեան աստուծոյ Պիճ թուրի», որ է 846 + 551=1397 թվականին: Գրել է «ի խնդրոյ ունեմն բանասիրի Աստուծոյ», «բազում միջոցաւ եւ փախստեամբ ի տեղիս»: Այգրի «Յառաջաբանի» մեջ (էջ 4 եւ հուն.) հայտնում է, թե գրել է «ի խնդրոյ ուրումն աշակերտի Աստուծոյ», այլեւ թե իր աշակերտներն էլ շատ անգամ աղաչել են իրեն «զխնդիրս ոմանս լուծանել»: Բացի այդ՝ ավելացնում է նա, «Ձի աշխատութիւն իմ մի՛ միայն լիցի ներկայիս լսելոյ, հոգ տարայ եւ յետնոց գրչաւ անհրէչ»: Ուրեմն չի բավականացել բերանացի դասախոսելով, իր դասախոսածն ավանդել է եւ գրավոր: Դա հարց ու պատասխանով հորինված մի դասագիրք է իսկապես այն բոլոր խնդիրների մասին, որ հետաքրքրելիս են եղել այն ժամանակի հարցասերներին: «Յիշատակարանի» մեջ (էջ 772) հայտնում է, թե «է՛ ինչ ի սմա հաւաքեալ ի լուսաւոր բանից վարդապետաց սրբոց ըստ գրոյն կամ իմացուածոյն»: Օգտվում է եւ

արտաքին իմաստունների կարծիքներից: Կա բան էլ, որ իրենից է գրել: «Ձոր եւ ես զօրէն մշակաց բազմահաւաք պտղոց, կամ փունջ մի անուշահոտ բազմերանգ ծաղկանց, կամ չնչին թռչնոյ գխորիսն մեղու, կամ որպէս զլոմայս արւոյն տառապեալ գոյիլ աղերս [=պարզեւ] ընծայեցի ի զանձանակ ճիւղութեան ձերդ մեծութեան, իմաստասեր եւ ճշարտասեր եկեղեցոյդ Հայաստանեայց եւ ընթերցասեր մտաց»:

«Յառաջաբանի» մեջ խոսում է իր կիրառած տրամաբանական մեթոդի մասին: Դրանից առաջ, գրքի սկզբում, դրել է ամբողջ աշխատության «մեծ ցանկը»-քառասուն գլուխ, վերջից քառասունմեկերորդը՝ «Հարցմունք Գեորգեայ»: Այդ ցանկի գլխակարգություններից արդեն իմացվում է գրվածքի ամբողջ բովանդակությունը-«զխնաւոր բանք»: Յետո էլ ամբողջը բաժանում է տասն հատորի, եւ ամեն հատորի սկզբում դնում է նույն հատորի ցանկը՝ արակաների բաժանած, եւ այդ ամեն մի արական ունենում է իբրեւ մի մաս, որի վերնագրի մեջ հայտնում է, թե «մեծ ցանկի» որ կետին է համապատասխանում, օրինակ՝ «զլուխ Դ ի մեծ ցանկէն եւ առաջին պրակ երկրորդ հատորիս, վասն թիւրութեան հերձուածողաց»: Եվ վերջապես՝ անհրաժեշտ է համարել այդ մեծ գրքի ամեն մի վերին լու-

սանցքում էլ դնել հատորը, պրակը, բովանդակությունը. օրինակ՝ «Հատոր Բ. պրակ Ա. վասն հերձուածողաց»: Այսպես ամեն միջոցներ ձեռք է առել, որպեսզի, ասում է նա, դիմելով ընթերցողին, «դիւրաւ գտցես զամենայն գոր եւ խնդրեսցես առանց շփոթելոյ ի կարգի իւրեանց»: Այս ամենը, հարկավ, մի լոկ արտաքին ձեւ է, բայց այդ միայն վկայում է, թե որքան, - մեր ժամանակի համար անգամ նախանձելի, - մեծ հոգացողությամբ է վերաբերվել նա դեպի իր ընթերցողները, եւ որքան մեծ աղթք է տվել նա իր գործադրած նյութի բաշխմանը եւ դասավորությանը:

Այստեղից եւ ընդհանրապես «Հարցմանց գրքի» բովանդակությունից երեւում է, որ շատ կարգացած, շատ մտածած մարդ է եղել Գրիգորը, լավ ծանոթ տրամաբանությանը, կշռադատող եւ համեմատող, դասավորող, տեսակավորող եւ ուսանողների ոյությունը համար խորհող: Նույն ոգին երեւում է եւ նյութի բացառություն կամ շարադրության մեջ: Չզուտվով հարցումներին ըստ կարելիվոյն լիակատար պատասխանել բերում է նույն խնդրի մասին զանազան վկայություններ ու պատճառներ, բազմաթիվ կարծիքներ ու լուսաբանություններ, եւ որպեսզի ընթերցողի համար շփոթում առաջ չգա, սովորաբար դիմում է թվարկության-առաջին,

երկրորդ եւ այլն թվարկությունները հասցնելով երբեմն մինչեւ 30-ի եւ ավելի եւս: Որպեսզի իր գործը թերի եւ անբավարար չլինի, նա բերում է նաեւ հակառակորդների կարծիքները եւ ընդդեմ պատասխանները: Օրինակ՝ տասներորդ հատորի մեջ շատ երկար խոսելով «Վասն համդերձեալ աշխարհին», մերժում է կաթոլիկների ընդունած «բավարան» կասածը, եւ նույն հատորի ԺԳ պրակ դնում է. «Վկայութիւնք հակառակացն եւ պատասխանքն նոցին» (էջ 695), այսպես սկսելով, «Այլ եւ տեսցուց զվկայութիւնս հակառակացն եւ յարմարեսցուց զպատասխանիսն, զի առձեռն պատրաստ լիցի»:

«Հարցմանց գրքի» խնդիրները, բնականաբար, ամենամեծ մասով կրոնական են, «ընդդեմ նոցա որք զբախտն եւ զհարկն ասեն», այսինքն՝ ճակատագրի հավատքն ընդունողների դեմ: «ընդդեմ հրեից», «ընդդեմ արիստեանց», «ընդդեմ հոգեմարտիցն», «ընդդեմ Նեստորի եւ երկաբնակացն», «Աստուածաբանութիւն ըստ Դիոնիսիոսի» եւ այլն: Խոսում է եւ իրեշտականի ու դեւերի, մեղքերի եւ առաքինությունների, մարդու հոգու եւ բազմաթիվ ուրիշ նյութերի մասին: Յետաքրքիր է «մեծ ցանկի» ԺԵ գլուխը կամ հինգերորդ հատորը. «Վասն կազմութեան մարդոյն», որի մեջ բերում է ոչ միայն մարդակազ-



ՀՐԱՉՍ ԱՃԱՌՅԱՆ

Գրիգոր (սուրբն) Տաթևացի, որդի Ամիր Սարգսի, որ Քաջբերունեաց գավառի Արձէ քաղաքից էր: Ծնվել է «1346թ.» 4այոց ծոռուն, սովորել է Յովհաննես Որոտնեցու մոտ 28 տարի: Նրա հետ գնաց Երուսաղեմ եւ այնտեղ օժիվեց վարդապետ: Հաջորդեց իր ուսուցչին «1388 թվին» եւ նստավ Ապարկունեաց վանքը: Այստեղ նա մեծ աճում հասնեց իր հմտությանը եւ քաջաբան քարոզչությամբ: Մեծովեցին, գովաբանելով նրան, ասում է. «Քրիստոսաձաւալ աղբիւրն եւ անմուտ արեգակն, երկրորդ Լուսաւորիչն», «վարդապետն ամենայն Հայոց, երկրորդ Լուսաւորիչն եւ աստուածաբանն» գեր ի վերոյ գոլով ամենայն իմաստասիրաց եւ վարդապետաց հնոց եւ նորոց»: Տաթևացին հնուտ էր ոչ միայն Ա.Գրոց գիտության եւ աստուածաբանության, այլեւ հունաց արտաքին փիլիսոփայական դպրոցներին եւ աշխարհիկ գիտություններին: Այս բոլորով զինված՝ նա կռվի դուրս եկավ ունիթորության դեմ եւ պաշտպանեց հայ ազգային եկեղեցու անկախությունը պապական ստրկական լծից: Տաթևացին երկու տարի մնաց Ապարկունեաց վանքում, որից հետո փոխադրվեց Տաթևի հռչակավոր վանքը «1390թ.»: Տաթևուն շարունակեց իր ուսուցչական գործունեությունը մինչեւ «1408թ.»: Այս թվին Տաթևացին վերցրեց իր աշակերտների խումբը եւ գնաց Մեծօփի վանքը, ուր շարունակեց իր ուսուցչությունը: 11 վարդապետ եւ 80 արեղա հավաքվեցին իր շուրջը: Մեծօփի վանքը այս առթիվ շատ ծաղկեց: Այստեղ Տաթևացին երկնեց հա-

յոց հայրապետության միության գաղափարը: Նա մեծահանդես ժողով գումարեց Մեծօփում եւ Աղթամարի աթոռը բանադրանքից արձակեց: Իր ծրագիրն էր Սսի գահակալին փոխադրել Աղթամար, գահընկեց անելով Աղթամարի Դաւիթ կաթողիկոսին: Այս վերջին կետը բնականաբար պիտի զայրացներ Դաւիթին, որ ամբողջ ուժով զինվեց նրա դեմ: Տաթևացին կախավ Մոսկովցու վանքը, ուր մեռավ եւ թաղվեց «1410թ.»: Տաթևացին հասցրել է բազմաթիվ աշակերտներ, որոնք մեջ նշանավոր է Առաքել Սիւնեցին՝ հեղինակ Աղամգրքի, որ եւ իր ուսուցչի վրա ունի մի ներթողեան (տպ. Տաթև. ամ. 710-719): Բազմաթիվ են Տաթևացու աշխատությունները, որոնցից հիշատակում ենք. «Գիրք հարցմանց» (գրել է 1397 թվին, խոսում է բոլոր տեսակի գիտության մասին եւ իր ժամանակի համար մի տեսակ համբազիտարան է: Սրա հորինման մասին հեղինակը տալիս է հետեւյալ տեղեկությունը.- «Բացայայտեցի զբանս հարցմանց ի լուսաւոր բանից վարդապետաց եկեղեցոյ, ի խնդրոյ ունեմն բանասիրի Աստուծոյ ուղղափառի, որ ի վաղուց հետեւ բազումն թախանձեր, եւ ես վասն իմոյ տկարութեանս եւ ժամանակիս վրդովման զխնդիրն յապաղէի: Եւ ապա ի սէր եւ յանձնուկ ժտելոյ նորին, ապատանեալ ի Նայն, որ զօրացոյց զսկարս, ձեռն ի գործ արկեալ աւարտեցաւ բազում միջոցաւ եւ փախստեամբ ի տեղիս եւ մեծ ջանիւ փոխացեալ: Որ եւ ոչ ժամանեաց ի կատար բանիս վերոյ ասացեալ խնդրողն, այլ ի հասարակ գրոյս (գրքի կեսին) եւ նա զկեանս առօրեայ հասեալ, ի գանձն իմաստից եւ յաղբերն գիտութեանց, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի ամէն: Արդ՝ եղել գրաւ բանիս ի չորագայութեան Հայկազեան տունարի Պիճ (1397) թուի, ընդ հովանեան երկնահանգէտ մեծարդոյ ուխտի Սիւնեաց մահաճգի, առաքելական աթոռոյ սուրբ առաքելոյ (Տաթևի վանք) եւ այլ չորակայ իրեշտակաբանս սուրբ մենաստանացս, որոց խնամօք ամրացեալ փրկեսցուց յամենայն փորձութեանց. ամեն: Իսկ լուծումն հարցմանց այսոցիկ ոչ ամենեւին օտարածայն աւե-

լորդս խուզեալ, եւ ոչ գեղջուկ իմն աշխարհական խօսից յարմարեալ, այլ զպիտանիս եկեղեցոյն եւ վարդապետաց ոգեշահ խնդիր հոգ տարեալ: Որ եւ աղաչեմ զբարեմիտ հանդիպողս եղբայրական սիրով հաւանեալ՝ զպակասն լնուլ եւ զաւելիսն կշռել եւ պիտանեաց փառս վերընծայել այնմ, որ փառաւորեալ է ի պարզեւս իւր: Իսկ զանպիտանս ներել մերոյ փոքրընկալ անօթոյ եւ դանդաղկոտ փութոյ: Դարձեալ յերես անկեալ արտասուալիք դիմօք հողս եւ փոշի սուրբ զարշապարաց ձերոց, աղերսեմ ի խորոց սրտե՛ զհարազատ գութ հարց եւ եղբայր մեր հոգեւորաց, զի կաթի մի արտասուաց ի կաթիլ զուլ՝ ձերոյ մաղթանաց ցօղեսցէ: Այլ եւ վարժապետին իմոյ եւ մեծ հեշտորի Հայոց Յովհաննու Որոտնեցոյ եղիցի ի սմա յիշատակ մաղթանաց մասին օրհնութեանց եւ վիճակի ժառանգութեան սրբոյն ի լոյս: Ձի ծնաւ ըստ բանի բազմազան երկօք կրթեալ ի մամուլս վարժարանի եւ ի յոյսն կենդանի» (Ստարք 8-9): Ոսկեփորիկ, որի հորինման առթիվ Տաթևացին տալիս է հետեւյալ տեղեկությունը. - «Հաւաքեցի զգիրս Աստուածաբանութեան, որ անուանեալ կոչի Ոսկեփորիկ: Արդ՝ գրեցաւ սա ընդ հովանեաւ Ա. Առաքելոցս, առաքելական աթոռոյն Եւստաթի, եւ այլ բազմահաւաք սրբութեանց, ի ներլ եւ ի նվազեալ ժամանակի, թուականութեան մերոյ ազգի ՊԾԶ=1407 երորդի: Ի խնդրոյ ունեմն բարեպաշտ խոնայ Մատուղշաիի, բնակութեամբ ի սեպուի արանց Դաւրէժ քաղաքի: Ձոր խնդրեաց բազում անգամ գոլով եւ բանի, գրել յաղագս սրբոյ Երրորդութեան եւ յաղագս Քրիստոսի աստուածութեան: Եւ ես տկարս ոգով եւ ծիրեալս մարմնով գրեցի եւ հաւաքեցի ի սրբոց զճշմարիտն եւ զուղիղն կարճառօտ բանիք. եւ ի չորս հատորս բաժանեցի վասն դիւրութեան ընթերցողաց.-Ստարք 27): Դաւանութիւն հաւատոյ, Քարոզգիրք (բաղկացած է երկու հատորից, որոնք կոչվում են Ամարան եւ Չմրան. պարունակվում են 200-ից ավելի քարոզներ. ըստ Չեռ. Դաղեան, Ա 92ա Ամարան հատորը գրված է 1407 թվին, իսկ Չմրան հատորը 1410 թվին.-սրանք թարգման-

ված են վրացերենի՝ ըստ Մառ. Հայ-Ստարք, յարաբերութ. էջ 44): Լուծումը Երրորդութեանց Արիստոտելի, Պերիարմենիասի եւ Պորփիրի (գրված 1383թ. ըստ Չեռ. Դաղեան, Ա 92ա Պորփիրի ներածութեան Լուծումը Տաթևացու է ի «Գիրք Պորփիրի որ կոչի ներածութիւն», Մաղրաս 1793, էջ 325-390), Լուծումը Պարապմանց գրոց Կիւրղի, Ծաղկաբաղ մեկնությունը Եսայեանի ի իրեշտակաբանի վասն Մեծօփայ, ի սպասու դամբարանաց վարդապետաց սրբոց, եւ ընթերցմամբ հաւաքեցի զգծաւարալոյծ բան Յորայ, եւ զմեկնողաց նրա, եւ այլ սակաւ ինչ Լուծումն Արիստակեսի եւ Գեորգայի խրատ գրություն, ընդ նմին եւ զՔաղուածոյ մեկնութեան Յովհաննու Աւետարանչի, եւ ընծայեցի ի պատիւ սուրբ տեղուոյս ուսումնասէր անձանց» (Ստարք 29): Այս գրքի մի այլ ձեռագիրը տես Չեռ. Հալեալ, Բ. էջ 70. Եղիցեալի՝ այն է Գրիգոր Տաթևացու ի յիշատակարանն է, որ գրված է նույն էջում, միայն թվականս վրիպակով գրված է ՈԾԷ (=1208), որ պետք է ուղղել ՊԾԷ=1408 Մեծօփայ (վանք), Քարոածոյք մեկնութեան Մաղմոսացն Դաթի (որի հորինման մասին Տաթևացին հետեւյալ տեղեկությունն է տալիս. «Հաւաքեցի... ի ներլ եւ ստորասուզեալ ժամանակի, որուն բռնակալն Թամուր թոյլատուութեամբ վերին խնամող տիրեալ բազում աշխարհի եւ աւերեալ եւ կործանեալ յայսմ ամի ՊԾԴ (=1405) թուի: Եւ պատճառ շարժութեան (շարժառիթ) վերստին քաղածոյս՝ նախ մեծին Վարդանայ համառօտ եւ խորին տեսութիւն, որ անյայտ մնայր միշտ. հոգացա յայտնի եւ ընդ արձակ ցուցանել: Երկրորդ՝ զի զառաջին քաղուածոյն կարի

կարճ ու պակաս թուրք.- Ստարք 23-24): Առակալ եւ երգ երգոցի (1405 թվից ըստ Չեռ. Ներս. 39 եւ Չեռ. Դաղեան, Ա. 92 ա) եւ Լուծումը դժուարիմաց բանից եւ քաղուածոյ Մաղմոսաց Դաթի (Չեռ. Հալեալ, Բ. էջ 94 բ եւ Չեռ. Դաղեան, Ա. 61 բ), Քարոածոյ մեկնություն Մատթեոսի Աւետարանի (6 հատոր՝ ըստ Չեռ. Դաղեան, Ա. 92 ա. տես եւ Թորոս աղբ. Բ. 448 (երկու ձեռ.), է Չեռ. Հալեալ, Բ. էջ 51-55 եւ հատկապես էջ 53 ա, ուր հեղինակի անունը դրվում է «Ջուարթուն...աշակերտ Յովհաննու Որոտնեցոյն»), Լուծումը Աւետարանի Մատթեոսի, Լուծումն համառօտ դժուարիմաց բանից ի գիրս գրություն Արիստակեսի (անգ, 306 բ), Գիրք փոքր հարցմանց ի խնդրոյ Չեղոգայ Երզնկացոյ (Չեռ. Դաղեան, Ա. 92ա, գրված 1408թ.), Վասն աթոռոյն Արքամարայ (Ազգապ. 2021), Թուրք Գր. Տաթևացոյ առ կաթողիկոսն ի Կիլիկիայ (Չեռ. Վեներ. Բ. 730), Սահմաարարութիւն դաստիարակութեան նորածնեալ մանկանց, որք հրաւիրելոց են յաստիճան քահանայութեան (տպ. Մ.Մաշտ., էջ 337 եւն), Թէ որպէս պարտ է քաղել զշարժառայն, ի վերայ արարողութեան, Աղօթք արձակման, ժամանակագրութիւն (տես Տաթևան, Յուց. 1076թ), Մեկնություն զովսեփոց, տօնից տիրուականաց, ի պատիւ սրբոց, ի պատճառ գիտութեան տիմարաց, մանաւանդ ի յաղբիւս արտասուաց անձանց թաղծեալս, յաւետ ի ճշմարտութիւն կարգաց ուղղափառաց եւ յեղծումն բարբառմանց չարափառաց (Չեռ Վեներ. Բ. 737): Սրանց վրա ավելացնենք «Գրիգորի լուծմունք համառօտ ի տեսութիւն Դաթի Ներգիմացոյ, ազգաւ հայ, իմաստութեամբ հեղինակացի» Չեռ. Երեւ. մատ. N4268 (ինչպես եղեղեցանում է Վ.Տալոյանը), Ընդդեմ Տաթևացի (տպ. ՀԱ 1925-7) եւ Տաթևացին արտագրել է նաեւ մի ճառը՝ Գրիգորի 1399թ. (Չեռ. Վեներ. Բ. 1296), նաեւ մի Աւետարան, որի մասին հետեւյալն է ասում մի գրիչ. «Գեղեցկայարմար դրուտով ունէր յինքեան զամենայն արուեստ գրչութեան, քանզի զարդարեալ էր





# ԽՈՍՔ ՄԵԾԱՅ

մութան, այլև բնախոտության վերաբերյալ գիտելիքներ, տալով ժամանակին հետաքրքրող հարցերի պատասխանները: Օրինակ՝ Ս. Գրքի մեջ պատմվում է, թե մարդը հողից է ստեղծվել, ուստի առաջին հարցումն է. «Կասն է՞ր մարդն ի հողոյ ստեղծաւ»: «Պատասխանի՛ր՝ Աստուծոյ վասն բազում պատճառի: Նախ՝ որպէս ասացաւ ի վերոյ, հողն ունի գայլ գ [Էրեք] տարերքն խառնեալ, յորժամ ի հողոյ սաւ՝ [Ս. Գրքը] իմանալի է գոյ [գլխոյ] տարերքս»: Ուրեմն՝ մարդն իսկապէս չորս տարրերից է կազմված եւ ոչ թե միայն հողից: Ապա բերում է թվարկութեամբ իմն ուրիշ պատճառներ եւս հողից ստեղծվելու, օրինակ՝ «Ինքնորոշ գի մայր մեր հողն է, եւ սեղան, եւ տեղիք, եւ գերեզման. թէպէտ եւ այլ տարրերն են մեզ ազգականք, այլ մեք ի մօրէ՛ ծնանմիք»:

Կան դատողություններ եւս ապացույցներ, որոնք շատ միամիտ են: Բայց չպետք է մոռանալ, որ հեղինակն ապրել է 14-րդ դարում: Այսուհանդերձ նա եղել է մեծ մտածող, ուժեղ տրամաբանող, եւ նրա երկերի մեջ կան նաեւ իր ժամանակի համար շատ լուսավոր մտքեր եւս: Այսպէս, օրինակ, ճակատագրի հավատքը հերքելիս իբրեւ մի երրորդ հիմք դնում է հետեւյալը (էջ 8 եւ հսն.). «Երրորդ՝ եթէ գորինչ ասեաք եւ ճշմարիտ էր, յայնժամ բանս մեր ոչ հետեւէր իրացն, այլ իրն բանիցն հետեւէր, որ է՛ յայտնապէս ստուտ. զի մնացականն ոչ մնացականն ոչ հետեւի: Այլ անդրադարձեալ [= ուրիշ կերպ պատասխանելով, այլ կերպ ասած]. զի հետքն՝ ընթացից

ուրիցն հետեւին, եւ ոչ ոտքն հետոցն. եւ ստուերն՝ մարմնոյ, եւ ոչ մարմինն ստուերին»:

«Ապա ուրեմն յայտ է, զի բանն զիրն ոչ կարէ ճշմարտել, այլ իրն զբանն ճշմարտել, յորժամ գոյ կան ոչ գոյ...»: Այսպէս ուրեմն՝ «բանը», խոսքը, մտածությունն է հետեւում իրականությանը, ոչ թե իրականությունը՝ խոսքին, որ մտածության արտահայտությունն է:

Ավելորդ չէ այստեղ դնել կաթոլիկ եւ հայկական աստվածաբանությունների հնուտ անձի կարծիքը: «Տաթևացին անկասկած պետք է դասել ժամանակին զիտանկաններուն շարքը: Հարցմանց զիրքը թե՛ ոճով է թե՛ պարունակությամբ համահավասար կերպարան եւ արժեք ունի միջին դարու հռչակյալ լատին աստվածաբաններուն, թովմաս Ակուինացիի, Ալբերտուս Սուաբեցիի եւ Սկոպտոս Երիմացիի (Thomas Aquinatis, Albertus Suseviensis, Scotus Erigena) գործերուն հետ, հանգիստակչոն առավելություններով եւ համանման թերություններով: Ասկե կիսեւեցներք, թե ոչ միայն լատիններն իմաստաբանք, այլև լատիններուն ընդունած ձևերով ուզած է մաքառիլ անոնց դեմ: Մինչեւ իսկ կրնանք ավելցնել, թե Հարցմանց զիրքին միմի բացատրություններ կրնան լուսաբանվիլ սկոպտոսիկյաններուն լատիններն դարձվածներուն համեմատությամբ»: Սրանից, սակայն, չպետք է հետեւցնել, թե Տաթևացին լատինաբան հայերենով գրած լինի. նա հորինում է մաքուր հայերենով: Բայց զարմանք

չէ, որ այդպես գրելով հանդերձ՝ նա մեկ-մեկ գործածած լինի օտարաբանություններ, հատկապես երբ իր կարողիկ հակառակորդների կարծիքներն է մեջ բերում:

Գրիգոր Տաթևացու երկրորդ մեծ աշխատությունն է «Քարոզգիրք»-ը, երկու մեծ հատոր. առաջինը՝ «Չմեռան հատոր», երկրորդը՝ «Ամարան հատոր»: Այս երկրորդի վերջում (էջ 720 եւ հսն.) կա հեղինակի հիշատակարանը, որից իմացվում է, որ նա քարոզների գիրքը կազմել է «Ի ստորասուզեալ ժամանակի ի թուաբերութեան մեծի յուքն հարիւր յիսուն եւ վեցերորդի ամի» (856+551=1407): «Չմեռան հատոր»-ն, ասում է, պարունակում է 64 (=160) քարոզ, եւ «Ամարան հատորը»՝ 627 (=184): Նա հայտնում է, որ քարոզների մեջ կան այնպիսիները, որոնք իրենք չեն, այլ ուրիշներից են առնված, ուստի վերնագրերին մեջ դրված են «նորին» եւ «յայմ»-ը. «Ի յատկացին ի միմեանց, եւ մի գողացեալ թուեսցին տխմարաց մտաց»: Ուրիշներից առած քարոզները բավական թիվ են կազմում, հեղինակների անունները ի միջվում սովորաբար: Առաջին հատորի (էջ 15) երկրորդ քարոզն է «Եռամեծի Յօհաննու Որոտնեցոյ տիգեղարայոս թաբուճապետի...»:

Այստեղ, հարկավ, չպիտի խոսենք քարոզների բովանդակության մասին, որ շատ բազմազան է, ընդհանրապես բարոյակրթական եւ ասացական ուղղությամբ: Խոսում է, օրինակ, սիրո, խոնհունության, արիության եւ գործի, հեղգեղի, երկրագործների մասին,

այլեւ քնի, «հալալ ամուսնության», «վասն արդար վաճառաց եւ կշոռց», եկեղեցու խորհուրդների եւ այլն եւ այլն: Մեծ տեղ են բռնում նաեւ սրբերի ու տոների վերաբերյալները:

Տաթևացու «Քարոզը», որ իբրեւ տեսակ, փոխանակել է հին «ճառին» եւ «ներբողյանին», չունի վերջիններիս պերճ ու պաճուճած եւ եռանդալից ձևը, ընդհանրապես սառն ու ցամաք է, պարզուկ ու հասարակ, խոսված լեզվին մոտ, բայց ոչ միջին հայերենով: Իշխող տոնն է հանգիստ սովորեցնող ուսուցչի, որ տալիս է լուրջ բացատրություններ, ազատ չէ սքոլաստիկ ձևերից, թվարկություններից եւ մեկնություններից, որոնք իր ժամանակի մարդկանց համար անհրաժեշտ ու հաճելի են եղել: Առաջել Այունեցին, չափազանց զովելով իր «մեծ վարդապետ» Գրիգորին, անվանում է նրան «մեծ հռետոր», «քաջ հռետոր», «հոգեշարժ լեզուի» սեր: Անշուշտ, նա իր բերանացի քարոզների մեջ ավելի հռետորական շնորհք է ցույց տվել, քան գրավորների մեջ: Հովհաննես Որոտնեցու թաղման ժամանակ ասած նրա ներբողյանն իսկապես հարուստ է ճարտասանական ձևերով՝ հարցում, բացազանցություն, կրկնություն նման կազմությամբ խոսքերի եւ այլն, կան նաեւ պատկերավոր եւ առատաբան արտահայտություններ առանց ճոռնության, տրամագին զգացմունքով եւ անկեղծ սիրով լի մի գեղեցիկ ներբողյան, Սուրբ Գրքից առած նմանություններով մի երախտագիտական զովեստ արժանավոր գործի:

Բայց ինչպես էլ լինի, այս շրջանի վարդապետների գրավոր երկերը մեծ մասամբ ունեն ոչ թե գրական-գեղարվեստական արժեք, այլ ընդհանրապես կուլտուրական: Կարելի չէ, հարկավ, մեր ժամանակի չափանիշով վերաբերվել նրանց գիտական գովածքներին ու գործունեությանը: Առասպելներն ու գրույցները, սին դատողություններն անգամ պարզում են այն դարու ոգին ու հասկացությունները, կյանքն ու բարքերը, էլ չենք ասում կան նաեւ բազմաթիվ փայլուն մտքեր ու դատողություններ, որոնք այն ժամանակի համար ակնբախ են: Չպետք է մոռանալ, որ այն մարդիկը տքնել եւ հորինել են գործնական նպատակի համար՝ պատրաստել, ըստ իրենց ժամանակի հասկացության, գիտուն աշակերտներ, որ ընդունակ լինեին մաքառելու եւ ազգային անկման առաջն առնելու:

Նույնպիսի գործնական նպատակի համար է հորինել Գրիգոր Տաթևացին իր ուրիշ աշխատություններն եւս, այսինքն «զԱրիստոտելի գրոց լուծմունսն, զՍտորագրութեանցն, զՊերիարմենիասին, եւ զԱռաքինութեանցն, նաեւ զՊոլիփիլոսի զպարսպանց լուծմունսն, զՍաղմոսի քաղաածոյն, զԱռակաց քաղաածոյն, եւ զԻմաստութեանն, եւ զԺողովողին... զՅորայ լուծմունսն, զՅօհաննու աւետարանի քաղաածուն զԼուծմունսն Արիստակիսի եւ Գեորգեայ գրչութեանն... զՔաղաածուն Սաաթեսու աւետարանին, եւ զԵսայայ քաղաածուն, եւ զՈսկեփորիկն, եւ այլն»:

Երկեր, Գ հապոր

սա ի մեծ վարժապետն եւ ի քաջ քարտուղարն, մեծ թաբուճապետն եւ քաջ հռետորն Գրիգորի մեծի, որ ձեռնաբ բազկի իւրոյ գրեալ ունէր զօրինակ գտուրք աւետարանիս՝ կետօք եւ ստորակետօք, վանկօք եւ շեշտօք եւ պարոյկաւ. նաեւ դարձագրօք եւ քնակից գիրքն ի տեղի իւր կարգեալ իմաստասիրապէս եւ համաբայքն եւ ճապաղ ցանկն ուղղադրեալ եւ ներքնադրոշմեալ կարմրադեղով» (Չեռ. Վեներ. Ա. 734): -Տաթևացու ինքնածեռագիր մի գործն էլ գտնվում էր Շուշի Ա. Բա-հաթրյանի մոտ. բայց Շուշվա հրդեհին հրո ճարակ եղավ: - Գրիգոր՝ Ս. մաշտ. 336բ, 337բ. Տաթև. հարց. 772. Մեծոփ. 33, 50, 55-56, 59, 60, 69, 3այսմ. ապր. 27. Տաթև. ամ. 720. Աղամ. 229, 271. Առաք. տաթև. էջ 716-717 եւ էջ 719. Մեք. տաթև. 719-720. Առաք. պտմ. 301, 340. Չքր. ազուլ. 42. Դրնդ. (ժամանակագրութիւն) 373, 435, 437, 584, 587. Գրիգորիս՝ Առաք. տաթև. 717. - Գրիգորիս՝ Մեծոփ. 17. 3այսմ. ապր. 27. Աղամ. 322, 325. Առաք. տաթև. 719. Մեք. տաթև. 726. -պարզապէս Տաթևացի՝ Մեծոփ. 85. սեռ. Գրիգորի՝ Տաթև. ոսկեփ. 1, 9, 561. հարց. 1, 4, 6, 93, 773. Մեծոփ. 33, 74. Տաթև. լծ. պրփր. 327. Առաք. լծ. սահմ. 147. Մաթ. Ներք. 148. Տաթև. ամ. 9, 417, 711. Ս. մաշտ. 171 բ, 172 ա, 251 բ, 260 բ, 281 ա. ճշ. 121. Պարզ. 690. ժմ 947. Եփր. խոստ. 23. Լծ. պրպմ. 529. 3այսմ. նոյ. 17, ապր. 27. Աղամ. էջ ժր. Տաթև. ծմ. ա, գ, իե, լ (եւ հաջորդ թվաւորների սկիզբը հաճախ). Չեռ. Պաւր. 46բ. -Գրիգորիսի՝ 3այսմ. ապր. 27. -բց. ի Գրիգորի՝ Տաթև. լծ. պրփր. 325: Կենսագրությունը տես Չեռ. Սեւանի 41. բ, Չեռ. Արգ. յովհ. 172, Չեռ. Վեներ. Բ. 972. Ջարք. Նոր մատենագր. 215-8 (ուր ազգային այս մեծ դեմքը դուրս է բերված իբրեւ մի ողորմելի անձնավորություն, մի-միայն այն պատճառով, որ կարողացել է հզոր կերպով կռվել պապական խարդախության դեմ): - Տաթևացու մասին քննական մի հոդված ունի մեր համալսարանի դոցենտ Տիրան Դա-զանչյանը «Գրիգոր Տաթևացու տարրաբանական հասկացությունների մասին» վերնագրով: Այս հոդվածով հեղինակը երեսն է հանում



Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց հայկական վանքը: Ըստ Մարտիրոս Զուրաբեցու՝ Հովհաննես Որոտնեցին «Երուսաղեմ փանելով՝ Նրան (Գրիգորին - խմբ.) ձեռնադրեց քահանա»:

Տաթևացու ծանոթությունը նյութի անվախճանության մասին (ըստ Տաթևացու՝ «շրջաստեղծության» միջոցով), մարմինների գոյացությունը 4 տարրերի բաղկացությամբ, եթերը՝ իբր տարրերից ամենակատարյալը. հատկությունների փոխանցումը մարմնից մարմին, այրման երեւոյթի բացատրությունը եւն: Հեղինակը գտնում է, որ Տաթևացին այս բոլորի մեջ հետեւում է Արիստոտելի ուսմունքին, բայց ոչ թե նա կրկնում է նրա գաղափարները մեթոմաբար, այլ շարադրում է ինքնուրույն ձևով, երբեմն ավելի կոնկրետ ու ավելի հակիրճ եւ այդ դեռ բավական չէ, հաճախ բերելով ինքնուրույն եւ տեղական օրինակներ՝ ավելի հասկանալի լինելու համար. եւ որ ավելի կարեւոր է, միեւնոյն երեւոյթները բացատրելով ավելի նոր տեսություններով, օրինակ ջերմուկների տաքությունը՝ ծծունքի՝ որպէս կրակի պրիմիցիպի երակների առկայությամբ երկրի ընդերքում»: - Տաթևացու փիլիսոփայական գաղափարների ուսումնասիրությամբ

զբաղվում է նաեւ մեր հայտնի բժիշկ Գաբրիէլ Հարությունյանը, որ իմ խնդրանքով, հատկապես իմ այս գրքի համար, գրեց հետեւյալ ամփոփումը. - «Գրիգոր Տաթևացին իր «Կանոն կազմութեան մարդոյ» հատորի մեջ տալիս է իր տեսությունը մարդու ծագման եւ էութեան մասին: Նա հերքում է աստվածաբանների այն տեսակետը, որ իբր թե առաջ ստեղծվել է հոգին եւ ապա մարմինը: Նա համարում է, որ այդ տեսակետը իմնված է Պլատոնի այն սխալ գաղափարախոսության վրա, որ իբր թե հոգիները բնակվում են մի այլ աշխարհում եւ հարկ եղած դեպքում գալիս մտնում են մարդու մարմնի մեջ: Տաթևացին հերքում է նաեւ հակառակ տեսակետը, այն, որ որպէս թե նախապէս ստեղծվել է մարմինը եւ ապա հոգին, առարկելով, որ եթե ամեն ինչ գոյանում է շրոս տարրից (օդ, ջուր, հող եւ հող), այն է մարմինը-մյուսը, ապա որտեղի՞ց է հոգին: Տաթևացին այն տեսակետի վրա է կանգնած, որ հոգին է մարմինը-մյու-

թը ծագմամբ անբաժանելի են իրարից եւ ծագում են միաժամանակ: Բուսական եւ կենդանական աշխարհում ամեն ինչ, ինչպէս եւ մարդը, գոյանում է սերմից: Նախ գոյացել է ավելի անկատարը՝ տնկականը-բույսը, հետո՝ զգայական-կենդանին եւ ապա բանականը-մարդը, ըստ որում ամեն ինչ զարգանում է անկատարից դեպի կատարյալը: Սերմի մյուսի մեջ կան սկզբնական մյուսի մեջ արարչի հրամանով գոյացել է «կազմողական գործությունը»: Շնորհիվ այդ գործության երեք հատկությունների (ջերմություն, շարժողություն եւ ներգործություն), մյուսը ստանում է կենսական (կենդանական) ուժ, որ է կենդ: Եթե մյուսը այդ գործությունը իր մեջ չի պարունակում, նա մեռյալ է, քար է: Նյութը այդ գործության շնորհիվ կարող է աճել, զարգանալ եւ բազմանալ: Երբ մյուսը սպառվում է պակասում է, «կազմողական գործությունը» նրա սերմի մեջ պահպանվում է: Այդպիսով «կազմողական գործությունը» չի ոչնչանում, այսինքն՝ հոգին անմահ

է: Մարդու հոգու հատկություններն են՝ միտքը, հիշողությունը, կամքը, երեւակայությունը՝ եւն: Տաթևացին համաձայն չէ այս փիլիսոփաների հետ, որոնք գտնում են, որ հոգու այդ հատկությունները անջատ են մարմնից: Նա գտնում է, որ այդ հատկությունները կան հոգու գործությունը անբաժան են մարդու մարմնից: Մարդու հոգու այդ գործությունները (միտքը, հիշողությունը, կամքը եւն), թեպէտ որված են մարդու մարմնի մեջ սկզբից (ժառանգականություն), բայց նրանք ենթակա են փոփոխությունների՝ շնորհիվ կյանքի պայմանների, կլիմայի, կրթության եւ այլ արտաքին ազդեցությունների»: Հիշե՛ք վերջապէս Վազգեն Չալոյանի ռուսերեն աշխատությունը "История разввития философской мысли в Армении", որ շուտով հրատարակվելու է "История философии" աշխատության 5-րդ հատորում եւ ուր Տաթևացուն նվիրված է ամբողջ 20 էջ:

«Հայոց անձնանունների բառարան», հապոր Ա, Երեսն, 1942



ԵՎՍ ՄԻ ԿԱՐԾԻՔ

Ղեւնոյ Ալիշանը Տաթևացու մասին

Հատված «Սիսական» տեղագրությունից

Տաթևի վանքի կաթողիկե եկեղեցու հարավային կողմում կա մի մեծ գավիթ, որ նախ կառուցեց Յովհաննես Բ Եպիսկոպոսը՝ ըստ պատմիչի, և հետո Գրիգոր Տաթևացու քրոջ որդին՝ Առաքելը, 15-րդ դարում: Չգիտեմ այս գավիթի ճակատին կամ այլ տեղում կա՞ Յովհաննես Եպիսկոպոսի արձանագրությունը: Սրանը կառուցելու համար պատմիչից հիշատակվում է մեծ գավիթի սյուններից մեկի վրա նրա հիշատակին [արձանագրություն] 1043-ով թվագրված...

Այս գավիթում է դրված մեծահուշակ վարդապետ Գրիգոր Տաթևացու շիրիմը՝ փոքրիկ մատուռում, որտեղ տանում է տաճարի դուռը, գեղեցիկ խաչանիշ քանդակներով դրվագված, որ կառուցեց Անգեղակոթցի Յովհաննէ Եպիսկոպոսը: Գավիթի ծայրին կամ գլխամասում արևմտյան կողմում, կա վայելուչ զանգակատուն, որը վեր է խոյանում վեց սյուների վրա՝ փոքր կաթողիկե եկեղեցով հանդերձ, կառուցված է Յովհաննէ Ռոտունցու կողմից, ուրիշ շինություններից բացի, երբ վերադարձան ուխտից (Երուսաղեմ կատարած ուխտի մասին է խոսքը), որի մասին գրվում է նրա աշակերտ Գրիգորը չափածո կերպով.

«Սյունյաց թեմին հասնելով եւ գահին բազմելով, Փոքր-ինչ այնտեղ հանգստանալով,

Ձանգակատունը, որ հիմնել էր, ինքն ավարտեց»:

Ձանգակները ավելի հին են, քան իրենց այժմյան զանգակատունը և հնչեցնում են իրենց մեծ մետրոպոլիտ և պատմիչ Ստեփանոսի հիշատակը...

Այս զանգակատանը թաղված է Ներսես Եպիսկոպոս Տաթևացին 15-րդ դարի կեսին, որի մասին ասում է Սյունյաց Եպիսկոպոսների պատմության շարադրողը, թե բազմաթիվ ուղիղ գործեր են բարեկարգությունների արեց թե՛ եկեղեցական, թե՛ քաղաքական, և կառուցեց արևմտյան կողմի խուցերը և եկեղեցին՝ իր գյուղում:

Ս.Գրիգոր Լուսավորչի փոքր եկեղեցին սազաշեն է և գտնվում է հարավային մեծ գավիթի ծայրին, շինված Սյունյաց Փիլիպոս իշխանի կողմից իններորդ դարի կեսին, հետո Յովհաննէ Բ Եպիսկոպոսի կողմից, և վերջում Ստեփանոս պատմիչ Եպիսկոպոսի կողմից...

Պատմիչից առաջ եղած շինություններից կա մի հիշատակ և արձանագրություն եկեղեցու գեղաբանդակ ընկուզեցի դռան վրա՝ 1253 թվականին:

Սրան կից է նորաշեն մատուռը (1787թ.)՝ կառուցված Յովհաննէ Գրիգորի կողմից՝ ի հիշատակ Յովհաննէ Ռոտունցու և Գրիգոր Տաթևացու հանգստարանների, բռնակոթեցի սատարողների անունների արձանագրությամբ, ովքեր շինության ծախսերը հոգացին: Վանքի հյուսիս-արևելյան կողմում գտնվում է փոքրիկ քարակերտ Ս. Աստվածածին եկեղեցին, որ կառուցվել է Գրիգոր Եպիսկոպոսի կողմից իր աթոռակալության սկզբում...

...Սրա [Յովհաննէ Ռոտունցու] կյանքի վերջին տարիներին՝ 14-րդ դարի վերջին և 15-րդ դարի սկզբին, պայծառացավ բազում անգամ հիշատակված նրա աշակերտ Գրիգորը, որ իր երկարամյա բնակության, ուսման, գրական գործունեության և վարդապետության, մահվան և վանքում թաղման համար հատկապես կոչվեց Տաթևացի, և հաջորդների կողմից հռչակվեց ոչ միայն գերագույն, քան իրենից հետո եկած վարդապետները, այլ նաև իրենից առաջ եղած շատերից գերազանց. բացի այն դրվատանքներից և գովեստներից, որոնք գերագույն իմաստուն և քաջախոս են ցուցադրում իրեն, սակայն խոսքի կշռադատության և հմտության տեսակետից ավելի ցածր է, քան իր վարժապետը [Յովհաննէ Ռոտունցին], և կարող է կոչվել վերջին դարերի արձակագիր գրողներից առաջինը, առաջինը թերևս իր գրքերի շատության համար, և ոչ հետինը նյութի ընտրության տեսակետից, սակայն թերևս բազմազանության պատճառով՝ հաճախ ոչ ընտրող, մեկնու-

թյունների մեջ բռնագրոս և ոյուրահավան, մի կողմ թողնելով նաև հնացած ոչ ուղիղ աստվածաբանական տեսությունները, որոնցով անգե տն էր ի աչքին աղարտվում են Հայոց եկեղեցու գերագույն և ճշմարտախոս հայրերի անունները, իսկ ինքը հանդիմանվում է գիտունների կողմից: Թերևս սրանցից է մղված եղել մասամբ հակառակախոս միաբան եղբայրների խոսքերից և գործերից, և մասամբ իր մտերիների հորդորներից և զուցե իր անձի հանդեպ վստահությունից, կամ իրեն նախորդող համակարծիք վարդապետներին հետեւելուց, որոնք իրենց խոսքով զայթաղություն պատճառեցին տգետներին, և արհամարհություն նրանց, որոնք եթե այդպիսի կարծիք չունեին, միաբանում էին նրա բարքի, պարկեշտության և հոգեսիրության համար, որոնցում նա անմեղաբեր է երևում:

Սակայն թողնելով տեսական հարցերը՝ հիշենք նրա կենսագրությունը և գրվածքները: Նրա հայրը՝ Սարգիսը, Քաջբերունիների Արճեշ քաղաքից էր, իսկ մայրը՝ Փարպիից, ովքեր թշնամիների ասպատակություններից եկել էին Վայոց ձոր, ուր ծնվեց Գրիգորը, յոթամյա հասակում տրվեց ուսման, իսկ տասնհինգ տարեկան հասակում հանդիպելով Ռոտունցուն՝ թիֆլիսում աշակերտում է նրան քսանութ տարի և հետևում է նրան ամեն տեղ և ներքողում է նրան, ինչպես տեսանք իր ինքնագիր ձեռագրում, որը գրվել է Ռոտունցուն կամ Գլածորում...

Նրանից առնելով վարդապետելու և քարոզելու իշխանություն, նրա մահվանից հետո (1386) նշանակվում է իր փոխարեն վարդապետ



և առաջնորդ Տաթևում (նախապես երկու տարի վարել էր վարժարան Երնջակում) և 25 տարի մնում է որպես առաջնորդ: Բազում աշակերտներ է պատրաստում, որոնց գլխավորները անուն առ անուն հիշվում են տասնհինգ վարդապետներ: Եվ նրանցից առաջինը Մխիթար Տաթևացին էր, որ մեծ բաբունապետ անվամբ

հիշվում է հաճախ հիշատակարաններում (1406-26թթ.), և տասներկուսը գալիս են Մեծփի վանքից, նրանց հետ է թովմասը՝ Լենկթեմուրի արշավանքների ժամանակի մեծ պատմիչը, և վաթսուներեք հազար զինվորներով: Երբեմն և ինքն է գնում Մեծփի, ուր իր աշակերտակից Յովհաննէսը կառուցում էր Ս.Աստվածածին եկեղեցին, և նավակատիքը կատարում են 1408 թվականին, և վերադառնալով այնտեղից, երկու տարուց մեռնում է Տաթևում, շուրջ յոթամասուամյա հասակում և թաղվում է ճոխ հողարկավորությամբ:

Մեքրոպ վարդապետը չափածո խոսքերով այսպես է գովաբանում նրան.

«Յոզեզահ խոսքեր թողեցիր մեզ որպես արձանագրություն, Կրկնակի տասը և չորս թվով կազմեցիր,

Մեր տոհմի գլխին որպես ոսկի պսակ դրեցիր»:

Ուրիշները նույնպես վկայում են, որ քսանչորս գիրք է գրել, գրեթե բոլորը իր վարդապետ Յովհաննից հետո: Միայն Արիստոտելի որոշ գործերի մեկնություններ կամ լուծմունքներ է գրել դրանից առաջ (1383)...

Սյուն վաղ գործերից է Փոքր Հարցմունք կոչվածը, որ 1387 թվականին գրեց Գեորգ Երզնկացի վար-


դապետի խնդրանքով, որին իրեն հարազատ է կոչում, ավագ հարագառ...

Վերջին գրավոր գործերից կարևորագույն կարելի է համարել Ոսկեփորիկ կոչվածը, որ խոջա Մատուշահի հարցումներն են և Գրիգորի պատասխանները հավատի հարցերի շուրջ... Նույն կամ հաջորդ տարի հասավ Գրիգորի կյանքի վախճանը, որ, ըստ աշակերտների ակնարկության, թեպետ պատկերվում է որպես փառահեղ մեկը...


Թովմա Մեծփեցին և մեկնողական գրքերի հեղինակ Մատթեոսը բազում դրվատներով և իրենցով են հիշում նրան. վերջինը, որ Տաթևից ոչ շատ հեռու գրում էր Գործք Առաքելոցի մեկնությունը, ասում է. «մահվան սուզը պաշարեց ինք և մոռանալ տվեց առօրյա կենցաղը»:

Վերոհիշյալներից բացի Գրիգոր ունի Սողոմոնի գրքերի քաղվածո մեկնությունը: Նրան են վերագրվում նաև Վարդապետական իշխանության կանոնը, և այլ հատուկոր գործեր: Սակայն գրվածներից բացի, իր բերառացի քարոզները պատիվ է հռչակ բերեցին իրեն, ոչ միայն իր ազգակիցներին, ըստ կենսագիրներից մեկի խոսքերի, այլև քարոզում էր իր այլախոսներին, և բազում խոսքերով իրենց վկայություններով Արաբների գրով դնում էր նրանց առաջ պարզաբանելով, որ Քրիստոս Աստված է, և շատերը հավատացին Քրիստոսին և մկրտվեցին: Արաբերներից ավելի հավանական է, որ Գրիգորը իմանալով պարսկերեն կամ թուրքերեն, ժամանակի տարածված լեզուները, թերևս ուրիշների թարգմանություններից օգտված լինելով, եթե սուրյա է այդ խոսքը:

Ինքնագիր գրքերից մեկում՝ մի Ավետարանում, ասվում է, որ ուխտավորները հարգանքով են պահում նրա դամբարանը, և նրա ծածկույթն է իր քրոջ՝ Յոնիփիմեի ասեղանկար գործվածքը, թեպետ պատմությունն ասում է, որ իր ծնողների բոլոր զավակները իր ծնվելուց առաջ մեռած են եղել:



Թմբկաբերդ (Թմուք ամրոց): Մեծ Հայքի Գուգարք նահանգի Վերին Զավախց գավառի միջնադարյան այս դղյակում է, ըստ վարկածներից մեկի, ծնվել Գրիգոր Տաթևացին



Ամաղու Նորավանքը: Վայոց ձորում է, ըստ մեկ այլ վարկածի, ծնվել Գրիգոր Տաթևացին:







# ՊԱՏՄԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## Լեզվագիտական հարցադրումները Տարեւացու աշխարհություններում

Հատված Սուսաննա Գրիգորյանի «Պատմական քերականության հարցեր» գրքից

**Սկիզբը էջ 11**  
երկաթի հողովման եւ իզական սեռի օրինակներից, որ Մագիստրոսը բերել էր հունարենի համաբանությանը.  
1. Գրաւիթ, ի Դաւիթ, առ Դաւիթ  
2. Դաւթի, Դաւթով, Դաւթուն:  
Սկատեմք, որ ի տարբերություն Հովհաննէս Երզնկացու, որ առանձնացնում էր միայն հասարակ անունների սեռական-տրականը, Տարեւացին տարբերում է նաեւ հատուկ անունների սեռական-տրականը.



ՍՍՈՒՍԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ասեմք մարդկութիւն, ծիւթիւն»: Եթէ այս դեպքում նա նկատի ունի միեւնոյն հատկանիշով առարկաների խմբավորվելը, մյուս կողմից՝ ըստ նրա, մասի եւ ամբողջի հարաբերությանը են կապված այդ ընդհանուրը եւ նրա մեջ մտնող յուրաքանչյուր միավոր. «Եւ այսու զանազանի... այսինքն մասամբ մի բոլորովին, որպէս մարդ եւ մարդկութիւն»:

Տարեւացին անունների առաջացման երեք ուղի է նշում. հարաւունաբար, սերման ճանապարհով եւ գոյացական. «Նախ ի միջոցէ կայմանէ յարանունաբար, որպէս ի Դերակլեայ՝ Դերակլեանք, յիսրաւելէ՛ Իսրայէլեանք: Այսպէս ի Քրիստոսէ՛ քրիստոսեայք, զի ի սմանէ յառաջ եկեալք են»: Երկրորդը չնայած նման է առաջինին առաջացման ձեւով, սակայն մի շարք հատկանիշներով տարբերվում է. «Երկրորդ՝ սեռք ասին եւ սերման սկիզբն, որպէս հայրն եւ հայրենիքն: Եւ այս այլ է, քան զառաջինն: Չի այն ի միոյն առ բազումս էր կալումն եւ այս ի բազմաց ի միմն, որպէս հայրն եւ հաւն, գեղն եւ գաւառն, հայրն եւ մայրն», այսինքն եթէ առաջին դեպքում ընդհանրացվում է, երկրորդ դեպքում ընդհանրից արտածվում է ամենահատկանշականը, ընդ որում, Տարեւացու կարծիքով առաջացման ժամանակով երկրորդ տեսակը նախորդում է առաջինին. «Եւ գիտելի է, զի այս նախ է ժամանակաւ, քան զառաջին սեռն... զի նախ ծնանին եւ ապա ահուանին Դերակլեանք կամ այլ ոք»: Երրորդը սեռի եւ տեսակի հարաբերության մեջ գտնվող առարկաների անվանումներն են. «Իսկ երրորդ սեռ է գոյացականն, որ ստորոգի տեսակաց որպէս կենդանին»:

Նա զգուշացնում է նաեւ, որ ածանցման ճանապարհով առաջացող նոր բառը ձեռք է բերում գործառական նոր արժեք, ինչպէս օրինակ, տարբեր են մին եւ միակը, «այլ է միմն եւ այլ է միակն, զի միմն հասարակ է եւ միակն մասնաւոր եւ առանձնակի, զի ամենայն միակ՝ մի է, այլ ամենայն մի՛ միակ ոչ է, որպէս յորժան ասեմք՝ մի հօտ, մի շեղք, մի լիտր, այսպիսիքս մի են, այլ միակ ոչ են»:

Դավիթը տարբերում է Դիոնիսիոս Թրակացու առանձնացումն անվան 23 տեսակներից մեկի՝ փարանվան փիլիսոփայական եւ քերականական ըմբռնումները. «Փաղաճուն» սանելով փիլիսոփաները հասկանում են միեւնոյն սեռի մեջ մտնող տեսակները նշանակող անունները...: Քերականները «փաղաճուն» կամ «բազմանուն» են կոչում միեւնոյն իրին տրվող անունները: Ըստ Վարդան Արեւելցու՝ «փաղաճուն է՝ որ ի զանազան անունս գոյաց ցուցանէ, որոգն՝ խաղ, դալապր, մարտոց, վա-

ղակաւոր, սուսեր, նրան: Ճարտասանի գործ է այս եւ զարութիւն, որ զմէկ իրքն բազում անուամբ ցուցանէ եւ հարուստ, զոր քերթաւորքն «բազմանուն» ասացին եւ այլ իմաստաւերքն «փաղաճուն»: Տարեւացին հետեւեալ փոփոխություններ է կատարում այս սահմանումների մեջ. նախ նա «բազմանունը» եւ «փաղաճունը» ընդունում է իբրեւ առանձին տեսակներ եւ ապա՝ հոմանվան ու հարանվան հետ դիտում անունների ոչ թե քերականական, այլ փիլիսոփայական ըմբռնումներ: Դրանց վերաբերյալ տալիս է հետեւեալ բացատրությունները. «Իմաստաւերք զանունն ի չորս բաժանէն, այսինքն ի հոմանուն, ի փաղաճուն, ի յարանուն եւ ի բազմանուն: Դոմանուն է, որ զանազան իր նշանակէ եւ չտայ զբան գոյացութեան, որպէս յորժան ասեմք ակն: Եւ է աչաց ակն. աղբեր ակն. սայլի ակն եւ սոքա այլ եւ բնութիւնք են եւ զանազան սահմանս ունին: Իսկ փաղաճուն է, որ տայ զանունն եւ տայ զիրն, այսինքն զսահման իւր, որպէս ասեմ սեռն, որ տեսակաց ստորոգի, զի կենդանին փաղաճունաբար կոչի ծիւթն եւ ոչ-խարին, զի կարենք ասել զոչխարն կենդանի, զոյացութիւն, ներշնչական եւ զգայական, նոյնպէս եւ ծին: Յարանունն այն է որ ի գործոյն կոչի, որպէս յառաքինութենէն առաքինի, ի քերականութենէն՝ քերական: Իսկ բազմանունն այն է, որ մին իրանց բազում անուն տանք, որպէս սուսեր, նրան, դալապր, մարտացու, վաղակաւոր»: Սկատեմք, որ Տարեւացու այս բացատրություններում հոմանունն է փաղաճունը հակադիր եզրեր ունեն առաջացման առումով. հոմանունով (արդի քերականական ըմբռնմամբ՝ համանուն գոյականները) նշանակվող առարկաները առաջացմամբ կապ չունեն մեկը մյուսի հետ, մինչդեռ փաղաճունները ստորոգվում են մեկը մյուսին իբրեւ սեռ եւ տեսակ, սրա հետ փաստորեն նույնանուն էր «գոյացական» սեռը:

Նա հոմանուն է համարում նաեւ նույն բաղադրիչը ունեցող բարդ բառերը՝ երկնային խոյ, ջրային խոյ, ցամաքային խոյ, միաշաբաթ, երկու շաբաթ, երեք շաբաթ, չորեք շաբաթ, «զի սոքա թեպէտ ունին զաբաբ անունն հոմանունաբար, բայց այլ է միաշաբաթն եւ այլ է երկուշաբաթն եւ այլն որ ի կարգին»: Իսկ «օրը» նրա կարծիքով փաղաճուն է, որովհետեւ ունի մյուս բոլոր օրերի հատկանիշները եւ միաժամանակ, նույն անվանումը. «Եւ փաղաճունաբար կոչի օր, զի տայ զանունն եւ տայ զիրն. զի կարենք ասել թէ երկու շաբաթ օր է եւ զսահման ատուրն ունի: Ասեմք երեքշաբաթ օր, չորեքշաբաթ օր: Ասեմք դարձեալ ծառագարդի օր, վարդալաճի օր, պահոց օր, զատկի օր: Եւ սոքա ամենքն ունին զանուն ատուրն եւ ունին զսահման ատուրն»: Ինչպէս տեսնում ենք, Տարեւացու բացատրությունները իսկապես փիլիսոփայական-տրամաբանական սկզբունքով են: Այս տերմինների վերաբերյալ նա ունի այլ մասնակի պարզաբանումներ եւս. «Դոմանունն այլ եւ այլ». կամ «ցուցանէ թէ քանի նշանակութիւն ունի». «բազմանունն մի է իրօք»:

Նա բերում է նաեւ երկխոսության մի օրինակ, որտեղ ցույց է տալիս հոմանվան, բազմանվան, հարանվան տարբերությունները. - Չքրիստոս Աստուած հոմանունն ասես թէ ոչ: - Ասէ հակառակն ոչ: - Ընդէ՛ր ոչ: - Քրիստոս եւ Աստուած երկու անուն է, որպէ՛ս ասիցեմ մի: - Յորժան հոմանունն ոչ ասես, բազմանունն ասա: - Ոչ ասեմ բազմանուն, զի բազմանունն մի է իրօք, այլ Քրիստոսն եւ Աստուած կրկին է իրօք: - Ապա հարկ է թե՛զ՝ կամ այլ անուն ասել, որ իր եւ անունն զանազան է կամ յարանուն, զի ոչ անուամբ եւ ոչ իրօք հաղորդի: . Ինչպէս նշել ենք, Տարեւացին դերանունը միավորում է գոյականի եւ բայի հետ իբրեւ փոփոխվող խոսքի մաս՝ այստեղ եւս հակադրելով ուղղական հոլովն իբրեւ ուղիղ եւ մյուսները՝ իբրեւ թեք: Յուցական սա, դա, նա դերանուններն առանձնացնում է իբրեւ հատուկ դեմք նշանակողներ. «Դերանուն է սա, դա, նա եւ յատուկ զդեմքն նշանակէ»: Նշել ենք նաեւ, որ նա կապ է տեսնում այդ դերանունների եւ հոդերի միջեւ. «Իսկ երեք գիրն ցուցական է. դա, նա, սա»:

Թվարկելով հարաբերական դերանունները՝ Տարեւացին ընդգծում է դրանց գործառական նշանակությունը. «Եւ տես զպարագայք բաղդատութեան է զու, այսինքն ուլ, ուն, ուր, երբ, զինչ, որպէս, որբան»:

Ոմն դերանունը համարելով անորոշ («մի ոմն անորոշ է»), միաժամանակ նշում է, որ նրա կիրառությունը նշանակում է, թե խոսքի առարկայի մասին ասվում է ենթադրաբար. «Իսկ ենթադրութեան է զանազանելին եւ ոչ զանազանեալն բացորոշ յատկութեամբ, որպէս ոմն մարդ»:

Ածականի վերաբերյալ Տարեւացին բերում է Արիստոտելի այն կարծիքը, որ համեմատության աստիճանները որակական փոփոխութիւն չեն բերում հատկանիշին, «զոր Արիստոտէլ, թէ (որ զինչ գերազանցութեամբ ասի, ի մի ինչ միայն գտեալ լինի)»: Չոր օրինակ՝ թէ ոք ասի կարող, կարողագոյն, կարողագոյն յոյժ, մի լինի»: Սակայն դատելով այն բանից, որ նա «սեռ» բառի գրաբարյան բաղդատական աստիճանը՝ «սեռականագոյն» բացատրում է «այն է, որ բարձրագոյն եւ գերազանց սեռ կոչենք», պետք է ենթադրել, որ նա կողմնակից է եղել դրանց տարբերակվածությունը ընդունելուն:

Տարեւացին նույնպէս տարբերում է բայի երեք ժամանակ. «էն ներկայական է, զի էրն եւ եղիցին անցեալն եւ հանդերձեալն է»: Անցյալ ժամանակը, ըստ նրա, ցույց է տալիս «զվախման անցելոյն», ապառնի՛ն՝ «սկիզբն հանդերձելոյն», իսկ ներկան՝ ընթացքի մեջ գտնվող գործողություն. «Իսկ է-ն անսկիզբն եւ անվախման է»:

Բայի կրավորական սեռի հետեւեալ բացատրությունն է տալիս, գործողության կրողը միաժամանակ գործողության պատճառն է. «Դատին կրատական է, նախ զինքեամբ դատին եւ ոչ այլով» (հասկանալի է, որ իր բացատրությամբ նա ներառել է միայն անդրադարձություն-ոչ անդրադարձություն հակադրությունը): Նա նշում է «մի» արգելականի «իրամայական եւ իրաժարական» բնույթը. «Մի՛ զանձեք յերկրի: Դրամայական է եւ իրաժարական»:

Բայի թվի համար կիրառում է «բազմատրակի» եւ «առանձին» տերմինները (նախորդ քերականները «առանձին» փոխարեն հիմնականում գործածում են «եզական» տերմինը): Ինչպէս նշել ենք, հետեւելով Արիստոտելին՝ Տարեւացին անուններն ու բայերը բաժանում է երկու խմբի՝ կատարյալ եւ անկատար: Եվ եթէ Հովհաննէս Երզնկացին ըն-

դունելության մեջ դնում էր անցյալ դերբայը նրա մեջ տեսնելով հիմնականում բայական հատկանիշներ. չմերժելով սակայն նաեւ անվանականը, ապա Տարեւացին նրան միայն բայական հատկանիշներ է վերագրում: Դեռ ավելին. նա անցյալ դերբայը համարում է կատարյալ բայ եւ հակադրում անորոշին, որի մեջ տեսնում է եւ բայական, եւ անվանական հատկանիշներ: Եվ քանի որ անցյալ եւ անորոշ դերբայները ձեւական հակադրության այլ եզր չունեն բացի ա-ից, ուստի անցյալ եւ անորոշ դերբայի կատարյալ լինելը կապում է վերջավորության ա-ի հետ (ժողովել-ժողովեալ), իսկ անորոշ դերբայի անվանական հատկանիշները՝ ի-ի հետ (ժողովել-ժողովելի). վերջինիս բայական հատկանիշները տեսնում է նախ իբրեւ գործողություն ցույց տվող, «ծիծաղական մարդն է եւ ծիծաղիլ՝ գործն», ապա նրա սեռական հոլովածներում. «Առաքելոյ, ժողովելոյ, ճանաչելոյ, ռահ գործելոյ, քաւելոյ: Սոքա հոլովք բայից են, ինչ չունին, որ ի հիւնն փոխի»:

Ըստ «գործիական», «ներգործական», «արարողական» պատճառների՝ տարբերում է գրիչ-գրող, մկրտիչ-մկրտող, փորձիչ-փորձող դերբայական ձեւերը: Գործիական պատճառ ասելով՝ նկատի ունի իբրեւ գործիք, միջոց լինելը, դա վերաբերում է գրիչ, մկրտիչ, փորձիչ ձեւերին, իսկ երկրորդ շարքը բնորոշում է մերթ «ներգործական», մերթ «արարողական» տերմիններով. «Եւ գրիչ կոչի եղեգն, որ ի ձեռնին է. եւ գրիչ կոչի գրիչ, որ դպիրն է. մինն գործիական եւ մինն ներգործական պատճառ»: «Ձի՛նչ է մկրտիչն եւ մկրտողն. որպէս գրիչ եւ գրող. մինն գործիական պատճառ եւ մինն արարողական»:

Քերականական որոշ հարցերի նկատմամբ Տարեւացին հանդես է բերում կանխակալ մոտեցում: Ընդհանրապես հանդես գալով գրոց լեզուն անփոփոխ թողնելու տեսակետի պաշտպանությանը՝ նա իր ավանդապառնությունները նկատմամբ պահույթով է հետապնդում ամփոփելի պահել հայերենի իմբնությունները, թերեւս սրանով պետք է բացատրել նաեւ նրա մերժողական վերաբերմունքը «կու» եղանակիչի կիրառության նկատմամբ: Այն դեպքում, երբ Հովհաննէս Երզնկացին «կու»-ով ձեւերը գրանցում է իբրեւ ընդունություն գտած եւ սովորական գործածության մեջ անցած, Տարեւացու իսկապաժալ գրական ժառանգության մեջ մենք «կու»-ի այնքան օգտակար փոփոխություններ ենք գտնում, որ հակված ենք նույնիսկ կարծելու, որ հեղինակային օրինակներում դրանք պետք է որ եղած չլինեն: Հետաքրքիր է, որ նա «կու» եղանակիչի գործածության համար մեղադրում է միարարներից («ազգն Ֆռանկաց»), որոնք մկրտության ժամանակ ոչ թե ասում են «մկրտի ի ձեռս իմ», այլ՝ «կու մկրտեմ»: Մինչդեռ այս դեպքում ըստ Տարեւացու երկու խախտում է տեղի ունենում. 1. Նա «կու» դիտում է իբրեւ ուղիղ խնդիր, այսինքն՝ «կու մկրտեմ» նույն է, թե՛ «Մկրտեմ զկու», «զոր եւ անյարձար շարաբանութեամբ զկուն ցուցանեն մկրտել եւ ոչ նուիրեալն». 2. Երկրորդ դեպքում շեշտում է «կու» եղանակիչի հարկադրական երանգը, այսինքն՝ նրա օրերում արդեն ստիպում է եղել «կու»-ի գործառության սահմանափակման եւ հարկադրական բնույթով միայն հանդես գալու փաստը. «անպատշաճութիւն է զի յասելն թէ՛ եւ կու մկրտեմ, երեւելի թէ՛ նուիրեալն ոչ իւր վնասում է եկեալ ի մկրտութիւն, այլ բռնութեամբ եւ ի հարկէ կու մկրտեմ»:

Առանձին դիտողություններ ունի նախորդների, ծայրարկության վերաբերյալ, որոնց մասին արդեն նշել ենք:



# ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

## Գրիգոր Տաթևացու դերը նոմինալիզմի առաջացման և զարգացման գործում

Հատված Սեն Արեւշատյանի «Նոմինալիզմի առաջացումն ու զարգացումը միջնադարյան Հայաստանում» հոդվածից

Միջնադարյան Հայաստանի փիլիսոփայական մտքի պատմության մեջ նոմինալիստական ուղղությունը կազմում է նրա ամենարժեքավոր հատվածը, որը վկայում է այն մասին, որ Հայաստանում, ինչպես և զարգացած ֆեոդալիզմի այլ քաղաքակիրթ երկրներում, մատերիալիստական մտածելակերպի սաղմերը, հետզհետե ուժեղանալով, մարմնավորվեցին նոմինալիստական ուսմունքներում:

Նոմինալիստական ուսմունքները Հայաստանում երեւան եկան և զարգացան XIII-XIV դարերում: Նրանց առաջացումը պատահական չէր. այն պայմանավորված էր ինչպես սոցիալ-քաղաքական կյանքում տեղի ունեցող երեւոյթներով, այնպես էլ հայ փիլիսոփայական մտքի նախորդ շրջաններում կուտակած գաղափարական նախադրյալներով: Եականն ու որոշիչն այստեղ, իհարկե, ֆեոդալիզմի ընդերքում տեղի ունեցող փոփոխություններն էին, քաղաքների զարգացումը, առեւտրի և արհեստների ծաղկումը և դրանց հետ կապված դրական, փորձնական գիտելիքների կուտակումը և կյանքի աստիճանական աշխարհականացումը:


Իր հետագա զարգացումը նոմինալիզմն ունեցավ Գլաձոր-Տաթևյան փիլիսոփայական դպրոցում (XIII-XIV դդ.): Այստեղ նոմինալիզմը հասավ իր զարգացման գագաթնակետին:

Այդ դպրոցին պատկանող գիտնականներն ու մտածողները միջնադարյան երկու բարձրագույն դպրոցների՝ Գլաձորի (1280-1338թթ.) և Տաթևի (1345-1415թթ.) համալսարանների սաներն են եղել, համալսարաններ, որոնք կապված էին իրար հետ ինչպես հաջորդման թելերով, այնպես և գաղափարական ընդհանրությամբ: Երկու համալսարաններն էլ գտնվում էին Սյունիքում՝ Հայաստանի այն մասում, որը թաթարամոնղոլական տիրապետության ժամանակ ստացել էր ենչուկ իրավունք, որի հետեւանքով էլ իր տնտեսական և քաղաքական համեմատաբար բարվոք դրույթյամբ տարբերվում էր նվաճողների կողմից թալանվող և ավերվող երկրի այլ մասանգներից: Այդ համալսարանների ստեղծման և դրա հետ կապված տեսական մտքի զգալի աշխուժացման գործում որոշակի դեր խաղաց նաեւ կաթոլիկ եկեղեցու ուսմունքները, որն այդ ժամանակամիջոցում ծավալված պայքարը: Կաթոլիկ միսիոներների և հայ ունիթորների՝ հայ եկեղեցու դեմ սկսած գրոհները վիժեցնելու նպատակով Արեւելյան Հայաստանի հոգեւոր և աշխարհիկ ֆեոդալները հիշյալ համալսարանների միջոցով ձգտում էին մտավորականների բանիմաց ջրկան ստեղծել գաղափարական պայքար մղելու համար: Պետք է ասել, որ նրանք այդ նպատակին կարողացան հասնել: Գլաձորի և Տաթևի համալսարաններում հասակ առած գիտնականները, փիլիսոփաները և եկեղեցական գործիչները իրենց բազմակողմանի գրական, տեսական և դավանաբանական աշխատություններով կարողացան ետ մղել կաթոլիկների գրոհները և կրկին տեսականորեն հիմնավորել հայ եկեղեցու ինքնուրույնությունը: Երկու

կղերական կազմակերպությունների՝ կաթոլիկ և հայ եկեղեցիների պայքարը, իհարկե, նեղ դավանաբանական բնույթ էր կրում և հեռու էր հայ գյուղացիության, ժողովրդական լայն զանգվածների շահերի արտահայտությունը լինելուց, բայց այնուամենայնիվ աշխատավորական լայն շերտերի բացասական վերաբերմունքը կաթոլիկ եկեղեցու ուսմունքներին նկատմամբ վճռական դեր խաղաց ունիթոների պարտության գործում: Բանն այն է, որ Արեւելյան Հայաստանում, ինչպես նաեւ Կիլիկիայում, հայ պետականության քայքայման և կործանման պայմաններում ժողովրդական մասամերը, ինչպես և իշխող դասերի առաջավոր ներկայացուցիչները հայ եկեղեցին դիտում էին որպես ազգային անկախության մնացորդների պահպան և աշխարհիկ իշխանության որոշ ֆունկցիաների ժառանգորդ: Ստեղծված պատմական իրադրության մեջ հայ եկեղեցու պաշտպանությունը և կաթոլիկական էքսպանսիայի դեմ ծավալված տեսական ու գործնական պայքարը, անտարակույս, պետք է գնահատել որպես դրական, առաջադիմական երեւոյթ:

Այդ գաղափարական հակամարտի ամենականավոր դեմքերից մեկն էր նաեւ մի ուրիշ նոմինալիստ-փիլիսոփա, Հովհան Ռոտունեցու հավատարիմ աշակերտ և ամբիջական հաջորդ Գրիգոր Տաթևացին (1346 - 1409), որն իր ուսուցչի մահվանից հետո գլխավորեց Տաթևի համալսարանը: Գրիգոր Տաթևացու փիլիսոփայության մեջ նոմինալիզմը, ինչպես և մատերիալիստական տեսնդեցներն առհասարակ գտան իրենց հետագա զարգացումը: Նրա փիլիսոփայական հայացքների համար հատկանշական է բազմակողմանությունը: Տաթևացին արձագանքում է իր ժամանակի համարյա բոլոր իրատապ խնդիրներին, ծառայեցնելով իր գիտությունը և եռանդուն կրոնաքաղաքական ու մանկավարժական գործունեությունը Հայաստանի լուսավորության և գիտության օջախները վառ պահելու գործին, մի գործ, որն այն ժամանակվա Հայաստանի արտակարգ ծանր քաղաքական և տնտեսական վիճակում կապված էր անբեւեակայելի դժվարությունների ու գրկանքների հետ: Օգտվելով եկեղեցու նկատմամբ մոնոլոգաթաթարական կեղեքիչների կողմից բռնած համեմատաբար մեղմ դիրքից, Տաթևացին իր նախորդների նման, հոգեւորականի սքեմով պատվարված կարողացավ շուրջ քառորդ դար Ռոտունեցու մահվանից հետո վառ պահել լուսավորության ջախջ, կրթեց և բզկտված Հայաստանի տարբեր կողմերն ուղարկեց իր բազմաթիվ սաներին, իսկ իր սովորածավալ աշխատություններում շրջափեց այն ժամանակվա համարյա բոլոր իրատապ տեսական խնդիրները բեղմնավորելով միջնադարյան հայ գիտությունն ու փիլիսոփայությունը խիզախ և իր ժամանակի համար առաջադեմ գաղափարներով:


Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական հայացքները, ՎՊաբունու և Հ.Ռոտունեցու համեմատությամբ, տարբերվում են իրենց ավելի բազմակողմանի և լայն բնույթով՝ բացի



Արիստոտել (մ.թ.ա. 384-322)



Փիլոն (մոտ. մ.թ.ա. 25- մոտ մ.թ. 50)



Պլատոն (մ.թ.ա. 428 կամ 427-348 կամ 347)



Պորփյուր (232 - 304)

օնթոլոգիայից և իմացաբանությունից ընդգրկելով բնագիտության, հոգեբանության, բարոյագիտության ու հասարակագիտության բազմապիսի խնդիրներ:

Նրա փիլիսոփայական և այլ գործերի՝ մեզ հասած բազմաթիվ ձեռագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Տաթևացին, լինելով խոշոր հայ աստվածաբաններից մեկը, այնուհանդերձ, ի շարունակություն Ռոտունեցու ուսմունքի, խորացրեց փիլիսոփայության աշխարհականացման պրոցեսը և տվեց գիտության ու հավատի բաժանման անհրաժեշտության տեսական հիմնավորումը: Նա հարում է «Ճշմարտության երկվության» ուսմունքին և գտնում, որ փիլիսոփայության, ինչպես և առհասարակ գիտության առարկան բնությունն է, նրա երեւոյթներն ու օրինաչափությունները, իսկ հավատը չպետք է և չի էլ կարող խառնվել գիտության գործերին: Հավատի բնագավառը գերբնական, աստվածային գոյացությունների ճանաչումն է:

Սահմանազատելով հավատի և գիտության բնագավառները՝ Տաթևացին շեշտում է, որ մարդու զգայարանները և միտքը հնարավորություն են տալիս նրան ճանաչելու ողջ աշխարհը՝ չթողնելով անհայտ և ոչ մի երեւոյթ և առարկա: «Իմաստուն մտքը թափանց անցանց ընդ բնաւ ողորտ երկնի և երկրի և ոչ ինչ արտաքոյ մնայ ի լուսոյ իմաստութեան»: Միջնադարի պայմաններում Տաթևացին բանականության գովքն է եղում և անվանում այն միակ ճշմարիտ և անկաշառ դատավոր: Այս հանգամանքը չափազանց հատկանշական է Տաթևացու աշխարհայացքի համար: Առաջին հայացքը այն խոսում է Տաթևացու գաղափարախոսության հակասական և անհետեւողական բնույթի մասին «Ճշմարտության երկվության» տեսությունը հավասարապես ընդունում է կրոնն ու գիտությունը, այնուհետեւ, լինելով նոմինալիստ Տաթևացին աշխարհի ճանաչման գործում առաջնային և վճռական նշանակություն է տալիս զգայարաններից՝ ցուցաբերելով միակողմ սեմնուալիստական մտտեցում բնափիլիսոփայության և իմացաբանության կարեւորագույն հարցերի նկատմամբ, բայց միաժամանակ դրսեւորում է ռացիոնալիզմի ուժեղ սաղմեր: Սակայն նրա աշխարհայացքի նշված հակասությունները ի մի բերված ունեն որոշակի նպատակասլացություն և ուղղված են գիտության ու փիլիսոփայության շրջանակների լայնացմանը, մի դժվարին խնդրի, որի լուծմանը սատարել է միջնադարի ամենալուսավոր և գիտուն գուկները:

Ինքնին հասկանալի է, որ Տաթևացու աշխարհայացքն իր ժամանակի և միջավայրի ծնունդն էր, որի մեջ հին ավատարկական գաղափարախոսության հետ մեկտեղ աճում էին հասարակության ընդդեմը կատարվող ցնցումների և տեղաշարժերի արտահայտությունը հանդիսացող նոր գաղափարներ:

Փիլիսոփայության հիմնական հարցը իր միջնադարյան դրվածքով, այսինքն աստօն է բնության փոխարքերությունը առումով, Տաթևացին լուծում է կրոնափոխական դիրքերից: Աստված, ըստ Տաթևացու, առաջնային է իր ողջ եւթյամբ, նա արարիչն է աշխարհի և ողջ բնության, «սկիզբն ամենայն գոյացութեանց, զի ի նման է սկսեալ և յառջ եկեալ ամենայն բնութիւն արարածոց երեւելեաց և աներեւութից»: Սակայն միաժամանակ Տաթևացին պնդում է, որ բնության գոյության հիմքում ընկած չորս տարրերը՝ հողը, ջուրը, օդը և հուրը, մշտնջենական են: Նրանցից կազմվող բազմապիսի իրերն առաջանում ու ոչնչանում են, իսկ տարրերը՝ երբ

բեք, նրանք ունեն հավիտենական գոյություն:

Տաթևացու փիլիսոփայության իր ժամանակի համար առաջադիմական, մատերիալիստական հակումներն առավել ցայտուն դրսեւորվում են նրա իմացաբանության մեջ: Իր կողմից կիրառվող՝ հավատի և գիտության բնագավառների սահմանազատմանը համապատասխան, Տաթևացին հաստատում է ճանաչման երկու ձև՝ «շնորհական», որը զբաղվում է գերբնական աստվածային գոյացությունների ընկալմամբ, և «բնական», որն ուղղված է իրական աշխարհի երեւոյթների և առարկաների վրա:

Բաժանելով այս երկու բնագավառները և համարելով, որ հավատն անգոր է աշխարհի ճանաչման գործում, Տաթևացին այնուհանդերձ չի սահմանափակում «բնական» ճանաչման իրավունքները: Նա առաջ է քաշում միջնադարյան փիլիսոփայի համար չափազանց խիզախ մի գաղափար, այն է՝ բանականության միջամտությունը հավատի գործերին: Դեմ դուրս գալով սնտոիապաշտության և կույր հավատի դեմ՝ նա կարծում է, որ «շնորհական իմաստությունը» պիտի լուսավորվի «բնական ճանաչման» լույսով: Խնամ մոտեցումը, պարզ է, որ մի ուսմունքություն էր կրոնի հեղինակության դեմ և լայնացնում էր գիտության շրջանակները և ինչպիսի աստվածաբանությունը, որը միշտ ձգտում էր պահել փիլիսոփայական միտքը և գիտությունը իր հնազանդ աղախնի դերում: Տաթևացու իմացաբանությունը, ինչպես և ողջ փիլիսոփայական ուսմունքը ցույց են տալիս, որ վերոհիշյալ նրա միտքը պատահական բնույթ չի կրում և բխում է նրա աշխարհայացքի եւթյունից և գիտական համոզմունքներից:

Ճիշտ է, Տաթևացին կարծում է, որ բանական իմացումն մնան է մշտաշարժ վերընթաց կրակին, և այդ պատճառով էլ թույլ չպետք է տալ, որ այն դիպչի աստվածաբանության առարկային, քանի որ գիտության ներխուժումը հավատի բնագավառը ծնում է հերձված: Սակայն նրա ակնարկը «շնորհական» իմացումը «բնական» գիտությունը լուսավորելու մասին, ի թիվս նրա բնափիլիսոփայական և իմացաբանական մի շարք այլ գիտական դրույթների, խարխուլում էր սխոլաստիկայի շենքը և դուռ բացում փիլիսոփայության հետագա ինքնուրույնացման և աշխարհականացման համար:

XIV դարի պայմաններում Տաթևացին դեմ է դուրս գալիս «բնածին գաղափարների» տեսությանը ու կարծում, որ մտքի և հոգու բովանդակությունը կազմվում է արտաքին աշխարհի կազեցության շնորհիվ: «Հոգի մարդոյն բանական, որպէս անգիր պնակիտ և կամ լուսացած մագաղաթ որ զինչ գրեց ի վերա, զայն ամնու»: Հոգու այն «անգիր պնակիտի» լրացման գործում հսկայական դեր են խաղում զգայարանները: Նրանք ճանաչման սկզբնական և անհրաժեշտ օղակն են, առանց որի իմացության պրոցեսը անհնարին է: Որպեսզի այն տեղի ունենան, անհրաժեշտ են երկու պայման, «այսինքն, զի զգայութիւն առողջ իցէ, և զգալի առաջի եղեալ իրն յստակ, ապա թափանցէ յինքն ի սոցանէ պարզ տեսութիւն, ապա թէ ոչ՝ ոչ կարէ միտքն յստակապէս տեսանել սոքօք»: Զգայարանների վկայության հիման վրա միտքը ճանաչում է իրերի էությունը, նրանք բնությունը: Իր գործունեության մեջ բանականությունը զգայարանների նկատմամբ գտնվում է կախյալ վիճակում և նույնպես անօգնական է, ինչպես արհեստավորը առանց իր գործիքների: Իր այս սեմնուալիստական գիծը Տաթևացին հստակորեն անց

Շարունակությունը էջ 16



ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ուսմունք պեպուրության, իշխանության եւ կառավարման մասին

Գրիգոր Տաթևացու կրոնահմաստասիրական աշխատություններում նշանակալի տեղ են գրավում հասարակության, պետության, իշխանության, օրենքների եւ կառավարման մասին խորհրդածությունները: Այդ հարցերի քննարկման ընթացքում առավել ցայտուն են դրսևորվել միջնադարյան հայ մտածողի մարդասիրական եւ հայրենասիրական գաղափարները:



ՍԵՅՐՆ ՋԷԼԵԶԻԱՆ Երեւանի պեպուրության փոփոխության պարունության ամբիոնի վարիչ, փոփոխական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ինտ, ըստ որի ի սկզբանե մարդկանց միջեւ գոյություն չի ունեցել ոչ փոխադարձ սեր, ոչ մտերմիկ հարաբերություն, այլ, ընդհակառակը, տիրող են եղել ատելությունը եւ հակակրակները: «Մարդը մարդուն զայլ է» պայմաններում մարդիկ միավորվել են անհրաժեշտաբար կարիքից դրդված: Փաստորեն, «հակակրակների տեսությունը» ենթադրում է, որ մարդիկ ի սկզբանե ծնվել են իբրեւ բռնամի, միմյանց ատող էակներ: Այդպիսի կանխադրույթը սկզբունքորեն անընդունելի է Տաթևացու համար, քանզի դա հակասում է մարդու բնության մասին քրիստոնեական հունամիստական ըմբռնմանը: Տաթևացու կարծիքով մարդը մարդուն թշնամի չի ստեղծվել, որովհետեւ, նախ, բոլոր մարդիկ ունեն միեւնոյն բնությունը, իսկ «բնութիւն ինքեան թշնամի ոչ է»: Աստված մարդուն արարել է բարի բնությամբ եւ ոչ թէ չար. «հոգի, մարմին եւ միտք մարդոյ բարի են. եւ ի բարւոյն Աստուծոյ ըստեղծեալ»: Երկրորդ, բոլոր մարդիկ միասին ունեն Աստծո պատկերն ու նմանությունը: Երրորդ, բոլոր մարդիկ ունեն միեւնոյն նախահայրը եւ, այս իմաստով, նրանք ազգակիցներ են, ընդամենը, երկու առումով՝ մարմնական եւ հոգեւոր: Մարդիկ մարմնապես մի ազգ են, որովհետեւ ստեղծվել են նույն հողից, իսկ հոգեւոր առումով եւս մի ազգ են, քանզի «ամենքն յԱստուծոյ ստեղծաբ առանց միջնորդի»:

Սոցիալական կյանքի նման մեկնաբանությունը հիմք է տալիս պնդելու, որ Տաթևացու տեսակետը ավելի շուտ համընկնում է այսպէս կոչված «համակրանքի տեսության»՝ հետ, ըստ որի՝ կարիքից դրդված միավորվելով՝ մարդիկ նպատակ ունեն միմյանց միջեւ հաստատել եղբայրություն, սիրո եւ համակրանքի հարաբերություններ, միասին մտածելու իրենց համատեղ կյանքի կազմակերպման մասին:

Տաթևացու սոցիալ-մարդաբանական հայացքների հիմքում ընկած է մարդկանց բնական հավասարության մասին հունամիստական-քրիստոնեական գաղափարը: Ինչպէս բոլոր արարածները «հավասար» են, որովհետեւ միեւնոյն Աստծո ստեղծագործության արդյունքներն են, այնպէս էլ բոլոր մարդիկ հավասար են, քանզի որ նրանք նույն նախահոր ժառանգներն են եւ ստեղծվել են միեւնոյն նյութից: «Ամենայնքն ի միոյ հողոյ ենք. – գրում է Տաթևացին, թէպէտ կէսք յետոյ, եւ կէսք յառաջոյ եկին: Եւ ոչ ստեղծեաց Աստուած երկու Ադամ, մին յոսկոյ վասն իշխանաց. եւ մին ի կավոյ վասն աղբա-

տաց. այլ մին Ադամ, եւ այն ի հողոյ: Եւ ամենայնքն մեծանեծ եւ փոքունք ի նմանէ յառաջ եկին»: Թեւեւ մարդիկ ի ծնե հավասար են, սակայն սոցիալական կյանքը խարսխված է անհավասարության վրա: Մարդիկ իրար հավասար չեն ոչ ունեցվածքով ու հարստությամբ, ոչ էլ ընդունակությամբ ու հմտությամբ: Տաթևացին սոցիալական անհավասարության փաստը բացատրում է աստվածային նախախնամության գոյությամբ: Աստծո կամոք են ստեղծվել հարուստներ եւ աղքատներ, իշխաններ եւ ծառաներ, որոնք կոչված են իրար հետ համագործակցելու, փոխօգնելու, մեկը մյուսի կարիքը հոգալու: Այլ խոսքով, նախախնամությամբ տրված անհավասարությունը չի հակասում սոցիալական ներդաշնակության գաղափարին, քանզի որ անհավասարությունը ոչ թե խոչընդոտում, այլ, ընդհակառակը, դրդում է հակադիր կողմերին փնտրել համագործակցության շահավետ ուղիներ: Նրանք կախված են իրարից եւ մեկ կողմի կյանքը անպատկերացելի է առանց մյուսի գոյությանը:

Տաթևացին պաշտպանում է հասարակության կառուցվածքի եւ գործառության վերաբերյալ օրգանիստական տեսությունը, ըստ որի՝ հասարակությունը մի կենդանի օրգանիզմ է, միմյանց մարդկային օրգանիզմի ամեն մի անդամ կատարում է իրեն վերապահված անփոխարինելի դերը, այնպէս էլ հասարակության մեջ յուրաքանչյուր մարդ, յուրաքանչյուր խավ կատարում է որոշակի գործառույթ: Բոլոր մարդիկ թեւեւ ունեն միանման բնություն, սակայն սոցիալական աշխարհում ինչպէս եւ համայն տիեզերքում, գոյություն ունի աստիճանակարգություն: Աստծո կամքով՝ աստիճանակարգված սոցիալական ներդաշնակությունը պահպանելու նպատակով, հասարակության մեջ մարդիկ զբաղեցնում են տարբեր սոցիալական դիրք եւ կատարում են դրանց համապատասխան գործառույթներ: Բոլոր խավերի գործունեության նպատակը պետք է լինի «ընդհանուր բարիքը»: Այս հարցում Տաթևացու սոցիալ-քաղաքական հայացքների վրա նկատելի է Պլատոնից եկող այն մտքի ազդեցությունը, թե հասարակության մեջ սոցիալական խավերի առկայությանը, ինչպէս նաեւ դրանց միջեւ աշխատանքի բաժանումը սոցիալական ներդաշնակության ապահովման նախադրյալ է: Այդպիսի հասարակությունը խարսխված է արդարության սկզբունքի հիման վրա: Տաթևացին նույնպէս սոցիալական շեղումները մեծ մեջ տեսնում է արդարության սկզբունքի իրականացումը: Պլատոնի նման նա հոգու երեք մասերին համապատասխան տարբերակում է հասարակական երեք խավ՝ հոգեւորականներ, իշխաններ եւ շինականներ, (մի այլ դասակարգման համաձայն՝ կառավարողներ, հոգեւորականներ եւ իշխաններ, զինվորականներ, արհեստավորներ ու շինականներ), որոնցից յուրաքանչյուրն ունի իր հասարակական աշխատանքը եւ պարտականությունը:

Ընդունելով այն միտքը, որ սոցիալական աստիճանակարգությունը իբրեւ տիեզերական աստիճանակարգության ուղիներում, աստվածային ծագում ունի, հետեւապէս անփոփոխ է, Տաթևացին միեւնոյն ժամանակ մարդկանց այս կամ այն խավին պատկանելի չի դիտում իբրեւ բնածին «հավերժական»:

Նախ, ի տարբերություն Արիստոտելի, որը ստրուկ կամ իշխան լինելը պայմանավորում էր մարդու բնությամբ, Տաթևացին միջնադարյան շատ փիլիսոփաների նման դա համարում է «պայմանական եւ ոչ թե բնական»: Երկրորդ, միջնադարյան մտածողի համար սոցիալական աստիճանակարգության անփոփոխության գաղափարը բնագանցական նշանակություն ուներ անփոփոխությունը առհասարակ չի բացառում որոշ փոփոխականություն: Այսինքն մարդու սոցիալական կարգավիճակի փոփոխականությունը չի բացառվում, որովհետեւ մարդիկ անձնիշխան են: Իսկ կյանքը հարափոփոխ է եւ լի պատահականություններով: Այդպիսի փոփոխությունը, որը միջնադարյան մտածողի համար զարմանալի երեւոյթ է, Տաթևացին կրկին կապում է աստվածային նախախնամության հետ: Չարմանալի է, գրում է Տաթևացին, որ «երկ ի կարգ սպասաւորացն ջրկիր եւ փայտակիր եր. եւ այսօր նստեալ յաթոռ թագաւորական թագիւ պսակեալ, որպէս Մուրիկ թագաւորն եւ այլ բազումք: Եւ այս ըստ անքնին կամացն Աստուծոյ...»: Վերջապէս, միջնադարյան քրիստոնյա մտածողի համար այս կամ այն սոցիալական խավին պատկանելի ինքնին առավելություն չէ, ոչ էլ թերություն: Մարդիկ իրարից տարբերվում են ոչ այնքան սոցիալական կարգավիճակով, որքան բարոյական գիտակցությամբ եւ բարոյական վարքագծով:

Սոցիալական աստիճանակարգությունը ենթադրում է հասարակական կյանքի կարգավորվածություն, մարդկանց միջեւ որոշակի հարաբերությունների, համատեղ կեցության ձեւերի գոյություն: Տաթևացին ելնում է այն մտքից, որ հասարակությունը չի կարող գոյատեւել առանց իշխանության, օրենքների եւ կառավարման: Իշխանությունը (պետությունը, թագավորությունը) առաջանում է անհրաժեշտաբար մարդկանց երկրային կյանքը կարգավորելու եւ կազմակերպելու համար: Եթե Վահրամ Ռաբունին Օգոստինոս Երանելու պէս պետության ծագումը կապում էր նախնական մեղսագործության հետ, ապա Տաթևացին Արիստոտելի նման պետության առաջացումը բացատրում է մարդու՝ հասարակական-քաղաքական էակ լինելու համաձայնեցով: Աստված մարդուն ստեղծել է իբրեւ սոցիալական էակ, ուստի սոցիալական միավորումների ստեղծումը համապատասխանում է մարդու բնության պահանջներին: Տաթևացին ընդգծում է այն միտքը, որ անիշխան, անդէլ եւ անառաջնորդ հասարակությունը (երկիրը) դատապարտված է կործանման, իսկ, ընդհակառակը, իշխանություն ունեցող, կառավարվող, օրենքներով կարգավորվող երկիրը անհրաժեշտաբար բարգավաճում է եւ հզորանում, «երկիր եւ քաղաք ամրացեալք են իշխանս եւ հոգեւոր առաջնորդան. ի նոցանէ առնուն զհոգեւորն եւ գմարմնաւոր կենդանութիւն: Եվ են բարձրացեալ փառօք եւ զուարճացեալ ուրախութեամբ եւ այլոց բազմաց շուք եւ հովպանի եւ պահպան լինին: Իսկ յորժան երկիր առանց իշխան լինի եւ ժողովուրդն առանց առաջնորդի, բաժանեալ են ի կենդանութեանց, անկեալ ի բարձրութեանց, եւ կոխան եղեալ ամենայն մարդկան: Եվ ցրուեալք յամենայն հողմոց, տգեղացեալ եւ չորացեալ են ապականեալ զանազան մեղօք»: Անիշխան երկիր

ժողովուրդը ոչ միայն զրկվում է համահավաք, խաղաղ ու բարեկեցիկ կյանքից, այլեւ վտանգվում է նրա հետագա գոյությունը, խաթարվում է նրա ազգային եւ մարդկային դիմագիծը: Իբրեւ այդ եզրակացությունը հաստատող օրինակ՝ Տաթևացին մատնացույց է անում հայ ժողովրդի անմխիթար վիճակը, «որպէս ի ժամանակս յայս տեսանեմք յազգս մեր անիշխան եւ անառաջնորդ իբրեւ ոչ-խար առանց հովուի՝ զազանակուր լինին եւ կորնչին...»:

Քանզի որ մարդը հոգու եւ մարմնի միասնություն է, այսինքն հոգով կապված է երկնային աշխարհի հետ, իսկ մարմնով՝ երկրային աշխարհի հետ, այս պատճառով Տաթևացին տարբերակում է իշխանության երկու ձեւ՝ հոգեւոր եւ մարմնական: Մարդը երկու «պետության» քաղաքացի է՝ նա միաժամանակ ենթարկվում է հոգեւոր իշխանությանը եւ աշխարհիկ-մարմնական իշխանությանը: Հոգեւոր իշխանությունը իրականացնում են եկեղեցու առաջնորդները, որոնք կառավարում են «զհոգեւոր տունս Աստուծոյ եւ զհոգիս մարդկան», իսկ թագավորները եւ իշխանները կարգավորում են «զմարմնավոր տունս աշխարհի, զզեղ զքաղաք՝ զերկիր եւ զաշխարհ»: Այդ երկու իշխանությունները միջեւ, ըստ Տաթևացու, գոյություն ունեն հետեւյալ տարբերությունները, առաջին, աշխարհիկ իշխանությանը մարդիկ ենթարկվում են բռնությամբ, հարկադրանքով եւ անհրաժեշտաբար, իսկ հոգեւոր իշխանությանը հնազանդվում են հոժադարան եւ ազատ ընտրությամբ: Երկրորդ՝ աշխարհիկ իշխանությունը անցողիկ է եւ փոփոխական, սահմանափակված տարածության եւ ժամանակի մեջ, իսկ հոգեւոր իշխանությունը մշտական է եւ ենթակա չէ տեղաժամանակային որեւէ սահմանափակության, օրինակ՝ «զի տեղիք՝ զիշխանութիւն Մուրս եւ զուստ ոչ արգիլեն, ոչ ամրոց ոչ պարիսպ կամ զօրք. կամ այլ ինչ»: Երրորդ, աշխարհիկ իշխանությունը վերաբերում է միայն մարդու մարմնին եւ մարդու մահվանից հետո այլեւս ոչ մի ներգործություն չի ունենում, մինչդեռ հոգեւոր իշխանությունը վերաբերում է թե՛ մարմնին եւ թե՛ հոգուն եւ ներգործում է մարդու վրա նաեւ հանդերձալ աշխարհում: Այսպիսով, նշված առումներով Տաթևացին փաստում է հոգեւոր իշխանության առավելությունը աշխարհիկ իշխանության նկատմամբ: Հարցի այդպիսի լուծումը տրամաբանական է, քանզի որ ըստ քրիստոնեական վարդապետության՝ մարդու հոգին պատկանում է մարմնից, բացի դրանից՝ երկրային կյանքը մարդու համար ժամանակավոր է, ուստի միջնադարյան քրիստոնյա մտածողները հոգեւոր իշխանությունը զերադաւանում էին աշխարհիկ իշխանությունից: Համեմայն դեպս, եվրոպական իրականության մեջ, որտեղ կարողիկ եկեղեցու գերիշխանությունը կյանքի բոլոր ասպարեզներում բացահայտ բնույթ էր կրում, կրոնափիլիսոփայական մտքի մեջ արմատավորված էր աշխարհիկ իշխանության նկատմամբ հոգեւոր իշխանության գերազանցության մասին գաղափարը: Եթե միջնադարյան եվրոպայում ժամանակի ընթացքում հիմնադրվեց Արթագան աստվածապետությունը՝ հռոմի կաթոլիկ եկեղեցու գլխավորությամբ, ապա պատմական համաձայնեցության երկուսով հայոց մեջ այլ կերպ դասավորվեց հո-











# ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

## Գրիգոր Տաթևացին՝ մանկավարժ

Միջնադարյան հայ աստվածաբանական-փիլիսոփայական մտքի մեծանուն կրող Գրիգոր Տաթևացին, որի մեծությունը անվերապահորեն ընդունել են բոլորը, որովհետև նրա ազդեցությունը չափազանց մեծ է եղել ժամանակակիցների և հետագա սերունդների վրա, որոնցից շատերը կրեցին անվանի մանկավարժի ազդեցությունը դառնալով նրա ավանդների շարունակողը, անփոխարինելի դեր է խաղացել հայ մշակույթի, դպրոցի ու մանկավարժական մտքի զարգացման գործում:

Ծնվել է 1346թ. Գուգարք նահանգի Թմկաբերդ ավանում, բայց ընտանիքով հեռանում է բնակություն է հաստատում Այունյաց գավառի Վայոց ձորում: Ուսում է առնում Տաթևի վանքում՝ աշակերտելով ակնավոր մանկավարժ Գովհան Որոտնեցուն: Գլածորի համալսարանի փակվելուց հետո (1335) որոշ ժամանակ անց այդ կրթության գործունեությունը շարունակվում է Տաթևում, որը կարճ ժամանակ անց հռչակվում է հայոց աշխարհի մայր դպրոց ու համալսարան: Շարունակելով ու զարգացնելով Այունյաց (Շուրաթի) և Գլածորի կրթության կենտրոնները՝ Տաթևացու օրոք (1390-1409) Տաթևի համալսարանը դառնում է հայ մշակույթի ու մանկավարժական մտքի խոշորագույն կենտրոն, որտեղ դասավանդում էին ժամանակի ամենագիտուն հայ մտավորականները, որոնցից շատերը հռչակվել են որպես «անհաղթ փիլիսոփաներ», «ճարտար քերականներ», «դասասաց վարժապետներ», «անման երաժիշտներ», «իմաստուն բնախոյզներ» և այլն:

Տաթևացին ուսումնական գործի հմուտ կազմակերպիչ ու ղեկավար էր, ունեցել է հարյուրավոր աշակերտներ, որոնցից շատերն զգալի ավանդ են ներդրել հայ մշակույթի տարբեր ոլորտների զարգացման գործում: Նա անզերազանցելի ճարտասան-դասախոս էր, որին հիշում էին որպես «քաջ հեռուոր», «արեգակ պայծառ», «հանճարեղ», «զերալույս րաբունապետ» և այլն: Անգամ մեզ է հասել Գր.Տաթևացու դիմանկարը պատկերող մի մանրանկար «Մեկնություն Դավթի սաղմոսների» ձեռագրում, որտեղ որպես սուրբ է ներկայացվել Տաթևացին: Նրա թողած հարուստ ժառանգությունից են «Գիրք հարցմանց», «Գիրք քարոզութեան», «Գիրք որ կոչվի Ոսկեփորիկ», «Լուծումը համառոտ ի տեսութուն Դավթի» և ուրիշ շատ աշխատություններ, որոնց ճնշող մեծամասնությունը Տաթևացին գրել է ուսուցողական նպատակով և հոգացել, որ դրանք մատչելի ու հետաքրքիր լինեն սաներին: օգտագործելով մանկավարժական տարաբնույթ համապատասխան հնարներ: Նա խորհուրդ էր տալիս ուսուցման ընթացքում յուրաքանչյուր սանի նկատմամբ կիրառել անհատական մոտեցում հաշվի առնելով նրա տարիքային, անհատական առանձնահատկությունները, մտավոր, հոգեւոր կարողություններն ու ընդունակությունները: Տաթևացին ուսուցանվող նյութը լիարժեք ընկալելու և յուրացնելու առումով կիրառել է մի շարք մեթոդներ: Նյութի բացատրության զանազան եղանակները նա զուգակցել է շոշափելի փաստերի օգտագործմամբ և զանազան առարկաների ցուցադրմամբ: Տաթևացին փորձել է բացատրել բնության զանազան երևույթները, մարդու կազմությունը, կատարել կենսաբանական ու կենդանական աշխարհի դասակար-

գում, ստեղծել է դաստիարակության աստիճանավորված համակարգ, նախ դասավանդել են առավել դյուրին ընկալելի առարկաներ, որոնք պահանջում են մտավոր գործողություններ կատարելու կարողություններ ու ճաշակ են զարգացրել սաների մեջ, և ապա աստիճանաբար անցել ավելի բարդին: Իբրև գիտության նախադուռ դիտվել են քերականությունը, ճարտասանությունը, որոնք մտել են յոթ ազատ արվեստների մեջ: Ապա դասավանդել են այլ առարկաներ, ուսուցանելիս օգտագործել գծագրեր, պատկերներ, դիդակտիկ և այլ պարագաներ, հարցադրումներ, զրույց-բանավեճեր: Տարածում ունեին նաև գործնական պարապմունքները, տնային հանձնարարությունները, նկարչությունը, ծաղկագործությունը և այլն:

Տաթևացին հավաքել, մշակել ու գրի է առել իր մեծ ուսուցչի՝ Որոտնեցու (որի հոգեւորին էր Տաթևացին) դասախոսությունները, որը ուսուցանել է ներքին և արտաքին գիտություններ և որպես ուսումնական գրականություն հանձնարարել իր սաներին: Կարելի էր նաև ուսուցման գործընթացի կազմակերպումը, ուսուցչի որակավորման բարձրացումը: Դասավանդել է աստվածաբանական, փիլիսոփայական գիտություններ, հայ գրականություն, ճարտասանություն, տարրաբանական, բնագիտական, բժշկական առարկաներ, գրչության արվեստ՝ դրանք ներկայացնելով հոյակապ ճարտասանությամբ ու խորը տրամաբանական վերլուծություններով:

Նրա բազմաթիվ աշակերտներից շատերը, կենսագիրները իրավացիորեն մեծարել են, երախտագիտական խոսքեր շռայլել իրենց մեծատաղանդ ուսուցչի մասին (Մ.Ջուղայեցի, Ա.Սյունեցի, Թ.Մեծփեցի և ուրիշներ): Նրա բազմիմաստ դասախոսությունները լսելու էին գալիս «յամենայն երկրէ և քաղաքաց»:

Տաթևացին հեղինակել է շատ գրքեր և դասագրքեր, որոնք որպես արժեքավոր ձեռնարկներ են գործածվել հայկական տարբեր դպրոցներում: Նա թարգմանաց գործի մեծ վարպետ էր, որի անվան հետ են կապվում շուրջ «60 գրիչ» թարգմանաց գործեր: Տաթևացու շատ հայացքներ առաջադիմական և անգամ մատերիալիստական հիմք ունեն, որոնք խթան են հանդիսացել հայ դպրոցի ու մանկավարժական մտքի զարգացման համար: Այս տեսանկյունից անչափ կարեւորվում է նրա «Սահմանադրություն դաստիարակության» գիրքը, որտեղ դպրոցի, լուսավորության, դաստիարակության դրույթները շարադրում է գիտական մեկնաբանումներով ու վերլուծություններով այն բխեցնելով անհրաժեշտությունից:

Նա ընդունում է միջավայրի կարեւորությունը դաստիարակության մեջ:

Տաթևացու մանկավարժական հայացքները պարունակում են վերածնունդի և անգամ նորագույն ժամանակների մանկավարժական առաջադեմ ուսմունքների սաղմուտ: Նա վճռականորեն հանդես է գալիս շրջապատող աշխարհի անմիջական



**ԳՐԻԳՈՐ ԲԱԲՅԱՆ**  
մանկ. գիտ. թեկ., դոցենտ  
Երեւանի պետական համալսարան

ուսումնասիրության ու փորձով ձեռք բերվող գիտելիքների պաշտպանությամբ: Տաթևացին համարում է, որ մարդու ճանաչողական կարողությունը կրթության ու դաստիարակության շնորհիվ զարգանում է աստիճանաբար, ու անհրաժեշտ է նրա մեջ սերմանել գիտության հանդեպ սեր, պայքարել սնահավատության դեմ: Կարծում էր, որ երեխայի կրթությունն ու դաստիարակությունը պիտի սկսել վաղ մանկությունից, քանի դեռ զգայարաններն ունեն առավելագույն ընկալունակություն, և մանկական հոգին չի ծանրացել իր իրականությանը: Այս օգուտ գիտելիքների բեռով, և դեռևս Ջոն Լոկից 300 տարի առաջ գրել է, որ «Մանկան հոգին ի ծնե անգիր պնակիտ է կամ լուսավորման մագաղաթ, որ զինչ գրեն ի վերայ, զայն առնու»:

Անձի ձեւավորման ու համակողմանի զարգացման նպատակով իմացության գործընթացում Տաթևացին կարեւոր տեղ է հատկացնում նաև մարդու զգայունակությանը, որի միջոցով արտաքին աշխարհից ստացված տպավորությունները վերածնվելով են բանականության շնորհիվ և հետո միայն մարդու մեջ գաղափարներ առաջացնում, ուստի իմացության մեջ սկզբնաղբյուրը նա համարում է օբյեկտիվ իրականությունը, որը և զգայունությունների միջոցով մարդու մեջ առաջացնում է մտապատկերներ և հետո միայն դրանց մասին գաղափարներ:

Մեծանուն գիտնականն իր այս հայացքները հիմնավորելիս օգտվել է նաև Արիստոտելից, ահա թե ինչու առարկելով Պորփյուրին՝ նա խոսում է հենց Արիստոտելի անունից. «Ըստ Պորփյուրի մաս բոլորին հետեւի, որպես անհատ տեսակին և տեսակն սեռին», սակայն ըստ Արիստոտելի՝ «սեռն և տեսակն անհատին հետեւին» զի են երկրորդ գոյացութիվն»:

Անձի ձեւավորման ու զարգացման գործում ճշմարիտ իրականության հաշվառման կարեւոր դերին անդրադառնալով՝ նա ճշմարտության չափանիշը կապում է ռեալ իրականության հետ, եզրահանգում նրան, որ իրական, գործնական կյանքն է, ի վերջո, ճշմարտության չափանիշը:

Չափազանց արժեքավոր է նաև Տաթևացու այն գաղափարը, որ մարդու զգայարանները բանականության շնորհիվ օժտվում են խոհականությամբ և դրանով իսկ դադարում են արտաքին աշխարհից ստացված տպավորություններ:

րի սուկ մեխանիկական ընկալման միջոցներ լինելուց, և խորհուրդ է տալիս կարեւորել զգայարանները՝ տալով նրանց գիտական մեկնաբանություն:

Անվանի մանկավարժը, չափազանց լինելով իր ժողովրդի կրթության և դաստիարակության խնդիրներով, պայքարի կոչ է անում նախապաշարմունքների և չարիք դարձած բազմաթիվ այլ երևույթների դեմ և նշում, որ դաստիարակելու համար պետք է ուսումնասիրել մարդու կյանքի շարժման ու զարգացման օրինաչափությունները:

Տաթևացին հանգում է այն եզրակացության, որ դաստիարակությունը դասակարգային բնույթ ունի, այն հզոր գեներ է և ուն ձեռքուն էլ լինի, հարթողը նա է: Ահա ինչու հավատարմորեն շարունակելով իր մեծ նախորդների՝ Մաշտոցի, Շիրակացու, Գոշի, Մագիստրոսի, Նչեցու, Որոտնեցու և այլոց մանկավարժական գաղափարները անձնվիրաբար պայքարում էր դրանց իրականացման և համընդհանուր դաստիարակության համար:

Տաթևացին մարդու բնավորության կազմավորման ու դաստիարակության գործում կարեւորում էր նաև շրջապատի դերը և բազմիցս անդրադարձել է երկրում տիրող հասարակական ու սոցիալ-տնտեսական բազմաթիվ հարցերի: Ականատես լինելով իր երկրի ու ժողովրդի տառապանքներին, որ գտնվում էր օտար լծի տակ՝ քարոզում էր սերնդին դաստիարակել ազատ մտածելու և մարտնչելու ոգով, ընդգծում այն հատկանիշները, որոնցով աճող սերնդին պիտի դաստիարակել՝ առաքինի, կայուն, արի, ղեկավարություններին դիմակայող, դավաճանությունը, քծանքը, ստախոսությունը, հարբեցողությունը, թափառաշրջիկությունը և այլ հակահասարակական արարքներ ատելու, մերժելու, քննադատելու ոգով:

Անդրադառնալով ուսուցման ու դաստիարակության գործընթացում իրականացվող միջոցների ու հնարների փոխկապակցված կիրառման հարցերին՝ Տաթևացին նշում է դաստիարակության աշխատանքային, ֆիզիկական, մտավոր, բարոյական, գեղագիտական ձևերը զուգակցելու կարեւորությունը. «զի մարմնաւորն պիտոյ է հոգեւորին, որ մարմնաւորն ոչ գործէ, նոյնպէս և ոչ զհոգեւորն»:

Տաթևացին անդրադարձել է նաև շարականների ստեղծման և ուսուցման հարցերին («Գիրք հարցմանց»), բարձր գնահատել գրչության արվեստը, անձամբ կատարել և սերունդներին է թողել բազմաթիվ հրաշալի ձեռագրեր, փայլատակել որպես «արեգակ պայծառ», ձգտել է բանականությունը և փիլիսոփայությունն օգտագործել ճշմարտությունների հիմնավորման համար:

Միջնադարի խոշորագույն հայ մտածողի փիլիսոփայական, իմացաբանական, հոգեբանական, մանկավարժական, սոցիալ-քաղաքական հայացքները, նրա տեսական հարուստ ժառանգությունը համակողմանի ուսումնասիրման, վերլուծության և վերագնահատման պահանջն ու անհրաժեշտությունը զգացվում է նաև այսօր, քանզի մեր շատ ու շատ մեծերի նման ճգնեց, տառապեց, ստեղծեց մնայուն արժեքներ իրեն չթողնելով ոչինչ, և Ղեւոնդ Ալիշանի՝ իր իսկ գերեզմանաբարին փորագրված պատկերավոր արտահայտությամբ՝

«Աշխատեցանք ևս հանգչեցանք» մնալով հայ պատմության մեջ իբրև հավերժության ճանապարհի քայլող և լուսավորող արժեքներից մեկը:



Տաթևի վանքի Գավազան սյունը



ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

# Տաթեւացու տարրաբանական հասկացությունները

Հատված Տիրան Ղազանջանի «Գրիգոր Տաթեւացու տարրաբանական հասկացությունների մասին» գրքից

Այժմ տեսնենք, թե 14-րդ դարի երկրորդ կեսի գիտնական Գրիգոր Տաթեւացին տարրաբանական ինչ հասկացություններ էր տալիս: Տաթեւացին ամեն ինչի սկիզբն ու նախասեռը համարում է գոյացությունը: Գոյացությունը աննյութ եւ անմարմին էություն է: Երբ գոյացությունը հատկություններ է ձեռք բերում, դառնում է մարմնական էություն, ուրեմն մարմինը բաղկացած է գոյացությունից եւ որակությունից: «Եւ գոյացութիւն ասեն, որով տարրորոշի ընդդէմ ոչ գոյին. եւ որակութեամբ բաց յանմարմին էութեանց, ուստի բաղկանայ մարմին գոյացութեանը եւ որակութեամբ», – ասում է Տաթեւացին: Մի ուրիշ տեղ ասում է. «...ի ժողովիլն սոցա մարմնական էութիւն եւ յորոշելն կորնչի մարմինն: Որպէս տունն ի ժողովիլ փայտից եւ որմոց՝ շինի. եւ ի ցրուիլն սոցա կորնչի տունն»: Ինչպէս տեսնում ենք, այստեղ գոյացության հասկացությունը համընկնում է Արիստոտելյան պոտենցիալում մարմնական մատերիայի հասկացողության հետ: Ինչպէս որ Ստագիրեցու մոտ մատերիան պոզիտիվ սահմանում չունի, այնպէս էլ Տաթեւացու մոտ գոյացությունը. «զի անմեկնելի որոշումնք են գոյացութիւն եւ պատահումնք»:

Աննյութ գոյացությունը եւ որակությունը, որը նույնպէս աննյութ է, ըստ Տաթեւացու, աստծու կողմից ստեղծված են ոչնչից:

Այսպիսով՝ բոլոր մարմինների հիմքում դրված է աննյութ գոյացությունը. նա է դրված նաեւ տարրերի եւ տարրերից բաղկացած մարմինների հիմքում: Աշխարհն իր լինելուց առաջ գոյություն ուներ որպէս աստծու «նախազարգալար տեսութիւն»-միտք: Արդարացնելու համար փիլիսոփաների այն միտքը, թե ոչնչից չի կարող ինչ առաջանալ եւ այդ միտքը եկեղեցու հետ հաշտեցնելու համար Տաթեւացին ընդունում է երկու տեսակի ոչնչից. նրանցից մինը պոտենցիալում պարունակում է ինչ եւ կարող է գոյացության սկիզբ դառնալ, իսկ մյուսը ոչնչի սկիզբ լինել չի կարող:

Գոյացության եւ որակության միավորումից ստացված նյութական մարմնի հատկանիշներն են ձեւը, որակը, քանակը եւ այլ հատկություններ, որոնք ճանաչվում են զգայարաններով՝ տեսողությամբ, շոշափելիքով եւ այլն: Ըստ Տաթեւացու՝ այն, ինչ ճողորում է զգայարաններից, նյութական չէ:

Տարրերի հատկանշական հատկությունները չորսն են. «բնութիւն է չորից տարրաց մարմնոյն. ջերմ եւ ցուրտ. չոր եւ զեճ...իւրաքանչիւր տարրերք ք ծայրք որակութեանց ունին զմիմն գոյացական եւ զմիւսն պատահական...»:

«Ձի երկիր ցուրտ է եւ չոր. եւ ջուր զեճ է եւ ցուրտ. Օդ ջերմ է եւ զեճ. Գուն չոր է եւ ջերմ»:

Ինչպէս տեսնում ենք, Արիստոտելին հար եւ մնան, Տաթեւացու մոտ տարրերը երկուական հակա-


դիր հատկություններ ունեն, ըստ որում մեկը եկամուտ հատկություն է, միւսը՝ գոյացական: Տարրերը թվով չորսն են. հող ջուր, օդ եւ հուր: Տարրերի թիվը, ըստ երեւույթին, պայմանավորված է, թեպէս եւ ոչ հետեւողականորեն, նյութի ազդեցատային վիճակների թվով պինդ, հեղուկ եւ գազային. «Ձի առանց հողոյ շոշափումն ոչ լինի, եւ ոչ առանց ջրոյ կալումն եւ մածուկն...» եւ այլն:

Տաթեւացու տարրաբանական ուսմունքի մեջ ամենահետաքրքիր կողմերից մեկն էլ տարրերի անվախճան լինելն է: Նա գիտե փիլիսոփաների այն կարծիքը, թե նյութն անվախճան է աշխարհում: Համաձայն է այդ տեսակետին եւ իր կողմից բացատրություն է տալիս տարրերի անվախճանության պատճառների մասին: Պատճառներից առաջինը, ըստ Տաթեւացու, այն է, որ երկրային էությունները կապ ունեն երկնային մարմինների (իմա մոլորակների) հետ, եւ քանի որ մոլորակները հավիտեական են եւ հարաշարժ, ապա եւ հավիտեական են երկրային էությունները՝ էլեմենտները:

Երկրորդ պատճառն այն է, որ էլեմենտների ներհակ եւ հակակայ որակությունները իրար հավասար են: Երրորդ պատճառը, եւ սա ամենահետաքրքիրն է Տաթեւացու տեսակետների մեջ, այն է, որ էլեմենտների առաջացման եւ ոչնչացման պրոցեսները անպակաս են, ըստ որում տարրերի ոչնչացումն մի տեղում, մի այլ տեղում այլ էակների առաջացում է հանդիսանում եւ ընդհակառակը, որեւէ էակի ոչնչացումն միաժամանակ հանդիսանում է էլեմենտների առաջացում: Եվ այսպիսի շրջանառությամբ էլեմենտները մնում են անվախճան եւ անհատունում:

Չորրորդ պատճառն այն է որ կարող է ոչնչանալ մասը, իսկ ամբողջը երբեք մահկանացու չէ. եւ վերջապէս հիմնգերորդ պատճառն այն է, որ անձերանալի է երկիրը, որը պարբերաբար մաքրվում է երիտասարդանում է երկրաշարժերի եւ հեղեղների միջոցով: Տաթեւացու տարրաբանական հասկացությունների մեջ էլեմենտների անվախճանության տեսակետն այնքան հետաքրքիր է եւ այնքան մոտ է նյութի պահպանման օրենքին, որ չենք կարող մեջ չբերել «Գիրք հարցմանցի» այդ հատվածը լիովին: Գ. Տաթեւացին հարցնում է. «Վասն է՞ր իմաստաւորքն գտարրեղէնքս անապական եւ անվախճան ասեն». եւ պատասխանում է. «Վասն է պատճառի: Նախ ի շարժմանէ երկնային մարմնոց. զի միշտ նույնպէս եւ անդադար շարժին. առնելով զօր եւ զամիս, եւ զեղանակս եւ զապրի, ստուգագոյն չափով առանց յավելուածոյ եւ պակասութեան: Ուստի պատճառի լինելութիւն էիցս միշտ եւ անխափան. որպէս ասի ի գիրս աշխարհոց:

«Երկրորդ՝ զի հաւասարութիւն եւ միաբանութիւն տարրաց անլուծանելի է. ըստ որում ներհակ որակոջ հաւասարք են հակակայ. եւ միւսով



Ապրակունյաց Սուրբ Կարապետ վանք: Սյունիքի Երնջակ գավառի Ապրակունիս գյուղի մերձակայքում գտնվող մեկ այլ՝ Սուրբ Գեորգ վանքում 1369-ին հիմնված Ապրակունյաց դպրոցի ղեկավարի (Նաեւ՝ վարդապետական) աթոռը 1386-90 (91) թթ. զբաղեցրեց Գրիգոր Տաթեւացին, որի ուսումնապետությամբ Ապրակունյաց դպրոցը մեծ ճանաչում ձեռք բերեց:

միաբանք: Եւ այս է թշնամիք անհաշտելիք եւ սիրելիք անբակտելիք:

«Երրորդ՝ ի լինելութեանց եւ յապականութեանց զի անպակասք են. ըստ որում հատեալ ի տարրեաց լինելութիւն է այլ էակաց. եւ ապականութիւն մոցս լնու զհատուն տարրեաց: Եւ այսպէս շրջաստեղծութեամբ անվախճան մնան:

«Չորրորդ՝ զի մասն ապականի, այլ բոլորն կեայ: Որպէս իւրաքանչիւր անհատ մարդոյ եւ ձիոյ մեռանի, այլ բոլորն մնայ. այսպէս եւ տարրերը: Որպէս ասէ առակն, (ազգ գայ եւ ազգ գնայ. եւ երկիր յաւիտեան կեայ):

«Հինգերորդ՝ զի անձերանալի է երկիր, ըստ որում շարժմամբ թոթափի երկիր ի ներքին պատահմանց եւ հեղեղօջ ողողի եւ սրբի յարտաքին պատահմանց:

«Այսպէս ամենայն տարրեր ոչ ծերանան եւ ոչ թուլանան»:

Տաթեւացու այս հատվածում որոշակի կերպով ձեւակերպված է նյութի պահպանման օրենքի մախտարրերից մեկը՝ «...հատեալ ի տարրեաց լինելութիւն է այլ էակաց...եւ այսպէս շրջաստեղծութեամբ անվախճան մնան»: Եվ հենց թեկուզ այս գոհարը գտնելու համար արժեր ժամանակ ծախսել Տաթեւացու գրքերում բնական գիտելիքների շուրջ պրպտուքներ կատարելու համար:

Չենք ուզում ասել, թե Տաթեւացին առաջինն է մեր մատուրփիլիսոփաներից, որին հայտնի է փիլիսոփաների այն միտքը, թե նյութը անվախճան է: Ընդհակառակը, Տաթեւացուց դեռ շատ առաջ՝ դեռ հիմնգերորդ դարում, Եզնիկ Կողբացուն հայտնի էր, որ նյութերը կազմվում են չորս տարրերից եւ քայքայվում են նույն չորս տարրերի: Իր «Եղծ աղանդոց» գրքում Եզնիկը գրում է. «Եւ յայլ շնչաւորսն բնական կենդանութիւն ի չորից հիւթոց խառնեալ եւ յօղեալ, որք յորժան քակտիցին, եւ կենդանութիւնն ի նոյն չորեկին հիւթսն լուծանի»: Այստեղից ելն էլ եզրակացնել, թե Եզնիկն էլ ընդունում է չորս տարրերի անվախճանությունը, բայց այն որոշակիությունը, որ այս խնդրում գտնում ենք Տաթեւացու մոտ, հասնում է բնական երեւույթի օրինաչափության գիտակցված սահմանման, եւ հենց այդ է մեզ հիացնողը եւ իրոք դա

Տաթեւացու առավելությունն է այս խնդրում:

Մենք ասացինք, որ Տաթեւացին որպէս տարրեր, հետեւելով Արիստոտելին, ընդունում է երկիրը, ջուրը, օդն ու հուրը, բայց չպետք է կարծել, թե դրանք այն մարմիններն են, որոնք ինչպէս ասացինք, մեզ այսօր ծանոթ են այդ անունների տակ: Ինչպէս տեսանք, այդ տարրերից յուրմէկը չի երկուական հատկություն, մինչդեռ ըստ Տաթեւացու՝ իրո՞ մեր հասկացողությամբ կրակի հատկությունները էլ ավելի շատ են: Այդ մարմիններից (բայց ոչ տարրերից) յուրաքանչյուրի հատկություններին հատուկ հատվածներ ունի նվիրած, որոնցից երեւում է, որ Տաթեւացու, ասենք, ջուր էլեմենտը, այն չէ, ինչ որ ջուր նյութը: Այսպէս, օրինակ, հուր նյութի հատկությունների մասին նա ասում է. «...Յեղուկ է եւ շարժական...Լուսնկալ նիւթ է...Թափանձիկ մարմին է... Ձօթածանն պատճառէ յամպս...Տնկոց կենդանութիւն է» եւ այլն: Օդի հատկությունների մասին ասում է. «Արբէ գիտս...Ձամպս ցուէ... Աճումն է տնկոց...Շունչ կենդանեաց: Նիւթ բարբառոց...Շարժումն է ջրուց եւ արեան երակաց» եւ այլն:

Բացի վերոգրյալ չորս էլեմենտներից՝ Տաթեւացին ընդունում է եւ Ստագիրեցու հիմնգերորդ էլեմենտը՝ կվինտեսենցիան է, եթերը: Տաթեւացու կարծիքով երկինքը վերոհիշյալ չորս տարրերից չի կազմված, այլ մի հիմնգերորդ էություն է. «...երկինքն է պարզ մարմին. զի ոչ է ի չորից տարրեր. այլ երրորդ էություն է»: Որ այդ հիմնգերորդ էլեմենտը Ստագիրեցու եթերն է, այդ մասին ասում է հենց ինքը՝ Տաթեւացին. «...եւ զայս գիտել պարտ է զի մեծն Ներսէս զհաստատութիւն՝ արփի ասէ եւ եթեր կոչէ, զոր արտաքինքն է երրորդ տարր ասացին, որ ոչ երեւի մեզ»:

Էլեմենտների ամենակատարյալը եթերն է. նա ունի ամենակատարյալ ձեւը՝ բոլորակ ձեւը. «Ապա ուրեմն պարզ էութեան երեսից պարտ է ունել իրենց սեփական եւ որոշ տեղը եւ դիրքը բնութեան մեջ: Թեթեւների տեղը վերեւումն է, ծանրերինը՝ վարումը, ըստ որում եթերությունն ու ծանրությունը, Արիստոտելի մոտ, կապվում է նյութի խտության հետ. խիտ նյութերը ծանր են, նոսր նյութերը՝ թեթեւ:

Գր.Տաթեւացին կարծում է, որ մարմինների որոշիչներից մեկն էլ տեղն է: Այն հարցին, թե ինչ է տեղը, նա պատասխանում է. «...Տեղին է պարագործ մարմնոյ. զի ամենայն մարմին տեղեալ պարագործի»: Տարրերի բնութեան մեջ ունեցած դիրքի մասին նա համաձայնվում է նրանց հետ, ովքեր «...ասեն եթէ տարրքն գնդածէս, պատեալ են զմիմեանս եւ ամրացեալ. զի բոլորակ հուրն պատեալ է զօդ. եւ օդ զջուր. եւ ի մեջ երկիր է հաստատեալ»: Որ-

վար: Այսպէս հողը պիտի շարժվի դեպի ցած, կրակը՝ դեպի վեր: Ինչքան էլ որ մեկնումեկը ուզի ծանրը վեր գցել, միեւնոյն է, նա վայր կընկնի. նույնը, միայն հակառակ նշանով, տեղի կունենա թեթեւ նյութերի հետ: Միայն եթերն է, որ շարժվում է բոլորաձեւ, որովհետեւ սա՝ որպէս ամենակատարյալը, պետք է ունենա եւ ամենաարագ շարժումը, իսկ ամենաարագ շարժումը, ըստ Տաթեւացու, կարող է տեղի ունենալ միայն շրջագծով, որը չունի սկիզբ եւ վերջ:

Գրիգոր Տաթեւացուն զբաղեցրել է նաեւ տեղի պարագան եւ հատկապէս տարրերի դիրքը բնութեան մեջ: Իր «Ֆիզիկա» գրքում քննելով տեղի պարագան՝ Արիստոտելն ի դեպ հայտնում է այն միտքը, թե «... պարզ ֆիզիկական մարմինների՝ օրինակ կրակի, հողի եւ նրանց մասնների տեղաշարժերը ցույց են տալիս, որ տեղը ոչ միայն է ինչ որ, այլ որ նա ունի նաեւ ինչ որ ուշ: Չէ՞ որ նրանցից յուրաքանչյուրը, եթէ նրան սեփական տեղը մեկը՝ վեր, մյուսը՝ վար»: Քննելով այնուհետեւ այն հարցը, որ տեղի պարագան մարդու համար հարաբերական է, Արիստոտելն ավելացնում է. «Չատկապէս, վերը գտնվում է ոչ թե որտեղ եւ պատահի, այլ ուր ձգտում են կրակն ու թեթեւ մարմինները. հատկապէս, ոչ թե որտեղ պատահի գտնվում է վայրը, այլ դեպի ուր շարժվում են ծանր եւ հողային մարմինները...»: Այսպիսով՝ ըստ Արիստոտելի՝ պարզ մարմիններն ունեն իրենց սեփական եւ որոշ տեղը եւ դիրքը բնութեան մեջ: Թեթեւների տեղը վերեւումն է, ծանրերինը՝ վարումը, ըստ որում եթերությունն ու ծանրությունը, Արիստոտելի մոտ, կապվում է նյութի խտության հետ. խիտ նյութերը ծանր են, նոսր նյութերը՝ թեթեւ:

Գր.Տաթեւացին կարծում է, որ մարմինների որոշիչներից մեկն էլ տեղն է: Այն հարցին, թե ինչ է տեղը, նա պատասխանում է. «...Տեղին է պարագործ մարմնոյ. զի ամենայն մարմին տեղեալ պարագործի»: Տարրերի բնութեան մեջ ունեցած դիրքի մասին նա համաձայնվում է նրանց հետ, ովքեր «...ասեն եթէ տարրքն գնդածէս, պատեալ են զմիմեանս եւ ամրացեալ. զի բոլորակ հուրն պատեալ է զօդ. եւ օդ զջուր. եւ ի մեջ երկիր է հաստատեալ»: Որ-



# ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

պես զծու հաւի, դեղնուցն ի մեջ ջրոյն»: Այնուհետեւ առանձին մարմինների հատկությունների մասին առանձին-առանձին խոսելով՝ Տաթևացին, բազում այլ հատկություններից բացի, երկրի համար ասում է, թե «... Եւ զի ստորին է այլ տարերաց եւ խտեալ: Եւ զի բանձր է: Եւ զի ծանր է: Եւ զի բուրբ է: Եւ զի անշարժ է»: Այն հարցին, թե ինչպես է, որ երկիրը մնում է իր ամենացածր դիրքում, Տաթևացին տալիս է հետևյալ բացատրությունը. «...Եւ զի ի միջին կիսուն իւր ըմբռնի անշարժ...», «Արդ՝ ներքին հողմն ի վեր ձգե գերկիր. եւ վերին հողմն ի վայր. եւ այսպէս ի մեջն հաստատ մնայ երկիր: Երրորդ՝ ծանրութիւն երկրիս ի վայր հակէ. եւ բռնութիւն հողմոյ ի վեր: Զորորդ՝ հասարակչիւն է երկիրս բոլորակի. եւ յամենայն կողմանէ ծանրութիւնն ի մեջն ժողովի. եւ այսպէս ինքն ի վերայ իւր հաստատեալ է: Գիմեքորդ՝ երկինքն թեթեւ է ի վեր քարչէ, եւ երկիրս ծանր ի վայր հակէ. եւ այսպէս մի զմի հաստատուն պահեն»:

իրար հետ եւ այն նյութերը, որոնք առաջանում են նրանց միացությունից: Հարկավոր է պարզել նաեւ, թե արդյոք այդ տարրերը միանալիս պահպանում են իրենց հատկանշական հատկությունները, թե՞ այդ հատկությունները մերվում են իրար մեջ, եւ առաջ է գալիս մի բոլորովին նոր որակ:

Այս հարցի պատասխանը մենք գտնում ենք «Ոսկեփորիկում», որ հավաքել է Տաթևացին: Այնտեղ հարց կա. «Որքա՞ն է եղանակ միաւորութեան», կա եւ պատասխանը: Ըստ «Ոսկեփորիկի»՝ միավորությունները բաժանվում են երեք գլխավոր խմբի: Ամբիջնորդ, կամ ինչպես ինքն է ասում, անշարժապ միացություններ, միացություններ՝ միջնորդի կամ շարժապի միջոցով եւ վերջապես հավաքականություն, կամ, ինչպես ինքն է ասում, շարժույթով միավորություն: Այս երեք խմբերից յուրաքանչյուրն իր հերթին բաժանվում է երեք ենթախմբերի, ըստ որում առաջին երկուսը ենթախմբերի բաժանվում են նայած նրան, թե ինչերի միավորման հետ մենք գործ ունենք. էությունը՝ էության, հատկությունը՝ հատկության, թե՞ էությունը հատկության հետ. իսկ երրորդը բաժանվում է ենթախմբերի ըստ դրության, ըստ ժողովման եւ ըստ կոչման:

...Ոչ միայն չորս էլեմենտներով, այլեւ նրանց բնորոշ չորս հատկություններով էլ է բացատրում Տաթևացին մարդու մարմնի այս կամ այն օրգանի ֆունկցիան եւ այդ ֆունկցիաների խախտումը: Այսպես, բացատրելու համար, թե ինչու երիտասարդը մոտիկն է լավ տեսնում, իսկ ծերունին հեռուն, Տաթևացին լավ տեսնելու հատկությունը վերագրում է երկու երակների, որոնք ուղեղից գալիս են դեպի աչքը. «Այս երկու երակս թէ տաք է չոր, մարդն ի մօտն աղէկ տեսնու՛մ է ի հեռուն վատ. որպէս տղայն: Եւ թէ այս երակս հովէ եւ գէջ, ի հեռուն աղէկ տեսնու եւ ի մօտն վատ. որպէս ծեր մարդն: Եւ թէ այս բ երակս բռնուի, մարդն կուրանայ»:

Մարդու մարմնի օրգանների մասին խոսելիս Տաթևացին նրանց բաժանում է երկու խմբի՝ գլխավոր եւ երկրորդական օրգաններ: Գլխավոր օրգանների թիվը Տաթևացին սահմանում է յոթով՝ համաձայն յոթ մուրրակների թվի, ըստ որում ամեն մի մուրրակ մի որեւէ օրգանի տնօրենն է, տերն ու հովանավորը: Զմուռանանք, որ ըստ Արիստոտելի եւս մուրրակների ազդեցության տակ են էլեմենտները: Բացի այդ, ամեն մի օրգան բնորոշվում է էլեմենտներին հատուկ զույգական հատկություններով. այսպէս «... Առաջինն սիրտն է բազաւոր անձինն, տաք է եւ չոր եւ իւր տանուտէր արեգակն է: Երկրորդն, ուղեղ գլխոյն է. հով է եւ գէճ. ընդդէմ սրտին ջերմութեան եւ չորութեան. զի բարեխառնեցէ գոնսա. եւ իւր տանուտէր լուսինն է»: Մյուս կարեւոր օրգաններն են յարողը (տաք է թաս, տանուտերը՝ մուշարին), թոքերը (սառը եւ թաց, տանուտերը՝ լուսինը), փայծաղը (ցուրտ եւ չոր, տանուտերը՝ գօհալը), երիկամունքը (տաք եւ թաց, տանուտերը՝ գոհրան) եւ լեղին (տաք է չոր, տանուտերը՝ հրատը): Իսկ հատկապես այս օրգանների գլխավոր լինելը Տաթևացին հիմնավորում է այսպէս: «Եւ գլխավոր անդամք են սուքա. զի թէ յայլ անդամք՝ այսինքն աչքն՝ ականջն՝ ձեռքն եւ ոտքն կամ այլն վնասի, մարդն ապրի: Ապա թէ յեօթանց ասացելոցս մինն վնասի, իսկոյն մեռանի մարդն: Եւ որպէս է են գլխաւոր անդամք՝ եւ մուրրակք յերկինս»:

Բուսական աշխարհը նույնպէս չորս տարրերի արգասիք է, ըստ որում նրա յուրաքանչյուր մասուն գերազանցում է այս կամ այն էլեմենտը: Այն հարցին, թե «Վասն է՞ր նախ ծաղիկն եւ ապա պտուղն երեւի», Տաթևացին պատասխանում է. «Նախաշաւիղ է ծաղիկն պտղոյն: Որպէս ի մեզ նախ զգայականն երեւի եւ ապա բանականն: Դարձեալ ծաղիկն է հրոյն՝ որ նախ շարժի եւ երեւի պտուղն ջրոյն՝ որ յետոյ հասանի: Եւ տերեւն օրոյն: Եւ թանձրութիւն փայտին է՝ հողոյն»:

Մենք ցույց տվինք, որ Տաթևացու տարրաբանական հասկացությունները կրկնություն են կամ համարյա ճշգրիտ արձագանք Արիստոտելյան տեսակետների: Բայց կարող էր պատահել արդյոք, որ իր դարի երեւելի գիտնական եւ առաջադէմ մարդը անհաղորդակից մնար դարերի բերած գիտության նոր գանձերին եւ միայն ու մեխանիկորեն կրկներ իրենից հազար յոթ հարյուր տարի առաջ սահմանված ճշմարտությունները: Այդ չէր կարող պատահել: Այդ չէր կարող պատահել մանավանդ մի այնպիսի մարդու հետ, ինչպիսին է Տաթևացին, որը գիտեր, որ ճշմարտությունները բացարձակ եւ հավիտենական չեն, որ փիլիսոփաների տարածած եւ այսօր ընդունելի ճշմարտությունները երբեմն փոփոխվում են հակառակի եւ որն իր «Գիրք հարցմանցի» 121-րդ էջում հայտնում է այն դիալեկտիկական միտքը, թե «դարձեալ ճշմարիտն փոխի երբեմն ի սուտն, որպէս իմաստափրաց բանքն»:

Տաթևացու ժամանակներում արդեն տարածուն ուներ այբուբանական նոր էլեմենտների տեսությունը (Ալբերտ Մեծ (1193-1280), Ռոջեր Բեկոն (1214-1294), Արնոլդ Վիլլամոնսկի (1235-1314) եւ այլք). խոսքս վերաբերում է սնդիկին եւ ծծումբին: Այս էլեմենտների մասին խոսել է նաեւ Ռայմոնդ Լուլլը (1235-1314), որն իր քարկոծվելուց մոտ տասը տարի առաջ եղել է Հայաստանում: Այս էլեմենտների՝ արիստոտելյան էլեմենտներից գերապատվության հարցը ամբողջ հասակով դրվեց միայն 16-րդ դարում, այսինքն՝ Տաթևացուց երկու դար հետո, իստորոքմիայի հռչակավոր հիմնադիր Տեոֆիլ աստ Բոմբաստ ֆոն Հոգենգենը Պարացելը: Այդ, ասենք, այբուբանական էլեմենտներից Տաթևացու մոտ խոսք կա միայն ծծումբի մասին: Հայտնի է, որ այբուբանների մոտ ծծումբը այրվողականության սկզբունքն է ներկայացնում: Այդ նույն բանը մենք տեսնում ենք նաեւ Տաթևացու աշխատության մեջ: Այն հարցին, թե ինչու ջերմուկների ջուրը

տաք է լինում, Տաթևացին պատասխանում է. «... ծրծումբն զօրութեամբ ունի գիւրն: Արդ՝ յորժամ աղբիւր ջրոյ՝ մերձին յերակն իրոյ որ է ծրծումբն, ջերմանան խիստ կամ թոյլ. մերձ կամ հեռի անցանելովն»:

Այսպէս ուրեմն, այն ընդերկրածին աղբյուրներն են ավելի տաք լինում, որոնք երկրի ընդերքում ավելի մոտից են անցնում ծծմբի հանքի երակներից, որովհետեւ ծծումբը իրեղեն զորություն ունի: Ինչպէս որ երկրի ընդերքում կան ջրի երակներ, օրի (հողմոց) երակներ, այնպէս էլ կան հրո (ծծմբի) երակներ: Կրակի երակներից, Տաթևացին, որը Տաթևացու, արտահայտվում է ոչ միայն ջերմուկների ջրի ջերմությամբ, այլեւ զանազան այլ եղանակներով: Այսպէս օրինակ, Տաթևացուն հայտնի է, որ Բաքվի մոտ՝ Կասպիական ծովի ափերին, երկրի ընդերքից կրակ է դուրս թռչում. նա գրում է. «Որպէս ի մեջ երկրի գոն երակք ջրոց. նոյնպէս եւ հողմոց. ուստի ի վեր փչեն: Նոյնպէս եւ հրոյ. որպէս յետնէ լեռան յարեւնուտս: Եւ ի Բաքու յեզրն Կազբիական ծովուն»:

Միանգամայն սխալ կլինի կարծել, թե ամեն անգամ ծծումբի մասին խոսելիս Տաթևացին նկատի ունի այն նյութը, ինչ մենք հասկանում ենք ծծումբ պարզ նյութը նկատի ունենալով: Բերված ցիտատից էլ երեւում է, որ Տաթևացին ծծումբը այստեղ նկատի ունի որպէս հետագայի երեք էություններից մեկը:

Այդ երեք էությանց մասին Պարացելը ասում է. «Ամեն մի մարմին (corpus) կազմվում է երեք սուբստանցիայից, որոնց անունն է՝ ծծումբ (sulphur), սնդիկ (Mercurius) եւ աղ (sal) ... Եթե դու ձեռքդ առնես որեւէ մարմին, ապա դու ունես երեք անտեսանելի սուբստանցիաներ... Այդ փորձելու համար նախ վերցրու փայտը. դա կլինի մարմինը: Այրիր այն, այդ դեպքում այն, ինչ կայրվի, ծծումբն է, այն, ինչ կփխս, սնդիկն է, իսկ այն, ինչ մոխիր կդառնա, աղն է...»:



Որդնավանք (գտնվում է Որդանի կիրճի ձախակողմյան բարձունքի վրա՝ Սիսիան - Շամբ խճուղու աջ կողմում, Վաղարիս գյուղից քիչ հարավ): Այստեղ գիտական եւ եկեղեցական գործունեություն է ծավալել 30-ական Որդնեցիները, ինչպես եւ նրա աշակերտ Գրիգոր Տաթևացին:



# ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## Ապրանքի եւ աշխատանքի մասին

Հատված Ներսես Թովմասյանի «Գրիգոր Տաթևացու սոցիալ-տնտեսագիտական հայացքները» գրքից

Տաթևացին տնտեսագիտական հատուկ ուսումնասիրություններ չի թողել: Նրա աշխատությունները, բացի «Գրիգոր հարցմանց» հանրագիտարանային բնույթի մեծարժեք գործից, ավետարանական քարոզներ են ու մեկնություններ, որոնց մի մասը նվիրված է տնտեսական երեւոյթների վերլուծությանն ու բնութագրությանը: Այսպիսի ուշագրավ քարոզներից են «Քարոզ վասն մեծութեան եւ աղքատության», «Քարոզ վասն տնտեսին», «Քարոզ վասն արիության եւ գործոց», «Քարոզ վասն երկրագործաց», «Քարոզ վասն արդարության վաճառք կշռոց» եւ այլն: Բացի այդ, Տաթևացին իր բազմապիսի զուտ կրոնական բնույթի քարոզներում ու մեկնություններում նույնպես կատարում է տնտեսական տարբեր երեւոյթների հետաքրքիր վերլուծություններ, որոնք հարուստ նյութ են տալիս տեսական-տնտեսագիտական ընդհանրացումների համար:



Սաղմոսավանք: Գրնվում է Սաղմոսավանք գյուղում (Աշտարակից 12կմ հյուսիս)՝ Քասախ գետի ափին:

Գրիգոր Տաթևացին իր աշխատություններում բազմիցս անդրադարձել է նյութական բարիքների արտադրության եւ աշխատանքի հարցերին: Որպես բնատնտեսության ժամանակաշրջանի մտածող՝ նա գերական ցուցանիշներ է ապրանքների սպառողական արժեքի կարեւորությունը, դրանք դիտում որպես մարդկանց պահանջմունքները բավարարելու միջոց: Առաջին հերթին նրան հետաքրքրում է այդ պահանջմունքների բնույթն ու անհրաժեշտության աստիճանը: Մարդկանց պահանջմունքները բնորոշում են մարմնական եւ հոգեկան: «Բնականապես մերկ եւ դատարկ ենք յամենայն բարեաց, - գրում է Տաթևացին, - ի մարմնաւորեն, եւ ի հոգեւորէն. զի ոչ ունինք զգէտս բնական որպէս կենդանեաց. եւ ոչ զեն, եւ ոչ այլ ինչ: Նոյնպէս եւ ըստ հոգեւորն ոչ ունինք սրբութիւն, իմաստութիւն, եւ ոչ այլ ինչ»: Մարմնական պահանջմունքները բավարարելու համար մարդը կազմակերպում է նյութական բարիքների արտադրություն, իսկ հոգեկան կարիքների բավարարման համար ստեղծում է կրոն ու գիտություն: Հետեւաբար, իրերը կարող են բավարարել ինչպէս մարդկանց նյութական կարիքները, այնպէս էլ հոգեկան պահանջմունքները. երկու դեպքում էլ մարդը գործ ունի իրի սպառողական հատկությունների, նրա սպառողական արժեքի հետ: Մարդկանց պահանջմունքներին համապատասխան արարներն էլ բաժանվում են երկու խմբի՝ նյութական բարիքներ եւ հոգեւոր բարիքներ: Տաթևացին նկատում է նաեւ դրանց ձեռքբերման եղանակների տարբերությունը: Թեպետեւ երկուսն էլ ձեռք են բերվում գործով, բայց «զմարմնոյն պէտն աշխատութեամբ. եւ զհոգւոյն առաքինութեամբ եւ կրթութեամբ»: Մարդկանց մարմնական պահանջմունքները իրենց հերթին, ըստ անհրաժեշտության աստիճանի, բաժանվում են երկու խմբի՝ առաջին անհրաժեշտության պահանջմունքներ եւ «ի գարդարանս վայելչութեան»: Դրան համապատասխան նյութական բարիքներն էլ են բաժանվում երկու մասի: Առաջին անհրաժեշտության պահանջմունքներ բավարարող բարիքն «այն է որ թէ լինի, ապրի մարդ. եւ թէ ոչ լինի՝ մեռանի. որպէս հուր եւ ջուր եւ այլն: Իսկ վայելչականն այն է որ թէ լինի՝ ոչ կենդանացուցանէ զմարդն. եւ թէ ոչ լինի՝ ոչ մեռանի. որպէս արծաթն.

ոսկին. ակն. մարգարիտն եւ այլն, զի աւելորդ են ի մարդկային կեանս՝ եւ ընդունայն եւ ի նանիթ»: Բնատնտեսության գաղափարախոսն այնքան է զայրացած արծաթասիրության դեմ, որ մի պահ փորձում է նույնիսկ ժխտել արծաթի եւ ոսկու սպառողական նշանակությունն ընդհանրապես: «Այլեւ այս գիտելի է՝ զի արծաթն եւ ոսկին եւ մնանք նոցա՝ ոչ են ի մարմնոյն պէտսն զոր արարիչն յօգուտ է սահմանեալ մարդոյ... այլ արծաթն եւ ոսկին եւ այլն՝ օտար են ի պիտոյից բնութեանս. զի ոչ կերակուր են, եւ ոչ ըմպելի, եւ ոչ համ-դերձ մերկութեան, եւ ոչ այլ ինչ»: Բայց իրականությունը չափավորում է նրա զայրույթը, եւ նա ստիպված է ընդունել նաեւ «վայելչության» պահանջների անհրաժեշտությունը, որոնք, սակայն, կախված են առաջին անհրաժեշտության պահանջմունքներից, այն առունով, որ «յորժամ հարկաւոր պէտքն նուազին, արհամարեալ եւ անարգ է ոսկին եւ արծաթն. եւ յորժամ հարկաւոր պէտքն լնանին, ապա նոքա ցանկալի լինին ի գարդարանս վայելչության»:

Վայելչության պահանջմունքների գոյությունն ընդունելուց հետո Տաթևացին նշում է, որ այդ պահանջմունքների հագեցմանը չափ ու սահման չկա, որով եւ դրանք տարբերվում են առաջին անհրաժեշտության պահանջմունքներից: Նա օրինակ է բերում արծաթասիրությունը: «Եւ ի յայս ցանկալի իրացս՝ կայ զոր առնունքն եւ ցանկամբ եւ յագենամք. որպէս մարմնաւոր տան կերակուրն, եւ ըմպելին. զի սակաւիկ մի գպէտս մեր առնունքն եւ յագենամք: Եւ կայ իր մի՝ որ ոչ է հագեցունն. որպէս այն զոր աջօք տեսանմք, եւ ականջօք լսեմք, ոչ յագենամք... եւ այսպէս է արծաթասիրութիւն... «Որ սիրէ զարծաթ՝ ոչ յագեցի արծաթով»: Եւ այս է պատճառն, որ ամենայն կերակուր եւ ըմպելի՝ ի ներքս մտանէ եւ լնանի եւ ծանրանայ մարմինն վասն այն հագեցման: Իսկ տեսութիւն արծաթոյն յարտաքուստ զաչսն կերակրէ. եւ զգոյնն ի միտսն տայ եւ մուլորեցուցանէ զնա եւ ոչ հազի. վասն զի զմիտս մարդոյ՝ անհազ է ստեղծեալ աստուած. զի յանապազ տենչայ երկնաւորացն եւ ոչ յագենայ: Իսկ զմարմինն՝ յագեցող է արարեալ, զի սակաւ իրօք՝ կարօտութիւն

պիտոյիցն լնանի եւ դադարի»: Տաթևացին այստեղ, անշուշտ, շփոթում է վայելչության պահանջը արծաթասիրության տենչի հետ: Դրանց մեջ ընդհանուրն այն է, որ երկուսն էլ հագեցում չունեն, բայց իրենց բնութաբանում տարբեր են: Վայելչության պահանջը սպառողական բնույթ ունի, իսկ արծաթասիրությունը արժեքների կուտակման տենչի մեջ պետք է փնտրել, որը Տաթևացին տվյալ դեպքում չի կռահել: Բայց Տաթևացու պարտող միտքը հաղթահարում է բնատնտեսության կողմից ստեղծված փակուղին, եւ հիշյալ պահանջմունքների նույնացումը չի խանգարում նրան տեսնել կյանքում արդեն զարգացման նշանակալից աստիճանները հասած ապրանքային հարաբերությունները: Նա հասկանում է, որ ոսկին ու արծաթը, բացի մարդկանց անձնական վայելչությունից, նաեւ հասարակական նշանակություն ունեն: «Կաճառեալ գտանմք արծաթով կերակուր եւ ըմպելի եւ զայլն»: Ուրեմն այդ ազնիվ մետաղները պետք են ոչ միայն որպէս զարդարանք ու գեղարվեստական իրեր արտադրելու նյութ, այլեւ որպէս համընդհանուր արժեքներ, որոնցով կարելի է ձեռք բերել ամեն տեսակի ապրանքներ: Հեղինակը տեսնում է, որ հենց այստեղ էլ թաքնված է արծաթասիրության գաղտնիքը: Մեծ քանակությամբ արծաթը մարդու համար մշտապես բարեկեցիկ կյանք ապահովելու գրավակամ է: Այդ կապակցությամբ նա ընդունում է հարստության գոյության երկու ձեւ՝ «ինչք, ոսկի եւ արծաթ»: Այստեղ արդեն դրսևորվում է այն իրողությունը, որ արծաթն ավելի կարելի է կատարում, քան մարդու անձնական կարիքների սուկ բավարարումը: Որպէս հարստության ընդհանուր ձեւ, որպէս փող, այն հասարակական մեծ ուժ ունի, որին ենթարկվում են բոլորը, որով կարելի է կարգավորել ամեն ինչ, լուծել ամենաբարդ ու դժվարին հարցերը: Արծաթասիրության տենչը անսահման է շնորհիվ հենց այն մոգական ուժի, որի առջեւ խոնարհվում են բոլոր հեղինակությունները: Եվ այդ է պատճառը, որ մարդիկ կուռքի մասն պաշտում են արծաթը եւ հանուն արծաթի «նոքա զոհէին զուստերս եւ զդստերս իւրեանց, եւ

տոքս սպանանեն զմիմեանս վասն արծաթոյ»: Տաթևացին կսկիծով է նկատում, որ փողային հարաբերությունները քայքայում են ֆեոդալական հասարակության հիմքը՝ բնատնտեսությունը: Այդ հասարակության հիմքը ստիճանական բարեքերը դառնում են զնման ու վաճառքի առարկա, խեղդվում են «եսանող հաշվի սառցաջրի մեջ»: Այդ է պատճառը, որ նա անհիմուն է արծաթասիրությունը որպէս ֆեոդալական հասարակության մարդուն մուլորեցնող անարդ հատկություն: Արծաթասերը գող է ու հափշտակող, գրում է Տաթևացին, նկատի ունենալով առետրականին ու վաշխառուին, «առաւել չար է քան զգողն. վասնզի գողն ի ծածուկ եւ սինի գողանայ, եւ նա յայտնի նստեալ ի մէջ հրապարակին, որ է կուղպակ, որ ստուգաբանի ի գող բալ: Հինգերորդ. զի մարդիկ լսելով յաւանդակն խոյս տան. եւ առ նա իբր առ բարի սիրելի ընթանան: Վեցերորդ. զի գողն մի անգամ գողանայ զմիոյն ստացուածն. իսկ նա բազում անգամ ի միեւնոյն մարդոյ գողանա խաբէութեամբ»: Տաթևացին արծաթի մեջ, բացի վայելչության պահանջը բավարարելու սպառողական նշանակությունից, տեսնում է նաեւ մի այլ՝ նոր հատկություն, որը նրա այլ ապրանքների ձեռք բերելու ունակությունն է՝ փոխանակարժեքը: Այստեղ Տաթևացին մոտենում է այն հարցին, թե արծաթը ինչպէս է այդ հատկությունը ձեռք բերել, ինչպէս է դարձել փող: Նա այն կարծիքն է հայտնում, որ փողը հայտնագործվել է «ի ճարտարութենէ մարդկան եւ ի հնարից»: Անշուշտ, հնարավոր չէ Տաթևացուց պահանջել, որ նա լուծեր փողի առաջացման գաղտնիքը: Դրա համար անհրաժեշտ էր զարգացած ապրանքակապիտալիստական հարաբերությունների առկայությունը: Արժեքավորն այստեղ հարցադրումն է:

Փոխանակարժեքի կատեգորիան Տաթևացու համար գոյություն ունի միայն ոսկու եւ արծաթի, այսինքն փողի մեջ: Մյուս ապրանքների մեջ նա տեսնում է միայն նրանց սպառողական նշանակությունը: Իսկ երբ ապրանքների ավելի են, քան պետք է մարդկանց կարիքները բավարարելու համար, Տաթևացին առաջարկում է ավելցուկը նվիրաբե-

րել (հավանաբար եկեղեցուն) հոգու փրկության համար, որի մեջ էլ տեսնում է ավելցուկ ապրանքների նշանակությունը, «վասնզի ապրանքն փրկանք թարգմանի. որ մարդ տայ եւ զմարմին իւր փրկէ, եւ կամ զհոգին»:

Տնտեսական երեւոյթների ուսումնասիրության ժամանակ Տաթևացու համար բոլոր դեպքերում ելակետը սպառող մարդն է: Մարդու սպառողական պահանջմունքները («կարօտութիւնը») Տաթևացին բացարձակացնում է եւ համարում հասարակական առաջընթացի զապանակ: Այս տեսակետից Տաթևացին ամենատարբեր առիթներով ընդգծում է նյութական բարիքների կարեւորությունը մարդու համար եւ հասարակության կյանքում: «Ըզգործ մարմնաւոր եւ զաշխատանս ձեռաց գործելի է ամենեցուն», գրում է Տաթևացին, «զի պէտս ունինք կերակրոյ եւ զգեստի, ապա թէ ոչ գործեմք, սովինք եւ մերկանամք»: Կարիքը եւ արտադրության կազմակերպման, եւ աշխատանքի բաժանման, եւ արվեստների ու գիտության զարգացման խթանն է: Դեռ ավելին, ըստ Տաթևացու, կարողությունը իրավական ու բարոյական նորմաների ստեղծման հիմքը, հասարակական ներդաշնակության ելակետն է ընդհանրապես: Եվ նա զույգեր չի խնայում կարիքի ստեղծագործական նշանակությունը փառաբանելու համար: Կարողությունը համիսանում է մեծագույն բարիք «վասն վեց պատճառի: Նախ. զի կարօտութիւնն ստեղծութեան է պատճառ, զի մի տեսեալ զնեզ անկարատ. ինչպէս նախահայրն Ադամ. հպարտութեամբ կործանիցինք: Երկրորդ. զի վասն կերակրոյ եւ պիտոյից զբաղիցինք. եւ հոգամք. զի մի դատարկացեալ ի գործոյ ի մեղսապարտապիցինք: Երրորդ. զի կարօտ զոլով ամենայնի հոգեւորաց եւ մարմնաւորաց զաստուած սիրեսցուք. եւ խնդրեսցուք: Չորրորդ. զի վասն կարաւտեաց պիտոյից զմիմեանս սիրեսցաւք: Հինգերորդ. զի վասն պիտոյից մեր գանասուսն խնամեսցաւք: Վեցերորդ. կարօտ արար զնեզ բնական պիտոյիցն. զի բանին եւ իմաստութեամբ գտցուք արուեստիւ գկերակուր, զգեստ, զյարկն եւ զայլն»: Այսպիսով, կարիքը միայն արդյունագործության ու գյուղատնտեսության կազմակերպման ու զարգացման դրդապատճառը չէ: Աշխատավորները պետք է մշտական կարիքի մեջ լինեն՝ իրենց տրեւորին, եկեղեցուն հնազանդ լինելու, միմյանց օգնելու եւ համերաշխ ապրելու համար: Բայց կյանքը ցույց է տալիս, որ մարդիկ արտադրում են ավելին, քան պետք է իրենց կարիքների համար, եւ ավելցուկը կուտակվում է դառնալով չարիքի պատճառ: Կուտակման ձգտումից են առաջանում «անհրաժեշտութիւն եւ զրկումն. եւ նախանձ. եւ թշնամութիւն. եւ սպանումն»: Միակ ռացիոնալ տնտեսածելը նա համարում է բնատնտեսությունը, որը հակադրում է ապրանքային հարաբերություններին: Մարդկանց սպառողական պահանջմունքների եւ աղքատության այս բնույթի բացատրությունները հետաքրքիր են այնքանով միայն, որ լավ են բնութագրում հեղինակին, որպէս բնատնտեսության եւ ֆեոդալական հասարակության գաղափարախոսի:

Աշխատանքը նույնպէս Տաթևացին դիտում է որպէս սուկ սպառողական արժեքների արտադրության պրոցես, որը, սակայն, չի խանգարում նրան արժեքավոր դատողություններ անելու աշխատանքի բնույթի ու առանձնահատկությունների մասին: Տաթևացին աշխատանքը համարում է մարդու բնածին հատկությունը, քանի որ մարդու գոյության պայ-



# ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

մանները կարող են ստեղծվել միայն աշխատանքի միջոցով: Աստծու պատվիրաններից մեկն է «Որ արասցե ոչ կերից մի»: Աստված մարդուն ստեղծեց եւ դրախտից հանելով ասաց. «մի պարապ եւ անգործ մնասցե»: Բայց, բացի տնտեսական անհրաժեշտությունից, աշխատանքն ու վաստակը սկզբնական հրամանն ու օրենքն են. «Արդ նախ քան ըզյանցանել՝ եւ յետ յանցանացն՝ սկզբնական հրամանն եւ օրենքն աստուածային են ի վերայ մեր աշխատանքն եւ վաստակքն»: Չետեաբար, աշխատանքն ու վաստակը սկզբնական հրամանն ու օրենքն են եղել նաեւ մինչեւ դրախտից դուրս գալը, այսինքն՝ աշխարհի ստեղծման օրից սկսած:

Ստեղծագործական աշխատանքի ծագումը ծնվում է մարդու հետ միասին, որը նա չի կարող «թաքուցանել ի մարմնի. այլ միշտ եռայ գեռայ կայառաջալով եւ ջանայ զամենայն ի գործ արկանել»: Այս նշանակում է, որ աստված ստեղծել է միայն մարդուն եւ անկենդան բնությունը, որին պետք է սպրիտի կերպով հավատալ, իսկ հասարակական կյանքի իրական ստեղծողը մարդն է ու նրա աշխատանքը: Աշխատանքի հասարակական բնույթը եւ նրա ստեղծագործական նշանակությունը Տաթևացին ընդգծում է ամենատարբեր առիթներով: Մարդու աշխատանքն է «կամաց Բազում առբազում», որի շնորհիվ էլ «աշխարհի շինութիւն լինի»:

Ինչպէս տեսանք, Տաթևացին տարբերում էր պահանջմունքների երկու խումբ՝ մարմնական եւ հոգեւոր: Դրա հիման վրա էլ նա տարբերում է երկու տեսակի աշխատանք. ֆիզիկական աշխատանք, որը ստեղծում է մարմնական պահանջմունքները բավարարող նյութական բարիքներ, եւ մտավոր աշխատանք, որի արդյունքները բավարարում են մարդկանց հոգեւոր պահանջմունքները: «Գործով է աշխատութեամբ գտանեմք զերկուսինս. զմարմնոյ պէտք աշխատութեամբ. եւ զհոգւոյն առաքինութեամբ եւ կրթութեամբ»: Առաքինությունն է կրթությունն ստեղծելու նա նկատի ունի կրթում ու գիտությունը: Ըստ որում բնորոշ է այն, որ այս ստորաբաժանումից հետո Տաթևացին կրթումն ու գիտությունն ստեղծած հոգեւոր բարիքների հարցը գրեթե չի քննարկում, մինչդեռ նյութական արժեքների արտադրության հարցերին անդրադառնում է ամենատարբեր առիթներով: Տաթևացին խոսում է ոչ թե աշխատանքի միեւնույն պրոցեսի երկակի բնույթի, այլ աշխատանքի տարբեր պրոցեսների մասին, որոնց արդյունքներն են բաժանվում երկու խմբի, եւ ոչ թե ինքը արդյունքը երկակի բնույթ ունի: Այնուհետեւ, ինչպէս մարմնական, այնպէս էլ հոգեւոր պահանջմունքները արտահայտում են միեւնույն բնույթի, այսինքն՝ սպառողական հարաբերություններ: Այստեղ արժեքային հարաբերություններն մասին ակնարկ անգամ չկա: Սպասման հարաբերություններն էլ, իրենց հերթին, պայմանավորված են սպառողական պահանջմունքների բնությով: Չետեաբար, ինչպէս աշխատանքի, այնպէս եւ նրա ստեղծած արդյունքների սկզբնապատճառն ու ելակետը մարդկանց սպառողական պահանջմունքներն են: Այսպիսով, մենք ունենք ոչ թե արարանքային արտադրության մեջ ծախսված աշխատանքի ու նրա արդյունքների բնույթի վերլուծություն, այլ բնատնտեսության մեջ արտադրված մթերքների եւ դրանք ստեղծող աշխատանքի միջեւ եղած կապի վերաբերյալ ուշագրավ դատողություններ:

Ստեղծագործական աշխատանքը Տաթևացին համարում է բացառապես մարդու բարեմասնու-

թյուն, որով էլ մարդը տարբերվում է կենդանական աշխարհից: Այս մեծիմաստ ճշմարտությունն ինքնին պարտավորեցնում է ցույց տալ մարդկային աշխատանքի առանձնահատկությունները:

Մարդկային աշխատանքը համեմատելով մրջյունի «աշխատանքի» հետ՝ Տաթևացին արձանագրում է մի շարք տարբերություններ:

1. Նախ, որ մրջյունն է «անբան զեռուն. եւ մարդն բանական եւ իմաստուն»: Այս նշանակում է, որ մրջյունի գործունեությանը դրոշմապատճառը գոյության պահպանման բնագործն է միայն, իսկ մարդու աշխատանքը նախապես մտածված, գիտակցական գործունեություն է, որի ընթացքում նա ծախսում է իր մկանների, նյարդերի ուժի հետ միասին նաեւ իր ուղեղի մտավոր կարողությունները եւ բնության իրերը հարմարեցնում է իր կարիքներին: Մարդու եւ մրջյունի գործունեության մաս տարբերիչ առանձնահատկությունը Տաթևացին այնքան կարեւոր է համարում, որ դրան անդրադառնում է մի քանի առիթներով: Գիտակցված գործունեությունը ամենեւին էլ մտավոր աշխատանքի մենաշնորհը չէ, այլ բնորոշ է նաեւ ֆիզիկական աշխատանք կատարողներին: Դատավորների գործունեության մասին Տաթևացին գրում է, որ նրանք նախապես դատական պայտանում արտասանելիք ճառը ատյարաստում են իրենց զլուխներում: Բայց այդպես են վարվում նաեւ արհեստավորները. «Եւ որպէս նոքա նախ ի միտս երեւեցուցանեն զարուեստն եւ ապա ի գործն»: Այսինքն արհեստավորը որեւէ իր պատրաստելուց առաջ պետք է նրա պատկերն ունենա իր գլխում: Չետեաբար, մարդը երկու անգամ է իրը պատրաստում՝ նախ պատրաստում է իրի մտավոր կաղապարը եւ ապա ֆիզիկական աշխատանք: «Չորսոհնակ, – գրում է Տաթևացին իր այս միտքը պարզաբանելու համար, – արուեստաւոր ոք կամիցի որոշել ի քարեայ պատկեր, նախ նկարել ի միտս իւր զծե պատկերին. եւ ապա հասանէ զքարն եւ տաշէ եւ դրոշմէ զկերպին ըստ այնմ նմանութեան, որ էր ի միտս ձեւացեալս»: Բերված օրինակներն էլ շատ բնորոշ են եւ միանգամայն բավարար մարդկային աշխատանքի վերոհիշյալ առանձնահատկությունը պարզաբանելու համար, բայց Տաթևացին չի բավարարվում դրանցով եւ բերում է այդ հարցը լուսաբանող առավել հաջող ճարտարապետի աշխատանքի օրինակը. «Եթէ կամիցի ոք տաճար շինել, նախ ձեւանայ ի միտքն եւ յետոյ շինէ զտաճարն ըստ այնմ ձեւոյ: Արդ՝ տաճարիս այս է կրկին սկիզբն. նախ միտքն շինողին, եւ յետոյ սկիզբն եւ կատարումն շինածոյն»: Այստեղ պետք է հիշել ճարտարապետի եւ մեղվի կատարած աշխատանքների տարբերության մասին Մարքսի նշանավոր տողերը. «Չենց սկզբից ամենավատ ճարտարապետը ամենավաճ մեղվից տարբերվում է նրանով, որ ճարտարապետը նախքան բջիջը մեղրամոմից կառուցելը այն արդեն կառուցել է իր գլխում: Աշխատանքի պրոցեսի վերջում ստացվում է այն հետեւանքը, որն արդեն կար աշխատողի պատկերացման մեջ այդ պրոցեսն սկսելիս, այսինքն՝ իղեպակպես»: Այնուհետեւ, մարդը՝ որպէս բանական արարած, աշխատանքով ստեղծած արդյունքներով բավարարում է նաեւ իր հոգեւոր պահանջմունքները, որից զուրկ է մրջյունը, ինչպէս եւ բոլոր կենդանիները. «Նա միայն զմարմնոյն հոգա, – գրում է Տաթևացին մրջյունի մասին, – եւ մարդս հոգով է մարմնով է կարօտ»: Այսինքն՝ մրջյունը միայն իր ֆիզիկական գոյությունն է պահպանում, մինչդեռ մարդու գործունեությունը մտավոր եւ ֆիզիկական

կարողությունների բազմաբովանդակ պրոցես է, քանի որ հասարակական կյանքը ինքն է այդպիսին: Այսպիսով, Տաթևացին մարդու եւ կենդանու միջեւ առաջին տարբերիչ առանձնահատկությունը իրավամբ համարում է այն, որ մարդը օժտված է բանականությամբ, իսկ կենդանին բնագործ միայն: Եվ, որ ամենակարեւորն է, այդ երկու տարբերությունը Տաթևացին պարզաբանում է աշխատանքային պրոցեսի վերլուծության միջոցով, որը հասարակության գոյության ու զարգացման հիմքն է:

2. Մարդու եւ մրջյունի աշխատանքի հաջորդ տարբերիչ առանձնահատկությունն այն է, որ մրջյունը «ոչ ունի գործի վաստականաց, ոչ ձեռն է ոչ եզն. ոչ երկաթ, եւ կամ այլ ինչ: Եվ մարդս ունի զդոսա»: Այսինքն՝ մարդու աշխատանքի բնորոշ կողմն այն է, որ նա ներգործում է բնության վրա ոչ միայն իր բնական օրգաններով, այլ նաեւ աշխատանքի գործիքներով («Եզն, երկաթ, եւ կամ այլ ինչ»): Չետեաբար, աշխատանքի գործիքներ պատրաստելն ու օգտագործելը Տաթևացին իրավամբ համարում է մարդու ամենամեծ բարեմասնություններից մեկը, որից զուրկ են կենդանիները: Արիստոսը մարդուն բնութագրեց որպէս քաղաքական կենդանի, որի տարբերիչ առանձնահատկությունների մասին համզամտորեն խոսում է Գրիգոր Տաթևացին: Մարդը որպէս քաղաքական կամ, ինչպէս հետագայում Մարքսը ճշտեց՝ հասարակական կենդանի, տարբերվում է մնացած կենդանական աշխարհից հենց նրանով, որ գործիքներ է շինում, որոնցով էլ արտադրության պրոցեսն է կազմակերպում: Կենդանիները նույնպէս «աշխատում են», որը սակայն արտադրության պրոցեսն չէ, որովհետեւ նրանք գործիքներ չունեն, պարզաբանում է Տաթևացին: Դեռ ավելին, իրենք՝ կենդանիներն են հանդիսանում արտադրության գործիք, որոնք օգտագործում ենք «ի լուծս, ի բեռնս, եւ յայլու», կամ նրանցից ստացած արդյունքներով մարդը բավարարում է իր առօրյա պետքերը: Չետեաբար, մարդը ակտիվ ներգործող սուբյեկտ է, իսկ ընտանի կենդանիները արտադրության միջոցների պասսիվ տարր են միայն: Մարդկային աշխատանքի ակտիվ ստեղծագործական բնույթը ընդգծելու նպատակով Տաթևացին գրում է, որ մրջյունն «ինքն ոչ կարէ վաստակիլ եւ գործել զերկիր. այլոց վաստակաց ընկեր լինի, եւ ժողովէ ի կալոյ, ի յարտոյ, ի խոտոյ, եւ այլոց»: Այսինքն՝ կենդանիների «աշխատանքը» բնությանը հարմարվելու պասսիվ հավաքչության պրոցեսն է միայն, առկա բարիքների յուրացման պրոցես: Չետեաբար, կենդանիների «աշխատանքի պրոցեսը» արտադրությունն է: Վերջինս հատուկ է միայն մարդուն, որը արտադրության գործիքներով ազդում է բնության վրա, վերափոխում է այն: Այս մեծիմաստ ճշմարտությունը Տաթևացին հավաստում է հետեւյալ տողերով. «Նախզի՛ մարդն պատական բանի եւ իմաստութեամբն է. եւ նովա տիրէ ծովու եւ ցամաքի. եւ նովա բաժանինք յանբան կենդանեաց»:

Տաթևացին հիանում է բնության եւ հասարակության ստեղծագործ ներդրանքով: Աստված, ստեղծելով երկինքը, այն զարդարել է երկնային լուսատուներով, օդը՝ թռչուններով, ծովերը՝ լողացող կենդանիներով, իսկ երկիրը՝ չորս կարգի գեղեցկություններով. 1) երկրի ընդերքը լցրեց հանքային հանածոներով եւ հատկապես «զոսկի եւ զարծաթ եւ զպատուական քարինս ականց եղ ի սիրտ երկրի, եւ զարդարեաց զսա», 2) երկրի երեսը ծածկեց պէս-պէս ծաղիկներով ու բույսերով «եւ զպտուղս նոցա բոխեցոյց», 3)

լեռներն ու անտառները բնակեցրեց բազմապիսի կենդանիներով, 4) իսկ վերջին՝ ամենազվաճակոր գարդն ու զեղեցկությունը «մարդն է ի վերա երկրի»: Մարդու գեղեցկությունը Տաթևացին տեսնում է հանձնիս արտադրական, ստեղծագործական գործունեության: Մարդիկ «նախ զարդարեն զերկիր շինելով տնկելով եւ գործելով... Երկրորդ զարդարանք են աշխարհի՛՛ զի իշխան եւ թագավոր ստեղծաւ մարդն ամենայն երեսելեացս»: Մարդու հզորության աղբյուրը նրա արտադրական գործունեությունն է, որի շնորհիվ էլ նա դառնում է բնության տերն ու թագավորը: Աշխատանքի պրոցեսում է, որ մարդն իրեն է ենթարկում բնության ուժերը «ներգործելով իրենից դուրս գտնվող բնության վրա եւ այն փոփոխելով, նա միեւնույն ժամանակ փոփոխում է իր սեփական բնությունը: Նա զարգացնում է իր բնության մեջ նիւրիող կարողությունները եւ այդ ուժերի խաղը ենթարկում է իր սեփական իշխանությանը»:

3. Մարդու աշխատանքի մյուս առանձնահատկությունն այն է, որ նա հասարակական բնույթ ունի: Մարդկային աշխատանքի հասարակական բովանդակությունը բխում է մարդու եւթյունից՝ «ի շինածոյ կազմութեանց մարդոյս. զի մարդս ոչ է ինքնաբաւական. այլ կարօտ ոչ է ստեղծիլ, եւ միմեանց օգնական լինի: Որպէս յայտ է ի գեօղս եւ ի քաղաքս՝ որ ի մի վայր ժողովինք եւ զկարօտութիւնս միմեանց լնունք»: Այստեղ մարդու մետաֆիզիկ եւթյունը, որպէս աշխատանքի հասարակական բնույթի սկզբնապատճառ, մնում է սոսկ հայտարարություն, իսկ բացատրության մեջ արդեն առաջ է բաշխվում կարոտությունը, այսինքն՝ հասարակական արտադրություն կազմակերպելու անհրաժեշտությունը, որն անհնարին է մեկ մարդու սահմանափակ ունակությունների շրջանակներում. «Իւրաքանչիւրքս՝ առ մարմնաւոր պէտս հարկաւորացն չենք բաւական. այլ կարօտինք միմեանց», – գրում է Տաթևացին: Նա հանգում է այն հետեւութեան, որ, Մարքսի բառերով ասած, ոչ միայն արտադրություն կազմակերպելու համար են մարդիկ մտնում փոխադարձ հարաբերությունների մեջ, այլ նաեւ ընդհանրապէս, ամբողջ հասարակությունը մարդկանց համակենցության ու համագործակցության արդյունք է: Բերենք այս միտքը պարունակող համապատասխան հատվածը. «մարդն է մարդոյ օգնական, զի թէպէտ կային այլ կենդանիք օգնական մարդոյ ի բեռն ի լուծ՝ եւ յայլ պէտս, այլ ի յառաքինութիւնս եւ ի սրբութիւնս հոգւոյն մարդն է օգնական մարդոյ... Ուրպէս ի երկրի բարի է բազմութիւն մարդկան: Նախ՝ զառատ մարդափրութիւն աստուածային ցուցանեն: Եվ երկրորդ՝ զի միմեանց օգնական լինին ի շինել՝ ի տնկել ի յարուեստ՝ ի պէտս մարմնոյն եւ յուսումն հոգւոյն. եւ յուրախութիւն միմեանց: Եվ այլ բազում բարիս ի միմեանց գտանեմք»: Մարդկանց հարաբերությունները արտադրության պրոցեսում եւ հասարակության մեջ նույնպէս հանդես են գալիս որպէս մարդկային աշխատանքի բնորոշ առանձնահատկություն, որի մասին կենդանական աշխարհում խոսք լինել չի կարող:

4. Կենդանիների համար «աշխատանքը» բնական անհրաժեշտությունից բխող հարկադիր բնույթ ունի, որի բովանդակությունը սպառվում է նրանով, որ պահպանվում է կենդանու ֆիզիկական գոյությունը: Իսկ մարդկային աշխատանքի մեջ Տաթևացին տեսնում է նաեւ բարոյական եւ սոցիալական տարբեր: Աշխատանքը, բացի գոյության պահպանման աղբյուր լինելուց, մարդու համար կենսական անհրաժեշտություն է, նրա օրգանիզմի

նորմալ զարգացման, ստեղծագործական ուժերի ծաղկման պրոցեսն է ընդհանրապէս: «Անաշխատ մարդն հանապազ մարմնով ծանրանայ եւ թուլանայ. եւ տկարանայ յառողջութենէ: Վասն այտոց եւ բազում օգտութեանց խրատեն զմեզ արիանալ ի գործս»: Մարդու եւ ամար աշխատանքը, առաքինությունը եւ ուսումը կենսական անհրաժեշտությունն են եւ փոխադարձաբար կապված են միմյանց հետ: Աշխատանքը պետք է մարմնի, առաքինությունը՝ հոգու եւ ուսումը՝ մտքի համար. «վաստակն զմարմնոյ պարտսն լնու. քաղց՝ եւ ծարաւ, եւ առաքինութիւն զհոգւոյն. եւ գիտութիւն զմիտսն լուսավորէ»: Չետեաբար, աշխատանքը մարդու ֆիզիկական եւ մտավոր կարողությունների վերադարձնողական դարբնոցն է. այն անարատ է պահում նաեւ նրա բարոյական կերպարը: Ուսումն ու դաստիարակությունը՝ Տաթևացին սերտորեն կապում է մարդու աշխատանքային գործունեության հետ, որից զուրկ է կենդանին: «Նմա օրինակ ոչ գոյ որ ուսանի, – գրում է հեղինակը մրջյունի մասին, – այլ մեզ բազումք են»: Այստեղ շեշտված է աշխատանքային փորձի կուտակումը, որը մարդու օգտագործում է աշխատանքի պրոցեսում, այսինքն՝ մենք ունենք բարդ աշխատանքի կատեգորիա, որի մասին կենդանական աշխարհում խոսք լինել չի կարող: Տաթևացին հատկապէս հանգամանորեն է պարզաբանում աշխատանքի նշանակությունը սոցիալական չարիքների դեմ պայքարելու տեսանկյունից: «Բնական է մարդոյն գործել եւ աշխատիլ... եւ ոչ դատարկ մնալ, զի փափկութիւնս եւ դատարկութիւն մայր է ամենայն չարեան եւ մեղաց. գործեսցէ եւ աշխատեսցի. եւ մի ծրի հաց ուտիցէ»: Տաթևացու պայքարը ծրիակերության դեմ շատ վճռական է. նա անաշխատ եկամտուտով ապրողներին նմանեցնում է մեղվի ընտանիքի բռնեղին. «որ ոչ վաստակի մեղր, այլ գայլոց վաստակ ուտէ»: Գողությունը, հափշտակությունը ու զրկողությունը ծրիակերների ու դատարկապարտների ապրուստի հիմնական աղբյուրներն են. «եւ որ վաստակի՛ յայսման ի գատ մնայ»: Սեփական արդար վաստակով ձեռք բերվող ապրուստը նա փառաբանում է, իսկ «դատարկութեամբ զայլոց հաց ուտելն՝ ցաւոց եւ վշտաց հաց է» համարում: Այստեղ աշխատավորի, որպէս իսկական մարդու սոցիալական կերպարը հակարդված է պրոտաբուրժուային, որը սոցիալական արդարութեան կերպարն է: Եվ կարեւորն այն է, որ այս հակադրության մեջ ընդգծված է աշխատանքի, որպէս մարդկային բոլոր արտադրությունները մարդկանց համակենցության ու համագործակցության արդյունք է: Բերենք այս միտքը պարունակող համապատասխան հատվածը. «մարդն է մարդոյ օգնական, զի թէպէտ կային այլ կենդանիք օգնական մարդոյ ի բեռն ի լուծ՝ եւ յայլ պէտս, այլ ի յառաքինութիւնս եւ ի սրբութիւնս հոգւոյն մարդն է օգնական մարդոյ... Ուրպէս ի երկրի բարի է բազմութիւն մարդկան: Նախ՝ զառատ մարդափրութիւն աստուածային ցուցանեն: Եվ երկրորդ՝ զի միմեանց օգնական լինին ի շինել՝ ի տնկել ի յարուեստ՝ ի պէտս մարմնոյն եւ յուսումն հոգւոյն. եւ յուրախութիւն միմեանց: Եվ այլ բազում բարիս ի միմեանց գտանեմք»: Մարդկանց հարաբերությունները արտադրության պրոցեսում եւ հասարակության մեջ նույնպէս հանդես են գալիս որպէս մարդկային աշխատանքի բնորոշ առանձնահատկություն, որի մասին կենդանական աշխարհում խոսք լինել չի կարող:

Տարունակությունը էջ 22



# ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## Ապրանքի եւ աշխատանքի մասին

Հատված Ներսես Թովմասյանի «Գրիգոր Տաթևացու սոցիալ-տնտեսագիտական հայացքները» գրքից

### Սկիզբը՝ էջ 20-21

Ժամ լմանի տունն եւ շտեմարանն հացի եւ ամենայն բարութեամբ, յանդէ, յայգույ, ի ծառոյ, եւ յանասնոցն, եւ յայլոց»։ Այս լի տան ու շտեմարանի բարիքներն են ահա, որ շնայվում են շահագործող անբան պորտաբույծների կողմից։

Աշխատանքը ոչ միայն մարմնական, այլեւ հոգեկան սննդի աղբյուր է։ «Այլ սոքա երկրոքն հացքս՝ հոգեւոր եւ մարմնաւոր, առանց աշխատութեան ոչ գտանին»։ Ըստ որում «մարմնաւորն պիտոյ է հոգեւորին, որ զմարմնաւորն ոչ գործէ նույնպէս եւ ոչ զհոգեւորն»։ Մեր կողմից ընդգծված տողերը բնորոշ են նաեւ նրանով, որ ցույց են տալիս նյութական բարիքների արտադրության կարեւորությունը հասարակական կյանքի, այդ թվում նաեւ հասարակության մտավոր մշակույթի ստեղծման ու զարգացման համար։ Իհարկե, իդեալիստ հոգեւորականը սուբյեկտիվորեն ճիշտ հակառակ տեսակետն է պաշտպանում, բայց օբյեկտիվ հետազոտությունները, ինչպէս տեսնում ենք, այլ բան են ապացուցում։ Հասարակական կյանքում աշխատանքի վճարական մշակութային ցույց տալու ընթացքում Տաթևացին ակամա շեղվում է Աստվածաշնչից։ Հայտնի է, որ Աստված Ադամի ու Եվայի համար ստեղծել էր դրախտ անաշխատ, անհոգ ու երջանիկ կյանք։ Աստված նրանց դուրս հանեց դրախտից եւ հրամայեց «քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո զամենայն անուր» մեղսագործությունից հետո միայն։ Իսկ Տաթևացին «մի փոքրիկ ուղղում» է մտցնում այս պատմության մեջ։ «Ի սկզբանէ ըստեղծման մեր, – գրում է նա, – գործ եւ վաստակ սահմանեաց աստուած մարդոյս. զի եղ գնա ի դրախտին գործել եւ պահել։ Ձի թեպէտ ի դրախտին ոչ ինչ գոյր երկիրդ պահպանութեան, ոչ գողոց, եւ ոչ ամանոց եւ ոչ փորելոյ, եւ կամ տնկելոյ պէտք էին անդ։ Այլ ի գործ եւ ի վաստակ սահմանեաց զմարդն՝ զի յանաշխատ կեանք դատարկ եւ պարսպ ոչ կացցէ»։ Այստեղ գործն ու վաստակը անհրաժեշտ են ոչ ամենեւին ապրուստի համար, այլ նրա համար, որ առանց աշխատանքի մարդ լինել չի կարող ընդհանրապէս։

5. Տաթևացին նշում է մարդու եւ կենդանու աշխատանքի մի տարբերություն։ Եւ։ Նա մրջյունի համար գրում է, որ «նմա վերակացու եւ փութացուցանող ոչ է. եւ մարդկան քրիստոս կայ վերակացու. եւ հրամայէ օրենք գործել... նմա պատուհաս ոչ է ի գործելն, եւ մեզ տէր գոյ եւ պատուհասող, թէ ոչ գործեմք»։ Բերված տողերը ուշագրավ են այն տեսակետից, որ ընդգծված է հասարակական աշխատանքի սոցիալական բովանդակությունը տվյալ կոնկրետ հասարակական-տնտեսական ֆորմացիայում։ Խոսքը վերաբերում է կամ արիւնտանոցում վարձու աշխատողներին, կամ կալվածատիրական խոշոր տնտեսություններում բանող ճորտերին, որոնք աշխատում են վերակացուի հսկողության ներքո։ Նրանց օրենքով հրամայում են աշխատել եւ շտապեցնում են, իսկ թերացման դեպքում պատուհասում այդ օրենքի ամբողջ խստութեամբ։ Տաթևացին այստեղ մատնանշում է աշխատանքի հարկադրական բնույթը, որը նա իրավամբ համարում է իր ժամանակաշրջանի բնորոշ առանձնահատկություններից մեկը։ Հարկադիր աշխատանքին նա արտի կսկիծով հակադրում է մեղվի



Պաճարի վանք։ Այստեղ է գործել միջնադարյան Հայաստանի Նշանավոր ուսումնագիտական կանաչը, 1291-1340թթ.՝ համալսարան։

եւ մրջյունի ազատ աշխատանքը։ Անշուշտ, Տաթևացուց չի կարելի պահանջել այն բանի ըմբռնումը, որ այդ հարկադրանքը պատմական բնույթ ունի։ Բայց Տաթևացու ծառայությունը մեծ է այդ հարկադիր աշխատանքի եւությունը լուսաբանելու խնդրում։

Տաթևացու աշխատություններում մենք ունենք հարկադիր աշխատանքի երկու տարատեսակ՝ ճորտային աշխատանք, որը խարսխվում է անձնական կախման հարաբերությունների վրա եւ վարձու աշխատանք, որը հիմնված է տնտեսական հարկադրանքի վրա։

ճորտերի կյանքի եւ գործունեության նպատակը Տաթևացին համարում է կալվածատերերի համար հարստություն արտադրելը, նրանց համար անհոգ ու փառքամ կյանքի պայմաններ ստեղծելը։ Իրենք՝ ճորտերը, կազմում են կալվածատերերի ունեցվածքի մի մասը, նրանց սեփականությունը։ Այս տեսակետից ուշագրավ է Տաթևացու կողմից հարստության հետեւյալ դասակարգումը. «Ամենայն ինչքն ի չորս գլխաւորին. զի կամ են անշունչ եւ անկենդան. որպէս քարինք, ոսկի, արծաթ եւ հանդերծ, եւ այլն, եւ ինչպէս գիւղ եւ քաղաք։ Եւ կամ ի տնկոց եւ ի պտղոց երկրի՝ որպէս ցորեան. զիհն. եւ պտուղ. եւ այլն։ Եվ կամ յանբան կենդանեաց, որպէս անասուն. արջառ. ուղտ. ջուկ, եւ այլն։ Եվ չորրորդն որպէս բանաւոր ծառայք, արախնեայք, ընտոծինք, մշակք, եւ հնազանդեայք։ Այսոքիկ չորս սեռք են փառքամութեան մարդկան. որք մեծանան զանազան ընչիւք»։ Ինչպէս երեւում է, ճորտը քաղաքացի չէ, նա իջեցվել է մինչեւ անասունի մակարդակը։ Այստեղ արդեն ճորտի եւ կենդանու աշխատանքի միջեւ Տաթևացին տարբերություն չի տեսնում, որովհետեւ երկու դեպքում էլ աշխատանքի բովանդակությունը շահագործողների համար հարստության արտադրությունն է։ Այս միտքը Տաթևացին հետեւյալ կերպ է շարադրում, «որպէս անասունքն որք ընդ ծեռանք

Տաթևացին պատասխանում է. «Նախ գտնուես ամենայն բանի՝ եւ ընչից եւ իշխանութեանց, արուեստից եւ այլն։ Երկրորդ զգալ դատաւորին։ Երրորդ՝ զպատիւ բարեաց։ Չորրորդ՝ զպատիւ չարեաց»։ Տնտեսը պետք է լինի ազնիվ՝ «ոչ գողանայ... ոչ ընդ վայր կորուսանէ, զի միապէս չար է անպիտան եւ շնայլն»։ Իմաստուն տնտեսը պետք է ընտրի գործունեյա մարդիկ, գործը կազմակերպի տեղին ու ժամանակին։ Տնտեսության բանիմաց կառավարչին մենք հանդիպում ենք նաեւ «Չմերան հատորում», որտեղ ասվում է, որ «տընտեսն չունի զիր ինչ, այլ ի տէրունեաց հաւատացաւ նմա...Երկրորդ՝ հատկութիւն է տնտեսին ըստ կամաց տէրն պատրաստել զամենայն ինչ... Երրորդ՝ հատկութիւն է տընտեսին ժիր լինել ի գործն, եւ ոչ երբեք ծուլանալ...Չորրորդ՝ զի պատրաստեցէ ըզկերակուրն ի ժամու. եւ տացէ յամենայն ժամ ծառայակցացն»։ Այս տողերից պարզվում է նաեւ, որ կառավարիչը վարձու աշխատող է եւ գործ ունի բազմաթիվ աշխատողների հետ, որոնց կերակրելու պարտականությունը դրված է նրա վրա։ Այդպիսի խոշոր տնտեսությունը, պարզ է, որ պետք է ապրանքային արտադրանք ունենար, որի մասնավայրում է մեջբերված ձեռագրի այն դրույթը, թե կազմակերպված տնտեսությունը պետք է հասարակականորեն օգտակար լինի, «Ինքեան եւ այլոց օգուտ» տա։ Տնտեսության գործունեության ողջ բովանդակությունը բնորոշվում է տնտեսատիրոջ շահերի բավարարման տեսանկյունից միայն, իսկ աշխատավորները, հարստություն ստեղծողները դիտվում են որպէս սոսկ միջոց այդ տնտեսությունների բարգավաճման եւ նրանց տերերի հարստացման համար։

13-14-րդ դարերի արդյունազորության մեջ կալվածատիրական խոշոր տնտեսություններում նշանակալի չափով կիրառվում էր նաեւ վարձու աշխատանքը, որի բնույթի մասին մենք հետաքրքիր դատողություններին ենք հանդիպում Տաթևացու աշխատություններում։ Նրա այդ դատողությունները վկայում են վարձու աշխատողների եւ տերերի միջեւ խորացող հակասությունների մասին։ Նրանց միջեւ պայքարը ծավալվում էր նախ աշխատանքի վարձատրության շուրջը։ Գործատերերը ամեն առիթով աշխատուն էին «զվարձս վարձկանի չտալ», որը Տաթևացին որակում է որպէս «գողութիւն, գրկանք եւ հափշտակութիւն»։ Այս բացարձակ կողոպուտը Տաթևացին չի համոզուրժում, որովհետեւ անարդարությունը խիստ բացահայտ է։ Իսկ այն դեպքում, երբ հակաշխատակցությունը հնարավոր էր թել կերպ պատճառաբանել, ապա նա օգտագործում է այդ։ Այդ տեսակետից ուշագրավ են հետեւյալ տողերը. «վարձու մշակացն եւ մինչեւ երեկոյն. այլ թէ հիւանդութիւն կամ այլ ինչ դիպի, հանէ ի վարձուն եւ ի մշակութեանցն»։ Այստեղ աշխատանքի եւ աշխատավորների շահերի պայտասման մասին ակնարկ անգամ չկա։ Աշխատանքի պրոցեսում նույնիսկ, երբ աշխատողը շարքից դուրս է գալիս հիվանդության կամ դժբախտ դեպքի հետեւանքով, տերն օգտվում է առիթից ու աշխատողին գրկում եւ հասանելիք վարձատրությունից, եւ՝ աշխատանքի «իրավունքից»։ Աշխատավորները, անշուշտ, այս անարդարությունները լռելյայն չեն համոզուրժում։ Գործատերերի նկատմամբ նրանց ասելությունը

արտահայտվում է տարբեր ձեւերով, արիւնտանոցներում աշխատող բանվորը «կամ զգործն վատ առնէ, կամ ի միւթն գողանայ», որը հայտնաբերելու դեպքում նա կրում է ամենախիստ նյութական պատասխանատվություն։ Նույն կերպ են վերաբերվում իրենց գործին նաեւ գյուղական մշակները. «Ծառայ որ ոչ սերմանէ գետնն զոր տէր իւր ետ՝ այլ գողանայ եւ ցրուէ, պատուհաս կրէ. զի տէրն ոչ միայն խնդրէ գետնն, այլ լեւ զշահս սերման»։ Վարձու աշխատողները բոլորովին շահագրգռված են արտադրության զարգացման եւ հարստության աճման գործում, դրա համար էլ վատնում ու փչացնում են արտադրության միջոցները, ստեղծված հարստությունները։ Վարձկան հովիվն «ուրախանալ ընդ կոտորումն ոչխարացն, զի բազում լինի իւր մորթ»։ Վարձու աշխատանքի պրոցեսին ներհատկ այս հակասությունները անտանելի պայմաններ են ստեղծում աշխատավորների համար. վարձատրությունը իջեցվում է նվազագույն չափերի, տուգանում են եւ հասանելիք վարձը կտրում պատեհ կամ անպատեհ առիթով, աշխատանքի նկատմամբ սահմանվում է խստագույն հսկողություն, եւ աշխատողները խոշտանգվում են վերակացուների մտրակի հարվածների տակ։ «Սովոր են վարձկանք փոյթ ունել գործոյն, մերծ գալով վերակացուին»։ – գրում է Տաթևացին։ Այդ նշանակում է, որ վարձու աշխատանքի սխտեմի հետ միասին լայն չափերով տարածված էր նաեւ վերակացուների ինստիտուտը քաղաքի ու գյուղի խոշոր տնտեսություններում։

Այսպիսով, եթե Տաթևացին գովերգում է աշխատանքը ընդհանրապէս եւ այն համարում է մարդու ամենամեծ բարեմասնությունը, ապա հարկադիր աշխատանքի բացասական կողմերը չեն վրիպում նրա ուշադրությունից։

Աշխատանքի պրոցեսի բուն բովանդակությունն է նյութական բարիքների արտադրությունը, հարստության մեծացումը, բայց հարկադիր աշխատանքի դեպքում արտադրողներն ամենեւին չափագրգռված չեն հարստության մեծացմանը, բանի որ նրանք արտադրության պրոցեսի եւ նրա արդյունքի տերը չեն։ Սեփականատիրական հարստությունները արտադրողին անջատել են արտադրության միջոցներից եւ դրանք հակադրել միմյանց որպէս խորթ, իրարամերժ ուժեր, որից են բխում են հարկադիր աշխատանքի պրոցեսի հակասությունները։ Իհարկե, Տաթևացու մոտ հարկադիր աշխատանքի պրոցեսի հակամարտ բնույթի այսպիսի վերլուծությունը չկա, բայց նա նշում է կյանքին հատուկ այդ հակասությունների գոյության փաստերը։ Նա, մի կողմից, որոշակիորեն ցույց է տալիս, որ աշխատանքի պրոցեսը նյութական ու հոգեւոր բարիքների արտադրության ստեղծագործական պրոցես է եւ մարդկանց բարոյության ապահովման աղբյուր, իսկ մյուս կողմից նշում է, որ հարկադիր աշխատանքի դեպքում իրենք՝ արտադրողները, խոշտանգվում են ու նահատակվում, գրկված են իրենց ստեղծած բարիքները վայելելու հնարավորությունից եւ մի կերպ քարշ են տալիս իրենց կիսաքաղց գոյությունը։

Նյութական բարիքների արտադրության ու աշխատանքի առանձնահատկությունների վերլուծությունը Տաթևացու կողմից բացառիկ նշանակություն ունի տնտեսագիտության զարգացման համար։ Հասարակական աշխատանքի բովանդակության բացահայտումը նրա աշխատություններում հսկայական գիտական հետաքրքրություն է ներկայացնում։





# ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## Գրիգոր Տաթևացու բժշկագիտական հայացքները

Հատված Լեւոն Հովհաննիսյանի «История медицины в Армении» գրքից

Աստվածաբան Գրիգոր Տաթևացին բժիշկ չէր մասնագիտությամբ, սակայն լավ ծանոթ էր բժշկությանը եւ աշխատություններ ու խորհրդածություններ է գրել բժշկական թեմաներով:



Գրիգոր Տաթևացին հայ եկեղեցու անկախության երեւելի պաշտպաններից էր եւ բողոք է մի քանի հոգեւոր եւ հոգեւոր-փիլիսոփայական բովանդակությամբ ծավալուն աշխատություններ: «Գիրք հարցանանցում» հարց ու պատասխանի ձևով շարադրված են տարբեր ուսմունքներ կենդանիների մասին, անատոմիա եւ այլ: Մի այլ գրքում՝ «Ամարան հատոր», կան մի քանի քարոզներ, որտեղ հանդիպում ենք ուշագրավ խորհրդածություններ ֆիզիոլոգիայի հարցերի վերաբերյալ: Օրինակ՝ «Քնի մասին» քարոզում, փաստորեն, նկարագրվում է քնի ֆիզիոլոգիան՝ շարադրված ըստ հույն հեղինակների, որոնցից հիշատակվում է Գրիգոր Նիսկուն:

Է մարդու անատոմիայի եւ հոգեբանության մասին: Վերնագրված է այն «Մարդու կեցության մասին», բայց էջերի վերնագրերում ամենուր գրված են՝ «Մարդու կազմության մասին»:

Այդ մասը, ինչպես եւ ամբողջ գիրքը, կառուցված է հարց ու պատասխանի ձևով, կրում է ճանաչողական բնույթ, եւ նախատեսված էր այն աշակերտների համար, որոնց Գրիգոր Տաթևացին դասավանդում էր Տաթևի եկեղեցու կից դպրոցում: Հարցերի եւ պատասխանների կառուցվածքի բնույթը ցույց է տալիս, որ այդ գլուխը նախատեսված է նրանց համար, ովքեր բավականաչափ ծանոթ էին անատոմիային եւ ունեին հանրակրթական բարձր պատրաստվածություն:

Ըստ Տաթևացու՝ քնի առաջացման պատճառը պետք է փնտրել ուղեղի կենտրոններում, քանի որ շնեղը, որոնք բանականություն չունեն, հաշում են քնի մեջ: Գիտակցությունն էլ օրգանիզմի մեջ անկախ գործոն չէ, իսկ գիտակցությունն էլ ձեռք են բերվում մեզ շրջապատող աշխարհից: Առավել եւս քնի պատճառ չեն համարում ևս զգայական տարրերը: Վերջիններիս դերում մեծ մասամբ հանդես են գալիս հոգին սնուցող տարրերը: Այդ պատճառով քնի ընթացքում դադարում է գիտակցության եւ զգայականների շախատանքը, ընդհակառակը, մարտոդական համակարգը գործում է ավելի արագ, մարսում է սնունդը եւ յուրաքանչյուր օրգանի փոխանցվում էլ ձեռք են բերվում մեզ շրջապատող աշխարհից: Իսկ հետագայում Տաթևացին ասես թե քնի առաջացման պրոցեսում ընդունում է հոգու զգայականի եւ հոգեկանի նշանակությունը:

Գրքի մեջ մեզ հետաքրքրող հատվածը կազմված է 40 գլխից.

1. ինչո՞ւ է մարդը ստեղծված հողից,
2. ինչո՞ւ է մարդը ստեղծվել այլ էակներից հետո,
3. մարդու երթյամբ եւ աշխարհի բնության նմանության մասին,
4. մարդու ձեւի մասին (ինչո՞ւ է մարդու մարմինն ուղիղ, գլուխը՝ ուղղված դեպի վեր, իսկ այլ անդամները՝ ներքեւ),
5. ինչո՞ւ մի կողմից դեմքն է, մյուս կողմից՝ թիկունքը,
6. զգայականների մասին,
7. տեսողության մասին (ինչո՞ւ տեսողությունն ավելի հուսալի է, քան լսողությունը),
8. մազերի, գլխի եւ այլ օրգանների մասին,
9. մարդու չորս քամիների եւ չորս խոնավությունների մասին,
10. մարդու օրգանների մասին,
11. ստամոքսի մասին,
12. հոդերի, ոսկորների եւ ջլերի մասին,
13. այն մասին, թե ինչով է տղամարդը տարբերվում կնոջից, մարդու մաշկի մասին,
14. դիմագիտության մասին,
- 15-16. հոգու ուժի եւ մասերի մասին,
17. մարդու մարմնի մասերի գործառնությունների մասին,
- 18-19. մարդկանց ճանաչելու եւ նրանց ոգիների մասին,
20. մարդու ոգու մասին,
21. առանձին ոգիների գործառնությունների մասին (բուսական, զգայական եւ հոգեւոր ոգու մասին),
22. հղիության մասին,
23. պտղավորման եւ ծննդի մասին,
24. ինչո՞ւ ծնվելուց հետո մարդն ու է կանգնում ոտքերի վրա (ի հեճուկս կենդանիների),
25. սերմերի միախառնվելու մասին,
26. երագատեսության մասին,
27. իմաստության մասին,
28. մարդու մասին առհասարակ,
29. մարդու կերպարի մասին եւ նրա նմանությունը կենդանիներին,
30. մարդու կերպարը եւ նրա նմանությունը Աստծուն,
31. մարդու հատկությունների մասին,
32. կնոջ մասին,
- 33-38. գլուխներ՝ հոգեբանության մասին,
- 39-40. մարդու մաշկի մասին:

Մարդկային օրգանիզմի կազմության խնդիրը քննվում է աստվածաբանական աշխարհըմբռնման հայեցակետով: Տաթևացին, անկասկած, ինչպես երևում է սույն աշխատության բովանդակությունից, օգտվել է բժշկագիտական գրքերից: Հաճախ նա բերում է միայնակ հակասող կարծիքներ, ինչը վկայում է այն մասին, որ նա քաջատեղյակ էր տարբեր գրական սկզբնաղբյուրներին: Սովորաբար նա վկայակոչում է տարբեր փիլիսոփաների եւ բժիշկների տեսակետները, բայց առավելապես հիշատակում է Գրիգոր Նիսկուն եւ Պլատոնին, երբեմն նաեւ Արիստոտելին: Հոգեբանության մասին գլուխները հիմնականում, եթե ոչ ամբողջությամբ, շարադրված են ըստ Պլատոնի: Գրիգոր Տաթևացին հաճախ շարադրում էր իր հայացքները կամ անվերապահորեն ընդունված կրոնական մտածողների կարծիքները: Նա, ինչպես երևում է, օգտվել է Վասիլի Կեսարացու անատոմիական աշխատություններից:

Տաթևացու այս աշխատությունը բժշկության տեսակետից անատոմիական ճշմարտություններ չի պարունակում, այնպես որ այս հարթության մեջ ինքնատիպ որեւէ բան պետք չէ փնտրել: Բայց որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հեղինակի կողմից տարբեր փաստերի մեծ մեղադրանքը դասավանդել հարցերի եւ մանրամասն մշակված, փաստարկված պատասխանների միջոցով, որոնք, եթե ճշմարտության դեմ մեղադրանք չլինեց, տրված են աստվածաբանական գաղափարախոսության դիրքերից: Անկախ այս ամենից՝ աչքի են գալիս մեծ հեղինակի մեծ խորագիտությունը, ճանաչողական ընդունակությունները եւ հռետորական անուրաճալի տաղանդը:

Դեղինակի շարադրման ոճի եւ այս գրքի բովանդակության մասին հստակ պատկերացում կազմելու համար կենդանիացնենք այդ գրքից որոշ հատվածներ, որոնք ի գործ են պարզորոշ բնութագրելու այդ աշխատությունը, ընդ որում, որտեղ նպատակահարմար է, մենք առանձին գլուխների բովանդակությունը պարզապես կթարգմանենք:

Դիմնական տարրերի առումով, ինչից բաղկացած է մարդու մարմինը՝ ոսկորների, հոդերի, ջլերի եւ առանձին օրգանների կառուցվածքը, Գրիգոր Տաթևացին կրկնում է մեզ հայտնի հայացքները, որոնք այդ ժամանակ ընդունված էին մարդու անատոմիայի ուսմունքի մեջ: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ կրկնությունից խուսափելու համար, մենք կկենտրոնանանք Գրիգոր Տաթևացու գրքի այն բաժինների բովանդակության վրա, որտեղ հանդիպում են խնդրող առարկային առնչվող ինքնատիպ մեկնաբանություններ:

16-րդ գլխում խոսվում է մարդու հոգու ծագման մասին ըստ Պլատոնի, իմիջիայլոց, այստեղ մի հարցադրում կա. ծնվելիս մանկան հոգին ժամանակ ընդունված էին մարդու անատոմիայի ուսմունքի մեջ: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ կրկնությունից խուսափելու համար, մենք կկենտրոնանանք Գրիգոր Տաթևացու գրքի այն բաժինների բովանդակության վրա, որտեղ հանդիպում են խնդրող առարկային առնչվող ինքնատիպ մեկնաբանություններ:

բաժանելի է, բաժանվում է, միայն հոգին տրոհման ենթակա չէ: Երեխայի ծնվելով մոր մեջ նրան պատկանող սուբստանցիաներից ոչինչ չի պակասում՝ բանականությունը, պնեման կամ կենսունակությունը: Մորից անջատվում են այն սուբստանցիաները, որոնք երեխային են պատկանում: Այսպիսով՝ անջատվում է միայն մատերիան, որ իր մեջ կյանքի տարրեր է պարունակում: Այնպես, ինչպես ճյուղը, որն անջատում են ծառից, նրանից չի վերցնում կյանքի տարրերը: Բայց երբ ճյուղը դնում են հողին, նա սկսում է աճել շնորհիվ այն կենսունակության, որ ունի իր մեջ:

Այս հարցի աստվածաբանական եւ իդեալիստական մեկնաբանությունով հանդերձ Գրիգոր Տաթևացին մատերիան բխեցնում է միայն մատերիայից, եւ նորածնի մարմնում նա չի դնում ժառանգվող հոգին, այլ միայն կենսական տարրեր, որ հնարավորություն է տալիս նման օրգանիզմին աճել իր ուժերի հաշվին: Գրիգոր Տաթևացու նման մեկնաբանության մեջ չի կարելի չնշարել որոշ շեղումներ նրա իդեալիստական աշխարհըմբռնումից, որին խստորեն հետեւում էր:

Մեջբերում ենք 25-րդ գլուխը սերմերի միախառնման մասին, որը մեկնաբանությունների կարիք չի գզում:

«Հարց: Կարո՞ղ է ծնունդ տեղի ունենալ մարդու եւ ինչ-որ կենդանու խաչասերումից. ասենք՝ հնարավոր է ծնունդ լինել կնոջից եւ արջից»:

«Պատասխան: Մենք կարծում ենք, որ դա չի կարող լինել երկու պատճառով: Նախ՝ բանական մարդու սերմը չի կարող խառնվել բանականության չունեցողի սերմի հետ: Երկրորդ՝ դեպքում դեր ունի ժամանակի գործոնը, քանի որ մարդու օրգանները ձեւավորվում են ինը ամսվա ընթացքում, իսկ արջինը՝ երեք ամսում: Նույնպես արջի եւ էջի խաչասերումից սերունդ չի առաջանում, քանի որ նրանցից մեկը գիշատիչ է, մյուսը՝ բուսակեր: Նաեւ պետք է իմանալ, որ իրար հակադիր սերմերի տեսակները չեն խառնվում: Բայց ծիուց եւ էջից ծնվում է ջորի, քանի որ երկուսն էլ խոտակեր են եւ ծննդաբերում են նույն ժամկետում: Իսկ եթե հանդիպում են մարդանման կենդանիներ, ապա նրանք համարվում են վայրենիների կամ կենդանիներ, քանի որ մարդկային խաչասերման արդյունք չեն»:

Քանի որ մինչ այժմ հայկական բժշկագիտական գրքերում մենք համալայ չենք հանդիպել ֆիզիոգնոմիկայի (գիմագիտության) խնդիրների արծարծման, այստեղ թարգմանաբար ներկայացնում ենք Գրիգոր Տաթևացու աշխատության համեմատաբար մի մեծ գլուխ՝ նվիրված դիմագիտության հարցերին:

«Դիմագիտության հարցեր: Գլուխ 14»

«Հարց: Արդյոք ճիշտ է, որ ֆիզիոգնոմիկական գծերը վկայում են մարդու բնավորության մասին»:

«Պատասխան: Մենք հավանաբար կարծելու, որ դրանք ճշմարիտ չեն՝ ելնելով հինգ պատճառից: Նախեւառաջ այդ հատկանիշները պարտադիր չեն մարդուն բնորոշելու համար: Դրանք մատնանշում են բնության ձգտումը որոշակի իրերի հանդեպ: Երկրորդ՝ որովհետեւ դրանք չեն կարող լինել մեծ ու փոքր, այլ երբեմն միատեսակ են բոլոր մարդկանց համար: Երրորդ՝ որովհետեւ դրանք կարելի է ցանկության դեպքում հարթահարել բանականության մեջ: Չորրորդ՝ շատ դեպքերում այդ հատկանիշները լինում են պատահական, այլ ոչ թե բնության տված: Հինգերորդ՝ որովհետեւ մարդ կարող է հակառակ սովորության, զգալի ճանապարհով, աղոթքներով կամ մարմնակրթությամբ հաղթահարել այդ հատկությունները: Այս ամենով

հանդերձ չի կարելի վատ մտածել այն մարդկանց մասին, որոնց մոտ նման երեւույթներ են ի հայտ գալիս:

«Սակայն չի կարելի անտարբեր լինել փիլիսոփաների իմաստության հանդեպ, քանի որ նրանք վկայում են, որ տղամարդու հոգին խիզախ է ու եռանդուն, իսկ կանայք բարեպիտո են ու վախկոտ:

«Փափուկ ու նոսր մազերը վկայում են գթության, զանգուր մազերը՝ անվախության մասին: Ճակատից աճող մազերը մատնանշում են դաժանասրտություն:

«Մեծ գլուխը տգեղության արտահայտություն է, իսկ պնդակազմ գլուխը՝ իմաստության: Հարթ գլուխ ունեցողը հանդուգն է, երկար ու «փափուկ» գլուխ ունեցողը՝ զգուշավոր:

«Նեղ ճակատը՝ շատակերության, լայնը՝ սակավատության, կլորը՝ զայրացկոտության, ճակատին փոսիկները ամաչկոտության նշան է, քառակուսի եւ չափավոր մեծ գլուխը՝ իմաստության ու մեծահոգության:

«Աղեղնաձեւ հոնքերը, եթե դրանց աղեղները դեպի վեր են ուղղված, ցույց են տալիս, որ դրանց կրողները սակավ բանական են, եթե ներքեւից հասնում են բթին՝ սրամիտ են, եթե աղեղնաձեւ հոնքը հասնում է մինչեւ քունքը՝ ծուլության նշան:

«Փայլուն, լուսավոր կաթիլ նման աչքերը նշանակում են ամաչկոտություն, երբ աչքերը պտտվում են տարբեր կողմեր, դա ցույց է տալիս: Կարծում ենք միայն աչքերը՝ համարձակության, խոշոր եւ սեւ աչքերը՝ վավաշտության, սեւ աչքերը՝ թուլության եւ ազահոյության նշան են: Երբ աչքերը մեղրամոտիվ են, դա նշանակում է արդար եւ կշռադատող լինելը: Սեւաչ եւ կարմրավուն աչքերը վկայում են անասնական չարության մասին: Ծաղկի կոկոն հիշեցնող աչքերը ցույց են տալիս անհավասարակշռություն, ծանր հայացքը՝ արդարություն: Հաճախ կրողը աչքերը մարմնավորում են վախկոտություն եւ թուլություն, լայն բացված աչքերը, ինչպես նաեւ նեղ եւ բթեթևակի շարժում աչքերը՝ հիմարություն:

«Մեծ եւ ոչ գեղեցիկ ականջ ունեցողները շատախոս են լինում, մանրը՝ խորամանկ: Կլոր ականջն ակնխեղություն նշան է, երկար եւ բարակը՝ նախանձկոտության, ականջը, որը կպած է գլխին՝ ծուլության:

«Լիքը այտերը ցույց են տալիս հակվածությունը ակնհույի հանդեպ, միևրաները՝ խորամանկություն, կլոր այտերը՝ նախանձ:

«Երկար քիթ ունեցողները թեթևամիտ են, կարճ քիթ ունեցողները հավանաբար ծագողության: Եթե քիթը համաչափորեն ձգվում է ճակատից, ոչ բարձր, ոչ ցածր, դա նշան է քաջության եւ իսելամտության:

«Բարակ շուրթերը եւ մեծ բերան ուժի եւ մեծահոգության նշան են, բարակ շուրթերը եւ փոքր բերանը՝ փոքրոգության, փոքր-ինչ կախված շուրթերը՝ ծուլության, քանի որ դրանք նման են ծիու կամ էջի շուրթերին:

«Կանաչ փոքր բերան ունեն թուլներն ու ամաչկոտները, մեծ բերանը որկրամոլության, ամխոջության եւ անպարտելիության նշան է, ներքեւի երկար ծնուղը՝ ցանկություն, ներքեւի ու դավալտության, ներքեւի կարճ ծնուղը՝ զայրույթի եւ հեզության պակասի, քանի որ հիշեցնում է օձին: Եթե ստորին ծնուղը չափավոր է ու քառակուսի, դա օգտավոր է:

«Այժմ կամ ղչխարի նման ծայրը հատուկ է հիմարներին, աքաղաղի նման ծայր ունեն թեթևամիտները, բարակ ծայրը բնութագրում է թախիծ եւ կասկածամտություն: Ում ծայրը ռճգային է, նա ստախոս ու ծարրաչարունակությունը» էջ 24



# ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## Գրիգոր Տաթևացու բժշկագիտական հայացքները

Հատված Լեւոն Հովհաննիսյանի «История медицины в Армении» գրքից

Սկիզբը՝ էջ 23

սեր է:

«Երկար ու բարակ պարանոցը չարամտության, կլոր պարանոցը՝ խիզախության, կարճ պարանոցն անվախության նշան է: Բարձր պարանոցը խորհրդանշում է անպատկառություն եւ խռովարարություն:

«Մարմնեղ կուրծքն անկրթություն է նշանակում: Երբ այն երկար է որովայնից, դա խոհեմության նշան է: Երբ կուրծքն ու որովայնը թավամազ են, դա արդեն անհավատություն, անկայունություն եւ անխղճություն է նշանակում: Եթե միայն կուրծքն է թավամազ, դա արդեն խիզախության նշան է:

«Բարակ եւ բարձր ուսեր ծածկամիտներն ունեն: Երկար ձեռքը, եթե միջին մատը հասնում է մինչեւ ծունկը, խորհրդանշում է ուժը: Եթե իջնում է ազդրից ցածր, չար կամքի եւ ծաղրահարության արտահայտություն է: Կարճ եւ փոքրիկ ձեռքը ուժի եւ կամակորության, փոքրիկ մատներով հաստ ձեռքը՝ դավադիր լինելու եւ գողության հակում ունենալու, ծուռ ձեռք ունենալը շատախոսության եւ շատակերության նշան է: Կոր եւ բարձր եղունգը նշանակում է բթություն եւ տիրելու ցանկություն: Շատ կարճ եղունգը անբարյացակամության նշան է, փոքրիկ եւ բարակ մատները մատանանշում են հիմարությունը, փոքրիկ եւ հաստ մատները՝ խիզախությունը:

«Բարակ կոնքերը՝ խորամտության, մարմնեղ կոնքերը ամբիջության նշան են: Հաստ եւ կարճ ոտքերը «խտուս են» չար բնավորության մասին: Արագ քայլողին հատուկ է մեծահոգությունը: Երբ մարդն արագ է քայլում եւ գազլում է ինքն իրեն, դեմքը խոնարհված է վար, ամբողջ մարմինը կծկված է, դա խտուս է նրա վախկոտության, ազախության եւ խորամանկության մասին: Երբ մարդը քայլում է մանր ու արագ քայլերով, ասում են, որ դա չարամտությունից եւ թուլությունից է:

«Թուխ մաշկը արտահայտում է խորամանկություն, սպիտակ եւ դեղին մաշկը՝ թույլ ուժ, սպիտակ եւ կարմիր գույնը՝ ուժ եւ արիություն:

«Փայլուն աչքերի հետ հրեղեն գույն ունեցողները հակված են մոլորությունների: Սեւ եւ սպիտակի համադրությամբ գույն ունեցողներին հատուկ են ուշիմությունն ու բարեհոգությունը:

«Երկար եւ խիտ մազեր ունեցողներին բնորոշում են անգթությունը եւ խելամտությունը: Բաց եւ հաստ մազեր ունեցողներին բնորոշ է խելամտությունը, իսկ կիսասեւ եւ ոչ այնքան բարակ մազերը մատնանշում են հեզությունը եւ լավ մարմնակազմությունը:

Պլատոնը նաեւ այն միտքն է հայտնել, որ մարդը, նմանություն ունենալով որոշ կենդանիների, նրանց նման է լինում նաեւ բնավորությանը: Այսպես մարմնի մասին:

Ինչպես երեւում է վերը շարադրված գլխից, մարմնակազմության եւ մարմնի դիալեկտիկայի, ինչպես նաեւ մարդու արտաքին ձեւերի ֆիզիոլոգիական ուսմունքը հին եւ միջնադարյան բժիշկների կողմից հասցվել է արտասովոր ծայրահեղությունների: Այդ ուսմունքների ռազմիկոնալ հատիկն այդպիսի ծայրահեղությունների հետեւանքով որոշակիորեն տարրալուծվում էր հին մետաֆիզիկական տեսությունների մեջ եւ կորցնում իր գիտականությունը: Այս հանգամանքը Տաթևացու հաստակ էր գիտակցում, ուստի վերոշարադրյալ գլխի սկզբում նա մի շարք տրամաբանական փաստարկներ է բերում՝ ի հակադրություն նրա, որ դիմագիտությանը ճշմարիտ ուսմունքի նշանակություն հաղորդի: Բայց նա, այնուամենայնիվ, հնարավոր չի համարում ամբողջությամբ անտեսել այն ամենը, ինչ այդ խնդրի մասին ասում են գիտնականները, եւ խորհուրդ է տալիս չանտեսել նրանց հայացք-

Հովհաննես Որոսնեցի եւ Գրիգոր Տաթևացի (Էջմիածին, Մայր Աթոռ, ձեռ. 96, Ավետարան, 1374թ.: Ծաղկող Խաչատուր Կեսարացի)



ները: Հակասությունները, որոնք այստեղ պիտի բնարկվել, պայմանավորված են նրանով, որ Տաթևացին չի ցանկանում ընդդիմանալ փիլիսոփաների եւ իմաստուհների հայացքներին, քանի որ ինչ-որ ճշմարտություններ է տեսնում նրանց ուսմունքների մեջ, բայց միաժամանակ հստակորեն նկատում էր այդ հայեցակարգերի սխալակամությունն ամբողջությամբ՝ նկատի ունենալով, որ միջնադարյան բժիշկների կողմից անհատի բնութագրական հատկությունների որոշման ժամանակ չափազանցվում էր ֆիզիոլոգիական գծերի նշանակությունը:

Գրիգոր Տաթևացին մեծ նշանակություն է տալիս ծնողներից տարբեր հատկանիշների ժառանգմանը: Օրինակ, մարդու մաշկի գույնը, նրա կարծիքով, կախված է ծնվելու պահին նրա ծնողների բնավորության գծերի միախառնումից: Դրանով են պայմանավորված մարդկանց բնավորությունը եւ խառնվածքը, ինչպես նաեւ անտաբանական առանձնահատկությունները: Մարդու զգայարանների տեղադրությունը պայմանավորված է նրանց ֆունկցիաների նպատակաուղղվածությամբ: Համի, հոտի, շոշափելիքի զգայարանները համարվում են «կոպիտ», քանի որ նրանք զգում են միասնական եւ համակցված ընկալման ճանապարհով, այսինքն՝ դրանք խորապես ինքնատիպ չեն: Տեսողությունը եւ լսողությունը համարվում են բարձրակարգ զգայարաններ: Դրանցից լսողությանը մեծ նշանակություն է վերապահվում, քանի որ այն գործում է եւ գիշերը, եւ ցերեկը՝ լսողական իրողությունները ընկալելով բոլոր ուղղություններով: Իհարկե, դա պայմանավորված է նաեւ նրանով, որ այդ զգայարանն ընկալում է հոգեւոր սկիզբը, աստվածային խոսքը:

Տաթևացին նաեւ հարցադրում է, թե ինչու որոշ երեխաներ խելամիտ եւ ուշիմ են, ուրիշները՝ բթամիտ եւ դժվար ընկալող, մյուսները քեչախոս են կամ սանձարձակ ու ճարպիկ:

Երեխաների բնավորության գծերի նման բազմազանությունը Գրիգոր Տաթևացին պայմանավորում է չորս պատճառներով, այն է՝ ժառանգական տարրերի բարենպաստ եւ անբարենպաստ միախառնվելը, ժառանգական որակները, նրանց ստացած դաստիարակությունը եւ ընկերական շրջապատի լավ կամ վատ ազդեցությունը: Բայց Ներսես Մեծը չէր համաձայնվում այս դրույթների հետ, քանի որ դրանք ըստ էության, մարմնական բնույթի էին: Հոգեւոր որակները չեն ենթարկվում մարմնական միախառնումներին, այլ նախախնամության կամքին, ինչը հաստ է մարդկային բանականությանը: Այս դեպքում Տաթևացու հայացքներում տեսնում ենք այն միտումները, ինչը ժամանակին արտահայտել է Եզնիկը, այն է՝ ընդունել գիտություն այն տվյալները, որոնք մետաֆիզիկորեն բացատրում էին շատ փաստեր եւ երեւույթներ, բայց երբ այդ փաստերը սկսում էին հակասել կրոնական պատկերացումներին, նա անմիջապես

դրանք ստորադասում էր վերջիններին: Այստեղից բխում է, որ Ներսես Մեծի եւ Տաթևացու՝ կնճռուտ հարցերի բանավեճում առաջինը չէր կարող ոչ մի դեպքում սխալ լինել: Այնուամենայնիվ, Գրիգոր Տաթևացին ոչ միշտ է համոզես բերել հարմարվողականություն եւ հաշտվողականություն: Նա մեծ արիություն էր դրսևորում, երբ հարկ էր լինում պաշտպանել իր գաղափարները, որոնց ճշմարտացիության մեջ նա խորապես համոզված էր եւ որոնցում նա խորապես շահագրգռված էր:

Հղիության եւ ծննդաբերության մասին Գրիգոր Տաթևացին գրում է. «Ինչո՞ւ ամեն ծննդի դեպքում, ինչպես բույսերի, այնպես էլ կենդանիների, տեղի է ունենում նախ՝ բեղմնավորում, ապա նրանք լույս աշխարհ են գալիս:

Պատասխան: Դա տեղի է ունենում բանական պատճառով, քանի որ ամեն մի կենդանի արարած ձգտում է անկատարից կատարելության, ուժից՝ գործողության: Դա, նախեստան, կախված է ժամանակից, քանի որ անցյալը եւ ապագան ոչ այլ ինչ են, եթե ոչ ներկա: Այսպես՝ բեղմնավորումը վերաբերում է ապագային եւ ավարտված ներկային, որը երեւութական չէ: Տեսանելի է սկզբում ծնունդը, որն ընկալվում է որպես ներկա: Երկրորդ՝ այդ ամենը հաստատվում է աշխարհի օրինակով, որը մինչ իր ստեղծելը գոյություն ուներ Արարչի գաղափարի մեջ՝ որպես նախնական պատկեր, հետո այն ի հայտ եկավ եւ ավարտվեց: Բայց սկիզբը եւ վերջը տեսանելի չեղան մեզ. տեսանելի էր միայն այն, ինչը ստեղծվել էր: Այդպես է նաեւ արվեստում, սկզբում գաղափարը ծնվում է երեւակայության մեջ, հետո այն գործողության մեջ է դրվում եւ իրականացվում»:

Այս սկզբունքով է Գրիգոր Տաթևացին առաջ տանում իր դատողությունները: Ոչ մի կասկած չի կարող լինել, որ նա իր ժամանակի խոշոր գիտնականն էր, ով կրթվել էր հելլենական ավանդույթներով: Ըստ էության Տաթևացին Հայաստանում հելլենիզմի վերջին ներկայացուցիչն էր եւ այդ առումով նա հանդիսանում է այդ բառի ուղիղ իմաստով, անախորհիզմ: Գրիգոր Մագիստրոսն էր հելլենիզմի վերջին մոնիկաններից մեկը, բայց Գրիգոր Տաթևացու օրոք հունական դասական մշակույթը Հայաստանում վաղուց չուներ իր ներկայացուցիչը: Հետաքրքրական է, որ այդ ժամանակի հայկական բժշկությունը վաղուց հենվում էր արաբական բժշկության ավանդույթների վրա: Գրիգոր Տաթևացին, երեւի, որպես եռանդուն քրիստոնյա, արաբական գիտնականներին երբեք չէր հիշատակում, գուցե նրանց ամենեւին էլ չգիտեր:

Այսպես թե այնպես Գրիգոր Տաթևացին իր բարձր գիտականությանը, ինչպես նաեւ մանկավարժական գործունեությանը խոր հետք է թողել հայ մշակույթի եւ, մասնավորապես, նշանակալի հետք հայ բժշկության մեջ:

Թարգմանությունը՝ Վահրամ Օրբելյանի

## Այունիքի բժշկական դպրոցը

Հատված Ստելլա Վարդանյանի «Հայաստանի բժշկության պատմություն. հնագույն ժամանակներից մինչեւ մեր օրերը» մենագրությունից

Բուն Հայաստանի դպրոցներից հիշատակելի է Տաթևի բարձրագույն դպրոցը, որտեղ գործել են Հովհան Որոտնեցին եւ նրա աշակերտ Գրիգոր Տաթևացին (1346-1409): Այս խոշոր մտածողների երկերում բնված են ոչ միայն փիլիսոփայության հիմնական խնդիրները, այլեւ բնագիտության ու բժշկության հարցեր: Տաթևացու գիտաուսուցողական գործունեությունը ծավալվել է Հայաստանի պատմության սեւագույն տարիներին՝ Լեւոն-Թեմուրի արշավանքների շրջանում: Մեծ դարձում էր բնագիտական հարցերը շոշափվել են մասնավորապես «Գիրք հարցմանց»-ում: Վերջինս հարց ու պատասխանի ձևով գրված մի ծավալուն աշխատություն է (ավարտել է 1389 թ.): Հեղինակի մարդակազմության, կենսաբանության, հոգեբանության եւ սաղմնաբանության հարցերին վերաբերող տեսակետներն այստեղ շարադրված են Պլատոնի, Արիստոտելի, Գրիգոր Նյուսացու եւ Նեմեսիոս Եմեսացու ոգով: Ուղեղի, նյարդերի, զգայարանների, ինչպես նաեւ ներքին գործարանների կառուցվածքին ու գործունեությանը վերաբերող կազմախոսական բաժնում զգացվում է Արուսայիդի «Մարդակազմութեան» ազդեցությունը: Նկատելի է նաեւ, որ Տաթևացին քաջ ծանոթ է եղել Ալբերտ Մեծի աշխատություններին: Այս առումով շատ հետաքրքիր է «Գիրք հարցմանց»-ի այն հատվածը, որտեղ շարադրված է պատկերացուցության (ֆիզիոգոնոմիկայի) միջնադարյան ուսմունքը, որի նկատմամբ Տաթևացին ցուցաբերել է քննադատական վերաբերմունք, եւ որը ժամանակին այնքան զբաղեցրել էր «Compedium theologiae veritatis» գրքի հեղինակին: Պատասխանելով այն հարցին, թե «Ճշմարտացի եւ արդյունավետ կերպով ինչ գծերը, արդյոք արտահայտում են նրանք մարդու բնավորության առանձնահատկությունները», Տաթևացին գրում է. «Մենք ասում ենք, որ նրանք ճշմարտացի չեն՝ ելնելով հետեւյալ հինգ պատճառներից: Նախ եւ առաջ այդպիսի նշանները պարտադիր չեն մարդու համար, նրանք ցույց են տալիս միայն, որ բնությունը որոշակի միտում ունի, երկրորդ՝ քանի որ դրանք մեծ կամ փոքր չեն, եւ երբեմն նույնանման են բոլոր մարդկանց մոտ, երրորդ՝ քանի որ ցանկության դեպքում դրանց կարելի է ճնշել բանականությամբ, չորրորդ՝ այդ նշանները շատ հաճախում են լինում եւ պատահական եւ ոչ թե բնական, եւ հինգերորդ՝ քանի որ մարդ կարող է իր սովորության հակառակ, ժուժկալությամբ, աղոթքներով կամ իշխելով իր մարմնին՝ սանձել իրեն եւ չդրսևորել այդ հատկությունները: Ելնելով այս ամենից՝ պետք չէ մարդկանց մասին վատ դատել, եթե նրանց մոտ առկա են նման նշաններ»:

Այս առումով մեծ արժեք ունի Մաշտոցյան Մատենադարանի 8382 ձեռագիր ժողովածուի մեջ գետնեղված ժՂ դարի այսպես կոչված «Չորս բժշկապետների» անանուն բժշկարանը: Թեպետ տարբեր հեղինակներ իրենց գրքերում հարուստ նյութեր են քաղել նրանից, սակայն այն դեռեւս հրատարակված չէ: Չեռագրի սկիզբը եւ գլխավոր հիշատակարանը թերի են, այդ պատճառով էլ հեղինակի կամ հեղինակների անունների, գրվելու ժամանակի ու վայրի մասին ճշգրիտ տեղեկություններ չունենք, սակայն նրա մեջ առկա մանրանկարների ու զարդանկարների ոճը հուշում է, որ այս ժողովածուն զարդանկարվել է Այունիքի կենտրոններից մեկում: Պատահական չէ, որ ձեռագրի հետագա ստացողներից մեկն էլ եղել է Սիմեոն Տաթևացին: Միջնադարյան հայկական բժշկական պահպանված ձեռագրերից այսպիսի շքեղ հարդարանք ու-





# ԱՐՎԵՍ

## Գրիգոր Տաթևազին արվեստի մասին

**ՀՐԱՎԱՐԳ ԶԱԿՈՔՅԱՆ**  
Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ պեդագոգական մրցանակի դափնեկիր



Միջնադարի հայ նշանավոր նտածող Գրիգոր Տաթևազին (1346-1410) ասարել է ստեղծագործել է այն ժամանակաշրջանում, երբ Հայաստանը տառապում էր թաթար-մոնղոլական ծանր լծի տակ, դարձել էր արյունահեղ ընդհարումների թատերաբեմ: Ավերածություններից ու կոտորածներից համեմատաբար քիչ տուժեցին Այունիքի բարձրադիր վայրերը, ինչը պայմանավորված էր մի կողմից նրանց անառիկ դիրքով, մյուս կողմից՝ Օրբելյանների և Պռոշյանների խելամիտ դիվանագիտությամբ ձեռք բերած արտոնություններով: Այդ բարենպաստ պայմանների շնորհիվ Այունիքում հիմնադրվում են միջնադարյան Հայաստանի համբավավոր ուսումնական հաստատությունները՝ սկզբում Գլաձորի, իսկ այնուհետև՝ Տաթևի համալսարանները, որտեղ ուսումնասիրվում են անտիկ շրջանի հեղինակների (Արիստոտել, Պորփյուր, Փիլոն և այլք) երկասիրությունները: Տաթևազինը վիճակված էր լինելու Տաթևի համալսարանի տնօրեն ղեկավարը: Իր հիմնական ստեղծագործությունները նա գրել է կրթական այդ բարձր միջավայրում:

Տաթևազին չունի ավարտված որոշակի էսթետիկական ուսմունք: Անվերապահորեն ընդունելով աստծո առաջնային լինելը, այնուամենայնիվ արվեստի ըմբռնում մեջ նա երբեմն էլնում էր արտաքին աշխարհի ճանաչողության իր ուսմունքից կապված զգայարանների ու բանականության հետ: «Գործ զգայարանացն է գարտաքինս ի ներքս զգալ, որպես աչօք զգոյնս եւ ականջով զձայնս եւ այլն: Արդ ամենայն ինչ որ զգալի է՝ ի ներքս ի սմա է. ծայն, զոյն, հոտ, ծանր եւ բեթել, եւ ոչ ինչ է արտաքոյ սորայ»: Այսպի-

կան կերպով զուգորդում է արվեստի գործի՝ նկարչության կամ քանդակագործության ստեղծման պրակտիկայի օրինակների հետ: «Չոր օրինակ՝ արուեստաւոր ոք կամիցի դրօշմել ի քարեայ պատկեր, նախ նկարե ի միտս իւր զձեւ պատկերին. եւ ապա հատանէ զքարն եւ տաչէ եւ դրոշմէ՝ զկերպն ըստ այնմ նմանութեան, որ էր ի միտս ձեւացեալ»: Եվ կամ՝ «զի որպէս շինող տաճարին զսկիզբն զկատարումն տեստ»: Չանտեսելով այստեղ դրսեւորված իդեալիստական մեկնակետի տարրերը, մենք շեշտը դնում ենք արվեստի գործի ստեղծման նրա պատկերացման վրա: Քանդակագործը նախապես քարի վրա աշխատանքի անցնելը նախազարգիւր օրինակը, կամ՝ զգայարանների միջոցով ճանաչված որնէլ առարկա, ընդհանրացնում է (վերապահում) եւ նոր միայն քարի վրա վերապատկերում: Ըստ որում ճշմարտությանը հասնելու (իմա՝ իսկական պատկերը վերարտադրելու) չափանիշը Տաթևազին տեսնում է մտքի եւ արտաքին հատկանիշների համապատասխանության մեջ: Նա կարծում է, որ եթե զգայարանների միջոցով մարդիկ ճանաչում են առարկաների մասնավոր հատկանիշները, ապա միտքը այն առավելություն ունի, որ ճանաչում է առարկան իր ամբողջությամբ:

Ինչպես տեսնում ենք, ստեղծագործական գործունեությունը եւ նրա արդյունքը սոսկ զգայարանների միջոցով ստացված տպավորությունների պասսիվ վերարտադրում չի համարվում: Ճշմարտացի էր պետ մեկտեղ նաեւ առարկայի ներքին հատկանիշների արտացոլումն է, քանի որ վերջինիս բացակայության դեպքում կլինի ընդհանուր ըմբռնությունը, բայց չի արտահայտվի ստեղծագործի հիմնական պատկերը: Այստեղ, սակայն, հարկավոր է նուրբ մոտեցում չչփոքելու համար առարկայի ներքին հատկանիշների դրսեւորման ձեւերը նրա բուն էության արտահայտման հետ,

որը, ըստ Տաթևազու, եւ ընդհանրապես միջնադարյան քրիստոնեական գաղափարախոսության, մտնում էր աստվածային ստեղծագործության ոլորտը: «Որո՞վ զամենայնի պատկեր եւ նմանութիւն, - հարցնում է Տաթևազին եւ պատասխանում.- զամենայնի պատկեր եւ նմանութիւն որպէս մարդն եւ կենդանին: Չի ամենայն մարդ ասի կենդանի, այլ ոչ ամենայն կենդանի մարդ: Չի իր ինչ յաւելու մարդն ի վերայ կենդանուն, որ է բանականն: Նոյնպէս եւ ամենայն պատկեր ի հարկէ ասի նմանութիւն, այլ ոչ ամենայն նմանութիւն է պատկեր: Չի ի վերայ նմանութեան իր ինչ յաւելու պատկերն որ է նոյնութիւն, եւ ապա է պատկեր: Չի պատկերն հոմանունն է եւ է որ նոյնութեամբ է պատկեր. եւ է որ նմանութեամբ: Ի դեպ, պատկերի ու նմանության փոխհարաբերության հարցը մասամբ արձագանքն է նաեւ իմացաբանական այն պայքարի, որը պատմության մեջ պատկերամարտություն անունն է կրում: Տաթևազին հստակ կերպով գատորոշում է սովորական պատկերը նրանում վերարտադրված անձի պաշտամունքից: Պաշտում են ոչ թե պատկերը, այլ նրան, ով վերարտադրված է նրանում: Արտաքին նմանությունը դեռ էության արտահայտումը չէ, կարծում է Տաթևազին, այնպէս, ինչպէս մարդը արտաքինապես նման է աստծուն, բայց աստված չէ: «Եվ դարձեալ՝ որպէս ձու հաւի եւ ձու քարայր նման ասին միմեանց, այլ ոչ պատկեր էութեան»:

Ըստ Տաթևազու, քանի որ մարդը զուրկ է աստվածային էությունից, ուստի նրա ստեղծագործությունն էլ էության արտահայտություն չի կարող հանդիսանալ՝ ձեւով նման է, բայց ոչ էություն: Նա գրում է. «...Դրանք եւ տախտակն ուր գրեալ է պատկեր թագաւորին միայն նման է թագաւորին ըստ ձեւոյն. այլ ոչ ըստ բնութեան»: Այդ մոտեցումը առավել ակնառու արտահայտություն է ստանում հոգու առնչությամբ. «...Ոչ

պահանջէ Աստուած հոգի ի պատկերագործն: Նախ՝ զի ասէ Աստուած «Ոգի յինէն ելցէ. եւ զամենայն շունչ եւ արարի»: Արդ թէ հոգուց եւ շնչոց արարիչ Աստուած միայն է, զիարդ ի մարդոյ հոգի խնդրէ, որ անկար է մարդոյ, նկարողն զիարդ տայ հոգի: ...Մովսէս կանգնեաց ըզբերովբէսն ի վերայ քաւութեան եւ զհսկայածեւ պատկերն ի վերայ աշտանակին լուսոյ, եւ Սողոմոն ի տաճարին արար զքերովբէսն ի փայտէ նոճոյ, եւ հոգի ոչ խնդրեաց ի նոցանէ»:

Ինչպէս մասնավորի եւ ընդհանուրի փոխհարաբերության հարցին Տաթևազին մոտենում է նոյննախկին դիրքերից (մասնավորը, առանձնակին նախորդում է ընդհանուրին եւ հանդիսանում այս կամ այն իրի մասին ընդհանուր հասկացողության հիմք), այնպէս էլ արվեստում բնության մեջ զուգորդ իրերի մասնավոր հատկանիշների հանրագումարով է պայմանավորվում ընդհանուր հատկանիշների գոյության փաստը:

Մինչեւ Տաթևազին էլ հայ իմաստասերները արտահայտել են իրենց տեսակետները արվեստի ու բնության փոխհարաբերության եւ կապի մասին: Հայտնի է Հովհաննէս Իմաստասերի «Սարյակի մասին» բանաստեղծությունը, որտեղ հեղինակը թռչն օրինակով առաջ է քաշում այն գաղափարը, որ բնությունը արվեստի միակ ու հարապատ ուսուցիչն է: Այդ հարցն ավելի որոշակի ձեւակերպում ստացավ միջնադարյան Հայաստանի մեկ այլ նտածող՝ Հովհաննէս Երզնկացու մոտ: Արարչագործված բնությունը ընդունելով որպէս ամենակատարյալ, միակ օրինակելի, որին պետք է ձգտի ամեն մի նկարիչ, երգիչ, գրիչ, այդուհանդերձ, կարծում էր, որ մարդ արարածը անկարող է բնությունը վերարտադրել իր ողջ հարազատությամբ:

Ինչպէս միջնադարյան քրիստոնեական գաղափարախոսության մեջ, այնպէս էլ Տաթևազու իմացաբանական, բնականաբար եւ գեղագիտական ըմբռնումներում որոշակի արտացոլում է գտնում կամքի ազդեցության կատարողի: «Չոր օրինակ, - գրում է Տաթևազին, - արուեստարուստանը էջ 26

Մի միայն «Գագիկ-Յեթունեան բժշկարան»-ի երուսաղեմյան ժԲ դարի օրինակը, որտեղ կա բժիշկ պատկերող երկու մանրանկար, առաջինը՝ հիվանդի մահճակալի մոտ, երկրորդը՝ երակառուցության տեսարան է: «Չորս բժշկապետների» բժշկարանը ձեւավորված է «Չորս ավետարանիչների» ոճով, ըստ որում, ամեն բաժնի սկզբում եղել են հեղինակի դիմանկարը, կիսախորաններ եւ հարուստ զարդանկարներ: Ժամանակի ընթացքում ձեռագրի շատ թերթեր ընկել են, բժշկապետների չորս դիմանկարներից մնացել են երկուսը, սակայն նույնիսկ այժմյան վիճակում իր ճոխությամբ ու ինքնատիպությամբ այն աչքի է ընկնում Մաշտոցյան Մատենադարանի բժշկական ձեռագրերի (1000-ից ավելի բժշկարան) հարուստ հավաքածուի մեջ: Երկրորդ բժշկարանի սկզբում (72բ) գտնվում է նրա անանուն հեղինակի դիմանկարը, կապույտ ֆոնի վրա ծալապատիկ նստած է պատկառելի տեսքով, սեւ մորուքով, քառասունն անց արեւելյան դիմագծերով մի տղամարդ, հագին սպիտակ շապիկ եւ կանաչավուն զգեստ, գլխին քորոցներով ամրացրած սպիտակ արեւելյան գլխարկ, ձեռքերին սպիտակ ձեռնոցներ: Բժիշկը բռնած ունի աքցան, նշտար, կողքին կան բժշկական այլ գործիքներ (մկրատ, դանակ, անոթներ): Պահպանվել է նաեւ չորրորդ բժշկարանի հեղինակի դիմանկարը (էջ 145բ), բժիշկը հնդեկուսա-

կան դիմագծերով համեմատաբար երիտասարդ մարդ է, պատկերված է կարմիր ֆոնի վրա, ծալապատիկ նստած թախտին, հիվանդ երեխային զննելու պահին: Նա մի ձեռքով բռնել է հիվանդի ծնոտը, մյուսով պահում է նրա գլուխը: Երեխայի մի աչքը փակ է (սա մատնանշում է հիվանդության բնույթը), բժիշկը հագել է սպիտակ խալաթանման լայն զգեստ, կարճ, մինչեւ արմուկները հասնող թեւերով, որի տակից երեւում է սպիտակ վերնաշապիկը, գլխին սպիտակ արեւելյան գլխարկ, ձեռքերին, ինչպէս առաջին բժշկի մոտ՝ սպիտակ ձեռնոցներ: Նա նույնպէս շրջապատված է բժշկական գործիքներով՝ նշտար, մկրատ, զանազան անոթներ, փոքր կուժ: Բժիշկների զգեստները, մանավանդ ձեռնոցների առկայությունը մի անգամ ես վկայում են, որ միջնադարյան հայ բժիշկներին հայտնի էր հպավարակայնության գաղափարը. երկրորդ բժիշկն ընդհանրապես շատ արդիական տեսք ունի՝ նման է վիրաբույժ-ակնաբույժի վիրաբուժական գործողության պահին:

Այունյաց աշխարհի գրչության կենտրոններից մեկում (զուց՝ Տաթևուն) գրուած ու զարդանկարուած այս արժեքավոր բժշկարանն ունի հետեւյալ հիշատակարանը. «[ընդ հովանեաւ Սրբոյ] Սարգսին, ի վալելուն տէր Գրիգորի իրիցուն եւ որդոցն Յովանիսին եւ Հայրապետին, ձեռնամբ բազմայմեղ եւ անարուեստ

եւ անհմաստ փրծուն գրչի՝ սուտանուն Սահակ կրօնաւորի: Ով քահանայք եւ մանկունք Սիրոնի, յորժամ կարդայք զղեղ պիտանի, յիշման առեք զմեզ արժանի, ձեր ամենիդ մեղքն քաւի, մեզ եւ ձեզ Տէրն ողորմի ի յաւուրն սպազազի:

Այլ արդ, աղաչեն զձեզ՝ խոշորութեան եւ սղալանացս գրոցն անմեղադիր լերուք, ո՛վ եղբարք, զի կար մեր այս է: Յիշեցէք ի մաքրափայլ աղաթս ձեր գխաւարեալ եւ անպիտանացեալ ոգի Սահակ արեղափս, այլեւ ի զվարպետս իմ՝ Ստեփանոս կրօնաւորն, հանգուցեալն ի Քրիստոս, եւ զԱմանիա կրօնաւորն, որ աշխատեցաւ ի կոկելն թղտին, եւ մարմնաւոր ծնաւոյ իմ: Եւ ով որ բոլոր սրտի ողորմիս ասէ, Տէր աստուած զայն տացէ իւրեանց: Այլ եւ յիշեցէք ի յաղաթս ձեր Գրիգոր երեցն եւ զիւր կողակիցն Վարդենին, որք ըստացան զբժշկարան գիրքս իւրեանց հալալ արդեանց, յիշատակ իւրեանց եւ ծնաւդացն. իւրոց ի վայելումն եւ իւրեանց զաւակացն թաղեալսն եւ Յովհաննիսն եւ Հայրապետին: Ով որ բոլոր սրտի ողորմիս տայ ըստացողացն, նայ Աստուած արժանի արասցէ զիւր սուրբ արքայութեան» (203աբ): Ցավոք, այս մեծարժեք հիշատակարանը սկզբից թերի է, ուստի զուցե երբեք էլ չպարզվեն այս չորս բժշկապետների անուններն ու բժշկարանի որոշանք ճշգրիտ վայրն ու թվա-

կանը: Այդուհանդերձ, հուսանք, որ նրա մեջ առկա աղունները (գրչինը՝ Սահակ կրօնավոր, նրա ուսուցիչը՝ Ստեփանոս կրօնավոր, ստացողինը՝ Գրիգոր երեց) հայագետներին ու բժշկապատմաբաններին հետազոյում կհուշեն, թե ովքեր էին այդ մարդիկ, այսպիսով էլ կբացահայտվի հայ բժշկության պատմության բազում առեղծվածներից մեկը եւս: «Չորս բժշկապետների» բժշկարանի բնագրական եւ աղբյուրագիտական ուսումնասիրությամբ պարզել ենք, որ վերջինս, հատկապես նրա առաջին ու չորրորդ բժշկարանները ստեղծելու անհրաժեշտ է «Գագիկ-Յեթունեան բժշկարան»-ին առաջին բժշկարանն իր կառուցվածքով անգամ մոտ է «ավագ հեքիմարան»-ին, սոսկ այն տարբերությամբ, որ դեղագիտարանը եւ պրոգնոստիկայի մասը տեղափոխվել են բժշկարանի վերջը: Այս մասի ինը գլուխ համապատասխանում են «ավագ հեքիմարան»-ի համանուն գլուխներին՝ «Կասն ամենայն երակաց» (հւթ), «Կասն զձեռնվական» (Չ), «Կասն ամենայն ցեղ ձիթերոյ» (Չե), «Կասն ամենայն ցեղ հնդաց» (ՉԸ), «Կասն ամենայն ցեղ մրգաց» (ՉԹ), «Կասն ամենայն ցեղ խաւարտի» (Ղ), «Կասն ամենայն ցեղ համեմոյ օգտութեանց» (ՂԱ), «Կասն ամենացն ցեղ մեթոյ» (ՂԲ), «Կասն ամենայն ցեղ ձկանց» (ՂԳ): Այսպիսով, առաջին բժշկարանի պարզ դեղամարքերի եւ սննդամթերքի

ուսմունքը ծագում է «Գագիկի դեղագիտարանից», մինչդեռ բարդ դեղանյութերի նկարագրությունը նրանում որնէլ առնչություն չունի վերջինիս հետ, ավելի ինքնուրույն բնույթի է: Անկասկած, «Չորս բժշկապետների» առաջին բժշկարանի հեղինակն իր ձեռքի տակ ունեցել է «ավագ հեքիմարան»-ի բնագիրը եւ առանց իր աղբյուրը նշելու՝ ազատորեն օգտվել է նրանից: Չորրորդ բժշկարանը եւս բնագրական եւ աղբյուրագիտական առումով առնչվում է «ավագ հեքիմարան»-ին: Այսպէս օրինակ, չորրորդ բժշկարանի մի շարք գլուխներ (1-37-րդ) համապատասխանում են «Գագիկի դեղագիտարան»-ի ժԳ գլխին («Կասն դեղերոյ զօրութեանց»), միակ տարբերությունն այն է, որ այստեղ ամեն բույսի հատկացված է առանձին գլուխ: «Չորս բժշկապետների» երկրորդ ու երրորդ բժշկարանները (նվիրված են հիմնականում ախտաբանության ու մահճաբուժության հարցերին) քիչ են առնչվում «ավագ հեքիմարան»-ին, ավելի ինքնուրույն բնույթի են: Այսպիսով, Այունիքի բժշկարանը դարձրեց, ինչպէս հստակ երեւում է նրա գիտական ժառանգության այս հատիկի՝ «Չորս բժշկապետների» բժշկարանի ուսումնասիրությամբ, զարգացնելով ու հարստացնելով Անիի ու Կիլիկիայի բժշկական դարոցի ավանդույթները, ժԴ դարում հասել էր գիտական բարձր մակարդակի: ■



# Գրիգոր Տաթևացին արվեստի մասին

## Արվեստ

### Սկիզբը էջ 25

տաւոր ոք մինչ գործէ զայլ, եւ ի հեռուստ տեսանէ ոք գոր մա գործէ, այլ ոչ տեսութիւն հարկեաց զայլն լինել այնպէս. այլ կամք արուեստաւորին»։ Արվեստագետի ստեղծագործական հնարավորությունները, ինչպես երևում է վերոհիշյալ տողերից, կաշկանդված չեն սոսկ «տեսութեամբ»։ Ըստ այդմ, ստեղծագործական գործունեությունը դիտվում է որպես բարդ երևույթ՝ պայմանավորված մարդու երեակայության և վերացարկման նրա ունակությամբ։ «...Ջի բանի գործն արւեստաւորն, այսինքն իմաստութեամբ եւ կամօք։ Այսպէս եւ արարիչն Աստուած զամենայն եղեալքս կամեցաւ եւ արար»։ Կնշանակի՝ առանց մտավոր բարձր կարողության ու երեակայության արվեստի իսկական գործ չի կարող ստեղծվել։ «Եվ տես զի նկարակերտել ասաց եւ ոչ նկարագրել, որպէս կեղծաւորացն ջնջելի», – գրում է նա։ Տաթևացին որոշակիորեն զանազանում է իսկական արվեստագետ ստեղծագործողին («ճկարիչ իմաստուն») եւ պասսիվ ընդօրինակողին («ճկարիչ ոչ ուսեալ») «...որպէս չարափառքն ասեն՝ թէ որպէս նկարիչ իմաստուն ձեւացնէ պատկեր եւ ապա ոչ ուսեալն զնոյն օրինակէ։ Վերջիններս («ոչ ուսեալն») գուցե եւ կարող է ստիպապետել կատարման որոշակի հմուտության, բայց չեն լինի ստեղծագործողը («ճկարիչ իմաստուն»), թեք նրանց մոտ նվազ են ընդհանրացման ու երեակայության ունակությունները։

Այսպիսով, կերպարվեստի տեսության հիմնական հարցերից մեկում, ինչպիսին ստեղծագործության բնույթի եւ արտահայտման ձեւի դրսեւորումն է, Տաթևացին մոտ էր կանգնած միջնադարյան փիլիսոփա-գեղագետներից, որոնց տեսակետները, ըստ էության, ժամանակի առաջավոր մտքի նվաճումներն էին։

Ուշագրավ մտքեր է հայտնել Տաթևացին նաեւ ներդաշնակության ու գեղեցկության մասին։ Ներդաշնակությունը նա սերտորեն առնչում է ձեւի ու բովանդակության կատեգորիաների համապատասխանության հետ՝ ենթադրելով դրանց եակյան հատկանիշների միասնությունը։ «Գիտելի է, զի յերից է պատկերին գեղեցկութիւն որով նմանի ի նախատիպն։ Նախ չափաւոր ձեւէ։ Երկրորդ՝ հաւասար մասունքն։ Երրորդ՝ յարմար շուքն»։ Այստեղ նա հարազատ է մտնու ժամանակի գաղափարախոսությանը, աստվածային գեղեցկությունը չի նույնացնում մարդկային չափանիշների հետ (քանի որ մարդը զուրկ է աստվածային էությունից)։ Ամեն ինչի սկիզբն աստվածն է. հետեւաբար՝ կատարյալ գեղեցիկը աստվածային գեղեցկությունն է։ Ուստի, ըստ Տաթևացու, մարդը չի կարող բացարձակ գեղեցիկ լինել։ Իրական առարկաներից բխող չափանիշները ընդունելով որպէս արտաքին հատկանիշներ, իսկ ներքին էությունը կապելով աստվածային բովանդակության հետ, միջնադարը պայմանավորեց մարմնի եւ հոգու գեղեցկության դուալիզմը։ Սիւս թէ ինչու Տաթևացին որպէս գեղեցկությանը մոտենալու անհրաժեշտ պայման նշում է «յարմար շուքն»։ Սակայն արարչական մեկնակետի (նախատիպի) ընդունումը չի կաշկանդել հայ մտածողին առանձին ղեկավարում գեղեցիկի հասկացությունը պայմանավորելու իրականության մեջ գոյություն ունեցող երևույթների ու իրերի ընդհանուր դաշնության հետ։ Եթէ նախատիպի ընդունմամբ Տաթևացին որոշակիորեն դրսեւորում է իր իդեալիստական կոնցեպցիան՝ բացարձակ գեղեցիկն ու կատարյալն առնչելով աստվածային էության հետ, ապա կոնկրետ՝ զգայական մարմնի ձեւերի ու համաչափության խնդրին անդրադառնալիս նա կարծում է, որ կատարելությունն ու ամբողջականությունը ենթադրում են նաեւ մարմնականի ու հոգեկանի միասնությունն եւ շեշտում է դրանց փոխադարձ պայմանավորվածությունը։ «Ձի սիրելին սիրով բնակ է սիրեցեալն. եւ անդրադարձեալ հինգ. Ձի բնակեմք ի միմեանս. որպէս անդամք ի գլուխն, եւ գլուխն յամուսն, շարժմամբ եւ գոյութեամբ... որպէս բանն ի մարմինն իւր միաւորեալ եւ

մարմինն ի բանն ասի»։ «Արդ՝ գիտելի է, – գրում է Տաթևացին իր քարոզներում, – զի այլ վարդապետք ասեն թէ տասն են մասունք երանութեանցն, հինգ առ մարմին. եւ հինգ առ հոգին։ Առ մարմինն են այսք. գեղեցկութիւն, բեթելութիւն, զօրութիւնն (ույժ). առողջութիւն. եւ յաւիտենականութիւն։ Եվ առ հոգին այս են. իմաստութիւն. անհոգութիւն. եւ ուրախութիւն»։ Մարդը ներդաշնակ պետք է լինի իր բոլոր կողմերով՝ թե մարմնական, եւ թե հոգեկան։ Եթէ բնությունը գեղեցիկ է իր բազմազանությամբ, – նկատում է Տաթևացին, – ապա մարդը՝ մարմնի անդամի համաձայնությունամբ. «որպէս բոլոր մարդն ամենայն անդամօք գեղեցիկ է եւ կենդանի. եւ թէ մի յանդամոյն պակասի եղել զագիր»։ Կամ «Եւ որպէս հոգի ունի զօրութիւն իւր անպակաս. նոյնպէս եւ անդամք մարմնոյ պարտ է լինիլ անպակաս զի իցէ կատարեալ մարդ»։ «Եւ գեղեցկութիւն մարմնոյն բաղկանայ երից. այսինքն ի մարդութիւն, ի չափաւորութիւն, ի ձեւ անդամոցն»։ Տաթևացին քարոզում է հոգու եւ մարմնի միաբանությունը, որտեղ հոգին երբեք չի կարող դրսեւորվել առանց ամբողջական մարմնի. «...եւ կամ որպէս պատկերագործք մինչ զոտն եւ զձեռն նկարեն ոչ երեւի պատկեր մարդոյ. այլ ոտից եւ ձեռնաց։ Եվ յորժան ձեւանայ դեմքն, ի նոյն ժամն երեւի յինքեան պատկերն մարդոյ։ Այսպէս եւ բանական հոգին համաձայնայն երեւի ըստ ձեւանալ մարմնոյ»։

Նկարչության կամ քանդակագործության մեջ մարդու էությունը դրսեւորելու համար Տաթևացին անհրաժեշտ է համարում մարմնի բոլոր անդամների պատկերումը, հիմնական դերը վերագրելով գլխին (դեմքին), որի շնորհիվ միայն ամբողջանում են հոգեկանի եւ մարմնականի հատկանիշները։ Իհարկեւ, հոգու եւ մարմնի՝ Տաթևացու պատկերացրած միասնությունը չպետք է նույնացվի անտիկ շրջանին հատուկ միասնության գաղափարի հետ։

Գրիգոր Տաթևացու մոտ որոշակի արտահայտություն է ստացել նաեւ արվեստի ուսուցման, նրա հասարակական ներգործման նշանակության խնդիրը։ Նա կարծում էր, որ մարդու էությունը պարզապես փորձում է պատասխանել այն հարցին, թե ինչպիսին է գեղարվեստի ստեղծագործության բնույթն ու տեղը մարդու ճանաչողական աշխարհի եւ ընդհանուր դաստիարակության մեջ։

Արվեստը, ըստ Տաթևացու, բնության մեջ հանդիպող առարկաների ընկալումն ու վերարտադրումն է բանականության միջոցով (բանական իմացության մի ձեւ)։ «Սոսկականութիւնն է սկիզբն ամենայն շնորհաց, զի ամենայն շնորհք, որ ի մարդիկ հոգեւոր եւ մարմնական թէ ի բանս, եւ թէ յարիեստս՝ նախ խոսակցանալ խորհեալ լինի»։ Իսկ արվեստի դաստիարակչական նշանակությունը նա սերտորեն կապում է մարդու կենցաղի եւ բարոյականության հետ, կարծելով, որ ծնունդը պարտական է, ի թիվս այլ բաների, իր զավակներին հաղորդակից դարձնել նաեւ արվեստին, սիրել տալ այն։ Այլ կերպ ասած՝ արվեստի հասարակական օգտակարության միտքն է առաջ քաշում։ Իհարկեւ, արվեստ ասելով Տաթևացին նկատի է ունեցել նախ եւ առաջ արիեստները, եւ, ընդհանրապես, մարդու կողմից որեւէ մասնագիտական ունակության ձեռք բերումը։ Սակայն հավանաբար չի բացառվում նաեւ զուտ արվեստի կամ կերպարվեստի ուսուցումը, որը, ինչպէս գիտենք, ըստ Տաթևացու, աստվածային շնորհով էր պայմանավորված։ «...Եւ այս (արվեստը-Յ. Յ.) հարկաւոր եւ բարի է քան զառաջինս, գրում է նա, – զի տվաւ կարէ զին ստանալ, զի արուեստին մուլքս եւ ստացուածս կարէ գտանել. եւ բարեպաշտութեամբ լինի Աստուծոյ բարեկամ։ Դարձեալ արուեստն անգրկելի պարանք է մարդոյն ի յայս կեանս. եւ բարեպաշտութիւնն ի հանդերձեալ կեանս. զի արուեստն մարմնոյն է եւ բարի գործն հոգւոյն։ Արդ՝ զայսոսիկ գուսումն հաւատոյ եւ բարի գործոյ եւ արուեստից պարտական է ծննդն ուսուցանել զաւակին»։ Այսպիսով՝ արվեստը նա համարում է այն բնագավառներից մեկը, որը թէ մարմնական է, թէ՛ հոգեկան է ու

պես այդպիսին հոգեկան են մարմնական դաստիարակման գործը միջոց է հատուկ միայն մարդ արարածին։ Ճիշտ է, այստեղ ձեւակերպումները հստակ չեն, բայց այնուամենայնիվ կարելի է նշմարել Տաթևացու միտումը՝ արվեստը (այդ թվում նաեւ կերպարվեստը) դիտել որպէս ստեղծագործական երևույթ, որը անմիջապես ներգործելու է դիտողի վրա։

Յետաքրքրական ասույթներ ունի Տաթևացին նաեւ գույնի կապակցությամբ։ Չայտնի է, որ կերպարվեստում գույնը կերպարանավորման հիմնական միջոցներից մեկն է։ Գույնի օգնությամբ են արտահայտվում պատկերվող առարկայի ինչպէս նյութականությունն ու ձեւը, այնպէս էլ տարածական հարաբերությունները, օդային միջավայրը, լուսավորությունը եւ, իհարկեւ, այդ բոլորով հանդերձ՝ նկարի ներքին բովանդակությունը։ Չատկապես գունային անցումներով են պայմանավորվում եւ ընկալվում առարկայի ձեւի ու ծավալի հատկանիշները, մարմինների՝ տեսողական զգացում առաջացնելու հատկությունը։ Եվ այդ առումով ձեւի արտահայտումը չի բաժանվում գունային հատկանիշներից։ Տաթևացին գույնը համարում է առարկայի հիմնական հատկություններից մեկը, որը միաժամանակ հանդես է գալիս որպէս ձեւի արտահայտման միջոց. «Որպէս մի էութիւն է խնժորն եւ ունի երեք յատկութիւս որակաց. զհամն, եւ զհոտն, եւ զգոյնն ընդ ձեւոյն»։ Եւ ապա՝ «Ձի աչք զգաց զգոյնն ընդ ձեւոյն»։ Ինչպէս տեսնում ենք գույնն ու ձեւը նա միմյանցից չի տարանջատում։ Այստեղ կրկին երևում է, որ Տաթևացու հատկանիշները բխում են կյանքից, առարկաների ձեւա հարաբերություններից։ Այսուհանդերձ, նա երբեմն տուրք է տալիս տրաֆարետային որոշ անդամների։ Այսպէս, խոսելով գույների բնական որակի մասին, գրում է. «Բնական որակ գունոց չորսն են։ Երկրի սեւութիւնն։ Ջրոյն՝ սպիտակն։ Օդոյն՝ կարմիրն։ Գրոյն՝ դեղինն։ Եվ ի սոց խառնուածոցն լինին այլ գունազան գոյնք։ Կապոյտ, գորշ եւ այլն»։

Գրիգոր Տաթևացին երբեմն խորհում է նաեւ արվեստագիտական կատարողական նրբերանգներում։ Նա, օրինակ, մատնանշում է, թե մուգ գույնը նկարի որ հատվածում պետք է դրվի, որպէսզի չխախտի նկարի ընդհանուր դաշնությունը եւ միաժամանակ նպաստի մյուս երանգների հնչեղությանը։ «Վասն զարդու գործոց յուրոց, – գրում է նա, – որպէս նկարիչ ըզթուլա գոյնն ի ներքոյ դնէ՝ զի սպիտակն եւ այլ պատուականքն երեւեսցին»։ Տաթևացին կարծում է, որ մեկ գույնն առանձին վերցրած այնպիսի հնչեղության («պայծառութիւն») չի կարող հասնել, ինչպիսին հնարավոր է մի քանի գույների համադրությամբ. «Նախ ի գեղեցկութիւն լեզուին, զի որպէս գոյն առ գունով պայծառանայ, եւ արուեստ առ արուեստ։ Նոյնպէս լեզու առ լեզու գեղեցկանայ ի խոսքն»։

Միջնադարյան արվեստում, ինչպէս հայտնի է, գաղափարական հիմնավորված եւ ընդունված է եղել գույների գործածության կանոնիկ եւ խորհրդանշական իմաստը։ Որպէս խորհմունտ իմաստասեր եւ աստվածաբան՝ Տաթևացին լավ է իմացել այդ ամենը։ Նման ըմբռնումներից է գալիս որոշ գույների իմաստային նշանակության պայմանական մեկնաբանումը Տաթևացու մոտ, որ հանդիպում ենք նրա մեկնություններում. «...Եւ չորս գոյն. խոհեմութիւն՝ թագաւորական ծիրանին. ողջախոհութիւն՝ բեռեզ. կարմիր՝ արիութիւն եւ մարտիրոսութիւն, կապոյտն է երկնաւոր արդարութիւն»։

Բերված փաստերը ցույց են տալիս, որ Գրիգոր Տաթևացին միջնադարյան Չայաստանի այդ նշանավոր մտածողը, ուշագրավ եւ առաջադիմական մտքեր է արտահայտել գեղագիտության, արվեստի հասարակական դերի եւ հարակից այլ հարցերի վերաբերյալ, որի շնորհիվ նա որոշակի տեղ է գրավում նաեւ արվեստի տեսության բնագավառում։

«Պատմաբանասիրական հանդես», 1973թ., N4 (63)

# Տաթևացուն է պատկանում «Շարակնոցի» վերջին խմբագրումը

## Երաժշտություն

Հարցազրույց արվեստագիտության թեկնածու, դոցենտ, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոս Մհեր Նավոյանի հետ

– Պարոն Նավոյան, Գրիգոր Տաթևացին ժամանակակից ձեւակերպումով հանրագիտակ անձնավորություն էր, մենք կուզեինք ներկայացնել նրան՝ որպէս երաժիշտի։

– Տաթևացու անունով պահպանված եւ մեզ հասած երաժշտաբանաստեղծական երկեր չեն պահպանվել, չունենք։ Բայց կան նրա հայացքները եւ որոշ տեսակետներ երաժշտական արվեստի վերաբերյալ, նախ՝ արվեստի դերի վերաբերյալ եւ երաժշտատեսական հայացքները եւս։ Պետք է ասել, որ դրանք մեծ մասամբ կրում են, իհարկեւ, միջնադարյան երաժշտաբանաստեղծական արվեստի շուրջ ստեղծված տեսական հայացքների կնիքը եւ որոշ իմաստով աչքի են ընկնում մեծ մտաբանի անհատի խոսքից։

– Տաթևացու աշակերտներից հիշատակեցիք Թովմա Մեծոփեցուն, իսկ Առաքել Սյունեցին ուրույն տեղ ունի հայ միջնադարյան երաժշտական արվեստի պատմության մեջ, հայտնի են երաժշտության տեսության եւ գեղագիտության հարցերի վերաբերյալ նրա դրույթները։ Այդ ամենը Տաթևացու՝ երաժիշտ լինելու անուղղակի վկայությունները չե՞ն։

– Այո, նրա մոտ կրթված վարդապետները, մասնավորապես, նրա ազգակալ, նրան աշակերտած Առաքել Սյունեցին, ինչպէս նաեւ Թովմա Մեծոփեցին նշանավոր երաժիշտներ էին։ Առաքել Սյունեցին, ըստ էության, 14-15-րդ դարերի մեր վերջին խոշոր տաղասացներից մեկն էր, նա ամունով մեզ հասած տաղերից, բարեբախտաբար, կարող ենք ինքնուրույն լինելու մասին, ապա երաժիշտ էր անպայման։ Ինչո՞ւ ենք համոզված, որ երաժիշտ էր։ Քանզի չէր կարող այդպիսին չլինել, ժամանակի կրթական համակարգն այնպէս էր դրված, որ նա ուղղակի պարտավոր էր ուսուցանել երաժշտական, այն էլ՝ բարձրագույն կրթություն, մասնավորապես մեքենայից, որ Գլաձորի, այնուհետեւ՝ Տաթևի համալսարաններում առանձին բաժիններով ուսուցանւսիրվում էին կամ ուսանող հոգեւորականներին դասավանդում էին արվեստի տարբեր ճյուղեր։ Տաթևացու դեպքում, գիտենք, որ նա երաժշտական կրթություն էլ ուներ, եւ ավելի շատ տեղեկություններ կան, որ վկայում են նրա մանրանկարիչ լինելու մասին։

Տաթևացու երաժշտաբանաստեղծական արվեստի, հոգեւոր երաժշտական ժառանգության վերաբերյալ, թերեւս մի փաստ ունենք, որ բավականին առանցքային նշանակություն ունի այն իմաստով, որ Տաթևացուն է պատկանում, ըստ էության, «Շարակնոցի» վերջին խմբագրումը։ «Շարակնոցը» Չայ առաքելական եկեղեցու ամենախոշոր երաժշտաբանաստեղծական ժողովածուն է, որում այսօրվա տեսքով մաս 19-րդ դարում ձայնագրված երաժշտության տեսքով ամփոփված է 1800-ից ավելի շարական։ Սիւս դա վերջին խմբագրումը պատկանում է Սուրբ Գրիգոր Տաթևացուն։ Թերեւս նրանից հետո այդ խմբագրման մասնակի միջամտություններ արել է իր աշակերտը՝ Թովմա Մեծոփեցին։ Ավելին, Տաթևացու արած խմբագրումը նաեւ կանոնացման

նշանակություն ունի, որովհետեւ վերջում խստագույնս հավելել է, թե սրանից հետո ինչ ավելացնեք, խոստան է։ Եվ խստագույնս քննության է ենթարկել եւ վերջնական տեսքի բերել «Շարակնոցը»։

– Տաթևացու աշակերտներից հիշատակեցիք Թովմա Մեծոփեցուն, իսկ Առաքել Սյունեցին ուրույն տեղ ունի հայ միջնադարյան երաժշտական արվեստի պատմության մեջ, հայտնի են երաժշտության տեսության եւ գեղագիտության հարցերի վերաբերյալ նրա դրույթները։ Այդ ամենը Տաթևացու՝ երաժիշտ լինելու անուղղակի վկայությունները չե՞ն։

– Այո, նրա մոտ կրթված վարդապետները, մասնավորապես, նրա ազգակալ, նրան աշակերտած Առաքել Սյունեցին, ինչպէս նաեւ Թովմա Մեծոփեցին նշանավոր երաժիշտներ էին։ Առաքել Սյունեցին, ըստ էության, 14-15-րդ դարերի մեր վերջին խոշոր տաղասացներից մեկն էր, նա ամունով մեզ հասած տաղերից, բարեբախտաբար, կարող ենք ինքնուրույն լինելու մասին, ապա երաժիշտ էր անպայման։ Ինչո՞ւ ենք համոզված, որ երաժիշտ էր։ Քանզի չէր կարող այդպիսին չլինել, ժամանակի կրթական համակարգն այնպէս էր դրված, որ նա ուղղակի պարտավոր էր ուսուցանել երաժշտական, այն էլ՝ բարձրագույն կրթություն, մասնավորապես մեքենայից, որ Գլաձորի, այնուհետեւ՝ Տաթևի համալսարաններում առանձին բաժիններով ուսուցանւսիրվում էին կամ ուսանող հոգեւորականներին դասավանդում էին արվեստի տարբեր ճյուղեր։ Տաթևացու դեպքում, գիտենք, որ նա երաժշտական կրթություն էլ ուներ, եւ ավելի շատ տեղեկություններ կան, որ վկայում են նրա մանրանկարիչ լինելու մասին։

– Մեր օրերում որեւէ մեկը հետաքրքրվո՞ւմ է այդ հարցով՝ Տաթևացին որպէս երաժիշտ։

– Առանձին ուսումնասիրությամբ դա չի արվել, թերեւս, միջնադարյան հայ երաժշտարվեստի ուսումնասիրողներն այս կամ այն առիթով անպայմանորեն անդրադարձել են Տաթևացուն, նրա անունը շրջանառվում է հայ երաժշտական միջնադարագիտության մեջ։ Բայց առանձին ուսումնասիրություն, նվիրված նրա երաժշտական գործունեությանը, առայսօր չկա։ Տաթևացու երաժշտատեսական հայացքները պետք է դիտարկել նրա ընդհանուր փիլիսոփայական հայացքների համատեքստում, ինչը բերում է այն համոզման, որ նա հայ միջնադարի վերջին իսկաներից է։

Զրույցը՝ Կահրամ Օրբելյանի



ԱՐՎԵՍ

# Գրիգոր Տաթևացին՝ մանրանկարիչ

Հայաստանում բազմաթիվ մանրանկարչական կենտրոններ են գործել. դրանցից առավել նշանավորներից էր նաև Գլաձորի գրչության դպրոցը:


Գլաձորի մանրանկարչական դպրոցն աչքի էր ընկնում բնաշխարհիկ Հայաստանի եւ կիլիկյան արվեստների դաշն համադրությամբ, որտեղ ակներես է, սակայն, տեղական ավանդների գերակշռությունը: Գլաձորում ստեղծված ձեռագրերի թերթերի վրա շարունակում են հարատեւել հատկապես հեթանոսությունից եկող հին պատկերացումների մոտիվներն ու կերպարները: Այստեղ հանդիպում են տոտեմների, բնության ուժերի անձնավորման, կենաց ծառի, պաշտամունքային խորհրդավոր ծեսերի, դիցաբանության արձագանքներ, իրականության արտացոլման տարրեր: Նման կերպարները, կորցնելով իրենց հնամենի պաշտամունքային նշանակությունը, քրիստոնեական ժամանակաշրջանում վերահաստատվում են՝ դառնալով նոր կրոնի խորհրդանիշներ: Այստեղ կազմավորվեց մի ինքնատիպ գեղանկարչական ուղղություն, որտեղ յուրօրինակ կերպով խաչածեւեցին Կիլիկիայի եւ Կենտրոնական Հայաստանի մանրանկարչական ավանդները: 14-րդ դարի 40-ական թթ. Գլաձորի համալսարանը դադարեց գործել: Գլաձորի մանրանկարչության ներկայացուցիչների կողմից մշակված ու կանոնացված որոշ առանձնահատկություններ, դպրոցի ավանդույթները հետագայում արտացոլվեցին Սյունիքի տարբեր կենտրոններում աշխատող ծաղկողների, այդ թվում նաև Գլաձորի ավանդների ժառանգորդ Տաթևացու գործունեությունում: Տաթևի գիտական կենտրոնը, որի ծնունդն ու առաջին ծաղկումը 10-11-րդ դարերում էր, նոր վերելք է ապրում 14-րդ դարի 70-ական թվականներից՝ նշանավոր գիտնական Հովհան Ռոտունեցու ուսուցչապետության տարիներին: Ռոտունեցու մահից հետո համալսարանի ղեկավար է դառնում նրա տաղանդավոր աշակերտ Գրիգոր Տաթևացին:

Համալսարանում ուսման դրվածքի եւ նրա տարբեր բաժիններում դասավանդվող աշակերտների մասին արժեքավոր տեղեկություններ են պահպանվել Գրիգոր Տաթևացու գործունեության շրջանից, եւ դրանք վկայում են, որ այնտեղ պատկերահանություն եւ նկարչություն է դասավանդվել: Ելնելով համալսարանում նկարչության բաժնի գոյության մասին վկայությունից՝ ենթադրվում է, որ Տաթևում 14-15-րդ դարերում նկարագրված ձեռագրերի թիվը մեծ է եղել, եւ այնտեղ գործել է մանրանկարչական ուրույն դպրոց, որի ամբողջական պատկերը, ցավոք, տալ հնարավոր չէ, քանի որ այդ ձեռագրերից այսօր հայտնի են քչերը: Մատենադարանում պահվող ձեռագրերից միայն երեքն են ուսումնասիրության համար բավարար նյութ ընձեռում: Մնացածները հիմնականում ունեն կիսախորաններ եւ լուսանցազարդեր:

Տաթևի 14-15-րդ դարերի արվեստը, ինչպես նշեցինք, զերծ չի եղել գլաձորյան մանրանկարչության ազդեցությունից, եւ որ առավել հավանական է, Տաթևում նկարագրված ձեռագրերից շատերի համար բնորոշ են եղել համալսարանի ուսուցչապետ Գրիգոր Տաթևացու արվեստի առանձնահատկությունները:

Նրա ստեղծած մանրանկարների կոթողայնությունը, կերպարների վիպական արտահայտչականությունը, թանձր ու հագեցած կարմիր, կապույտի, մանուշակագույնի օգտագործումը, զարդապատկերների առատությունը հարատեւել են Տաթևի հետ առնչվող մանրանկարչական կենտրոններում մինչեւ 16-17-րդ դարերը:

Քանի որ Տաթևացու գրական հարուստ ժառանգությունն ընդգրկում է իր ժամանակի գիտելիքների համարյա բոլոր բնագավառները, հանրագիտարանային բնույթի այս աշխատություններում ուշագրավ մտորումներ կան նաև գեղագիտության վերաբերյալ, որոնք օգնում են հասկանալու ինչպես իր, այնպես էլ ընդհանրապես միջնադարյան արվեստին բնորոշ երեւոյթները: Տաթևացու գեղագիտական հայացքների ընդգծումը չի նշանակում, թե նրա մոտ կան ավարտուն տեսություններ: Խոսքը հեղինակի տարբեր աշխատություններում ցրված հակիրճ մտքերի, դատողություն-



Թբիլիսիի կաթողիկե Սուրբ Գևորգ հայկական եկեղեցի:

## Յոթնամյա ուսում սղանալուց հետո Տաթևացին (Թիֆլիս) Գրիգոր Տաթևացին առաջին անգամ հանդիպեց Ռոտունեցուն

ների մասին է, որոնք լուսաբանում են գեղեցիկի, հասարակության մեջ արվեստի դերի ու նշանակության խնդիրները, ինչպես նաև վերաբերում են պատկերագրության, քրիստոնեական խորհրդանշանային եւ նկարչի գործնական աշխատանքների հարցերին:

Գրիգոր Տաթևացու մանրանկարչության առավել տարբերակիչ առանձնահատկությունը դրսևորվել է ժողովրդական զարդարվեստի տարրերի հմուտ օգտագործման մեջ: Նրա մանրանկարների խորքը գրեթե համատարած ծածկված է խոշոր զարդանախշերով, որոնք ունեն թույլ, մեղմ երանգներ: Տաթևացու պատկերած կերպարներն օժտված են խաղաղ վեհությամբ: Ի տարբերություն թեթև գունավորած զարդանախշերի՝ պատկերված կերպարները գունավորված են իյուրեղ, բայց զուսպ երանգներ ունեցող ներկերով:

Իր գործունեության սկզբնական շրջանում Գրիգոր Տաթևացին հանդես է գալիս որպես գրիչ: Բազմաթիվ ձեռագրեր են պահպանվել իր իսկ հիշատակարաններում: Սակայն նրա անվանը՝ որպես ծաղկողի, միայն մեկ անգամ ենք հանդիպում՝ 1378թ. Տաթևի վանքում նկարագրված ավետարանում: Չեռագիրը (ծեռ. N7482) ստեղծվել է եղեգիսում 1297թ.: Դրա ստեղծումից մոտ մեկ դար հետո՝ 1378թ., այն վերանորոգման ու նկարագրման նպատակով ուղարկել է Տաթևի վանք՝ Գրիգոր ծաղկողին, եւ Տաթևացին այն հարստացրել է սյուժետային նոր մանրանկարներով, ավետարանիչների պատկերներով եւ անվանաթերթերով:

Այդ թվականին ստեղծված մանրանկարներն են՝ 4 ավետարանիչներ եւ անվանաթերթեր, 5 թեմատիկ մանրանկարներ՝ Ավետում, Ծնունդ, Մուտքը Երուսաղեմ, Խաչելություն, Աստվածամայրը մանկան հետ: Այս մանրանկարների հեղինակի ինքնությունը պարզվում է

Ավետման տեսարանի խորանի շուրջ գտնվող հիշատակարանով, որտեղ պարզորոշ ասված է, որ ծաղկողը Հովհան Ռոտունեցու աշակերտ Գրիգորն է:

Պահպանված հիշատակարանները, ինչպես նաև 1378թ. արված մանրանկարներում տեղ գտած ոճական ընդհանրություններն արվեստաբանության մեջ առաջադրված այն տեսակետի հիմք են հանդիսացել, թե 1378թ. նկարագրողների միակ հեղինակը Գրիգոր Տաթևացին է: Մինչդեռ դրանց մանրագին ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրելու նաև մեկ այլ նկարչի (հավանաբար Տաթևացու աշակերտ) մասնակցությունը ձեռագրի գեղարվեստական հարդարանքի ամբողջացման գործում, սակայն այնքան ուժեղ է Գրիգոր Տաթևացու ազդեցությունը, որ առաջին հայացքից բոլոր տեղումնական մանրանկարներն ընկալվում են որպես մեկ նկարչի գործ:

Հիմք ընդունելով Ավետում մանրանկարը, որն աներկաբա հավաստում է իր պատկանելությունը Գրիգոր Տաթևացուն, արվեստաբանները գալիս են հետևյալ եզրահանգման. ավետարանիչների պատկերները, անվանաթերթերը, ինչպես նաև թեմատիկ մանրանկարներից երկուսը՝ Ավետում եւ Ծնունդ, պատկանում են Գրիգոր Տաթևացուն, մնացած երեքը՝ Մուտքը Երուսաղեմ, Խաչելություն եւ Աստվածամայրը մանկան հետ՝ աշակերտին:

Եական տարբերությունները, որոնք իրավունք են տալիս խոսել երկու նկարչի առկայության մասին եւ բաժանել ձեռագրի մանրանկարները երկու խմբի, արտահայտվում են նկարիչների մտածելակերպի գանձազանության, ձեւի հասկացության եւ արտահայտման մեջ: Գրիգոր Տաթևացու աշխատանքներում կերպարանքները, հատկապես ավետման տեսարանում, կոթողային են եւ ունեն որոշ ծավալատարածական բնույթ. գունային մշակման ենթարկված հագուստների ծալքերն ընդգծում են մարմնի մասերի ներդաշնակությունն ու համամասնությունը: Դեմքերը կառուցված են համարձակ ու դիպուկ գծանկարով:

Երկրորդ նկարչի աշխատանքում գծանկարը թույլ է, որն առանձնապես տեսանելի է Աստվածամոր կերպարում: Անհաջող են կառուցված կերպարանքները:

Մանրանկարների վերոնշյալ երկու խմբերի միջեւ եղած տարբերությունը դրսևորվում է նաև մանրանկարչական էջի ձեւավորման մեջ: Տաթևացին հորինվածքը պարփակում է միատիպ զարդանկարային գոտու շրջանակներում: Մանրանկարները խմբի տարբերվում են նաև իրենց գունաշարով: Գրիգոր Տաթևացին նախապատվություն է տալիս կապույտի, շագանակագույնի, կարմիրի, օխրայի մուգ երանգներին:

Չեռագրի առավել գեղեցիկ մանրանկարներից է Ավետումը, որտեղ փայլուն դրսևորում է ստացել Գրիգոր Տաթևացու տաղանդը, երեսակայության ուժն ու ինքնատիպությունը (պատահական չէ, որ հենց այս նկարի վրա է ծաղկողն իր ինքնագիրը թողել):

Այս մանրանկարը պատկերված է միատիպ փակ գեղազարդային շրջանակի մեջ: Մանրանկարն ունի հավասարակշռված հորինվածք: Մարիամի կերպարը չափազանց արտահայտիչ է, նրա դիմագծերում, աչքերում ու հատկապես թավ հոնքերում, որոնք քթի մոտ միանում են յուրօրինակ կորագծով, ընդգծված է հայ կնոջ ազգային տիպարը: Փոխադարձ կապի մեջ տրված Մարիամը եւ հրեշտակը տարատեսակ հուզականություն կրող կերպարներ են, ինչը նկարիչը ցույց է տալիս նաև նրանց պատկերների գունային համակարգում: Վեհաշուք ու գեղեցիկ են ինչպես Մարիամը, այնպես էլ հրեշտակապետը:

Թերես տեղին է իրչել Գրիգոր Տաթևացու «գեղեցիկի» բնորոշումը, որն առավել քան համահնչում է իր իսկ ստեղծած կերպարներին. «Գիտելի է, - գրում է նա, - գիյերից է պատկերին գեղեցկութուն, որով մնանի նախատիպն. նախ՝ չափաւոր ձեւն, երկրորդ՝ հաւասար մասունքն, երրորդ՝ յարմար շուքն»:

Նշենք նաև, որ հենց իր՝ Գրիգոր Տաթևացու դիմանկարները են մեզ են հասել մանրանկարների միջոցով:

**Պատրաստեց ԱՐՄԻՆԵ ԱՎԱԶՅԱՆԸ**



# ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻ «ՉԱՅՐ ՄԵՐ»-Ի ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ

*Այն խոսքի մասին, որ ասում է. «Երբ աղոթեք, սսեք. Հայր մեզ, որ երկնքում ես, թող սուրբ լինի Քո անունը...»*  
**Մարտին 6.9**

Վարդապետներն ասում են, թե այս աղոթքը շատ պատվական ու գովելի է երեք պատճառով.

Նախ-Որովհետև Քրիստոսի կողմից է սահմանված: Եվ եթե այն աղոթքները, որ մարդիկ են ասում, պետք է սովորել ու աղոթել, ապա որքան առավել պետք է սովորել այն աղոթքը, որն Աստված իր բերանով ուսուցանեց:

Երկրորդ-Որովհետև կարճ է ու գեղեցիկ, եւ ոչ ոք չի կարող չսովորել՝ պատճառ բերելով երկարությունը:

Երրորդ-Որովհետև ամբողջով է բարեբեր: Քանի որ այն անենք, ինչ պետք է մեզ՝ թե՛ հոգեւոր եւ թե՛ մարմնավոր, այս աղոթքով խնդրված է լինում:

Իսկ խնդրվածն ընդունելի չի լինում երեք պատճառով.

Առաջին-Երբ լինում է առանց գովաբանության:

Երկրորդ-Երբ լինում է անկարգ:

Երրորդ-Երբ պատշաճից ավելի է լինում:

Դրա համար Քրիստոսը երեք բան սովորեցրեց մեզ.

Նախ-Որ խնդրելուց առաջ քաղցրությամբ ու գովաբանությամբ փառավորենք Աստծուն, ինչպես նրանք, ովքեր, թագավորներից ունեցվածք են խնդրում, մախ գովում ու փառավորում են նրանց, որպեսզի քաղցրաճան նրանց սիրտը, եւ ապա խնդրում են ինչ որ կամենում են:

Եվ այս է Աստծուն գովելն ու փառավորելը, երբ ասում ենք՝ Հայր մեր, որ երկնքում ես:

Երկրորդ-Ուսուցանեց մեզ կարգով խնդրել խնդրելին: Այսինքն՝ մախ հոգեւորը, եւ ապա՝ մարմնավորը, որովհետև հոգին ավելի պատվական է, քան մարմինը, ինչպես ասում է. «Թող սուրբ լինի Քո անունը, թող գա Քո արքայությունը»:

Երրորդ-Մեզ ուսուցանեց պատշաճից ավելի չխնդրել՝ ասելով. «Մեր համապագոյա հացը տուր», որովհետև միայն հաց խնդրելը ավելին չէ:

Իսկ այս գովաբանությունը եռակի է, այսինքն՝ իմաստության, գուժի ու զորության համար: Որովհետև երբ ասում ենք Հայր, ցույց է տալիս իմաստությունը, որ հնազույն է ու հավիտենական՝ ըստ Դանիելի, քանի որ այն անփոփոխ է իմաստություն է, ասում է Սողոմոնը: Իսկ երբ ասում ենք մեր, ցույց է տալիս Նրա գուժը, որ շարժում ենք մեր հանդեպ: Եվ ասելով երկնքում՝ Նրա զորությունն ենք հայտնի դարձնում: Քանզի ինչ էլ խնդրենք, Նա իմաստուն է, գիտի տալ, եւ քանի որ զգաճառ է, կամենում է տալ, եւ քանի որ զորավոր է, կարող է տալ: Դրա համար մեզ ուսուցանեց ասել՝ «Հայր մեր, որ երկնքում ես»:

Իսկ թե ինչու հրամայեց ասել Հայր մեր եւ ոչ թե Հայր իմ, սրա համար վարդապետները չորս պատճառ են ասում.

Նախ-Որովհետև միայն Քրիստոսն է բնությանը Աստծո Որդի, իսկ մենք՝ շնորհատրությամբ, ինչպես ասում է. «Ես բարձրանում եմ իմ Հոր մոտ՝ բնությանը, եւ ձեր Հոր մոտ՝ շնորհատրությամբ»:

Երկրորդ-Որպեսզի հայտնի լինի, թե որեւէ մեկը չպետք է աղոթի միայն իր համար, այլ բոլոր հավատացյալների, որպեսզի երես բոլոր քրիստոնյաների միությունը: Իսկ այն աղոթքը, որ ընդհանուր է, առավել լսելի է լինում:

Երրորդ-Որովհետև Աստված առատաձեռն է, եւ Նրա կամքին հաճելի է բարիք պարգեւել շատերին, քան թե մեկ մարդու:

Չորրորդ-Որովհետև ոչ թե հարուստների համար Հայր է, իսկ աղքատների համար՝ ոչ, կամ թագավորների Հայրն է, իսկ ռամիկների համար՝ ոչ, կամ տերերի համար Հայր է, իսկ ծառաների համար՝ ոչ, կամ քահանաների համար Հայր է, իսկ աշխարհականների համար՝ ոչ, կամ տղամարդկանց համար Հայր է, իսկ կանանց համար՝ ոչ, այլ ընդհանրապես Հայր է կոչվում բոլորի համար, այսինքն՝ բոլոր հավատացյալների:

Եվ պետք է իմանալ, որ թեպետ Աստված առատաբար բոլոր ստեղծված մարդկանց Հայր է կոչվում, քանի որ Ինքն է ստեղծել, բայց Աստված հատկապես Հայր է կոչվում քրիստոնյաների համար: Եվ սա չորս պատճառով, որովհետև Որդին Հորից չորս բան ունի.

*Նախ - Գոյությունը:*  
*Երկրորդ - Ուսումն ու իմաստությունը:*  
*Երրորդ - Մեղսանքն ու կեանքը:*

*Չորրորդ - Բաժանությունն ու ողջ Հայրականը:*

Եվ ճշմարիտ հավատացյալներն այս չորս տեսակի պարգեւները ստացել են Տիրոջից, որ նրանց Հայրն է.

Նախ-Որովհետև Նրանից ենք ստացել գոյությունը, քանի որ մկրտության ավագանով Նրանից ծնվեցինք հոգեւոր կյանքով, ըստ այնմ՝ «Ովքեր Քրիստոսով մկրտվեցինք, Քրիստոսով զգեստավորվեցինք» (Փաղատացիս 3.27): Նաեւ որ անուն առանք, որովհետև Քրիստոսով քրիստոնյաներ կոչվեցինք:

Երկրորդ-Ստացանք ուսումը եւ իմաստությունը, որովհետև ուսուցանեց մեզ օրենքներով ու Ավետարանով, ըստ այնմ

«Ձեզ ուսուցիչ մի որոնեք, որովհետև ձեր ուսուցիչը Քրիստոսն է» (Մատթեոս 23.8):

Երրորդ-Որովհետև Նրանից ենք ստանում սնունդ ու կերակուր, քանզի Նա է մեզ սնուցանում խորհուրդներով ու եկեղեցական աստիճաններով, նաեւ Իր մարմնով ու արյամբ, ըստ այնմ՝ «Առե՛ք, կերե՛ք, այս է իմ մարմինը» (Մատթեոս 26.6):

Չորրորդ-Որովհետև Նրանից ժառանգելու ենք երկնքի արքայությունը, ինչպես ասում է առաքյալը. «Ծառա չես, այլ՝ որդի, եւ եթե որդի ես, ապա եւ՝ ժառանգակից Քրիստոսի»:

Անհավատներն այս չորս բաները չեն ստանում Աստծուց, որի համար էլ մեզ ուսուցանեց ասել Հայր մեր, որ երկնքում ես: Եվ պետք է իմանալ, որ բազում պատճառներով է ասվում Հայր մեր.

Նախ-Որովհետև Նրան Հայր ենք կոչում ըստ արարչության, քանզի Նրա կողմից ստեղծվեցինք եւ չզոյից գոյության եկանք: Իսկ մեզ համար առավել եւս Հայր է, որովհետև պատկերակցությամբ զարդարեց:

Երկրորդ-Երբ ասում ենք Հայր մեր, ցույց ենք տալիս, թե Սատանայի եւ մեղքերի ծառա չենք, որովհետև ավագանով փրկվեցինք ու Աստծո որդի դարձանք:

Երրորդ-Երբ ասում ենք Հայր մեր, երկնքում ես, պետք չէ երկրավոր բան խնդրենք, այլ երկնավորը, ինչպես առաքյալն է ասում. «Վերինը խնդրեք, ուր Քրիստոսն է նստում Աստծո աջ կողմում»:

**ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՅՔ**  
*Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո.*  
*եկեղեցի արքայութիս քո.*  
*եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի.*  
*զիսց մեր հանապազորդ Կուր մեզ այսօր.*  
*եւ թող մեզ զպարտիս մեր.*  
*որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց,*  
*եւ մի՛ փրանիր զմեզ ի փորձութիս,*  
*այլ փրկես զմեզ ի չարէն.*  
*զի քո է արքայութիս եւ զօրութիս եւ փառք յախորեանս ամեն:*

**ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՅՔ**  
*Մեր ՏԱՅՐ, որ երկնքում ես, սուրբ լինի Քո անունը,*  
*Քո թագավորությունը գա, Քո կամքը լինի*  
*երկրի վրա, ինչպէս երկնքում է,*  
*մեր ամեն օրվա հացը Կուր մեզ այսօր, ներիր մեր պարտքերը,*  
*ինչպէս մեք ենք ներում մեզ պարտք եղողներին: Եվ մի փար մեզ փորձութիս,*  
*այլ փրկիր մեզ չարից.*  
*քանի որ Քոնն է թագավորությունը, եւ զօրությունը, եւ փառքը հավիտյանս հավիտեկից. Ամեն:*

մում» (Կողոսացիս 3.1): Եվ Դավիթը, որ ըղձալով ասում էր. «Ես ընդհանրապես ի՞նչ ունեմ երկնքում, կամ Քեզնից էլ ի՞նչ խնդրեմ երկրի վրա» (Սաղմոս 73.25), «Իմ սրտի Աստված, իմ բաժին Աստված հավիտյան» (Սաղմոս 73.26), ցույց է տալիս, թե երբ երկնքում իմ բաժինը Աստված է, ապա երկրավորներից էլ ի՞նչ պետք է խնդրել:

Չորրորդ-Որովհետև երբ Աստծուն Հայր ենք կոչում, պարտավոր ենք բարությանը ու սրբությանը Նրա հարազատ որդին լինել, եւ ոչ թե չարությանը ու մեղքով՝ խորթ որդին: Որովհետև ում մտանությունը որ ունենք, նրան ենք մեզ հայր անվանում՝ կամ Աստծուն, եւ կամ Սատանային: Եվ իմացի, ո՛վ մարդ, ու թող քո մեջ չլինի որեւէ տեսակի մեղք կամ չարիք ու Սատանայի որդիություն, քանի որ Աստծուն մեղքի ու չարիքի հայր ես անվանում, որ անմեղքի է: Ուրեմն եթե քո հայրը անդունդների մեջ է, դու ինչպե՞ս ես դեպի երկինք կանչում, կամ ինչպե՞ս ես երկինք բարձրացնում, որովհետև նա այնտեղից անդառնալիորեն զրկվեց:

Որովհետև եթե այսպիսին ես եւ ասում ես Հայր մեր, որ երկնքում ես, նման չես բարի Հորը, այլ նրան, որին չարիքներով նմանվեցիր: Սարսափելի ու մեծ մեղք ես գործում ըստ տաս եղանակի.

Նախ-Որովհետև Սատանան չունի բարի Հոր կերպարանը: Եվ եթե մեր ես ասում, պարզ է, որ Աստծուն քո չարիքների հայր ես անվանում, որ բացահայտ արհամարհանք է, անեծք ու անմեղքելի մեղք:

Երկրորդ-Որ սանդարանետակամի՝ խորխորատում ապրողի կերպարանը ունի, իսկ նրան հայր ես անվանում: Բայց մեղանչում ես, որովհետև ասում ես երկնքում, իսկ նա անդնդում է, քանի որ Հորն ասում է. «Տեսա Սատանային երկնքից ընկած, ինչպես արուսյակը»: Իսկ դու չարակամորեն երկինք ես ուզում բարձրացնել նրան, որին Աստված կործանեց:

Երրորդ-Որ ասում ես Թող սուրբ լինի Քո անունը: Եվ որովհետև նա պետքով պղծված Սատանա է եւ Աստծուն հակառակ, իսկ դու սուրբ ես անվանում, որ առավել մեծ մեղք է:

Չորրորդ-Որ ասում ես Թող գա արքայությունը: Սա նույնպես սարսափելի չարություն է, քանի որ նա, որի իշխանությունը Քրիստոս իսկ ինքն կործանեց՝ ասելով. «Այս աշխարհի իշխանը թող դուրս մետվի» (Հովհաննես 12.31), դատապարտված է, իսկ դու մշտապես աղոթում ես հակառակ Քրիստոսի. «Թող գա քո արքայությունը եւ քո իշխանությունը»:

Հինգերորդ-Որ ասում ես Թող լինի քո կամքը ինչպես երկնքում, այնպես էլ երկրում: Սա դառնազույն չարություն է, որովհետև նա մարդկության կորուստն է կամենում, քանի որ երկնքում չար կամքով հրեշտակներին ինքն իր ետեւից քաշեց եւ դարձրեց դեւեր ու Աստծուն հակառակ: Իսկ դու աղոթում ես նրա անվանակցին երկրում էլ նույնը անել, այսինքն՝ մարդկանց իր ետեւից դժոխք քարշ տալ, իսկ սա Աստծո կամքին հակառակ է, որովհետև Աստված չի կամենում մեղավորի մահը, այլ չար ճանապարհից նրա դառնալն ու փրկվելը, ինչպես ասում է մարգարեն: Կամ երկինքը դրախտն է նշանակում, որովհետև ասում ես, ինչպես այնտեղ մեր մախիներին կորստյան մատնեցիր, այնպես էլ այժմ այստեղ արա:

Վեցերորդ-Որ ասում ես Մեր հանապազորյա հացը տուր մեզ այսօր: Սա նույնպես մեղք է, որովհետև Սատանան ոչինչ չունի, որպեսզի որեւէ մեկին կերակրի, ինչպես անառակ որդուց հայտնի է, որ ասում էր. «Ես այստեղ սովանա կորչում եմ» (Դուկաս 15.17): Դու ի՞նչ ես խնդրում, մեղքերի ու չարիքների շատությունն ու աշխարհի հեշտանքները՝ մեղասանները սովով մե կերակրվում, իսկ սրբերը՝ Աստծո խոսքի հացով: Քո արածն առավել կորստաբեր ու չար է:

Յոթերորդ-Որ ասում ես Թող մեզ մեր պարտքերը: Եվ սա չար հանցանք է, որովհետև նա է բոլորին պարտավոր ու հանցավոր դարձնում եւ իր կամքով բնավորված է չարի մեջ: Ինքը, որ չի կարող հրաժարվել չարից, քոնն ինչպե՞ս կների: Եվ նա, որ բոլորին մեղքով ապականեց, քեզ ինչպե՞ս կսրբի: Եվ ասում ես՝ ինչպես դու ես ինձ թողություն տալիս, եւ էլ՝ իմիններին իմ պարտապաններին: Այսինքն՝ ոչ դու ես ինձ թողություն տալիս, եւ ոչ էլ ես՝ իմ պարտապաններին. ոչ էլ երկնավոր Հայրը՝ երկուսին, որը չար չափանիշ է:

Ութերորդ-Որ ասում ես Սի տանիր մեզ փորձության: Իսկ սա մեծ հիմարություն է, որովհետև նրանից, որ չար փորձությունների մայրն է եւ բոլորին փորձանքի է մատնում, որպեսզի օտարանան Աստծուց, ազատվել ես խնդրում հենց իրենից, քանի որ երբ կույրը կույրին է առաջնորդում, սխալվում եւ խորխորատն է ընկնում:

Իններորդ-Որ ասում ես փրկիր չարից: Սա առավել տգիտություն է՝ խավարից լույս խնդրել, մահվանից՝ կյանք, եւ ապականությունից՝ անապականություն, նույնպես եւ չարից բարի խնդրել, փրկություն, որն, անկասկած, հակասություն է:

Տասներորդ-Որ ասում ես Քոնն է արքայությունը, եւ զորությունը եւ հավիտենական փառքը: Սա ուրիշ ոչ ոքի չի պատշաճում, բացի Աստծուց: Իսկ դու զրկում ես Աստծուն եւ տալիս ես դեւերին, ինչպես անօրեն կռապաշտները, որովհետև նա արքայություն չունի, քանի որ ընկել է իր բնակության վայրից եւ դատարկ է բոլոր բարություններից եւ զորություն չունի, քանի որ տկար աղջիկներից ոյրերով պարտվեց եւ պարտվում է, փառք էլ չունի, այլ՝ հավիտենական տանջանք:

Եվ տես, որ այս խոսքը գեղեցիկ կարգ ունի, որովհետև հոգեւոր բարությունները, որ խնդրում ենք Աստծուց, երեք տեսակ են.

Նախ-Աստծո անվան գոյությունն ու փառքը, երբ ասում ենք Թող սուրբ լինի քո անունը:

Երկրորդ-Եվ երկնքի արքայությունը, ասելով Թող գա Քո արքայությունը:

Երրորդ-Որպեսզի կատարելապես հնազանդ լինենք Աստծուն եւ մեր կամքը միավորենք Աստծո կամքին՝ ասելով. «Թող Քո կամքը լինի ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա»:

Իսկ մեր առաջին խնդրանքը հոգեւոր բարության առա-



# ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Շին տեսակն է, որ սովորեցրեց մեր Տերը՝ ասելով. «Թող սուրբ լինի Քո անունը»։ Եվ սա վարդապետների կողմից վեց կերպ է մեկնվում.

Նախ-Ասելով «Թող սուրբ լինի Քո անունը», այսինքն՝ սրբությանը, երկուդով ու դողով հիշենք Քո անունը, առանց ստախտության, առանց հայիոյելու ու բամբասելու եւ առանց դատարկ բաների, որովհետեւ մեր բերանը մեր հոգու տաճարի դուռն է, որով մտնում է Աստված, եւ այն պետք է սուրբ լինի, որպեսզի Նա չբարկանա մեզ վրա, ինչպես որ թագավորները, երբ տեսնում են դարպասի սեմն ու դուռը աղտեղված, զարշելով չեն մտնում, այլ պատժում են սպասավորներին։

Երկրորդ-Թող սուրբ լինի Քո անունը, այսինքն՝ ինչպես Քո անունը սուրբ է Քո կողմից, այնպես էլ մեր կողմից թող սուրբ լինի։ Այսինքն՝ այնպիսի վարքով ապրենք, որ տեսնեն մեր բարի գործերը եւ փառավորեն Քեզ՝ մեր Գործը, որ երկնքում եւ, եւ ոչ թե Քո անունը մեր պատճառով հայիոյվի հեթանոսների մեջ։

Երրորդ-Թող սուրբ լինի Քո անունը. մի այլ թարգմանության մեջ այսպես է՝ «Թող հաստատ լինի»։ Այսինքն՝ Քո անունը թող հաստատ լինի քրիստոնյաների վրա, որպեսզի չկորցնեն այն, քանի որ շատերը կորցրեցին, ինչպես ուրացողներն ու անհավատները, օրինակ՝ Դավիթը եւ ուրիշները։

Չորրորդ-Թող Քո անունով սուրբ լինեն քրիստոնյաները կամ աստվածացածները, ըստ այնմ՝ «Որպես Աստված գալիս ես աստվածացածների մեջ, եւ ոչ թե ինչպես անսուրբներն ու չարահամբավները»։

Հինգերորդ-Թող սուրբ լինի, այսինքն՝ սրով հանդերձ թող լինի Քո անունը, որ բոլոր երկսայրի սրերից հատու է՝ հոսած անդամները կտրելու համար, այլեւ որդուն հորից, եւ դատերը՝ մորից, ու ամուսնուն՝ կնոջից անջատելու եւ այլն, այլ նաեւ մեղքերն ու չարությունները մեր հոգիներից հեռացնեն, մանավանդ առ ի սարսափ դեւերի եւ ի հերքումն չար պիստերի։

Վեցերորդ-Թող սուրբ լինի Քո անունը, այսինքն՝ ամեն ինչ Քո անունով է սրբվում։ Ինչպես նորընծան ավագանուն է սրբվում Քո անունով, այնպես եւ Քո անունով սրբվում են մեր հոգիները եւ մարմինն երբ՝ մեղքի աղտեղությունից, եւ այլ բազում բաներ։

Իսկ արդ, քանի որ ասացինք հոգեւոր բարության անաջինը, ասենք նաեւ երկրորդը, որ ասում է. «Թող գա Քո արքայությունը»։ Եվ այս մշտապես երգում ենք յոթը պատճառով.

Նախ-Որ տրվի մեզ Քո փառքի մեծությունը, որպեսզի Քեզ դեմ առ դեմ տեսնենք։

Երկրորդ-Ինչպես որ տիրում ես Քեզ հավատացող քրիստոնյաներին, այսպես էլ տիրես անհավատներին, որպեսզի հավատան Քեզ եւ ծառայեն։

Երրորդ-Ինչպես տիրում ես հեթանոսներին, որոնք Քեզ հավատացին, այնպես էլ տիրես հրեաներին՝ աշխարհի վախճանին, ըստ այն խոսքի, թե «Երբ հեթանոսների ժամանակը լրանա, եւ ապա ողջ Իսրայելը կփրկվի» (Հռոմեացիս 11.25), եւ թե՝ «Նրա առջեւ են խոնարհվում բոլոր ծնկներն ու բոլոր լեզուները» (Եսայի 45.23, Հռոմեացիս 14.11)։

Չորրորդ-Այս ասում են մարտիրոսներն ու ճգնավորները, քանի որ կարոտ են հատուցմանն ու պսակներին, դրա համար են աղոթում, որպեսզի շուտով գա փոխհատուցման օրը։

Հինգերորդ-Որովհետեւ շատերը կան, որ հոգ չեն տանում եւ չեն խնդրում երկնքի արքայությունը, այլ անցավոր կյանք են խնդրում ու երբեք չեն հագնում։ Եվ այնպես ծարավի են մեղքերի, որ խնդրում են, թե՛ թող գա մեղքի աղտեղությունը։ Իսկ մենք՝ արքայություն ցանկացողներս, նրանց հակառակ ասում ենք՝ «Թող գա Քո արքայությունը»։

Վեցերորդ-Այս խոսքը մեր մարդկային բնության կողմից մարդացած Բանին է ուղղված խնդրանքով ու թախանձանքով, թե՛ «Թող գա Քո արքայությունը»՝ դատելու մեզ, որ բնութենակից ու մարմնակից ես մեզ եւ գիտես մեր բնության տկարությունը, որպեսզի ողորմությամբ դատես, ինչպես ասում է առաքյալը. «Ինքը փորձվեց, կարող է եւ փորձվողներին էլ օգնել» (Եբրայեցիս 2.18)։ Եվ այս խնդրանքը, հաճո լինելով Գործը, «Ամբողջ դատաստանը իր Որդուն տվեց»՝ ըստ առաքյալի (Հովհաննես 5.22)։

Յոթերորդ-Որովհետեւ Քրիստոսից առաջ արքայության դուռը փակված էր եւ Քրիստոսով բացվեց։ Որի համար մենք, Քրիստոսով օգնություն ստանալով, ասում ենք. «Թող գա Քո արքայությունը»։

## ՍԱ ԵՐԿՐՈՐԴ ՎՈՒՄՆ Է

Արի տեսնենք հոգու երրորդ բարությունը։

«Թող Քո կամքը լինի ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա»։

Այս խոսքը բազում մոտեցումներ ունի եւ մեծ է նրա զորությունը.

Նախ-Թե՛ ինչպես որ հրեշտակներն ու սրբերը, որոնք Քեզ մոտ են, Քո կամքն են կատարում, այնպես էլ մարդիկ, որ երկրի վրա են, թող թողնեն իրենց կամքը եւ կատարեն Քո կամքը։

Երկրորդ-Աստծո կամքը մեղավորների դարձն է եւ հոգիների փրկությունը՝ մեղքի ու չարիքի բռնությունից, ինչպես ասում էր մարգարեի միջոցով.

«Չեմ կամենում մեղավորների մահը, այլ նրանց դարձը չար ճանապարհից ու ասելով, որպեսզի ապրեն եւ ճշմարտության գիտակցության գաան» (Ս Տիմոթես 2.4)։

Որի համար պարտավոր ենք Աստծու կամքը կատարել։ Երրորդ-Որովհետեւ Աստծո կամքն է, որ մենք՝ անդամներս,

գլխի հետ միավորվենք, ինչպես ասում էր Գործը. «Կամենում եմ, որ ուր ես եմ, նրանք էլ ինձ հետ լինեն, ինչպես Դու, Դայր, իմ մեջ ես, եւ ես՝ Քո մեջ, որպեսզի սրանք էլ մեր մեջ լինեն, որպեսզի մեկի մեջ կատարյալ լինեն» (Հովհաննես 17.24)։ Որի համար միշտ աղաչում ենք Աստծուն այս կամքի կատարումը։

Չորրորդ - Որ ինչպես Քո կամքը երկնքում է, ինչպես իր տեղը գրավողը իր տեղում է, թեպետեւ ամենուրեք է, այդպես էլ թող լինի երկրավորներին՝ երկինք բարձրանալը, որպեսզի մեր մեջ էլ լինի Քո կամքը, ինչպես տեղը գրավողն իր տեղում է, որովհետեւ մեղավորների համար ասում է՝ «Իմ կամքը դրանց մեջ չէ»։ Այս երրորդ բարությունն է հոգու՝ ըստ նրա երեք մասերի։

Եվ գիտենք, որ բարությունը երկու տեսակ է, այսինքն՝ հոգեւոր եւ մարմնավոր։ Եվ հոգեւոր բարին առավել պատվական է, քան մարմնավորը։ Դրա համար հրաման ստացանք Տիրոջից նախ հոգեւորը խնդրել, եւ ապա՝ մարմնավորը։ Արդ, քանի որ հոգեւորը խնդրեցինք, չորրորդ բարությունը խնդրենք՝ մարմնավորը։

Մեր համապագության հացը սուր մեզ այսօր. գիտենք, որ հացը երկու տեսակ է, այսինքն՝ հոգեւոր հաց եւ մարմնավոր հաց։ Եվ երբ մարմնավոր հացն ենք խնդրում, ոչ միայն հացը, այլեւ մարմնական բոլոր կարիքները խնդրում ենք հացի հետ։ Իսկ հոգեւոր հացը բազում է, այսինքն՝ ուսումը, որ մտքի կերակուրն է եւ կենաց հացը, որ Տիրոջ մարմինն է, իսկ այս հացը համապագորդ է կոչվում, որովհետեւ հավատացյալներն առաքյալների ժամանակ ամեն օր հաղորդվում էին Տիրոջ մարմնից։ Եվ հոգեւոր ամեն ինչ խնդրում ենք այս հացի հետ։ Իսկ այս խնդրանքը յոթը տեսակ մեղքեր է վերացնում մեզանից։

Նախ-Ավելորդն ու որկրամոլությունը, որ հաց ասելով ուռճանում են տեսակ-տեսակ խորտիկներով։

Երկրորդ-Երբ ասում են մեր հացը, վերացնում է ավագակությունը, հավիշտակությունը, անիրավությունը, գողությունն ու տոկոսառությունը, որոնք արդար չեն։

Երրորդ-Վերացնում է առանձին ուսելը եւ հրամայում է Աստծուց տրված հացը բոլորով ուսել, քանի որ չի ասում իմ հացը, այլ՝ մեր, որովհետեւ հարուստներն Աստծո ձեռքերն են, նրանք պարտավոր են իրենց ունեցվածքը շատերին ու աղքատներին բաշխել։

Չորրորդ-Պետք չէ արժանիից ավելին խնդրենք, այսինքն՝ տուր ինձ կերակուր ոչ թե ինչպես թագավորներին եւ իշխաններին, այլ ինչ որ ինձ է արժանի. դրա համար ենք ասում մեր հացը։ Հինգերորդ-Որովհետեւ տուր ասելով վերացնում է դժգոհությունը. պետք չէ անգոհունակ լինել Աստծուց, որովհետեւ չենք ասում, թե մեզ կամ կամառիք, այլ ձրի ենք ուզում, որպեսզի մենք էլ ուրիշներին ձրի տամք։ Դրա համար պարտավոր ենք մշտապես գոհություն հայտնել Աստծուն։

Վեցերորդ-Մեզ տուր ասելով վերացնում է հպարտությունը, այսինքն՝ տուր մեզ որպես օգնություն եւ օգուտ, որովհետեւ շատերն իրենց ունեցվածքն են հպարտության պատճառ բերում։

Յոթերորդ-Որովհետեւ այսօր ասելով վերացնում է առաջիկա տարիների մասին ավելորդ հոգածությունը, ինչպես Տերն է ասում՝ վաղվա մասին հոգս չանել։

Եվ հայտնի է, որ շատերը կան, որոնք մեկ օրվա հաց չեն ուտում, այլ տասը օրվա բավարար հացը մի օրում են ուտում, որի համար արդարադատ Աստված տասը օրը մեկ օրվա է կարճում։ Այդպես էլ տասը տարվա կյանքը մեկ տարվա է կարճում, եւ այդպիսիների որդիները մուրում են, որովհետեւ նրանց կերակուրն իրենց հայրերը կերան։ Եվ քանի որ մարդկանց խնդրանքներն երկունս են, այսինքն՝ բարիքի հանդիպել եւ չարիքից փրկվել, արդ, որովհետեւ հանդիպեցինք հոգեւոր ու մարմնավոր բարիքներին, խնդրենք եւ չարիքից փրկվել՝ ասելով. «Թող մեզ մեր պարտքերը, ինչպես եւ մենք ենք թողնում մեր պարտապաններին»։

Վարդապետներն ասում են, թե այս պարտքը մեղքն է, որ Սատանայից ենք փոխ առել եւ գրավ ենք դրել մեր հոգիին։ Եվ այս պարտքը տոկոսով է, որովհետեւ որչափ որեւէ մեկը մահացու մեղքի մեջ երկար մնա, այնքան կավելանան նրա տանջանքները։ Դրա համար ստիպված ենք խնդրել Աստծուց, որպեսզի մերի մեր պարտքերը։

Երկրորդ-Որովհետեւ նախ պարտավոր ենք ներել նրանց պարտքերը, ովքեր մեզ են պարտք, եւ հետո մերը կներվի, որովհետեւ եթե մերը մեր պարտքը, որ քիչ է, չենք ներում, Աստված էլ մերը մեր ունեցած պարտքերը չի ների, որոնք բազմաթիվ են, որովհետեւ ասում է՝ «անարիվի թեզ, թե չխոնարհվի՝ ների ի նրան, որպեսզի դու ազատվես»։

Երրորդ-Որովհետեւ սովորեցնում է մարդկանց հոգատարությանը վարվել միմյանց հետ, այսինքն՝ հայրերը՝ որդիների, վարդապետները՝ աշակերտների, տերերը՝ ծառաների հետ, որովհետեւ թեպետ պարտական են պատվել՝ ըստ առաքյալի. «Որին՝ ըստ հարկի, որին՝ ի պատիվ, բայց ոչ ոքի պարտական մի՛ եղեք» (Հռոմեացիս 13.7-8), բայց եթե մարմնի տկարության պատճառով չեն կարող հատուցել, այդ պատճառով պարտավոր են ներել իրենց պարտապաններին, որպեսզի իրենցն էլ ներվի. «Որովհետեւ նրանց համար էլ տեղ կա երկնքում։ Չեր անձերի տեղը չեք, քանի որ մեծ գնով գնվեցիք», – ասում է առաքյալը (Ա Կորնթացիս 6.19-20)։

Չորրորդ-Որովհետեւ եթե որեւէ մեկը առեւտուր է անում, ըստ արժեքի է առնում ապրանքը, իսկ եթե դրանը պակաս է լինում, պարտք է մնում կամ աղերսանքով ներվում է։ Այսպես էլ Քրիս-

տոսը մեզ խոստացել է երկնքի արքայությունը, որ անգին է, եւ մենք Քրիստոսի համար քիչ ենք չարչարվում, որովհետեւ առաքյալն ասում է. «Այս ժամանակի չարչարանքները արժանի չեն բաղդատվելու զալիք փառքի հետ, որ հայտնվելու է մեզ» (Հռոմեացիս 8.18), քանի որ քիչ չարչարվողները մեծ բարություններ կգտնեն։ Եվ մենք պարտական ենք Քրիստոսին, որի համար եւ աղոթում ենք աղերսանքով, որ ների մեզ։ Մենք էլ այսպես պետք է ամենք. Եթե մի աղքատ իր կարիքների համար մեզանից ինչ-որ բան վերցնի եւ ամբողջական գինը վճարել չկարողանա, պետք չէ արգելք լինել, այլ տալ եւ պակասը նվիրել։ Բայց այստեղ հարց է լինում իր պարտականին՝ նոր մե՞ղք է գործում, թե՞ ոչ։ Երեւում է, որ նոր մեղք է գործում, որովհետեւ սուտ ասելը մեղք է, եւ սուտ ասողը Սատանայի որդի է, որովհետեւ ասում է՝ դու ինձ թող, ես էլ՝ իմին, բայց ինքը չի թողնում։ Սակայն վարդապետներն ասում են, թե նոր մեղք չի գործում, որովհետեւ իր կողմից չի աղոթում, այլ ընդհանուր եկեղեցու կողմից, որովհետեւ ասում է, թե թող մեր պարտքերը, դրա համար էլ նոր մեղք չի գործում, այլ հին մեղքը չի ներվում, որովհետեւ ասում է՝ թող այնպես, ինչպես իմին եմ թողնում։

Եվ հինգերորդ խոսքը. մեզ փորձության մի տանիր։

Այս խոսքով չենք խնդրում, որ փորձությունները չգան, որովհետեւ փորձությունը մեծ օգուտ է հոգուն եւ պսակն է ավելացնում, ինչպես ասում է Հակոբոսը Ընդհանրական Ուղերձում. «Երանելի է այն մարդը, որ համբերում է փորձություններին, որովհետեւ եթե փորձությունների մեջ եւս կատարյալ գտնվի, կյանքի պսակը կստանա» (Հակոբոս 1.12), այլ խնդրում ենք չպարտվել եւ Աստծո օգնությամբ հաղթել փորձությանը։

Երկրորդ-Մեր հպարտ բարքը խոնարհեցնելու համար, որպեսզի հոխորտալով մեր անձերը փորձության չենթարկենք եւ վրիպելով՝ հաղթվենք։

Երրորդ-Երբ փորձության մատնի, ձեռքից չթողնի, այլ դրա հետ նաեւ էլքը գտնի, որովհետեւ հավատարիմ է, քանի որ տկար մարմնով մենք չենք կարող փորձությունները տանել մինչեւ վերջ։ Դրա համար ասում ենք՝ «Մեզ փորձության մի տանիր»։

Յոթերորդ խնդրանքը, որ ասում է Այլ փրկիր չարից, այսինքն՝ ամեն մի չարից։

Նախ-Սատանայից, որ ամենեւին անբարի է։

Երկրորդ-Չար մարդկանցից, որոնք Սատանայի արքայակներն են, ինչպես ասում է Դավիթը. «Փրկիր ինձ, Տեր, չար մարդուց, անիրավ մարդուց փրկիր ինձ» (Սաղմոս 140.1)։

Երրորդ-Վշխարհի ցանկություններից, որովհետեւ դրանք թշնամություն են Աստծո նկատմամբ։

Չորրորդ-Չարի մեղքերից, որոնց հավիտեանական դարձանքիչն է։

Հինգերորդ-Դժոխքից, ինչպես ասում է մարգարեն. «Տեր, իմ անձը հանիր բանտից» (Սաղմոս 142.7)։

Վեցերորդ-Չար մահից, ինչպես ասում է Դավիթը. «Մեղավորի մահը չար է» (Սաղմոս 33.22)։

Չորրորդ-Չարի մեղքերից, որոնց հավիտեանական դարձանքիչն է։

Իսկ ամենը եզրակացությունն է, որպես թե ասենք՝ ով Տեր Հիսուս, ինչ որ սովորեցրի մեզ աղոթել, ավարտեցինք, ինչ որ խնդրում ենք Քեզանից, թող լինի մեզ այս եւ հանդերձյալ կյանքում։

Եվ պետք է իմանալ, որ առաջին երեք տեսակի խնդրանքներն այս կյանքում չեն կատարվում, որովհետեւ այս կյանքում չի լինում կատարյալ սրբություն, երկնքի արքայությունը չկա այստեղ, մարդու եւ Աստծո կամքն այստեղ կատարելապես մեկ չի լինում, այլ՝ հանդերձյալ կյանքում։ Իսկ վերջին չորս խնդրանքներն այս կյանքում են կատարվում, որովհետեւ հանդերձյալ կյանքում մարմնավոր հաց պետք չէ, եւ մեղք չկա, որ թողնվի, եւ փորձող չկա, որից ազատվենք, եւ չար չկա, որից փրկվենք։ Եվ այս յոթ կարգի խնդրանքներից ավելին պետք չէ խնդրել, որովհետեւ բովանդակում են բոլոր խնդրանքները, որ օգուտ է հոգուն եւ մարմնին։

Մենք միայն այն ժամանակ ենք Հայր Աստծո հարազատ որդիները, երբ սպանում ենք չարի զավակներին, եւ ապրեցնում հոգեւոր զավակներին.

Մեռցնում ենք հպարտությունը եւ ապրեցնում խոնարհությունը։

*Մեռցնում ենք նախանձն ու արեւելությունը եւ ապրեցնում սեղոյ։*

*Մեռցնում ենք բարկությունը եւ ապրեցնում համբերությունը։*

*Մեռցնում ենք խոտվությունը եւ ապրեցնում խաղաղությունը։*

*Մեռցնում ենք ազատությունը եւ ապրեցնում ողորմածությունը։*

*Մեռցնում ենք որկրամոլությունը եւ ապրեցնում պարկեշտությունը։*

*Մեռցնում ենք բողոքախոսությունը եւ ապրեցնում ողջախոսությունը։*

*Մեռցնում ենք ծուլությունը եւ ապրեցնում արիությունը։*

Որովհետեւ այսպես անելով՝ ընդունելի է լինում մեր աղոթքը, որ ասում ենք Հայր մեր, որ... Որով է մեզ բոլորիս թող արժանի անի Քրիստոս Աստված իր եղբայրությանը, երկնավոր Հոր որդիությանը եւ բոլոր սրբերի հետ երկնքի արքայության ժառանգորդ լինելուն հավիտյան հավիտենից։ Ամեն։

**«Գիրք քարոզության, որ կոչի ձմեռան հապոր», Կ.Պոլիս, 1740թ., էջ 309-314, www.qahana.am**



# ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻ

# Սողոմոնի առակների մեկնությունը

### Հարց. Ինչո՞ւ էին Սողոմոնը եւ մյուս մարգարեները եւ Տերը Ավեդարանում առակներով խոսում:

**Պատասխան.** Երեք պատճառով: Նախ, որովհետեւ առակը օգտակար է խոսքին եւ բացատրում է ասվածը: Երկրորդ, որովհետեւ առակը հասկանալի է սիրելիներին, իսկ օտարներից ու անարժաններից՝ ծածկված, ըստ այնմ: «Լսելով կլեսեւ եւ չեմ իմանա եւ այլն» (Ես. 6:9): Երրորդ, որովհետեւ ինչպես երեւացող բաներին նայելով՝ աներեւոյթներն ենք ճանաչում, այնպես էլ երեւացող օրինակն ու խոսքը լսելով՝ մտքի մեջ աներեւոյթներն ենք ճանաչում:

Քանզի խոսքը երեք կերպ է լինում, այսինքն՝ ընդհանուր խոսք, առակավոր խոսք, իմաստության խոսք: Արդ, ընդհանուրն ամեն մարդու խոսքն է, առակավորը՝ աշակերտների ուղղված խոսքը եւ իմաստության խոսքը իմաստուններինն է:

### Հարց. Ի՞նչ է առակը եւ ի՞նչ է օրինակը:

**Պատասխան.** Առակը խոսքով է, իսկ օրինակը՝ առարկաներով: Դարձյալ, առակը գործողությանն է վերաբերում, ինչպես դա լինում է գործելու եւ կրելու սեռերում, իսկ օրինակը՝ ձեւին, ինչպես քանակի ու որակի սեռերում: այն բաների, որոնք համեմատվում են:

### Հարց. Ինչո՞ւ Սաղմոսները եւ Առակները չափածո են:

**Պատասխան.** Սաղմոսը երգ է, դրա համար էլ չափածո է, իսկ Առակները խրատ են մանկանց, որի համար էլ չափածո են եւ հեշտալուր: Պետք է գիտենալ, որ Սուրբ Գրքի գրվածքները չորս տեսակի են բաժանվում. կա, որ խոսքը երկար է, իսկ միտքը՝ չափածո, ինչպես Մովսեսինը, որ թանձրամիտ ժողովրդին էր խոսում: Կա, որ խոսքը չափածո է եւ միտքը երկար, ինչպես Զորք, Սաղմոսները եւ Երգ Երգոցը: Կա, որ խոսքը եւ միտքը չափածո են, ինչպես Առակները եւ Միրաքը, քանզի խրատական են: Կա, որ խոսքը եւ միտքը երկար են, ինչպես Եսային եւ այլ մարգարեները:

Պետք է իմանալ նաեւ, որ Սողոմոնի երեք գրքերը խրատ են մարդու երեք հասակի համար. Առակները՝ պատանիներին, Ժողովողը՝ երիտասարդներին, իսկ Երգ Երգոցը՝ ծերունիներին: Դարձյալ, Առակները մեզ սովորեցնում են բարոյական առաքինությունները, Ժողովողը՝ ձեռքբերովիները եւ Երգ Երգոցը՝ աստվածայինները: Դարձյալ, Առակներն արտաքին սրահն է, մյուսը՝ Սրբությունը եւ Երգ Երգոցը՝ Արթւթյունը Սրբոցը: Եվ դարձյալ, Առակներով գալիս ենք հավատի իմաստությանը, աշխարհի ունայնությանը՝ երկնավոր հույսին, եւ Երգ Երգոցը՝ Աստծո անախտ սիրուն, որ լրացնում է ամեն ինչ: Քանզի երբ ոտնակոխ ենք անում մարմնի կամքը եւ հեռանում ենք աշխարհից, այն ժամանակ կարողանում ենք սուրբ սրտով սիրել Աստծուն:

### Հարց. Ի՞նչ է իմաստությունը, որի մասին Սողոմոնը ասում է. «Ճանաչել իմաստությունը» (Առակ. 1.1):

**Պատասխան.** Իմաստությունը խոսքը բազում տեսակներով է բացատրվում եւ սրանք բոլորը մտքի քննության ներգործությունն են, եւ ոչ՝ զգայարանների: Նախ, ասվում է նրանց իմաստության մասին, ով-

քեր եակների բնությունը քննեցին, այսինքն՝ երկնքի եւ երկրի, ինչպիսիք էին հունաց իմաստունները: Երկրորդ, ասվում է զանազան արվեստների հմտության իմաստության մասին, ըստ այնմ թե. «Ո՛վ տվեց կանանց նկարակերտության իմաստությունը» (Զորք 38:36): Երրորդ, ասվում է բնական բանականության իմաստության մասին, ովքեր, խոսքերից տեղեկանալով, ըմտրում են ստույգը ստից: Զորքորդ, կատարյալ եւ անհամեմատ իմաստությունը՝ աստվածային լույսով հավելու հոգեւոր եւ իմանալի կյանքին, մերկանալ մարմնական կրքերից եւ ունենալ սեր առ Նա: Այս իմացումը Տերը հավատ է անվանում եւ Գովհաննես ավետարանիչը լույս, իսկ սա [Սողոմոնը] իմաստություն:

### Հարց. Ի՞նչ է հանճարը:

**Պատասխան.** Բանականությունը [գրաբարում հանճար] կարծիք է կապված ուղիղ խորհրդի հետ: Եվ ստուգաբանվում է հանճար, այսինքն՝ անհնար է չլինելը, այլ ամեն դեպքում լինելու է: Եվ հանճար է ասվում, քանի որ ապագայի մեջ է նրա ավարտը, ինչպես մահը, քանի որ անճար է եւ ակամա է պատահում: Իսկ հասակով եւ իմաստությամբ անմիտները արհամարհում են մահվան եւ հանդերձյալ օրվա խրատը, քանի որ այդ օրը դեռ վրա չի հասել: Իսկ ովքեր ունեն ուղիղ միտք, գիտեն, որ կա Աստված եւ երկնավոր կյանք, եւ հետմահու հարությունն եւ հատուցում բարի եւ չար գործերի: Իսկ կարծիք է ասվում, քանի որ չի ընկալվում զգայարաններով, ինչպես արեգակի լույսը եւ մյուսերի ձեւերը եւ գոյերի տեսակները:

### Հարց. Ի՞նչ է նշանակում խոսքի դարձվածքները ընկալելը (Առակ. 1.3):

**Պատասխան.** Խոսքի դարձվածքները պատասխանի մասին է ասվում, այսինքն՝ ինչ որ անիրաժեշտ է աշակերտին, միայն լսել խրատողին եւ դյուրահավան լինել, ինչպես Եվան օձի խրատին, սակայն պետք է դարձյալ հարցնել եւ քննելով ստույգն իմանալ, ինչպես կոչյա Մարիամ Աստվածածինը: Քանզի հրեշտակի խոսքերից խոռվեց, քանի որ «Այր մարդ չեմ ճանաչում», ասաց (Ղուկ. 1:34): Իսկ հրեշտակից ընդունելով խոսքի պատասխանը, թե՛ Աստծո գործ է եւ Նրա կամքով, հավանեց՝ բազում օրինակներով տեսնելով ավելի առաջ եղած գերբնական գործերը: Նույնպես եւ դու, ով մանուկ, ասում է Սողոմոնը, երբ խրատողը քարոզի քեզ թե՛ մի՛ խնդիր որովայնդ, մի՛ պծնվիր զգեստներով, մի՛ ցանկացիր օտար գեղեցկության, այնժամ մտքիդ մեջ տարակոչյա մի՛ պահիր, թե՛ «ինչո՞ւ՞ չուտեմ եւ չզարդարվեմ եւ չցանկանամ, երբ բնությունս պահանջում է», դրանով արհամարհելով խրատողի խոսքը: Այլ ի՞նչ անել, հարցուն նրանից պատճառը, թե՛ ինչո՞ւ՞ եւս հրամայում այդ, եւ նա կարող է խոսքի դարձվածքով ճշմարիտ արդարության [խոսքը] քեզ ուղղել: Այսինքն՝ երբ սակավ ես ուտում, միտքդ սուրբ է մնում, եւ զգեստի փոխարեն լուսեղենն է քեզ պատրաստված, եւ ախտավոր ցանկության փոխարեն Քրիստոս է բնակվում քո մեջ: Եվ [այդ ժամանակ] կիսամաձայնեմ, թե սա ավելի վսեմ է, քան մյուսը, եւ արդարությունը կուղղես դեպի քեզ:

### Հարց. Ի՞նչ է նշանակում արտաքին իմաստուններից մեկի խոսքը, թե՛ միայն իմաստա-

### սերի հոգին է անմահ:

**Պատասխան.** Այսինքն՝ առանց վարժանքի եւ կրթության առաքինությունն հնարավոր չէ ստանալ, որով հոգին ապրում է հավիտյան:

### Հարց. Ինչո՞ւ է ասում. «Ով խելամիտ է, առաջնորդություն ստանալ» (Առակ. 1.5):

**Պատասխան.** Չորս պատճառով: Նախ, որովհետեւ ասված խոսքերը կարող են գործով ցույց տալ եւ բարի օրինակ լինել: Երկրորդ, որպեսզի ուրիշներին հավանության բերեն իրենց հանճարով՝ ողորջելով կամ աստելով: Երրորդ, որպեսզի պատշաճ դատաստան անեն: Զորքորդ, որպեսզի հասկանան առակները եւ խորին խոսքերը, իմաստունների ճառերը եւ նրանց առակները, ինչպես ասում է հետագայում (Առակ. 1:6):

Եվ պետք է իմանալ, որ Սողոմոնը տասը տեսակի օգուտի մասին հայտնեց խրատվողների ուսման մեջ: Նախ, որ ասում է ճանաչել իմաստությունը եւ խրատը: Երկրորդ, իմանալ բանականությունը: Երրորդ, սովորել խոսքի դարձվածքները: Զորքորդ, հասկանալ ճշմարիտ արդարությունը: Գինգերորդ, ուղղել իրավունքը գործով: Վեցերորդ, խորագետ լինել, այսինքն՝ հեռավոր բաները իմանալ: Յոթերորդ, միտք եւ խելամտություն ստանալ:

Ութերորդ, իմաստունն ավելի իմաստուն լինի: Իններորդ, խելամտությամբ առաջնորդ լինի: Տասներորդ, թափանցել առակների եւ իմաստունների խորին ճառերի մեջ: Միս այս բոլորը վարդապետից է օգուտ լինում աշակերտներին:

### Երկյուղի մասին հարց. Ինչո՞վ են տարբերվում ծառայական եւ որդիական երկյուղը:

**Պատասխան.** Ծառայական երկյուղը պատժին է նայում մեղքի պատճառով, իսկ որդիական երկյուղը՝ երեսի պատկառանքին: Դարձյալ, որդիական երկյուղը նայում է մեղքի սկզբնավորությանը, իսկ ծառայականը՝ վերջավորությանը, տանջանքի պատճառով: Դարձյալ, ծառայական երկյուղը համեմատվում է հավատի հետ, վարձկանականը՝ հույսի հետ, եւ որդիականը՝ սիրո հետ: Եվ սրանք բոլորը բարի երկյուղ են կոչվում: Այլ է վատթար եւ չար երկյուղը, որ պատշաճ է սնտի բաներով, եւ վախեցնում է այնտեղ, ուր երկյուղ չկա: Այն է, որ ասում է. «Վախեցա եւ թաքցրի քանքարը» (Մատթ. 25:25): Այդպիսի վատթար երկյուղը կապված է հուսահատության եւ թուլության հետ, մինչդեռ բարի երկյուղը՝ արիության եւ հույսի: Քանզի հույսը եւ արիությունը ցամառ բարիքներն են, իսկ հուսահատությունն ու թուլությունը՝ նրա վատթարությունը:

### Հարց. Ի՞նչ է նշանակում.

### «Լսի՛ր, որդյակ, հորդ խրատը եւ մի՛ մերժիր մորդ պարվիրա-նը» (Առակ. 1.8):

**Պատասխան.** Պետք է իմանալ, որ մեր Հայրը Աստվածն է, որ ծնեց մեզ կենդանի հույսի համար, եւ խրատում է մեզ բազում դաստիարակների միջոցով, որ կան եկեղեցուն, այսինքն՝ Սուրբ Գրքերով եւ վարդապետներով: Իսկ մեր Մայրը նույն ինքը եկեղեցին է, ըստ առաքյալի. «Ազատ Վերին Երուսաղեմը, որ մեր բոլորի Մայրն է» (Գաղ. 4:26): Իսկ սա օրենք է դնում հայրապետների ձեռքով, որոնք եկեղեցու անդամիկ որդիներն են մեզ կրտսեր որդիներին համար: Գլխի շնորհաց պսակը (Առակ. 1:9) Քրիս-

տոսի հետ թագակից լինելն է, ըստ այն խոսքի, թե. «Ծառա չենք, այլ որդի, Աստծո ժառանգ եւ Քրիստոսի ժառանգակից» (Յո. 8:17): Այս բանը մեզ շնորհում է երկնավոր Հայրը ըստ Եսայու. «Ընդունեցե՛ք վայելչության թագը Տիրոջ ձեռքից» (Ես. 62:3): Իսկ ոսկի մանյակը, որ լանջագեղ կամարն է, անապական կենաց հույսն է մեր սրտում հաստատված, որ տվեց մեր Մայրը՝ Սուրբ եկեղեցին, քանզի անապական է ոսկու բնույթը:

### Հարց. Ի՞նչ է նշանակում. «Իմաստությունը գովաբանվում է ճանապարհների վրա» (Առակ. 1.20):

**Պատասխան.** Նախ պետք է հասկանալ, որ իմաստությունն ասելով՝ նկատի ունի Քրիստոսին, ըստ այնմ. «Քրիստոս Աստծո զորությունն ու իմաստությունն է» (Ա Կոր. 1:24), որ ելավ Հորից, դեպի մեզ ճանապարհորդեց իր մարդեղությանը, եւ հրապարակներում հայտնապես քարոզեց աստվածապաշտության մասին: Դարձյալ, իմաստություն է նախ, ճանաչել Աստծուն, թե Աստված է: Երկրորդ, թե՛ տալիս է հանգիստ բարիներին եւ տանջանքներ՝ չարերին: Երրորդ, նույն բանը միշտ խոսվալ եւ երկնյի պատժի պատճառով է հանգստի համար սիրել Աստծուն: Զորքորդ, իմանալ, որ Աստծուց սրված օրենքները օգնական են մեր բնությանը, եւ հրաժարելի բաներից փախչել եւ հանձնառելիները կատարել: Իսկ նրանք, որ իրենց մեջ ունեն այս իմաստությունը, գովաբանվում են Աստծուց, հրեշտակներից եւ մարդկանցից: Աստծուց գովաբանվում են ինչպես Հորը, հրեշտակներից՝ ինչպես Դանիելը, մարդկանցից՝ ինչպես բոլոր սուրբերը: Իսկ ճանապարհը այս կյանքի ընթացքն է ծննդից մինչեւ մահվան կետը: Դարձյալ, ճանապարհ կարելի է պարզ կերպով հասկանալ, որպես այն, որ նա, ով ողորմում է, ողորմություն կգտնի, հեզ լինի, որպեսզի ժառանգի երկիրը (Սաղմ. 36:11, Մատթ. 5:5) եւ այլն:

### Հարց. Ի՞նչ է նշանակում. «Ինչպես մրիկ կգա ձեր վախճանը» (Առակ. 1.27):

**Պատասխան.** Օրհասական մահվան մասին է առակով խոսում ըստ նրա յոթ հատկությունների: Նախ, քանի որ մրիկը հանկարծակի է, նույնպես է մահվան օրը չգիտենք: Երկրորդ, ի վերուստ է հարվածում. նույնպես եւ Աստծուց է մահվան հրամանը: Երրորդ, ուժգին է մրիկը, նույնպես եւ ցարսնալի է տարածան մահը: Զորքորդ, պատվելով է շրջում, նույնպես եւ մահվանից ոչ ոք չի կարող փախչել: Գինգերորդ, մթություն է սփռում մրիկը, նույնպես եւ խավարեցնում է մահը եւ մութը: Վեցերորդ, կործանող է մրիկը, նույնպես եւ մահը մարմինը սուզում է գերեզմանի մեջ: Յոթերորդ, շարտում է մրիկը, նույնպես եւ մահը հոգին ակամա նետում է դեպի հանդերձյալ կյանքը:

### Հարց. Ինչո՞ւ է ամեն փեղ ասում որդյակ եւ ոչ՝ որդի:

**Պատասխան.** Չորս պատճառով: Նախ, որովհետեւ գործով ունի խրատը լողների հանդեպ: Երկրորդ, ցույց է տալիս, որ մանուկ են հասակով եւ իմաստությամբ: Երրորդ, սիրուց է այս կոչումը, ինչպես եւ զավակ անունը: Զորքորդ, նկատի ունի ըստ շնորհի որդիներին, որոնք խրատի եւ Հոգու որդիներ են, որոնք թե՛ Աստծո պատգամներն է հայտնում, թե՛ ինքն

է խրատում:

### Հարց. Ի՞նչ է նշանակում. «Որդյակ, եթե իմ պարգամներն ու պարվիրանները ընդունես, պահիր դրանք հոգուդ մեջ» (Առակ. 2.1):

**Պատասխան.** Գենց այն, ինչ որ նաեւ Տերն է ասում. «Թե՛ ողորմություն անես, թե՛ աղոթք կամ պահք, մարդկանց ցույց տալու համար մի՛ արա, այլ քո Հորը ծածկապես, եւ Նա կհատուցի քեզ հայտնապես» (Մատթ. 6:4): Նույնպես եւ սա կամենում է աշակերտներին մարդահաճությունից հեռացնել:

### Հարց. Ի՞նչ է նշանակում. «Վա՛յ նրանց, ովքեր ուղիղ ճանապարհը թողած, կզանախավարի ճանապարհով» (Առակ. 2.13):

**Պատասխան.** Վայ բառն այն բաների մասին ենք ասում, որոնց ձգտելով չենք հասնում, շրջվում եւ ապաշավում ենք կրած վճարի վրա: Նմանապես նա խոսքը աջ կողմի իրերից դարձնում է ձախ կողմինների վրա: Եվ քանի որ չեն լսում, սգում է նրանց կորուստը, ինչպես ասենք, տեսնող մեկը կույրին տեսնելով՝ քարանձավի վտանգների միջով ընթանալիս, ծայր է տալիս նրան ետ դառնալ, իսկ նա չլսելով կորչում է. նա ոչ թե ակամա կորավ, այլ իր կամքով, քանի որ կարծում էր, թե իր ճանապարհն ուղիղ էր եւ կանչողին չէր հավատում: Նույնպես էլ չարերը, որոնք խավար կյանքով են ապրում, կարծելով թե այն է միայն բարի եւ այլ կյանքի չեն հավատում: Դրա համար էլ քարոզողին չեն լսում եւ չեն դառնում մեղքերից:

Բայց պետք է գիտենալ, որ ամեն խրատական խոսք երկու կերպով է որոշվում, այսինքն՝ լսողներին եւ արհամարհողներին: Այս բանը եւ Տերը նշանակեց, ասելով. մի մարդ երկու որդի ուներ. մեկը լսեց, եւ մյուսը չլսեց (Մատթ. 21:28): Եվ դարձյալ, եթե մեկը լսի իմ խոսքերը եւ կատարի, մեկն է իմաստունի, իսկ նա, որ չի լսում, մեկն է հիմարի (Մատթ. 7: 24): Նույնպես եւ սա խրատում է մերք ընդ մերք ասելով, որդյակ, մի՛ գնա չարերի ճանապարհով եւ թող չխաբեն քեզ, եւ իմաստուն եղիր եւ այլն: Եվ երբեմն էլ խոսքը ուղղում է խրատները արհամարհողներին՝ ասելով. «Թյուր են նրանց ճանապարհները եւ կամակոր են նրանց շավիղները եւ այլն» (Առակ. 2:15):

### Հարց. Ի՞նչ է նշանակում. «Ով երիտասարդ ժամանակ թողել է ուտումը եւ մոռացել Աստծո ուխտը» (Առակ. 2.17):

**Պատասխան.** Մանկական հասակը մեղքի փուշ չի պարունակում. ընդունում է ամեն խրատ եւ անմոռաց պահում: Իսկ երբ չի վարժվում խրատներով, հասակն աճելուն գուզընթաց աճում են նաեւ ախտերը: Այդ ժամանակ անձնիշխան կամքով հետամուտ է լինում ախտին եւ այլնա չի հավանում աստվածային ուխտին եւ պատվիրաններին: Սա հրեաների ուխտի մասին է խոսում, որն ասում է. «Բոլոր պատվիրանները պահելով կօրհնվի դաշտում քո արջառը եւ քո ոչխարը» (Բ Օր. 7:13): Իսկ մեզ Տերը Ավետարաններով օրհնեց, որ ասում է. «Իմ Հայրը ինձ ուխտեց արքայություն եւ ես ձեզ եմ խոստանում, որպեսզի բազմեք տասներկու գահերի վրա» (Ղուկ. 22:29): Իսկ այս ուխտը անմոռաց կպահեն նրանք, ովքեր մանկությունից Սուրբ Գրքին են հետևում, ըստ այն խոսքի, որ գրում է առաքյալը աշակերտին. «Մանկուց գիտես Սուրբ Գիրքը, որը կարող է իմաստուն դարձնել քեզ» (Բ Տիմ. 3:15):



# ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻ «Երգ երգոց»- ի մեկնությունը

### Հատված

Համառոտ ամփոփում երգ երգոցի մեկնության տեսության: Աշխատասիրեց Գրիգոր հսկողը՝ արի եւ երջանիկ հռետորը, հայոց քաջ փիլիսոփան, աշակերտը եռամեծ Հովհան Ռոտունցու, Վարդան վարդապետի լուսավոր խոսքերից: Ո՛վ ամենագոր Յոզիկ Սուրբ Աստված ճշմարիտ, եղկելուս տկարությունը Դու գորացրու, որով սկսած գործս Դու կատարիր: Եվ Քեզ փառք, հավիտյանս, ամեն:

### Հարց. Ինչո՞ւ այս [գիրքը մյուսներից] հեղու է դրված:

**Պատասխան.** Սա Սողոմոնի գրքերի մեջ նույն կարգին է պատկանում, ինչ որ ժողովրդի գիրքը: Նախ, որովհետեւ երեք գրքերը խրատ են երեք հասակներին: Երկրորդ, որովհետեւ վերջին աստվածաբանությունն է: Իսկ վարդապետները այստեղ են դրել, նախ, որովհետեւ երեք գրքերը սովորեցնում են իմաստություն, հավատ եւ հույս, իսկ սա՛ սեր, որ կատարումն է ամեն ինչի: Երկրորդ, սովորելով Հոգու իմաստությունը, դրանից հետո կարող ենք [Բանի] մարդեղության խորհուրդը հասկանալ: Իսկ ըստ առաքյալի, «ոչ ոք Հիսուսին չի կարող Տեր անվանել, եթե ոչ Սուրբ Հոգով»:

### Հարց. Ինչո՞ւ է արքայությունը ծածկված գանձ անվանում (Մատթ. 13.44):

**Պատասխան.** Չորս հատկության պատճառով: Նախ, գանձ է եւ փարթամություն, որովհետեւ ծածկված է շատերից: Որովհետեւ գտնում են փնտրողները, եւ գնում են այն: Եվ շատերի կողմից է տեսնվում արքայությունը: Նախ, որովհետեւ արքայություն է նույն Ինքը՝ արքայորդին Քրիստոս, որ ծածկված է մարմնի ազարակում: Երկրորդ, արքայություն է հավիտենական կյանքը, որ ծածկված է երկնքում: Երրորդ, արքայություն է Սուրբ Գիրքը՝ ծածկված առակներով եւ գրեթե: Չորրորդ, արքայություն է Սուրբ Եկեղեցին՝ երկնի արքայության բնակիչները: Հինգերորդ, արքայություն է մարդու հոգին, որովհետեւ երկնային Արքայի պատկերն է, ըստ այնմ: «Աստծո արքայությունը ձեր ներսում է» (Ղուկ. 17.21): Վեցերորդ, արքայություն է եկեղեցու խորհուրդը, որպես արքայություն տանող, եւ ծածկված է մարմնական նյութով:

### Հարց. Ինչո՞ւ վարդապետները աղբյուր են կոչվում:

**Պատասխան.** Չորս պատճառով: Նախ, որովհետեւ աղբյուրը միշտ բխում է դեպի պարտեզները եւ այգիները, իսկ վարդապետը միշտ բխում է եկեղեցիներում: Երկրորդ, գովազդում է հոգիների ծարավը, ինչպես որ այն մարմիններից: Երրորդ, սրբուն է մեղքերի աղտեղությունը: «Դուք սուրբ եք այն խոսքի պատճառով, որ խոսեցի ձեզ» (Հովհ. 15.3): Չորրորդ, կենդանություն է բույսերի համար եւ մղում է ծաղկման եւ պտուղ տալու: «Այն խոսքը, որ ես խոսեցի ձեզ, հոգի է եւ կյանք» (Հովհ. 6.64), եւ մղում է դեպի հավատք եւ զանազան բարի գործեր:

### Հարց. Ինչպե՞ս են չարչարվում վարդապետները:

**Պատասխան.** Վարդապետները մտքով եւ հոգով են չարչարվում: Եվ դա առավել է, քան մարմնի չարչարանքը ըստ չորս պատճառի: Նախ, որովհետեւ միշտ են չարչարվում:



Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի Գարանաղի (Կամախ) գավառում (Սեպուհ լեռան արեւելյան լանջին) գտնվող Թորոսան (Թորոսան) գյուղում Գրիգոր Լուսավորիչը ծամանակին կառուցել փվեց մի եկեղեցի: Այսօր էլ նա թաղվել մի քանի կաթողիկոսներ Լուսավորչի փոխից եւ Արշակունի թագավորներ: Այսօր էլ թաղվել Գրիգոր Լուսավորիչը եւ Տրդատ Գ թագավորը:

Որոպեսու հեթ Տաթևացին այցելել է Լուսավորչի գերեզման, որտեղ էլ ձենադրվել է վարդապետ:

Երկրորդ, հեռավոր եւ անտես բանի համար: Երրորդ, անմարմնի դեմ: Չորրորդ, քանի որ անտեսանելի է մարդկանց կողմից, իսկ մարմնի աշխատանքը ընդհատվածներով է, մերձավորի հետ է մարմնով է եւ տեսանելի է շատերի համար:

### Հարց. Ովքե՞ր են, որ չարչարվում են ինչպես մարմնով, այնպես էլ հոգով:

**Պատասխան.** Չորսն են: Նախ, ծույկերը եւ ծամծրացողները: Երկրորդ, նա, ով սովորում է եւ խոսում աճօգուտ իմաստությունը, ինչպես հեղեղները: Երրորդ, ովքեր այս աշխարհում հեշտամբների մեջ չարչարվում են, որ սուտ է եւ ունայն: Չորրորդ, եթե մեկը հոգեւոր գործ է անում ոչ Աստծո փառքի համար, այլ իր փառքի համար, «այդ է նրանց վարձքը», ասում է Տերը (Մատթ. 6.2): Իսկ սրանցից բացի ով չարչարվում է մարմնով՝ արդարանում է հոգով, ըստ այն խոսքի, որ «ով չարչարվում է մարմնով, դադարում է մեղք գործելուց» (Ա Պետ. 4.1):

### Հարց. Ինչպե՞ս են տալիս պարտքի գիրք եւ այդ ամենը ջնջվում է առանց սպիի:

**Պատասխան.** Չորս կերպ պետք է հասկանալ: Կամ խոստովանությամբ, քանի որ լեզուն որպես արագագիր գրիչ մեղքերի թանաքի մեջ թաթախելով, օդի վրա գրում է որպես մատյանի վրա եւ տալիս քահանայի լսողությանը եւ նա, ինչպես կրակն է խռիվը ոչնչացնում կամ ջուրն է գիրը ջնջում, այդպես մաքրում է մեղքը: Երկրորդ, խոսքով աղոթքի մեջ հիշատակելը: Երրորդ, գրքի մեջ որպես հիշատակ գրելը: Չորրորդ, մեկնությունների գրքում գրելը եւ ընթերցողներին տալը եւ դա է ստացված քանքարների դիմաց տրված պարտքը (հմմտ. Մատթ. 25.14-19), եւ դրանք ընթերցմամբ եւ ուսմամբ ազատում են նրան պարտքից: Մեղքը փուշ է, ծերությունը՝

ապառաժ, անկրթությունը՝ ամայություն. եւ սրանցից պտուղ չի լինում, այլ Աստծո կարողությամբ [է լինում]: Մովսեսի աղոթքով, ժողովրդի հույսով վեմը արդյուր բխեց, անապատը մանամայով լցվեց եւ չոր գավազանը պտուղ բերեց:

### Հարց. Ինչո՞ւ է Գրիգորը արթուն միջոց կոչվում:

**Պատասխան.** Գրիգորը հսկող եւ արթուն է նշանակում: Եվ պետք է իմանալ, որ վեց եղանակով քուն, եւ նույնքան եղանակով արթնություն է կոչվում: Նախ, մարմնի քուն: Երկրորդ՝ մեղքերի, երրորդ՝ անհավատության, չորրորդ՝ հպարտության: Հինգերորդ՝ պատրանքների: Վեցերորդ՝ ծուլության: Սրանց հակառակ, հսկող եւ արթուն էր մտքով, այսինքն արթուն էր մարմնով, արդարությամբ, հավատով, իմաստությամբ, զգուշությամբ եւ արիությամբ:

### Հարց. Ինչո՞ւ է Երգ երգոց կոչվում:

**Պատասխան.** Գերադրական է, ինչպես թագավորների թագավորը եւ սուրբերի սուրբը: Եվ բազում եղանակներով է ասվում սրբությունը: Օրինակներից մեկը Մովսեսի պատրաստած խորանն էր, որ եռահարկ էր կազմված: Երկրորդ սրբությունը սրբոցն էր, միջինը՝ սրբությունը, արտաքինը՝ սրահը: Եվ բազում բաների նշան է: Առաջին, սրբությունը սրբոց է Սուրբ Երրորդությունը, որ բնակվում է անմատույց լույսերի մեջ, որ գերազանց է սուրբ հրեշտակներից: Երկրորդ, Քրիստոս ըստ մարմնի մեջ համար սրբություն եղավ, ըստ այն խոսքի, որ ասում է. «Մեր մեղքերից սրբություն արեց» (Եբ. 1.3): Երրորդ, սրբությունը սրբոց է սուրբ Խաչը, որով ամեն ինչ սրբվում է ծածկվելով համապատասխան ձեռով: Չորրորդ, սրբությունը սրբոց է Տիրոջ մարմնի եւ արյան հաղորդությունը՝ ծածկված հացի եւ գինու տեսակով, եւ նա է ամեն խորհրդի լուսնը: Հինգերորդ, սրբությունը սրբոց է

վերամբարձ վեմը: Վեցերորդ, սուրբ է մեր հոգին, եւ սուրբերի սուրբ՝ իմացունը, որ մարմնի վարագույրով է [ծածկված]: Յոթերորդ, սրբությունը սրբոց է սուրբ գործը եւ հավատը, որովհետեւ նրանցով սրբվում ենք մեղքերից: Ութերորդ, սուրբ են ժողովուրդները, եւ նրանց սրբությունը քահանաները եւ քահանայապետները: Իններորդ, սրբությունը սրբոց է Ավետարանը Նոր Կտակարանում, եւ Երգ երգոցը Հին Կտակարանում: Տասներորդ, սրբություն է հավատը եւ հույսը, եւ սրբությունը սրբոց սերը առ Աստված:

### Հարց. Ինչո՞ւ է այս գիրքը տարբերվում նախորդներից:

Աշխարհաբարի վերածնց Մարթա Արարյանը



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

# Գրիգոր Տաթևացու ժամանակը

Կաթողիկոսական աթոռի՝ Էջմիածնում վերահաստատվելու խնդիրը

Հայոց եկեղեցական աթոռը միջնադարում դեգերումների մեջ էր: Պատմական տարբեր փուլերում այն գտնվում էր տարբեր վայրերում: Կիլիկիայի հայկական թագա-

վորության անկումից (1375թ.) եւ հայոց վերջին թագավոր Լեւոն VI-ի գերությունից հետո Սսի կաթողիկոսական աթոռը հայտնվեց չափազանց բարդ իրավիճակում (կա-

թողիկոսական աթոռը Կիլիկիայի մայրաքաղաք Սիս էր տեղափոխվել 1292թ., երբ եգիպտական մամլուքները գրավեցին Հռոմկլայ կաթողիկոսանիստ ամրոցը եւ գերեվարեցին Ստեփանոս Դ Հռոմկլայեցի կաթողիկոսին): Կիլիկիայում իրենց տիրապետությունը հաստատած մահմեդական տիրակալները ծանր հարկապետության ենթարկեցին աթոռը: Նրանք անդրհատ միջամտում էին հայոց եկեղեցու ներքին գործերին, եւ շատ հաճախ կաթողիկոսները դառնում էին նրանց կամայականությունների ու չարաշահումների զոհը: Կիլիկիայում բարենպաստ պայմաններ էին ստեղծվել նաեւ կաթողիկոսական զանազան միաբանությունների գործունեության համար: Ուժեղացել էին նաեւ ներքին երկպառակությունները: Տարբեր խմբավորումներ խարդավանքների, կաշառքի, թույնի միջոցով պայքար էին մղում կաթողիկոսական աթոռին տիրանալու համար: Բավական է նշել, որ 1382թ. մինչեւ 1439թ. կաթողիկոսական զահ բարձրացած վեց հայրապետներից եւ ոչ մեկը իր բնական մահով չմահացավ. նրանց թունավորում կամ սպանում էին հակառակորդները: Հսկայական չափերի հասավ հայ բնակչության արտագաղթը: Նման պայմաններում, բնականաբար, աթոռն այլեւ անկարող էր լինել հոգեւոր եւ մշակութային կապ հաստատել հայկական գաղթավայրերի հետ, ծավալել ազգային եկեղեցական կյանք: Կիլիկիայում մեկուսացված Սսի կաթողիկոսությունը հեղինակագրվելով հետզհետե խորթանում էր բուն Հայաստանի բնակչությունից: Այն այլեւ դադարել էր բովանդակ հայության համազգային-եկեղեցական շահերն արտահայտող կենտրոն լինելու իր առաքելությունը, դարձել իշխող մահմեդականների շահատիրությունների, զեղծումների ու անմիաբանության արտահայտիչ: Ահա թե ինչու գնալով օրվա խնդիր դարձավ կաթողիկոսական աթոռը Սսից Մայր Հայաստան տեղափոխելու հարցը: Այս գաղափարը նոր չէր: Առաջին անգամ այն բարձրացվել էր դեռեւս 13-րդ դարի վերջերին, երբ

եգիպտական գործերը գրավեցին ու ավերեցին Հռոմկլան (1292թ.)՝ հայոց կաթողիկոսների նստավայրը: Այս դեպքից հետո էր, որ հայտնի եկեղեցական գործիչ, Սյունյաց թեմի առաջնորդ, պատմագիր Ստեփանոս Օրբելյանը գրեց իր նշանավոր «Սուրբ Կաթողիկեի ողբը» պոեմը, որտեղ բաղձանք էր արտահայտում Վաղարշապատում վերականգնված տեսնել «թագավորի գահին ու կաթողիկոսի աթոռը»: Այս գաղափարը հետագայում փայտաբան էին նշանավոր գործիչներ Հովհան Ռոտունցեցի, Գրիգոր Տաթևացի, հայ հոգեւոր ու մշակութային շատ ուրիշ գործիչներ: Դա բովանդակ հայ ժողովրդի բաղձանքն էր, մեծ երազանքը:

Կաթողիկոսական աթոռի դերն ու նշանակությունը վերականգնելու եւ ամրապնդելու համար այն պետք է վերահաստատվեր իր նախնական տեղում՝ Ս. Էջմիածնում: Այդ ժամանակաշրջանում հայոց հոգեւոր-մշակութային կյանքում չափազանց մեծ էր Տաթևի համալսարանի դերը: Գրիգոր Տաթևացու ջանքերով 1409թ. Աղթամարի կաթողիկոսությունը դարձավ Ամենայն Հայոց կաթողիկոսության ենթակա թեմ: Կաթողիկոսական աթոռի տեղափոխությունը դարձել էր հայոց եկեղեցու օրակարգային ամենաառաջնային հարցը: Հարձման նախաձեռնությունն իրենց ձեռքն են վերցնում Սյունյաց եւ Վասպուրականի հոգեւորականության ներկայացուցիչները: Գրիգոր Տաթևացու վախճանվելուց հետո այդ գործը զլխավորեցին նրա նշանավոր աշակերտներ Թովմա Մեծոփեցին եւ Հովհաննես Հերոնդեցին: Վերջիններս XVդ. 30-ական թվականներին պարբերաբար հանդիպումներ են ունենում Սեծ Հայքի նշանավոր վարդապետների, թեմակալ առաջնորդների, աշխարհիկ նեծատունների հետ: Քայլեր են ձեռնարկվում նաեւ Ս.Էջմիածնի վանքը տնտեսապես հզորացնելու եւ բարվոք վիճակ ստեղծելու ուղղությամբ: 1431թ. Սյունյաց իշխան Ռուստամ Օրբելյանը Ս. Էջմիածնի նվիրում է յոթ խոշոր գյուղեր՝ Վաղարշաճարունակությունը՝ էջ 36



Սսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի







# ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻ Առակներ եւ գրույցներ

(Առակ)

Վարդապետներից մեկը, երբ ծերացավ՝ կուրացավ. եւ ամեն ժամ ցանկանում էր սուրբ սրբով քարոզել: Չանձրանալով՝ պարանին մի օր փարավ նրան մի բարձր լեռ եւ ասաց. ահա՛ ժողովուրդը, քարոզի՛ր: Եվ նա քարոզեց. [մինչդեռ] ոչ ոք այնքան չկար: Օրինության վերջում ձայն եկավ հրեշտակներից, որոնք ասում էին. բարի քարոզես, ո՛ր բարի քահանայապետ (Գիրք քարոզության, Չմերան, էջ 376):

(Առակ)

Ասում են՝ մի մարդ եկավ խոստովանալու մոտ եւ ասաց. մի կղերի եմ հարվածել. նա հարցրեց. փայտով եւ հարվածել, թե թրով. եւ սա ասաց՝ թրով: Դարձյալ հարցրեց. թրի բերանով եւ հարվածել, թե՛ կողքով. եւ [սա] ասաց՝ բերանով: Դարձյալ հարցրեց. խոցեցի՞ր, թե՛ սպանեցի՞ր, եւ նա ասաց՝ սպանեցի: Ասաց խոստովանահայրը. ո՛ր թշվառական, սպանել ես եւ ասում ես, թե «հարվածեցի». ծանրագույն չե՛՞ սպանելը, քան հարվածելը:

(Առակ)

Մի թագավոր, որ իշխում էր փար թագավորների, երբ վրա հասավ մահվան օրը, հրամայեց իր պարանը կապել մի երկար ձողի եւ քաղաքով մեկ շրջելով՝ բարձր գոչել. ամբողջ թագավորությունից, ինչ ուներ արքան՝ այսքանն է փանում իր հետ:

(Ավանդույթներ)

Երբ նրա դայակը փարավ նրան Կեսարիա [եւ] քաղաքի մերձակայքում նստեց մի ծառի փակ հանգստանալու, մի թռչուն, որին ոմանք գուրգուր, ոմանք էլ դռն էն կոչում, եկավ, նստեց ծառին եւ կանչեց՝ գուր-գուր: Դայակը

կռահելով, որ Սուրբ Հոգին է [իջել] թռչնակերպ՝ աղավնու նմանությամբ, մանկանն անվանեց Գրիգոր, այսինքն թե՛ գրկված եւ զգված եղավ Սուրբ Հոգու կողմից:

(Չրույց)

Ինչպես այն թագավորը, որ բնավ չէր ուրախանում, սակայն արդար դափում էր: Եվ հարց փոխեցին թագավորին, թե ինչու չի ուրախանում: Եվ նա ասաց՝ վաղը պարասիսան կրամ: Իսկ մյուս օրը հրամայեց փողհարներին փողեր հնչեցնել, եւ [բոլորը] խիստ վախեցան: Ապա բերել փվեց եղբորը եւ մերկ նստեցրեց փքած աթոռի վրա, իսկ աթոռի փակ հոր էր. գլխի վրա կախված սուր եւ սրեր՝ առջեւից եւ աջ ու ձախ կողմերից: Եվ գուսաններ բերել փվեց, եւ ուրախություն [սկսվեց] նրա առջև: Եվ հարցրեց թագավորը. ինչու՞ չես ուրախանում, եղբայր: Եվ պատասխանեց եղբայրը. «Այսքան նեղության մեջ ինչպե՛ս ուրախանամ»: Եվ ասաց թագավորը. «Ես էլ ինձ բազում նեղությունների մեջ եմ փեսնում, որովհետեւ դու վախեցար իմ փողի ձայնից [այն դեպքում], երբ վնաս չես փվել ինձ, իսկ ես վախեցնում եմ վերջին փողից, որովհետեւ մեղավոր եւ վնասակար եմ Աստուծան»:

(Խորատ)

Ինչպես նրանք, որ սաթիինձ [գառ, նարպ ՎՆՄՄ.] են խաղում՝ հերթով ձեռքն են առնում այն եւ ձգում թասը: Եվ քանի դեռ խաղը մեկինն է՝ խաղընկերոջից բազում իրեր է փանում, իսկ ընկերը խաղող նստած [սպասում է] մինչեւ խաղը շրջվի իրեն: ...Իսկ երբ հաղթում է, խապառ կողոպտում եւ մերկացնում է ընկերոջը:

Եվ այժմ խաղը մեղավորներին է, որ ճարփար խաղում են՝ ուրելով, խմելով, հարբելով,

պռնկանալով, խլելով ու գրկելով. եւ Աստված համբերում է մինչեւ խաղը դառնա իրեն, եւ հետո ինքը կխաղա, իսկ մեղավորները կլռեն...

(Խորատ)

Ինչպես օրինակ, եթե թագավորը մի մարդու խնամելու փա բազում եւ փեսակ-փեսակ կենդանիներ, որոնցից ամեն մեկը կամ ընդակեր, կամ մսակեր, կամ խոտակեր եւ կամ հացակեր լինի, ուրեմն նրանցից ամեն մեկին անհրաժեշտ է իր կերակուրը փալ, եւ նրանք կենդանի կմնան: Իսկ եթե ընդակերին միս փա եւ առյուծին ունդ, փգեք կենդանիները չեն ապրի:

Ուստի աղաչում եմ իմաստությամբ հովվապետել սեփական ժողովուրդին:

(Խորատ)

Ինչպես, օրինակ, եթե խավարում փակված են ի ծնե կույրն ու լույսը փեսած [մարդը]: Ահա նա, որ ի ծնե կույրն է, անհոգ է, որովհետեւ համարեակ է խավարին, իսկ որ փեսել է լույսը, երեք դժվարություն է կրում. նախ կարողություն է լույսը, որից գրկվեց, երկրորդ՝ խավարի ներկայիս փառապանքը, երրորդ՝ հույսը, որ փեսնելու է այն եւ փանջվում է ուշացումից:

(Խորատ)

Եվ ինչպես, երբ ծառն են փնկում, զգուշանում եւ պահպանում են, որ ամրանա եւ պտուղ փա, այդպես էլ պետք է խրափր լսել, մտապահել, որ պտուղներին:

(Խորատ)

Ասում են իմաստունները, կորած իրը պետք է փնարել կորցրած փնդում, ինչպես օրինակ

այն, որ նեփն արձակվում է պարտեզում եւ կորչում, պետք է նույն ուղղությամբ մեկ այլ նեփ արձակել՝ առաջինը գրնելու համար:

(Խորատ)

Հարկ է, որ նրանք, ովքեր ունեն ինչք եւ հարստություն, օգնական եւ ուղորդող լինեն աղքատներին, որբերին, այրիներին. բնության կարգն է՝ սքանչուք կերակուրը բաշխում է ամբողջ մարմնին, այդպես էլ մեքե եք պարավոր մեր ունեցվածքը հավասարապես բաշխել:

Ինչպես քաղաքում փերը եւ ծառան, ճորբը եւ պարոնը, փանուփերը եւ մշակը միմյանց կարիքն ունեն, այդպես էլ հարուստը եւ աղքատը, որովհետեւ աղքատը մեծապետով է ապրում, իսկ մեծապետը՝ աղքատով կառուցվում:

(Խորատ)


Ամենայն ոք՝ առաջնորդ, թե վարդապետ կամ քահանա, եթե գովելիս եւ սիրելիս ուրախանում եւ աշխուժանում է, իսկ նախափելիս կամ չարչարվելիս փրփում եւ թուլանում՝ ժողովրդի ճշմարիտ բարեկամը չէ:

(Խորատ)

Մի թե՛ փեսանելի չէ երկրագործի օրինակով, երբ հավասար են լծում լծվորին, գործն անխափան առաջ է գնում, իսկ եթե մեկն ընթուստանում է, ընդհանուրին է խանգարում:

Բուսանիմը սիրով, կանաչիմը յուսով, ծաղկիմը հաւաքով եւ պղղաբերիմը բարի գործովք: (Գրիգոր Տաթևացի, Մեկնություն Մապոթեի):

**Առակների աշխարհաբար փարբերակը՝ Սուսաննա Գրիգորյանի**



Մեծփա վանքի ավերակները: Վանքում 1408թ. Գրիգոր Տաթևացին հիմնադրել է բարձր փիպի դարոց (160 աշակերտով եւ 8 վարդապետով): 16-րդ դարում Մեծփա վանքն այրվել է: 1944-ին վանքն ավերվել է:

Վասպուրականի եւ Տուրուբերանի միջնադարյան քարտեզ. կենտրոնում Քաջբերունիքն է՝ Արճեշ կենտրոնով, որպեղից սերվում է Գրիգոր Տաթևացու հայրը:



# ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻ ԹԵՆԱՎՈՐ ԽՈՍՔԵՐ ԵՎ ասույթներ

### «Գիրք քարոզության», Ձմերան հապորդ

Արևմտաօստրալիացի եւ անգործությամբ մի՛ լցրու անցավոր կյանքը, այլ բարին գործիր:

Դեղը պարասխան է հիվանդությանը:

Ամեն ջրից [ծառը] չի պղծվում:

Ոմանք մոխրի են նման, որ հեշտությամբ առնում, բայց հեշտությամբ էլ կորցնում են:

Սեղանը եւ կերակուրը քաղցի պահին ավելի պարզակալ են, քան կուշտ:

Արմատը կարելիս չորանում են ճյուղերը:

Մոմն առանց պարրույցի չի վառվում:

Չգեասներով բաղնիք չես մքնի:

Առանց գորավարի գորքը հուսահատ է գնում պարերագմ:

Ի՞նչ օգուտ կա պահքերով նիհարելու մարմնին, եթե մահվան չափ մեղքերով գիրանում է հոգին:

Գիշերը ուրելու [սովորույթը] ավելի շար [մարդ] է սպանում, քան պարերագմի սուրը:

Իմաստունը, եթե մարմնի պարճառով սայթաքի, իմաստության լույսով հեշտությամբ կուղղվի եւ ուրքի կկանգնի:

Ծովն ընկածը չի կարող փեսնել ալեկոծությունը, այլ եզրից է փեսնում ամենի պիքները:

Գայլը ծերության ժամանակ առավել խորամանկ է:

Ծովն ընկած քարն իջնում է մինչեւ հաբակը:

Գողը արժեքավոր իրն է փնից փանում:

Մարդու կյանքն այլ բան չէ, քան ընթացք դեպի մահ:

Թագավորի գրությունն առանց արքայական կնիքի՝ ոչինչ չարժե:

Աղբիքը պարզակալ ընծա է Աստուծո:

Առանց սրբի բարբառելը շողակրատումն է եւ ոչ աղոթք առ Աստված:

Հոգեւոր սերմն առանց արեգակի արդարության չի բուսնում:

Արույր աղմուկը եսասիրության եւ ազատության պարճառով չէ՛:

Իմաստասերը եւ ճշմարտասերը միշտ առաջնորդվում են իմաստությամբ եւ ճշմարտությամբ՝ թե՛ մրքում, թե՛ խորհրդում, թե՛ խոսքում եւ թե՛ գործում:

Իմաստուն կինը պարպավոր է աչքն ամուսնու վրա պահել, շարժվել նրա կամքով, ամուսնու սիրուց չհեռանալ եւ թույլ չտալ, որ ամուսինը հեռանա իր սիրուց:

Կյանքը երկրորդանի քաղաք է. մեկով մրքում, մյուսով դուրս ենք գալիս:

Ինչքան էլ մարդն ապրի՝ երկու օրն է նրանը՝ ծննդյանը եւ մահվանը:

Այժմ նրանք, ովքեր արժանի են առաջնորդ լինելու՝ հանձն չեն առնում, եւ առաջ են մղվում անարժանները:

Իմաստությունը գավազան է, որին հենվողը հաստար է [կանգնում]:

Իմաստությունը հաստարուն հիմքն է, իսկ գործերը՝ վերնաշենքը. հիմք չունեցող փունը ավազաշեն է:

Իմաստությունն անկողնուպրեղի գանձ է, որ ոչ նավում է ընկղմվում, ոչ ավազակն է հափշտակում. այն չունեցողը աղքատ է եւ մրքով փառասլապ:

Ամեն մարդու արվեստ իրեն գեղեցիկ է թվում,

իսկ ամեն մի ծնողի՝ իր երեխան:

Ժողովուրդը՝ լքող իր բարի առաջնորդին, աշակերտը՝ վարդապետին, ընկերը՝ ընկերոջը զազիր ու գարշ են:

Ասեղը թելը հեքեվից է փանում:

Գրված էջը դարարկից առավել է:

Խրատն իմաստուն մարդուն է ավելի պեքք գալիս, քան անմիտին:

Ինչպես աստիճանով են վեր ելնում, այդպես աստիճանաբար պեքք է կրթի ուսուցիչը:

Տղետն են, որ ասում են մի անարժան քահանան լավ է, քան բազում արժանավոր աշխարհականները:

Մեծ ջանք հանգցելիս ավելի գարշ հոք է արձակում, քան փոքրը:

Կտավ գնողը երկու ծայրը պիտի նայի:

### «Գիրք քարոզության», Ամարան հապոր

Չարի համար հիմար եղիր, բարու համար՝ իմաստուն:

Քարը դեպի ներքե հեշտ է գորվում:

Գինին կամ ձեթը հենց պարզեց, մրուրը հարակին նսարեց:

Ասում են իմաստունները. բժշկություն իմացողը բժիշկ է, արդարություն իմացողը միշտ չէ, որ արդար է:

Ամսուր շրջեց կոնեկուռն, ձմեռը՝ դռնեղուսը:

Թաղման կարգը մարմնի անօգուտ է ննջեցյալին:

Փշապած արամը հանում են՝ մյուսներին չապականելու համար:

Թե կրակն ընկավ մեկի փունը, չի հապաղում փանուկները:

Քսից արթնացողն իր հագուստն է հագնում:

Հսձան մրքում են խաղողն ու պտուղը, ոչ թե փրեղը:

Սուսը արգաքնապես է գրավիչ, ներսից անպտուղ եւ անարդյունք է:

Բողբ կողմերից փակված ջուրը վերեւ է բարձրանում:

Եթե քեզ խոսքն է շարժում եւ ոչ թե միքքը, ավելի լավ է լռես:

Իբրեւ ամրոց-քաղաք եղբայրը եղբոր օգնությունից գորեղանում է:

Երբեմն պեքք է լռել, երբեմն քաղցրությամբ խրափել, երբեմն էլ խստությամբ հանդիմանել:

Ծառը փնկելուց հեքո խնամում են, որպեսզի հաստարվի եւ պտուղ փա:

Քամուց շարժվող եղեգը անհաստար է թեթեւ է:

Արվեստը մարդու անգրկելի ասպանքն է:

Մարդկային սովորություն է՝ եղածը նմանեցնել մրքում պարկերացրածին:

Ի բնե նախ սերն է, ապա՝ իմաստությունը:


Արեւի մերձ եկող լույսով ծածկվում է ճրագի լույսը:

Քո հոգու կորստյամբ այլոց հոգին մի՛ փրկիր:

Դատարկությունը մայրն է բոլոր մեղքերի:

Չաշխատող մարդը թուլանում եւ վաքատող է դառնում:

Տղամարդը կնոջ գեղեցկությունն ու համեստությունն է իրենը համարում, կինը՝ փղամարդու հարստությունն ու փառքը:



Գրիգոր Տաթևացու արձանը Մարենադարանի մուտքի մոտ (1967թ., հեղինակ՝ Ադիբեկ Գրիգորյան)

Իմացումը ճշմարտությամբ է չափվում:

Մարդասիրը Աստվածախաբ է:

Որքան լուս քննես միքքը, այնքան կպարզես այն:

Լեզուն հեշտությամբ է սայթաքում եւ սխալվում:

Յոթն անգամ խորհիր, մեկ անգամ խոսիր:

Իմաստությունը սանձ է լեզվին:

Լավ է ուրացողը, քան հերձվածողը:

Նյութը մեկն է, իրականացումները՝ փարբեր:

Աստված չարեղծեց երկու Ադամ, մեկը ոսկուց՝ իշխանների, մյուսը կավից՝ աղքատների համար, այլ՝ մի Ադամ, այն էլ հողից:

Առանց հովվի հոբը բաժին է դառնում գազաններին եւ կորչում, իսկ առանց այգեպանի եւ մշակի պարբեզն ու այգին՝ խոպանանում ու անպտուղ դառնում:

Մեծ ջանք եւ իմաստություն է պեքք իշխանավորին՝ երկիրը շեն պահելու եւ ամեն ինչ կարգավորված կառավարելու համար:

Անշատի հարստությունը եւ աղքատությունը հավասարապես վնասում են մարդուն:

Կատարյալ սերը երկուտ չունի:

Անբերը գոցողը արեւի լույսի առաջը չի առնում, այլ իրեն է գրկում լույսից:

Փուշը պտուղ չի փալիս, բայց պղծավորին պահում է:

Կինը փղամարդու ունեցվածքի ժողովուրդն ու հավաքողն է, եւ փղամարդը գեքի նման է, իսկ կինը՝ ծովի, դեպի որը ժողովվում են գեքերը:

Կինը փան շենությունն է:

Արդարությունն ամուր պարիսպ եւ գրահ է:

Եվ եթե թագավորն է սուգի մեջ, ո՛վ կծիծաղի կամ կուրախանա:

Անբերը գոցողը ինքն է խավարի մեջ մնում:

Երկրային էլ, սերն էլ, արելությունն էլ մշուշի նման թույլ չեն փալիս հաբակ փեսնելու:

### «Գիրք հարցման»

Իմաստունի աչքը գլխում է:

Ղյուրին է գազանին ընդդեմը, քան փղեք անձին գիտության բերել:

Ինչպես մարմինն է հիվանդանում, այդպես էլ՝ հոգին:

Իմանալ էլ չասել՝ չար է, չիմանալ եւ ասել՝ չարագույն:

Լավ է մի ակը պարզակալ, քան բազում քարերն անպիտան:

Ամեն մարդ իրեն ճշմարիտ ու արդար է կարծում:

Նախանձը կորստի է մարմնում մարդուն:

Բարկացած մարդը ճշմարտությունը չի փեսնում:

Յուրաքանչյուրն իր բեռն է փանում. որդին հոր բեռը չի փանում:

ՉրամՆավի դեկը բեկված է թվում:

Էշ կորցրեց՝ թագավորություն գրավ:

Բրուտի պարսափածը անոթ կլինի եւ ոչ երկինք:

Մի ճշմարիտը պարպավոր չէ հեքեւել սպերին բազում:

**Թարգմանությունը աշխարհաբարի՝ Սուսանա Գրիգորյանի**



# Տաթևի համալսարանը

## Հիմնադրումն ու անկումը

Գլածորի համալսարանը ահռելի դեր խաղաց միջնադարյան հայ դպրության վերածնության, մշակույթի անկումը կանխելու և զարգացնելու ուղղությամբ: Սակայն ուսումնական այդ կենտրոնին վիճակված չէր երկար գործել: Գործելով շուրջ 60 տարի՝ 1338-1340թթ. Գլածորի համալսարանը անկում է ապրում: Նրա քայքայումից հետո Վայոց ձոր գավառից հեռացավ նաև Հովհան Որոտնեցին, որն այնտեղ «անվազվեց ըրաբունական աստիճանի էր հասել»:

Նա ծնունդով բնիկ սյունեցի էր Որոտան գավառի Վարդիք գյուղից, ուներ իշխանական ծագում: Որոտնեցին եղել է իր ժամանակի ամենահեղինակավոր ուսուցչապետն ու գիտնականը: Օգտագործելով այն փորձն ու հմտությունը, որ ձեռք էր բերել Գլածորում նա սկսում է համալսարանական դասընթացներ կազմակերպել Որոտանում՝ հիմնադրելով նոր դպրոց: Օգտագործելով իր ազգակցական կապերը Օրբեյանների հետ՝ Որոտնեցին խնդրեց նրանց հովանավորությունն ու աջակցությունը: Օրբեյան իշխանները հնարավորինս նպաստեցին մեծ ուսուցչապետի նախաձեռնությանը, եւ 1340-ական թվականների կեսերին իր աշակերտների մի մասի հետ նա տեղափոխվեց Տաթև: Այնտեղ առկա պայմաններն ավելի նպաստավոր էին դպրոցական գործունեությունը ծավալելու համար: Այսպիսով հիմք դրվեց մի նոր ուսումնական հաստատության, որը պատմության մեջ հայտնի է իբրև Տաթևի համալսարան:

Իններորդ դարի վերջերին Տաթևի վանքում հիմնվել էր բարձր տիպի դպրոց՝ վարդապետարան, որն իր ներքին բովանդակության և կազմակերպվածության չափանիշներով դեռևս չէր համապատասխանում միջնադարյան համալսարանին: Իսկ Տաթևի համալսարանի՝ որպես ուսումնագիտական կենտրոնի, հիմքերը դրվել են Որոտան դպրոցում և ավարտին հասել Տաթևում հաստատվելու շրջանում:

Տաթևի համալսարանը Հ.Որոտնեցու ժամանակ ոչ միայն կարեր էր պատրաստում Սյունյաց եւ հայոց այլ դպրոցների համար, այլև նրա գլխավորությամբ Սյունիքում մի շարք դպրոցներ են հաստատվում, եւ այն դառնում է այդ դպրոցների կենտրոնը: Տարբեր ժամանակներում Տաթևի համալսարանի հովանավորության են ազդեցության տակ են եղել Ապրակունյաց, Ռշտունյաց, Մեծովհա, Հերմոնի, Հովհաննավանքի, Երզնկայի, Խիզանի, Աստապատի, Բաղեշի և Հայաստանի ու նրա սահմաններից դուրս մի շարք այլ դպրոցներ ու Սյունյաց ճահանգի համարյա թե բոլոր դպրոցները:

Հ.Որոտնեցու մահից հետո Տաթևի համալսարանի ռաբունապետ դարձավ նրա տաղանդավոր աշակերտ Փրիզոր Տաթևացին: Մռայլ քաղաքական կացության ու տնտեսական քայքայվածության պայմաններում համալսարանը չէր կարող գտնվել բարվոք վիճակում: Հարկավոր էր համարձակ, դիվանագետ, հզոր կամքի տեր մեկը, որ կարողանար ի մի հավաքել ցրված դասախոսներին ու սաներին: Այդպիսին դարձավ Որոտնեցու ջախակիտ սանը՝

Խուսափելով նվաճողների անընդհատ հետապնդումներից նա ստիպված էր հաճախակի փոխել իր դպրոցի տեղը: Նրան երբեմն տեսնում ենք Որոտնավանքում (1386թ.), երբեմն Շահապոնքի ամրոցում (1387թ.): 1391թ. Տաթևացին դարձյալ ապաստանում է Երնջա-

կի Ապրակունյաց վանքում, այստեղ եւս ենթարկվում է հալածանքների: 1390թ. Գր.Տաթևացին իշխան Սմբատ Օրբեյանի հրավերով հաստատվում է Տաթևում: Տաթևում հաստատվելուց սկսած մինչև Տաթևացու մահն ընկած ժամանակաշրջանը համարվում է համալսարանի գործունեության ամենաբեղուն, ծաղկուն շրջանը (1390-1409): Տաթևի դպրոցի համբավն այնքան մեծ էր, որ ամեն կողմերից ուսումնածարավ աշակերտները ձգտում էին գնալ այնտեղ: Ժամանակակիցները մարդկանց կրթության աստիճանը որոշում էին Տաթևի դպրոցի համեմատությամբ:

Երկրի քաղաքական եւ տնտեսական ծանր վիճակի պատճառով Տաթևացին ստիպված էր կրկին թողնել վանքը եւ սաների հետ գնալ Արձեշի Մեծովհա վանք: Այսպիսով կրկնվում է համալսարանի շարժական կյանքը, այն տարբերությամբ, որ այս անգամ տեղահան է լինում ամբողջ կրթարանը՝ 100-ից ավելի աշակերտներով կատարելով երկար ճանապարհորդություն:

1409թ. սկզբներին նորից է ապաստանում Մեծովհում, նույն թվականի դեկտեմբերին վերադառնում Տաթև եւ մեկ ամիս անց ավանդում հոգին:

Մեծ ռաբունապետի մահից հետո Տաթևի ուսումնագիտական կենտրոնը որպես համալսարան, անկում է ապրել: Կրթօջախը շարունակվել է գործել դեռ երկար դարեր, բայց հնարավոր չէ հստակ որոշել, թե երբ է դադարել որպես համալսարան գոյություն ունենալ:

Տաթևացուց հետո համալսարանի ուսուցչապետ է դառնում Մատթեոս Ջուղայեցին, նրա տեղապահ է կարգվում Մխիթար Տաթևացին, որն էլ 1415թ. դարձել է ռաբունապետ:

Տաթևի համալսարանը խամրեց 15-րդ դարի առաջին քառորդի վերջերին, սակայն որպես գրչության օջախ, դպրոց, շարունակեց գոյությունը: Նրա առավել նշանակալից դերն այն էր, որ իր ազդեցությունը տարածում էր Սյունյաց եւ Սյունիքից դուրս հայոց բազմաթիվ դպրոցների վրա ու վառ էր պահում այդ կրթօջախները իր գիտուն ուսուցիչների անմիջական օգնությամբ եւ պատրաստած շրջանավարտների միջոցով:

## Ուսումնագիտական բաժինները

Տաթևի համալսարանն ունեցել է երեք ուսումնարան (ֆակուլտետ)՝ երաժշտական արվեստի, նկարչության եւ գրչության արվեստի, աստվածաբանական եւ հասարակական-բնական գիտությունների:

Առաջին ուսումնարանում ուսուցանում էին նախկին երգիչների երաժշտությունը, եւ տեսություն, եւ երգեցողություն: Այս արվեստն այնքան էր մշակված Տաթևի դպրոցում, որ երկրի բոլոր կողմերից գալիս էին այնտեղ՝ երաժշտական կրթություն ստանալու:

Երկրորդ ուսումնարանում ուսուցանվում էին դիմանկարչություն, տեսարանների նկարահանություն, մանրանկարչություն, ծաղկանկարչություն, գրքերի գեղարվեստական ձևավորում, ծաղկազարդում, նաեւ գրչության արվեստը՝ գեղագրություն, որն այս դպրոցի ամենասիրելի առարկաներից մեկն էր:

Երրորդ ուսումնարանում ուսումնասիրվում էին գլխավորապես աստվածաբանություն եւ հունանիտար գիտություններ: Աստվածաբանությունը հիմնական մասնագիտական առարկան էր: Սակայն դրան զուգա-

հեռ մեծ ուշադրություն էր դարձվում նաեւ հունանիտար գիտություններին, որոնք այն ժամանակ կոչվում էին «արտաքին գրեանս», որոնք մեջ մտնում էին փիլիսոփայությունը, ճարտասանությունը, քերականությունը, պոետիկան, տրամաբանությունը, դաստիարակչությունը կամ մանկավարժությունը: Այնտեղ ուսուցանվում էին նաեւ «ներքին գրեանս»՝ գրականություն, պատմություն, տնտեսություն եւ այլն: Այս ֆակուլտետում ուսումնասիրվում էին նաեւ բնական գիտություններ, հատկապես մարդկագիտություն, տարրաբանություն (քիմիա), աշխարհագրություն, աստղաբաշխություն, տոմարագիտություն, թվաբանություն եւ այլն:

## Դասընթացները

Համալսարանում գրված եւ ընդօրինակված բնագրերի ընդհանուր քանակի հարաբերությամբ Աստվածաշնչի, Ավետարանների եւ աստվածաբանական մեկնությունների տեսակարար մեծ կշիռը ցույց է տալիս, որ այստեղ աստվածաբանությունը իբրև դասընթաց, առաջնակարգ տեղ էր գրավում ուսումնական ծրագրում: Հին ու Նոր Կտակարանների ուսուցումն ու յուրացումը որպես հիմնական եւ առաջնային դասընթաց, պարտադիր պահանջ էր համարվել ոչ միայն Տաթևի համալսարանում, այլև միջնադարի բոլոր բարձրագույն դպրոցներում: Տաթևում ուսումնասիրվել են նաեւ կաթոլիկ աստվածաբանների եւ արեւելքում հաստատված կաթոլիկ քարոզիչների երկերը:

Ուշագրավ է, որ համալսարանում ուսումնասիրում էին նաեւ հեթանոսական աստվածների մասին տեսությունը: Այս փաստը խոսում է կրթօջախի ղեկավարության լայնախոհության մասին:

Այստեղ փիլիսոփայությունը իբրև դասընթաց, խիստ ամուր հիմքերի վրա է եղել: Ուսումնագիտական այս կաճառի ղեկավարները եղել են պրոֆեսիոնալ փիլիսոփաներ, զբաղվել են փիլիսոփայական երկերի մեկնությամբ եւ ստեղծել իրենց: Եվրոպական համալսարանների «արվեստից» ֆակուլտետի ուսումնական ծրագրերի բովանդակությունը կազմում էին «Յոթն ազատ արվեստները», որոնք բաղկացած էին երկու բաժնից՝ եռյակից քերականություն, ճարտասանություն, դիպլոմատիկա եւ Քառյակից՝ թվաբանություն, երկրաչափություն, աստղաբաշխություն եւ երաժշտություն: Տաթևի համալսարանը, մեր դպրության խորքերից ժառանգելով «Յոթն ազատ արվեստների» տեսության ավանդույթները, զարգացրեց նոր, ավելի բարձր հիմքերի վրա:

## Դասախոսական կազմը

«Րաբունապետ» եւ «րաբուն» տիտղոսների կիրառությունը հայ մատենագրության մեջ տարբեր իմաստներ ունեն: «Րաբուն» լինելու համար թեկնածուն նախապատրաստվել է քննության, մինչդեռ «րաբունապետ» տիտղոսը տրվել է այն վարդապետին (նույնն է ռաբունին), որի հմտությունն ու գիտական հեղինակությունը անվերապահորեն ճանաչվել են ինչպես վարդապետների, այնպես էլ ուսումնականների կողմից, ուստի եւ «րաբունից» բարձր տիտղոս է ուսուցչապետի (պրոֆեսորի) իմաստ ունի:

Րաբունապետերն են գլխավորել համալսարանը: Հայտնի է, որ Գլածորի համալսարանում Ե.Նչեցու հետ միաժամանակ գործել են նաեւ այլ ռաբունապետեր: Նույն բանը չի

եղել Տաթևի համալսարանում. այստեղ ռաբունապետերը հաջորդել են իրար: Ըստ երեւույթին Հ.Որոտնեցին նորանունություն է կատարել, ըստ որի այդ տիտղոսը գերազանցապես ստացել է կազմակերպչական աստիճան եւ հասկացվել որպես համալսարանի գլխավոր, տնօրեն, ղեկավար: Տաթևն ունեցել է չորս ռաբունապետ, որոնց մասին մշակեց վերելում:

## Ուսանողությունը եւ ուսումնառության շրջանը

Տաթևի ուսումնականների ընդհանուր թիվը ուսումնական տարում, ըստ տարածված կարծիքի, տատանվել է 80-100-ի միջև: 14-15-րդ դարերում արտակարգ երեւույթ էր Հայաստանում կրթօջախը, որն ուներ 80-100 աշակերտ, մանավանդ որ այն հասարակական, քաղաքային դպրոց չի եղել, այլ հոգևոր բարձր տիպի կրթարան: Տաթևի ուսումնականների թվի մասին գրիչները հաճախ «անթիվ» եւ «անհամար» բառերով են արտահայտվում: Որոշ ուսումնասիրողների կարծիքով համալսարանը տարբեր ժամանակներում ունեցել է 60, 160, մինչև անգամ 200 սան:

Տաթևի ուսումնականների մեծամասնությունը կոչվել է ծննդավայրի անունով: Այս հանգամանքը թույլ է տալիս իմանալ, թե որտեղից էին եկել նրանք: Տաթև սովորելու էին գալիս ոչ միայն Սյունիքից, այլև Հայաստանի ամենատարբեր կողմերից, հեռավոր Կիլիկիայից, Թավրիզից, Տփղիսից, Ղրիմից եւ այլ տեղերից: Աշակերտական կազմը հասարակական տարբեր խավերից էր բաղկացած: Սաները սովորում էին գիշերօթիկ պայմաններում: Նրանք ապրում էին դպրոցին կից կացարանում, ստանում էին սնունդ, հագուստեղեն, գրեանքներ այնուպէս: Տաթևի համալսարան գալիս էին ուսանելու հիմնականում «քահանայական կրթություն» ստացած ուսումնականներ: Սակայն Տաթևը եղել է նաեւ «քահանայական կրթություն» տվող կենտրոն: Քահանայական կրթությունը ներկայացնում էր ուսումնական մախնական մի աստիճան, որն անցնելուց հետո էր ենթադրվում համալսարանական-վարդապետական կրթությունը: Քահանայական կրթությունն առաջնորդում էր 13-14 տարեկանից, եւ այն տեսել է առնվազն 3 տարի: Վարդապետական կրթությանը ձեռնամուխ են եղել 16-18 տարեկանից, որը տեսել է 7-8 տարի:

Մեր դպրության մեջ համալսարանական դասընթացների լրիվ յուրացումը պաշտոնապես ձեւակերպվել է «վարդապետական աստիճանի» շնորհունով թեկնածուին, որով եւ հավաստվել է նրա բարձրագույն կրթության՝ «վարդապետական աստիճանի» ձեռքբերման իրավական ճանաչումը: Վարդապետական աստիճան շնորհելու համար սահմանված է եղել որոշակի կարգ: Տաթևի համալսարանը վարդապետական գավազան շնորհելու ամենահեղինակավոր կենտրոնն է եղել: Վարդապետական հրամանի արժանանալու համար թեկնածուները պարտադիր քննություններ են հանձնել: Քննություններ հանձնում էին նաեւ յուրաքանչյուր դասընթաց յուրացնելու դեպքում: Մյուս կարեւոր պահանջը, որ ներկայացվել է թեկնածուին, ավարտաճառերի ընթերցումը կամ «ատենախոսության» պաշտպանությունն էր:

Ատենախոսությունների պաշտպանությունը եւ թեկնածուների պակասարժանում, եկեղեցական բարձր դասի, աշխարհիկ տերերի, ուսուցչապետների եւ ուսուցիչների, ինչպես եւ ուսանողության ներկայությամբ, արտակարգ հանդիսավոր

պայմաններում:

## Պայքարը ունիթորական շարժման դեմ

Հատկապես 13-րդ դարի մայրամուտին եւ 14-րդ դարի առաջին տասնամյակներին Արեւելյան Հայաստանում քաղաքական-դավանաբանական սուր պայքար ծավալվեց այն վերահաս ազգակրթման վտանգի դեմ, որ հայագիտական գրականության մեջ հայտնի է «ունիթորական շարժում» անունով: Այս շարժման մերձավորագույն նպատակն էր հայ եկեղեցու բացարձակ հպատակեցումը եւ միացումը Հռոմի միաիեծան պապականությանը՝ կաթոլիկության տարածումով:

Ունիթորական շարժման դեմ անողը պայքարի է ելնում հայ լուսավորչական եկեղեցու ավանդապահ թեւը՝ ի դեմս Սյունյաց եպիսկոպոսարանի, Գլածորի համալսարանի եւ նրա երախտավոր ռաբունապետ Եսայի Նչեցու ամենաակտիվ մասնակցությամբ: Շարժման ահագնացավ, երբ այդ հոսանքի մեջ մերձավորեցին հայ հոգեւորականության եւ մշակույթի նշանավոր մի շարք ներկայացուցիչներ:

Հակաունիթորական պայքարը նոր թափ ու ծավալ ընդունեց Ե.Նչեցու մահից հետո՝ Որոտնեցու ղեկավարությամբ:

Հակաունիթորական պայքարում հաջողության հասնելու համար Հ.Որոտնեցին, Գր.Տաթևացին, նրանց սաներն ու հետևորդները ջանասիրաբար ուսումնասիրում էին անտիկ մտածողների, քրիստոնեական եկեղեցու հռչակավոր գործիչների, հայ մատենագրության երախտավորների եւ հենց իրենց ունիթորների երկերը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տաթևի համալսարանի ղեկավարները միաժամանակ գլխավորել են Սյունյաց հոգեւոր վիճակը, պարզ է դառնում, որ հակաունիթորական պայքարում Սյունյաց եպիսկոպոսարանն ու Տաթևի համալսարանը հանդես են եկել ուղղակիորեն որպես մեկ օրգանիզմ: Ըստ երեւույթին, համալսարանը եղել է այդ պայքարի գաղափարական հենքը, իսկ եպիսկոպոսարանը ներկայացել է որպես այդ շարժման օրինականության եւ պաշտոնականության ատրիբուտ: Համալսարանի ղեկավարները հակաունիթորական շարժման մեջ չեն սահմանափակվել զուտ գաղափարական պայքարով: Հայտնի է, որ 1379թ. Հ.Որոտնեցին մի շարք աշակերտների հետ տեղափոխվում է Երնջակ, որտեղ ազդեցություն էին տարածել ունիթորները:

Հակաունիթորական պայքարի հետ որոշակիորեն առնչվում էր հայրապետական աթոռի Կիլիկիայից մայր Հայաստան տեղափոխելու հարցը: Այս խնդիրը անհանգստացրել էր Հ.Որոտնեցուն, որն ապահովության նկատառումներով ցանկանում էր հայրապետական աթոռը հիմնադրել Գանձասարի վանքում: Իր ուսուցչապետի երազանքը ցանկացավ իրականացած տեսնել ռաբունապետ Գ.Տաթևացին, սակայն քաղաքական իրադարձությունների անցանկալի ընթացքը թույլ չտվեց կենսագործել այդ գաղափարը:

Տաթևացու արժանավոր աշակերտ Հովհաննես Հերմոնացու, Թովմա Մեծովիեցու եւ ուրիշների մեծ ջանքերի շնորհիվ միայն կաթոլիկոսական գահը Սսից տեղափոխվեց Եջմիածին (1441թ.): Սա դարաշրջանի թերեւս ամենակարեւոր նշանակություն ունեցող իրադարձությունն էր, որի մեջ անուրանալի է Տաթևի համալսարանի ղեկավարների եւ սաների հսկայական ավանդը:

**Ընդ Ա. Գզդյանի «Տաթևի համալսարանը» աշխատության պատրաստեց Արմինե Ավագյանը**








# Գորիսում կանգնեցվում է Տաթևացու արձանը



Արձանը՝ քանդակագործի աշխատանքների վերջին փուլում (Վերիշեն):

Գորիսում կանգնեցվում է Տաթևացու արձանը՝ քանդակագործի աշխատանքների վերջին փուլում (Վերիշեն):



Սեադա Ջաքարյան



Նարեկ Օրոյան

Գորիսում կանգնեցվում է Տաթևացու արձանը՝ քանդակագործի աշխատանքների վերջին փուլում (Վերիշեն):

հսկա բեկորը: Մեկ տարուց ավելի Նարեկը քանդակում էր: Ընթացքում նրան օգնել է (ոչ ստեղծագործական, այլ ֆիզիկական առումով) հայրը՝ Գագիկը, որը նկարիչ-քանդակագործ է:

Երկարամյա ճարտարապետ Ս.Ջաքարյանը ցավով փաստում է, որ Գորիսը, այլ քաղաքների համեմատ, համայնքը զարդարող արձաններ, քանդակներ քիչ ունի եւ ոգեւորությամբ նշում, որ շնորհալի երիտասարդի կերտած Տաթևացին ինչ-որ չափով կլրացնի այս բացը, կհարստացնի քաղաքի ընդհանուր ճարտարապետական տեսքը: Արձանը ընդհանուր 3.5 մ բարձրություն կունենա. պատվանդանի եւ տեղադրության նախագիծը հեղինակել է պարոն Ջաքարյանը:

Արձանը տեղադրելու վայրի հետ կապված տարբեր առաջարկներ եղան: Ի վերջո որոշվեց տեղադրել հենց Գորիսի Տաթևացու անունը կրող հրապարակում:

Չեղինակը՝ Նարեկ Օրոյանը, ծնվել է Գորիսի Վերիշեն գյուղում, ավարտել տեղի դպրոցը, 2009-ին ավարտել է Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիայի քանդակի բաժինը: Գորիսում գեղարվեստի դպրոց չի հաճախել. հայրն է եղել ուսուցիչը: Վերադարձել է հայրենի բնակավայր ու զբաղվում է սիրելի մասնագիտությամբ: Ասում է, թե Տաթևացու մասին ընթերցելուց, նրա գործունեությանը լավ ծանոթանալուց, նրան ուսումնասիրելուց ու ճանաչելուց հետո իր մեջ ծնվեց արձանը կերտելու գաղափարը: Դեռես երկրորդ-երրորդ կուրսերում է արել էսքիզները: Նույնիսկ բուհում առաջարկել են դա դարձնել դիպլոմային աշխատանք, բայց հետո այլ ստեղծագործություն է ներկայացրել: Նարեկը քանդակելու համար տարբեր նյութեր է օգտագործում՝ բազալտ, գրանիտ, մարմար, բրոնզ եւ այլն:

Տաթևացու կերպարն ստեղծելու մասին պատմելիս ասում է, թե գիտեմալով, որ նա մեծ փիլիսոփա, հասարակական-եկեղեցական գործիչ, մանրանկարիչ ու մանկավարժ էր, իր ստեղծագործության մեջ ցանկացել է ավելի շատ ներկայացնել մանկավարժ Տաթևացուն. «Քանդակում խոժոռադեմ մարդ է, որը, գիրքը ձեռքին, ցանկանում է ուսուցանել համայն հայությանը»: Կերպարն իր պատկերացումների արդյունքն է, այն մարմնավորելուց օգնել են մանրանկարները, որոնցում պատկերված է Տաթևացին:

Սեադա Ջաքարյանն էլ ավելացնում է. «Մտածեցիք, որ եթե նա վեղար ունենա գլխին, դրանով կդառնա պարզապես հոգեւորական... Եվ կփոքրացնեինք նրան, ու կդառնար զուտ եկեղեցական գործիչ»: Ճարտարապետը նշում է, որ մինչեւ վերջնական տարբերակին հասնելն աշխատանքը փոփոխություններ է կրել. ընդհանուր գաղափարը մեկն է եղել, բայց կատարման ծավալներն են փոխվել ու ի վերջո, այն ավելի լավ է դարձել... Ճարտարապետը նաեւ ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ նման երիտասարդ քանդակագործի համար բավական ռիսկային էր այս ծավալի աշխատանք ստանձնելը, այն էլ մեկ ամբողջական կտոր քարից, ինչը հաճախ անզան փորձառու քանդակագործները չեն անում:

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

# Ամենայն հայոց վարդապետը

Խմբագրական  
Սկիզբ՝ էջ 1

Ի դեպ, Գորիս անվան ներկա գրեթեբոլոր պարունակող մեզ հայտնի առայժմ ամենահին ձեռագիրը՝ գրված 1625թ., առնչվում է Տաթևացու գիտական ժառանգությանը: Չեռագրի հեղինակը՝ Բարսեղ երեցը (պատվիրատու՝ Ռատակես, ծաղկող՝ Դովհանես արքեպիսկոպոստ), Գորիսում արտագրել է «Գիրք հարցմանց»: Ահա թե ինչ է արձանագրում Բարսեղ գրիչն այդ առիթով՝ «Գրեցաւ սայ ի յերկիրս Չազածորու, ի գեաւուս որ կոչի Գորես, ընդ հովանեաւ Ս. Գրիգորիսի եւ Ս. Աստվածածնիս եւ Ս. Յակոբիսի եւ Ս. Մարտիրոսիս, զի սոցա են մեզ բարեխօս, ի թվիս ՈՂԴ»:

Գորիսի Տաթևացու հիշատակի հավերժացումը, անշուշտ, կարելու էր երևույթ է մեզանում: Սակայն առավել կարելու է Գորիսի Տաթևացուն ըստ պատշաճի ճանաչելը, նրա գիտական հսկայածավալ ժառանգությանը ծանոթանալն ու հաղորդվելը: Իսկապես, ո՞վ է Գորիսի Տաթևացին, որ եղավ մեր եկեղեցու պաշտոնական վերջին սուրբը, որին ժամանակակիցներն անվանել են «երկրորդ լուսավորիչ», «ամենայն հայոց վարդապետ», «եռամեծար փիլիսոփա»...

«Այունյաց երկրի» սույն համարը, կարելի է ասել, այդ հարցերին համառոտ պատասխանելու փորձ է:

Ի՞նչ ժամանակներում է գործել Գորիսի Տաթևացին: Այո, առանց այդ հարցի պատասխանն իմանալու, առանց հասկանալու պետականություն չունեցող Հայաստանի քաղաքական դրությունն այդ շրջանում՝ լիարժեք պատկերացում չենք կարող ունենալ նրա գիտական, հասարակական-քաղաքական, հոգեւոր գործունեության մասին:

14-15-րդ դարերը հայ ժողովրդի քաղաքական ծանր շրջաններից են եղել: Հայաստանը առաջապես էր մոնղոլական դժմի լծի տակ, կործանվում ու ոչնչացվում էին մտավոր ու նյութական մշակույթի շատ արժեքներ: Համատարած ավերի ու արյան մեջ ինչ որ չէր կարողանում անել հայ իշխանների սուրբ ամմիաբանության պատճառով (թեեւ նրանք քաջությունը չէր պակասում), կարողացավ անել հայ գրիչը, իսկ այդ շրջանում՝ տեւական մի ժամանակ, «ամենեցուն» զուրկ են ուսուցիչ էր» Գորիսի Տաթևացին: Չմոռանանք, որ 15-րդ դարի սկզբին Հայաստանում եւ Հայաստանից դուրս քառասուն նշանավոր վանքերի ու դրանց կից դպրոցների զուրկ կանգնած էին Տաթևացու աշակերտները:

Պատմական այդ շրջանի գլխավոր հարցերից մեկն էլ հայոց աշխարհի վրա ուժեղորակաճ գաղափարախոսության գրոհն էր ու դրան դիմակայելու հրամայականը: Պապական քարոզչությունն իրեն պարտված ճանաչելով Կիլիկիայի միջոցով հայերի կրոնական նվաճումն իրագործելու ծրագրում՝ փորձեց դիմադրությունը խեղդել իր իսկ բույնի մեջ՝ բուն Հայաստանում: Դեռես 1318-ին հռոմեական կաթոլիկ եկեղեցին Մարաղայում (Իրանի հյուսիս-արեւմուտք) հաստատել էր եպիսկոպոսական աթոռ՝ Արեւելքում, հատկապես հայերի մեջ, կրոնական «միության» անվան տակ ուժեղացնելու կաթոլիկական քարոզչությունը՝ հոգուտ Յոննի եկեղեցու եւ եվրոպական տերությունների: Հարցականի տակ էր դրվել հայ հոգու եւ հավատի գոյությունն իսկ մայր հայրենիքում: Այդ վտանգն առաջ բերեց ուժեղ հակադեմոկրատիայի, գիտակից հայ մտքի եւ մասնավորապես տաթևայան աշակերտության ակտիվ գործունեությունը՝ առաջնորդությամբ հայ աստվածաբանական մտքի հսկա Գորիսի Տաթևացու: Սրբազան այդ պայքարն ստացավ մի այնպիսի թափ, որ կարելի է համեմատել միայն Սահակ-Մեսրոպյան շրջանի հետ:

Պետական ու քաղաքական խոշոր գործիչն ու հնուտ դիվանագետին բնորոշ երևույթ էր Գորիսի Տաթևացու հանդիպումը միջնադարյան հայտնի աշխարհակալ ու մարդկեր Լեւոնթուրի (Լանկ Թամուրի), նրա որդի Միրանշահի հետ եւ Հայաստանյան կացության քննարկումը: Երբեք անգամ Հայաստանի վրա ձեռնար-

կած աշխարհավեր արշավանքների հեղինակն ընկրկել ու տեղի էր տվել հանձարեղ Տաթևացու իմաստնությունները լսելուց հետո:

Այդ ժամանակներում դժվարագույն վիճակում էր հայտնվել Հայ առաքելական եկեղեցին: Մայր աթոռը հանդիպակ տեղափոխվել էր իր աստվածադրոշմ վայրից: 1293-1441թթ. այն փաստորեն գտնվում էր Կիլիկիայի Սիս քաղաքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն: Ավելի վաղ էլ՝ 1113 թվականին, ստեղծվել էր Աղթամարի կաթողիկոսությունը, որն էլ սեպ էր խրել մեր եկեղեցու միասնության մեջ: Առժամանակ Տաթևի վանքի առաջնորդ էր առաջնորդի տեղապահ եղած Գորիսի Տաթևացին էր՝ իր պատկառազորու հեղինակությամբ, որ այդ ամենին վերջ տալու խնդիր դրեց ու գործնական քայլեր ձեռնարկեց: Տաթևացու աշակերտների անմիջական ջանքերի շնորհիվ էր, որ նրա մահվանից 32 տարի անց՝ 1441-ին, Ամենայն հայոց կաթողիկոսության աթոռը վերադարձվեց իր բուն եւ օրինական նստավայր՝ Սուրբ Էջմիածին: Համազգային նշանակության այս իրադարձության նախապատրաստողն ու ոգեշնչող հրեշտակը, կրկնում ենք, Գորիսի Տաթևացին էր:

Այդ ժամանակներին բնորոշ լրջագույն մի հանգամանք եւս. Տաթևի դպրոցն այդ տարիներին հասնում է իր բարձրագույն աստիճանին, դառնում հայ ուղղափառ դավանանքի եւ գիտության միջնաբերդը հայոց աշխարհում: Եվ այդ ամենը՝ հատկապես Գորիսի Տաթևացու շնորհիվ:

Ծիշտ է ասված, Գորիսի Տաթևացին եղել են մնում է բարձրակետը մի շարք գիտություններում: Սակայն նրա գիտական ժառանգությունը, թեկուզեւ լեզվական առումով, միշտ չէ, որ մատչելի է եղել ընթերցողին: Վերջին տարիներին, հուրախություն բոլորի, Գորիսի Տաթևացու որոշ գործեր փոխադրվել են գրական հայերենի: Հենց այդ գործերից որոշ հատվածներ, օգտվելով առիթից, թերթի սույն համարում ներկայացնում ենք ընթերցողին: Դրանում մեզ անշահախնդիր օգնություն ցույց տվեցին մեծահարգ գիտնականներ Խաչիկ Գրիգորյանը, Հակոբ Զյուսեյանը, ուրիշներ: Տաթևացուն առնչվող որոշ նյութեր էլ՝ հեղինակության մասին Մատթեոս Ջուղայեցու, Թովմա Մեծոփեցու, Առաքել Այունեցու, համարի նախապատրաստության ընթացքում գրական հայերենի փոխադրվեց մեր նախածեղությունը, ինչը մեծ պատիվ է մեզ համար:

Մենք ձգտեցինք արդիական հայացք ձգել Սուրբ Գորիսի Տաթևացու գիտական ժառանգությանը: Դրանում անչափ օգտակար եղան ճանաչված գիտնական Սեւ Արեւշտայանը, բանասիրական գիտությունների թեկնածու, մեր հայրենակից Սուսաննա Գրիգորյանը, Այունյաց թեմի առաջնորդ Աբրահամ եպիսկոպոս Ակրտչյանը, ուրիշներ: Համարի նախապատրաստության ընթացքում մշտապես զգում էինք Այունյաց թեմի փոխառաջնորդ Հայր Զավեն Յազիչյանի օգնությունն ու աջակցությունը:

Սույն ձեռնարկումն անկատար կմնար, եթե չլիներ Մատենադարանի եւ Ազգային գրադարանի ղեկավարության ու համապատասխան աշխատողների հետ մեր համագործակցությունը, նրանց բարի կամեցողությունը:

Տաթևացու կյանքին, գործունեությանն ու գիտական ժառանգությանը նորից հայացք ձգելով՝ վերստին հանգեցինք եզրակացության, որ Գորիսի Տաթևացու լուսաշող հոգին այսօր էլ լուսավորում ու ջերմացնում է հայ հավատավոր հոգիները, որ նրա վառած հավատի, լուսավորության, գիտության քառի այսօր էլ անշեջ է, նրա դրոշմն այսօր էլ խորն է ու անջնջելի հայ հոգու վրա:

Ուրեմնե՝ թող նրա հիշատակն այսօր նորովի գարթեցնի մեր որդիական սիրո ամենաջերմ զգացումները մեր հայրենիքի համրեպ: Մենք մեր սրբի պես իմանանք սիրել ու զմահատել դարերի ընթացքում հայ ժողովրդի ստեղծած հոգեւոր ու մշակութային արժեքները:

...Խունկ անուշության՝ սրտի բուրվառով, քո անվանն ու հիշատակին, Սուրբ եւ յոթնալույս վարդապետ, ամնահ Գորիսի Տաթևացի:

ՍՍՍԿԵ ԱՆԵՔԱՆՅԱՆ

**Այունյաց երկիր**  
s u s t o r s u e t r e  
Գլխավոր խմբագիր՝ **ՍՍՍԿԵ ԱՆԵՔԱՆՅԱՆ**  
Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:  
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:  
Էլ. փոստ՝ syuniacyerkir@gmail.ru  
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):  
«ԳՎԱԳՐ - ՇԱՆՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

Մշակման տակ տպագրվում են գովազդային նյութեր:  
Գրանցման վկայականը 01Ս 000231:  
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:  
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:  
Ծավալը՝ 11 տպագրական մամուլ:  
Տպաքանակը՝ 1900, գինը՝ 500 դրամ:  
Ստորագրված է տպագրության 23.09.2010թ.:




ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

# Գրչութեան արվեստի անմրցելի վարպետը


Նմուշներ Գրիգոր Տաթևացու ձեռագրերից



Նովհաննեսի Ավերարանի անվանաթերթը (նկարիչ՝ Գրիգոր Տաթևացի, 1378թ., Ավերարան, 1297թ., ձեռ. 7482.190ա)



Ղուկասի ավերարանի անվանաթերթը (նկարիչ՝ Գրիգոր Տաթևացի, 1378թ., Ավերարան, 1297թ., ձեռ. 7482.120ա)



Եվսեբիոսի թողթը (նկարիչ՝ Գրիգոր Տաթևացի, 1378թ., Ավերարան, 1297թ., ձեռ. 7482.10ա)



Եվսեբիոսի թողթը (նկարիչ՝ Գրիգոր Տաթևացի, 1378թ., Ավերարան, 1297թ., ձեռ. 7482.9բ)



## ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

# Գրիգոր Տաթևացու մանրանկարներից



Նովհաննես  
Ավերարանիչ  
(նկարիչ՝  
Գրիգոր  
Տաթևացի,  
1378թ.,  
Ավերարան,  
1297թ., ձեռ.  
7482, 189ա)

Ավերում  
(նկարիչ՝  
Գրիգոր  
Տաթևացի,  
1378թ.,  
Ավերարան,  
1297թ., ձեռ.  
7482, 248բ)



Ծնունդ  
(նկարիչ՝  
Գրիգոր  
Տաթևացի,  
1378թ.,  
Ավերարան,  
1297թ., ձեռ.  
7482, 249բ)



Ղուկաս  
Ավերարանիչ  
(նկարիչ՝ Գրիգոր  
Տաթևացի, 1378թ.,  
Ավերարան, 1297թ.,  
ձեռ. 7482, 119բ)





Տաթևի վանքը

# Ուլքեր եւ ինչպես կառուցեցին Գրիգոր Տաթևացու դամբարանը



Տաթևացու դամբարանը

Տաթևի եպիսկոպոս Զովակիմի օրով Բռնակոթ գյուղի մի քանի անձեր շինել են իրենց ծախքով մի դամբարան Գրիգոր Տաթևացու գերեզմանի վրա: Զովակիմ ծագումով Անգեղակոթցի էր եւ եպիսկոպոս գահակալ Տաթևուս 1775 թվականից մինչև 1796 թվականը, երբ Աղա Մահմեդ խանի արշավանքի հետեւանքով թողեց վանքը եւ գնաց Էջմիածին, ուր եւ մեռավ: Զավանդորեն նրա խորհրդով եւ բռնակոթցիք հանձն առել հիշյալ շինությունը 1787 թվին: Դամբարանի վրա կա երկար արձանագրություն, որ բերում ենք ամբողջապես.

«Շնորհիւն Այ. շինեցաւ Աք. մատուռս եւ արքայաւոյս ըստ Բռնակոթի եւ երկրորդ Ոսկեբերանին երիցս երանեալ վարժապետին մերոյ եւ չորրորդ Լուսաւորչին Աք. Գրիգորի Տաթևացոյն ձեռամբ բազմաշխատ եւ ազտաջան Սիւնեաց պետի Տն. Յովակիմայ Սիւնեցոյ արդեամբ եւ ծախիւք բռնակոթեցոց, այսինքն՝ Տր. Գեորգ, Տր. Յակոբ եւ Տր. Յարութիւն քահանայիցն. նաեւ Կարապետին եւ Սկրտչին, Յակոբջանին, Սիմիոնին, Աղդէին, Յովակիմին, Պետրոսին, Գրիգորին եւ Մարտիրոսին, Քարամուղոյն (Քարամուղոյն, Մարամուղոյն, հավանորեն), Ստեփանին եւ Յաւնանին, Մոսեսին, Սկրտչին, Շահնազարին եւ Ածատուրին. այլ եւ բարեպաշտուհի կանանցն Լազուրին, Զուրիգատին, Մարիամին, Գուլփարին, որոց յիշատակն արհմութեամբ եղիցի եւ աղաթք Սրբոյս Գրիգորի ի վերա նոցա լիցի, ամեն: Կառուցավ Աք. մատուռս ի հայրապետութեան Աք. գահին Էջմիածնի Տն. Դուկասու ի ռմլչ թուղջս մերուն յաւուրս Փանահեան Իբրահիմ խանին»:

Այստեղ թված անձերի ժառանգները կան մինչև այժմ: Տեր Գեորգի թռան թռան է ուսուցիչ Խորենի, որ սպանվեց Գորիսում՝ որդի Տեր Խորեն քահանայի Տեր Գեորգյան: Տեր Զարությունի տունն էլ քահանայական մնացել է մինչև այժմ: Այս տանն է պատկանում Տաթևի հոգեւոր կառավարության երկարամյա քարտուղար Պետրոս Տեր-Զարությունյան: Զակոբջանաց, Կարապետանց, Ավակիմանց (Աղակիմոնց), Քերամանց եւ այլն տները, որ ցայժմ հայտնի են Բռնակոթում, հիշված անձերի անուններն են կրում:

Աղդէի՝ նախահայր է այն տոհմի, որ կոչվում է Աղոնց: Աղոյո՞ք Աղի՝ կրճատ ձեւն է Աղդէի-ի, թե այլ ծագում ունի, թողնենք: Ամեն պարագային արձանագրության գրողն այդպես է հասկացել եւ, հավանորեն, որեւէ հիմք է ունեցել: Այս Աղդէի որդին քահանա էր եւ անունը՝ Տեր Ավետիք: Սա երեք որդի ուներ՝ Առաքել, Գրիգոր եւ Միհրաբ: Վերջինիս որդին եւս կոչվում է Ավետիք (Ավետիս):

Տեր Ավետիք սպանված է թուրքերից եւ որպես նահատակ թաղված է հին Գորիսի եկեղեցու դռան:

Նիկողայոս Աղոնց

## Եկեղեցական տնացույց

### Սրբոցն Երուսաղեմի Ղովհան Նայրադէսի, հայոց Ղովհաննես Օձնեցի Նայրադէսի, Ղովհան Որոտնեցի եւ Գրիգոր Տաթևացի վարդապետների հիշատակության օր

Մեծ Պահքի երրորդ շաբաթ օրը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին տոնում է Հայ եկեղեցու նշանավոր աստվածաբան-եկեղեցականների՝ Ղովհան Օձնեցի Նայրադէսի, Ղովհան Որոտնեցի եւ Գրիգոր Տաթևացի վարդապետների հիշատակության օրը:

Աք. Ղովհաննես Օձնեցին, որին մեծարել են նաեւ Իմաստասեր անվամբ, Հայ եկեղեցու սրբացված հայրապետներից է: Ըստ վարքագրիների՝ հոգեւոր ու մտավոր կատարելությունից զատ, փայլել է նաեւ արտաքին վայելչությամբ՝ գահակալության 11 տարիների ընթացքում (717-728 թթ.) Ղովհաննես Օձնեցի կաթողիկոսը կարողացել է դիմակայել բյուզանդական ու արաբական ճնշումներին, պայքարել աղանդավորության դեմ: Օձնեցին թողել է հարուստ ու արժեքավոր գրական ժառանգություն: Նրա «Կանոնագիրք Հայոց»-ը հայ իրակառույցական մեծ ժողովածուն է, որտեղ ի մի են բերված եկեղեցական կանոնները: Նա հայտնի է նաեւ իբրեւ բազմաթիվ ճառերի հեղինակ եւ շարակառուցիչ: Աք. Ղովհաննես կաթողիկոսի գլխավոր ձեռնարկումներից են Հայ եկեղեցու բարեկարգման համար գումարված 726 թվականի Դվինի ժողովը, ինչպես նաեւ նույն թվականի Մանգլեթի ժողովը՝ կազմակերպված Հայ եւ Ասորի եկեղեցիների միության ամրապնդման նպատակով: Աք. Ղովհաննես Օձնեցի Նայրադէսի շիրիմը գտնվում է իր հայրենի Օձնիցն ուտ՝ Աղդի գյուղի Սրբանես (Աք. Ղովհաննես) եկեղեցու բակում, որ դարձել է նվիրական ուխտատեղի հավատացյալ հայության համար:

Միմյանց կապված են Ղովհաննես Որոտնեցի (1315-1388) եւ Գրիգոր Տաթևացի (1346-1409) վարդապետների անունները: Գրիգոր Տաթևացին՝ Հայ եկեղեցու «եռամեծ» վարդապետն ու խոշորագույն աստվածաբանը, ուսանելով Ղովհաննես Որոտնեցու մոտ, հետագայում իր բարձրակետին հասցրեց իր ուսուցչի հիմնածախը: Տաթևացին հեղինակ է աստվածաբանական մեծարժեք աշխատությունների ու քարոզների, որոնց շարքում առանձնացվում են «Գիրք Հարցմանց»-ը եւ քարոզգրքերը: Տաթևացու գրառումների շնորհիվ մեզ է հասել նաեւ Որոտնեցու գրական ժառանգության մի մասը: Հայ եկեղեցու երեք սրբերի հետ մեկտեղ նույն օրը նշվում է նաեւ 4-րդ դարի Երուսաղեմի Աք. Ղովհան Նայրադէսի հիշատակության օրը: Երուսաղեմի հայրապետը հայտնի քարոզիչ էր: